

ՆՅՈՒԹԸ,  
ՆՐԱ ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՎԱՆ

ՅԱՐԵՎԱՆ

1940

541.1

3184

4-57

Արդելիք F.9.

Տյառը, որտ գրիպուրն,  
շեմ և կառուցման

ԳԻՏԱԿԱՆ — ՄԱՍՍԱՑԱԿԱՆ

591.1


Ա-57

Բ. Գ. ԱՆԴՐԵՅԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

3784

ՆՅՈՒԹԸ,  
ՆՐԱ ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ  
ՅԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՆՈՒՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն գրքում պատմվում է Նյութի բնության և ակխնիկայի մեջ կառարգող փոխարկութերի մասին, արվում են հրմական հասկացողություններ քիմիայի կարևորագույն փաստերի և սրբնաների մասին, Նյութի առաջին կառուցվածքի մասին, ատոմի կազմության մասին՝ ըստ գիտական նորագույն ավյալների, Նյութի կառուցվածքի վերաբերյալ հարցի շարադրումը առարգում և պատմական հրմավորումով, ընդդժում և Նյութի մոսին յիզան գիտության նշանակությունը կրոնական յերեվակայությունների դիմ պայքար մզելու—և մարդուիստ-մտաերկալիսական պարզուող աշխարհայտը ժշակելու, նմանապես և աշխարհը սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու պրակարիկայի համար։ Շարադրումը մտաշիքի յև նախատեսնված վոլ լրից մինչակարդ պարոցի ծրագրի ստամաներում պատրաստականության ունեցաց ընթերցողի համար։ Դիբջը կարող է ծառայել նաև վորպես ներածություն՝ ինքնակրթությամբ քիմիան ավելի խոր ու մանրամասնորեն ուսումնասիրելու համար։

A II 14301

## ՆԱԽԱԲԱՆ

Ներկա զբքույիի նպատակն և սակավապատրաստ ընթերցողին ծանոթացնել, թե ի՞նչ և ուսումնասիրում քիմիան—նյութերի փոխաբեկութիւնների ու նրանց կազմության մասին խոսող այս գիտությունը, վորմնք են այն կարեվորագույն փաստերն ու որենքները, վոր սահմանել և այս գիտությունը, ի՞նչ նշանակություն ունեն նրանք գիտական, մարքսիստա-մատերիալիստական աշխարհայացք մշակելու գործում և աշխարհում չտեսնված մեր սոցիալիստական շինարարության պրակտիկայի համար; Համապատասխան այս խնդիրների՝ զբքի նյութը դասավորված և հետեւյալ կարգով:

Սկզբում ընթերցողը ծանոթանում է բնության և տեխնիկայի մեջ ամենաբազմազան նյութերի մեջ անընդհատ կատարվող փոփոխությունների մի շարք որինակների հետ և իմանում ե—այս փոփոխություններից վորմնք են քիմիայի ուսումնակարության նյութ հանդիսանում (1 և 2 գլուխ); Այնունհակվ պատճենում և այրման մասին (քիմիական ռեակցիա, վորի ուսումնասիրությունը հսկայական գեր խաղաց քիմիայի պատճենության մեջ), ողի կազմության և թթվածնի մասին: Քննված նյութի հիման վրա հասկացողություն և արվում խառնուրդի և քիմիական միացության մեջ յեղած տարրերության մասին (3, 4 և 5 գլուխներ):

Բնության մեջ ամենաստարածված նյութերից մեկի—ջրի, ապա ջրածնի կազմությունն ու հատկությունները նկարագրելուց հետո, վերլուծվում են վառելանյութի այրման պրոցեսները, վորի կապակցությամբ ընթերցողը ծանոթանում է ածխածնի և նրա այրման պրոցեսների—ածխածնի ոքսիդի և ածխաթթու գազի հետ և հասկացողություն կազմում քիմիական հներգիայի մասին: Այսաեղից բնական և անցումը դեպի շնչառությունը, դեպի բույսի

տիեզերական գերը և, վերջապես, դեպի ազոտը, նախ՝ վորպես ողիք կարեվորագույն յերկրորդ բաղկացուցիչ մասի, և մյուս կողմից եղ վորպես բույսերի աննողառության հիմնական տարրերից մեկը (6—11 գլուխներ):

Շաբաղբված տեղեկությունները բավական նյութ են տալիս անցնելու քիմիական ելեմենտա հասկացողության վերլուծմանը և կարեվորագույն տարրերի հետ համառոտակի ծանոթացմանը: Հետո շաբաղբված ե ուսմունքը մոլեկուլների և ատոմների մասին և քիմիայի հիմնական որենքը՝ նյութի պահպանության որենքը: Սա, իր հերթին, հնարավոր է դարձնում սկզբնական հասկացողություն տալ կյանքի քիմիայի և բնության մեջ կատարվող նյութերի լայնածավալ շրջանառության մասին (12—18 գլուխներ): Դրքի առաջին բաժինը ընդհանրացվում է ելեմենտների պարբերական սիստեմի հիմունքների հետ ծանոթացումով, վորի ըմբռնումը հեշտացնելու համար համապատասխան գլխին նախադրվում ե քիմիական լեզվի մասին գլուխը (19 և 20 գլուխ):

Եերկրորդ բաժինն սկսվում է ատոմի կազմության մասին եղած ժամանակակից զիառության հիմունքների հետ սկզբնական ծանոթացումով (21 և 22 գլուխ), վորը հնարավորություն և տալիս հետո նևալ ավելի լայնորեն լուսաբանել նյութերի հոյակապ շըրանառությունը բնության մեջ և ցույց տալ պարբերական սիստեմի նշանակությունը՝ վորպես նյութերի դարպացման պատմության արտացոլումներ տիեզերքի մեջ (23 և 24 գլուխ): Վերջապես եղբափակիչ գլուխները պատմում են քիմիական համադրության և մեր սոցիալիստական շինարարության համար քիմիայի ունեցած նշանակության մասին:

ՀԵՂԻՆԱԿԻ

## 1. ՆՅՈՒԹԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԵջ

Կառպից ծովի արեվելյան ափին հսկայական ջրահայելու նման փոված և Կարա-Բողադ ծովախորշը՝ համեմատաբար զեռ վոչ հետու անցյալում հաղիվ եր պատահում, վոր վորեվի մեկն այցելեր նրա անհյուրընկալ ու արեվից խանձված ափերը՝ 1848 թվի ամռանը, յերբ յեռակայմ Շվոլգայ մարտահավով լիյտենանտ Ժերեցովը մոտեցավ ծովախորշին ուսումնասիրելու նրան, մարտահավի զորախումբը վախենում եր մտնել ծովախորշը, լսելով նրա մասին ամեն տեսակ սարսափելի բաներ, իսկ այժմ—

«Անապատում, ուր գեղի հարավ ու արեվելք տասնյակ ու հարյուրավոր կիլոմետրների վրա գեռ վոչ վաղուց չկար և վոչ մի բնակելի շենք, կյանքի համար միանգամայն անպետք համարվող ավաղներում բարձրացել են գործարանային ծխնելույղները, շողջողում են ելեկտրական կրակները, զրնդում են բանվորների յերգերը, զնդզնդում ե յերեխաների ծիծաղը»:

Անապատը կենդանացավ:

Ծովախորշի ափերին բարձրացել են պրոմիոլաները բանվորական ավանների հետ, Ստեղծված և ամբողջ արդյունաբերական կենտրոն—Կարա-Բողադ—պորտ:

Սա իսկական քաղաք է մոտ հինգ հազար բնակիչներով, ուղիղուկայանով, հեռախոսով, նավահանգստով, հիվանդանոցով, դպրոցներով, տպարանով, կենսամթերային ու համապրանքային խանութներով, մանկամսուրներով, հնչուն կինոյով և այլն:

Անջուր անապատում կանաչեցին բանջարանոց—բուժանոնքը և առաջին խաղողանոցները, հիմնված ե ծառատնկերի բուժաբան—Կարա-Բողադ-Պյոլի ապագա կանաչաղաքման համար։<sup>1</sup>

Ի՞նչուր յե առաջացել անապատի այս հրաշալի ծաղկումը խորհրդային բանվորների, ինժեներների ու տեխնիկների այստեղ գալուց հետո:

Այս ծաղկափթթման պատճառը կայանում է նրանում, զոր  
Կարա-Բողազ ծովախորշը թաղցնում ե իր մեջ անհաշիվ հարըս-  
տությունները նրանում, ամեն տարի ձմբանը միլիարդ տոններով  
գլառւքերյան աղ ե նատում, հենց այն աղը, զոր բժիշկները շատ  
վաղուց պատվիրում են գործածել վորպես լուծողական Բայց,  
իհարկե, միայն այդ նպատակի համար չե այն հարյուր հազար  
վոր տոններով գլառւքերյան աղը, զորը տալիս ե յերկրին Կա-  
րա-Բողազ-գյոլի քիմիական արեսաը (նկ. 1):



Նկ. 1. Գլառւքերյան աղի ձմեռային գույքս նեառւմները

Բանվոր-քիմիկոսներն այս աղը փոխարկում են մի այլ  
նյութի—սուլֆատ նատրիումի, իսկ վերջինը նորից վերածում նոր-  
նյութերէ—սոդայի, ծծմբաթթվի, ապակու, արծերավոր պարար-  
տանյութի—սուլֆատ-ամմոնիակի և այլն:

Այժմ մաքով տեղափոխենք մեր անծայրածիր հայրենիքի  
հակագիր ծայրը, գաժան ու վայրի Կոլայի թերակղզին:

#### Այստեղ—

«Վուդյավրչորը լեռան ստորոտին, բեկեռային շրջագծից  
հարյուր կիլոմետր ավելի հյուսիս, բոլշեվիկները հիմնել են մի  
քաղաք, զոր ընկեր Կիրովի անունովն ե կոչվում (նկ. 2): Այս  
քաղաքում ահա վեց տարուց ավել ե արդեն, զոր մարդիկ են ապ-  
րում: Քառասուն հազարից ավելի մարդիկ Յել վատ չեն ապ-  
րում:

Այս մարդիկ յեկան վայրէնի տունղբա, հաղթահարեցին հյուս սիսային սառնամանիքը, ձնահողմերը և ձնակիտութերը, քաղաք շինեցին, հանգահորեր հիմնեցին, կառուցեցին աշխարհում ամենախոշոր ապահովանելինաւին զործարանը. Այստեղ աճել են հարյուրավոր ստախանովականներ, իրենց զործին նվիրված մարդիկ, խորհրդային հյուսիսի հայրենասերներ...

Քաղաքում կա պարկ—տայգայի մի կտոր, Արդ այն ե, զոր կար քաղաքի տեղում 1929 թվին Փողոցների յերկարությամբ ձգվում են կանաչ տնկութերը, Հիանալի վառվռուն ծաղկանոց և զցված շԱպատիտա տրեստի շենքի մոտ. Մադկանոցը և կանաչատնկութերը—Կիրովսկ քաղաքի առաջին բերվեռա-ալպիական բունարանական այգու զործն եւ.<sup>1</sup>



Նկ. 2. Կիրովսկ քաղաքն անդրեվեռաշը շագծում:

Անապատային տունդրայի և վայրի տայգայի մեջ ծաղկող քաղաքի առաջանալու պատճառը յեղել են Անդրեվինի հետ խառն, մուգ կամաչավան բժիշով՝ սպիտակ հանքի՝ տապաթիտի հոկայտան ցըլածքներն ու շերտերը. Կիրովյան զործարանում մաքրված

ապատիտը Միության քիմիական դործարանները դարձնում են մեր զյուղատնտեսության համար ֆոսֆորային թանկարժեք պարաբանյութեր, իսկ մուգ-կանաչավուն նիփելինից պատրաստում են ալյումին, աղակի և մի շարք այլ պրոդուկտներ:

Ենք վորքն այսպիսի քաղաքներ են առաջացել մեր լայնածավալ Միության տարրեր ծայրերում այն որվանից, յերբ հաղթող բանվոր գանակարգը տնտեսավարի սկսեց ուսումնասիրել իր յերկիրը և ավելի ու ավելի ոգտագործել նրան հարստությունները, Բայց արդյոք այդ հարստությունները միշտ ել այն ձևված ենք ոգտագործում, ինչպես վոր նրանց ստանում ենք բնությունից:

Իհարկե, բոլորովին վոչ միշտ Բնական նյութերները, բը նական նյութերը մեծ մասամբ ծառայում են մեզ վորպես նօւմբ, վորը մենք քիմիական և այլ գործարաններում դարձնում ենք նոր նյութեր, վորոնք հաճախ իսպառ չեն նմանվում սկզբնականին: Նյութերի ինչ զարմանալի փոփոխություններ միայն կարելի չեն դիտել այդ ժամանակ:

Ընդամենը տաս-տասնենինգ տարի սրանից առաջ մի կարող եր մտածել, որինակ, վոր ամենահասարակ կարտոֆիլից ստացվող սպիրալից մենք կկարողանանք պատրաստել ուտին ավառմերենայի ծածկութեների (ՊՈԿՐԵՎԱԿ) համար (նկ. 3):

Մեզ համար քիչ և այն բենզինը, վոր պատրաստ վիճակում դանվում և կամ նավթի մեջ, մենք մեր կրեկինդ-գործարաններում բենզին ենք՝ գարձնում նավթի այլ նյութերը կամ նրա մեացորդները: Իսկ անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք դարձնել հեղուկ նավթ և պինդ քարածուխը,

Քարածուխից մեր գործարաններն ստանում են կոքս և լուսառ զազ (նկ. 4), հարյուրավոր աեսակ ներկեր՝ ամենարազմազան նրերեանդների, տասնյակ ներով զանազան գեղորայք, հոտավետ և պայթուցիկ նյութեր ու շատ ուրիշ բաներ:

Լուցկիներն ու ներկերը, ապակին ու պայթուցիկ նյութերը, շաքարն ու թուղթը, ոճառն ու արհեստական պարարտանյութերը, զանազան թթուներն ու ալկալիները, լուսանկարչական նյութերն ու դեղորայք, հոտավետ և այլ տարրեր նյութերը—այս բոլորը գործարանները պատրաստում են բնական բազմազան նյութերից—քարածուխից, ավազից, կրաքարից, ճականդեղի հյութից, փայտից, ճարպերից, յուղերից և այլ նութերից: Մարդկային հասարակությունն իր բազմապիսի կարիքները հոգալու համար գործարաններում և փարբիկներում անընդհատ մեկ նյութերը փոխարկում է մյուսների:

Միայն մարդը չե, վոր գործարաններում և փարբեկներում  
մտադրված կերպով նյութերը փոխարկման և յենթարկում, Մեկ  
նյութերի այլաց փոխարկումը շարունակ տեղի յի ունենում նաև  
բնության մեջ:

Փոքրիկ սերմից աճում եւ զորավոր լայնատարած կաղնենին:  
Վերտեղից հայտն իցին այն զանազանակերպ նյութերը, վորոն-  
ցից բաղկացած և այս կաղնենին: Նրանք, ինչպես քիչ հետո  
կտեսնենք, առաջացել են նյութերից, վորոնք պարունակվում են  
հողի մեջ և ողում:

Կաղնուց վայր ընկած խոզակաղինները կերավ խոզը, Այս  
խոզակաղինների նյութը կփոխարկվի նոր նյութերի, վորոնք կմըտ-  
նեն խոզի մարմի կազմի մեջ:

Նյութերը, վորոնցից  
կազմված են բույսերի և  
կենդանիների մարմինները,  
վերջին հաշվով առաջացել  
են հողի և ողի նյութերից:  
Կենդանի և ակների մնա-  
ցորդները նրանց մասից հե-  
տո կրկին վերադառնում են  
հող, ուր տեղի յեն ունե-  
նում նյութերի նոր փոփո-  
խություններ, Կյանքը սեր-  
տորեն կազմված և նյու-  
թերի հոյակապ շրջադար-  
ձության հետ, նրանց մշտա-  
կան փոփոխությունների ու  
փոխարկումների հետ:



Նկ. 3. Ծածկույթների համար պահանջվող  
այս սետինը պատրաստված և կարտոֆիլից:

Առաջին շի մնում և  
այսպես ասած անկենդան բնությունը, Եեկ բացի կյանքից, այս-  
տեղ տեղի յեն ունենում անընդհատ փոփոխություններ, վորոն-  
ցից կարեվորագույնների մասին կպատմվի այս գրքույկում քիչ  
հետո:

Կարելի՞ յե արդյոք աշխարհի մասին ճիշտ հասկացողություն  
ունենալ առանց թեկուզ և ընդհանուր զծերով ըմբռնելու նյու-  
թերի այն փոխարկումները, վորոնք անընդհատ տեղի յեն ունե-  
նում նրա մեջ:

Կարելի՞ն յե արդյոք զիտակցաբար վերաբերվել իր արտադրական աշխատանքին, յեթե նա կապված է նյութի փոխարկումների հետ, առանց գիտենալու այս փոխարկումների թեկուղ և ընդհանուր որենքները:

Իհարկե չի կարելի:

Նյութի փոխարկումներն ուսումնասիրում և մի առանձին զիտություն—իմ իտան:



Նկ. 4. Կորսի վառաբանները Մաղնիտուզուկում.

Շնորհիվ հենց այդ զիտության հնարավոր և այն բոլոր նյութերի պատրաստումը, վորոնք մշակվում են մեր քիմիական զորագործարաններում, նրա շնորհիվ և զյուղատնտեսությունն ստանում արհեստական պարաբանյութեր, նրա շնորհիվ միայն կարելի յե հասկանալ, թե ինչպես և ինչ նյութերից են կառուցված բույսը, կենդանին, մարդը և ամրող աշխարհը, Մեր մեծ զիտնական Միխալո Լոմոնոսովը համարյա դեռ յերկու հարյուր տարի առաջ առել և այս զիտության մասին—«Մարդկային գործների մեջ քիմիան իր ձեռները շատ հեռու յե տարածում», Դրա համար ել ձանոթությունը նյութի մասին յեղած զիտության—քիմիայի հետ անհրաժեշտ և ամենքին:

Անսահման բազմապիսի յեն նյութի փոխարկութերը և՛ տեխ-  
նիկայի, և՛ բնության մեջ, Այսպիսի մի փոքրիկ զրգում, ինչ-  
պիսին մերն ե, հնարավոր չե լրիվ պատճել այդ փոխարկութերի-  
անգամ ամենափոքրի մասին: Բայց մենք իսկի մտադրություն են եւ  
չունենք անել ալու Մենք ուզում ենք միայն բնության և արտա-  
դրության մեջ կատարվող նյութի փոփոխությունների մի քանի  
որի նակներով բացատրել այս փոփոխությունների որենքները և  
ընթերցողին ծանոթացնել նյութի մասին յեղած գիտության—քի-  
միայի հիմունքների հետ:

## 2. ՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեքե ուշադրությամբ դիաենք, թե ինչ է կատարվում մեք-  
շուրջը, ապա դժվար չի լինի տեսնել, վոր մեր շրջապատում  
ամենուրեք տեղի յեն ունենում զանազան փոփոխություններ: Անձրեվ ե գալիս—թացանում ե ամեն ինչ: Տաքացրեց արեվը,—  
ջուրը դոլորշիանում, գնում ե ողի մեջ: Աճում են բույսերն ու կեն-  
դանիները, ոնվում են նրանք, բազմանում. մեռնելուց հետո նրանք  
տարալուծվում են, քայրայվում, իսկ նրանց փոխարեն նորերն են-  
ծնվում: Տան թիթեղյա կտուրը մերթ տաքանում, մերթ սառում  
ե, իսկ ժամանակի ընթացքում և ժանգակալում: Մաշվում ե հա-  
գուստը, գործիքը, բերվում են անդամ տների յելարանի քարե  
աստիճանները:

Ամենուրեք և ամեն տեղ կատարվում են զանազան փոփո-  
խություններ—և՛ մարդու աշխատանքի ժամանակ, և՛ նրան շրջա-  
պատող աշխարհում: Սակայն քիմիան չի զբաղվում այս բոլոր  
յերեվութների ուսումնասիրությամբ: Քիմիան ուսումնասիրում ե  
միայն խիստ վորոշ տեսակի փոփոխություններ: Թե հատկապես  
վեր տեսակի, այդ կարելի յե բացատրել թեկուզ հետելյալ որի-  
նակով:

Խիրինան ապատիտները բնության մեջ միշտ զոյություն չեն-  
ունեցել: Մի ժամանակ, շատ վաղուց, յերկրի հալված մակերեսի  
վրա սառչելուց սկսեց ամուր կեղեվ առաջանալ, նրանք առաջացան  
այն նյութերից, վորոնք պարունակվում եյին յերկրի շիկացած  
մասսայի մեջ: Այս ապատիտները շատ միիրոն տարիներ հանգիստ  
պառկած եյին Խիրինան լեռներում, մինչեւ վոր խորհրդայի՝ ե-  
պիտնականները չհանդիպեցին նրանց: Իսկ գիտնականներից հ

Կարելի յէ արդյոք զիտակցաբար վերաբերվել իր արտապ-  
քական աշխատանքին, յեթե նա կազմված է նյութի փոխարկում-  
ների հետ, առանց դիտենալու այս փոխարկումների թեկուղ և  
ընդհանուր որենքները:

Իհարկե չի կարելի:

Նյութի փոխարկումներն ուսումնասիրում և մի առանձին  
զիտություն—իմիան:



Նկ. 4. Կաքսի վառաբանները Մադնիտոգորսկում.

Ծնորհիվ հենց այդ գիտության հնարավոր և այն բոլոր նյու-  
թերի պատրաստումը, վորոնք մշակվում են մեր քիմիական գոր-  
ծարաններում, նրա շնորհիվ և զրու զատնտեսությունն ստանում  
արհեստական պարարտանյութեր, նրա շնորհիվ միայն կարելի յէ  
հասկանալ, թե ինչպես և ինչ նյութերից են կառուցված բույսը,  
կենդանին, մարդը և ամրող աշխարհը, Մեր մեծ զիտնական Մի-  
խալու կոմոնոսովը համարյա զեռ յերկու հարյուր տարի առաջ  
առել և այս զիտության մասին—«Մարդկային գործերի մեջ քի-  
միան իր ձեռները շատ հեռու յէ տարածում»: Դրա համար ել ձա-  
նոթությունը նյութի մասին յեղած զիտության—քիմիայի հետ  
անհամապատասխան:

Անսահման բազմապիսի յեն նյութի փոխարկութեարը և՛ տեխ-  
նիկայի, և՛ բնության մեջ, Այսպիսի մի փոքրիկ զրբում, ինչ-  
պիսին մերն ե, հնարավոր չել լրիվ պատճել այդ փոխարկութեարի  
անգամ ամենափոքրի մասին։ Բայց մենք իսկի մտադրություն են չունենք անել արդ Մենք ուղում ենք միայն բնության և արտա-  
դրության մեջ կատարվող նյութի փոփոխությունների մի քանի  
որինակներով բացատրել այս փոփոխությունների որենքները և  
ընթերցողին ձանոթացնել նյութի մասին յեղած գիտության—քի-  
միայի հիմունքների հետ։

## 2. ՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեթե ուշադրությամբ դիտենք, թե ինչ է կատարվում մեր-  
շուրջը, ապա դժվար չի լինի տեսնել, վոր մեր շրջապատում  
ամենուրեք տեղի յեն ունենում զանազան փոփոխություններ, Անձրեվ է գալիս—թացանում և ամեն ինչ Տաքացրեց արեվը.—  
Հուրը դոլորշիանում, զնում եռ ողի մեջ, Աճում են բույսերն ու կեն-  
դանիները, սնվում են նրանք, բազմանում. մեռնելուց հետո նրանք  
տարալուծվում են, քայրալիվում, իսկ նրանց փոխարեն նորերն են-  
ծնվում։ Ճան թիթեղյա կտորը մերթ տաքոնում, մերթ սառում  
ե, իսկ ժամանակի ընթացքում և ժանգակալում։ Մաշվում է հա-  
գուստը, գործիքը, բերվում են անգամ տների յելարանի քարե-  
աստիճանները։

Ամենուրեք և ամեն տեղ կատարվում են զանազան փոփո-  
խություններ—և՝ մարդու աշխատանքի ժամանակ, և՝ նրան շրջա-  
պատող աշխարհում։ Սակայն քիմիան չի զբաղվում այս բոլոր  
յերեվութեարի ուսութեանասիրությամբ։ Քիմիան ուսութեանասիրում և  
միայն խիստ զորոշ տեսակի փոփոխություններ։ Թե հատկապես  
վեր տեսակի, այդ կարելի յե բացատրել թեկուղ հետեւյալ որի-  
նակով։

Խիրինան ապատիտները բնության մեջ միշտ գոյություն չեն-  
ունեցել. Մի ժամանակ, շատ վաղուց, յերկրի հալված մակերեսի  
վրա սառչելուց սկսեց ամուր կեղեվ առաջանալ, նրանք առաջացան  
այն նյութերից, վորոնք պարունակվում եյին յերկրի շիկացած  
ժամանակի մեջ։ Այս ապատիտները շատ միլիոն տարիներ հանդիսա-  
պառկած եյին Խիրինյան լեռներում, մինչեվ վոր խորհրդային  
գիտնականները շհանդիպեցին նրանց։ Իսկ գիտնականներից հետո

յեկան բանվորներն ու ճարտարապետները։ Այժմ խիրինյան ապա-  
տիաների հետ կատարվում են մի շարք փոխություններ։

Պայթուղիկ նյութերը մանրացնում են քարի խոշոր կտոր-  
ները։ Հանքանյութի բեկորները տեղափոխվում են հարստացնող  
գործարանը։ Այստեղ հղոր փոխադրիչները շպրտում են նրանց  
մանրացնող մերենաների մեջ, վորանեղ հանքանյութն աղվում, փոք-  
րիկ հատիկներ ե դառնում։ Այդ գրությամբ նա հանձնվում և  
այսպես կոչված ֆլատացիոն կորպուսին, վորանեղ հատուկ աղաց-  
ներում կրկին մանրացման և յենթարկվում։ Դրանից հետո հան-  
քանյութը լցնում են մեծ կիսատակառների մեջ ու խառնում հա-  
տուկ հեղուկների հետ—ճարպանյութի թթուի, կեչածյութի, ապա-  
կահեղուկի։ Խառնվելով, նրանք առաջացնում են փրփուր, վորը  
պատում և ապատիտի մասնիկներին և հարկադրում նրանց դեպի  
վեր լողալ այն ժամանակ, յերբ խառնութքները նստում են կիսա-  
տակառի հատակին։ Ապատիտն առանձնացնում են, չորացնում և  
պահեստ փոխադրում։

Սակայն ապատիտի հանքանյութի շարկածները դրանկով  
չեն վերջանում։ Պահեստից մուտք ե գործում վազոնները և  
ուղարկվում քիմիական դործարանները։ Այստեղ նա կրկին մի  
արք փոփոխություններ և կրում։ Հատուկ աղացներում ապա-  
տիաը մանր ալյուրի նման աղում են և խոշոր կտորները առանձ-  
նացնելու համար մաղերով մաղում։ Անուհետեւ այդ ալյուրը  
խառնում են ծծմբաթթվի հետ և այս ճանապարհով ու պերֆուֆատ  
ստանում, վորը պյուղատնտեսության համար արժեքավոր պա-  
րարտանյութ ե։ Հեղուկից անջատված և չորացրած սուլաքերֆուֆատը  
տեղափոխում ե պահեստները, իսկ այնտեղից կրկին վազոնները։

Քիմիական գործարաններից վազոնները սուլաքերֆուֆատը  
տեղափոխում-հասցնում են կոլտնտեսությունների ու խորհացն-  
տեսությունների պահեստները։ Այստեղ նրան մուծում են հողի  
մեջ, վորի վրա հետազում աճելու յեն բամբակ, վաւշ, շաքա-  
րաճակնդեղ, ծխախոտ, հացահատիկներ և մեզ համար անհրաժեշտ  
այլ բույսեր։ Լուծվելով հողալին խոնավության մեջ, սուլաքերֆու-  
ֆատն արմատների միջոցով ծծմբում ե բույսերի մարմնի մեջ և  
այնտեղ վերածվում, նոր նյութերի, վորոնցից կազմված են այս  
բույսերի մարմինները։

Ապատիտային հանքանյութի ճակատագրին դեռ յերկար կա-  
րելի յե հետամտել Բայց ինչ վոր ասվեց, այն ել բավական ե, վոր-  
պեսպի տեսնել, թե նա վորքան բարդ ու բազմապիսի փոխար-

կումների յե յենթարկվում։ Դժվար չե, սակայն, դիտել, վոր բուլը այս փոխարկութերը կարելի յե յերկու տեսակի բաժանել։ Նրանցից մի քանիսների ժամանակ, որինակ՝ ապատիտից սուպերֆուֆատ ստանալիս, կամ վերջինի բուսական նյութերի վերածվելիս, հենց ինքը նյութն եր փոփոխվում, սուպերֆուֆատն արդեռ առանձին նյութ ե և ապատիտին նման չե, իսկ բույսերի մարմինների նյութերն իրենց հերթին, ուրիշ են, սուպերֆուֆատին չնմանվող նյութերը։ Իսկ յերկրորդ տեսակի փոխարկութերի ժամանակ, որինակ՝ նրանց մանրացնելիս կամ աղալիս՝ փոխվում եր միայն հանքանյութի ձեզը, իսկ նրա նյութը չեր փոխվում—ապատիտը մնում եր վորպես ապատիտ։

Քիմիան եղ տնօ ուսումնագրում և միայն առաջին տեսակի փոփոխությունները, այսինքն՝ այնպիսիները, վարոնց ժամանակ նիմ-նականապես փոփոխվում և ինքը նյութը—յերբ մեծ նյութերից ըստացվում են այլ նյութեր նոր հատկություններով, սկզբնական նյութերի հատկություններից խիստ տարբերվող։

Մյուս տեսակի փոփոխությունները վերաբերում են այլ գիտության—քիմիկային։

. . . Ինչպես մի քիչ հետո կտեսնենք, քիմիական փոխարկութերի ժամանակ տեղի ունեցող խորը փոփոխությունները պայմանավորված են այս նյութերի կազմության փոփոխությամբ։

Ցեղե զուք մտքով հետեւեք ձեզ ծանոթ մի շարք արտադրությունների, ապա ինքներդ հեշտությամբ կնկատեք, վոր նրանցից զոմանց մեջ փոխվում ե առարկալի միայն արտաքին ձեզը, —որինակի համար վերցրեք դարրնոցային, հյուսնի, չարխանոցային ցեխերի աշխատանքը։ Դրանք—մեխանիկական արտաքրություններ են; Նրանցում նյութը, վորից կազմված են առարկաները. չի փոխվում, ասենք փայտը մնում ե փայտ, թեկուզ և նրանից ստացանք սեղան, մահճակալ, քանոն, կամ վարեվե այլ փայտե առարկա։ Իսկ այլ—արտադրություններում քիմիական, տեղի յե ունենում նյութի խորը փոփոխություն, Քացախաթթուն, փայտանյութի սպիրտը, բեկեկնի խեժը, կանիֆոլը և փայտից ստացված այլ մթերքներ բոլորովին նման չեն փայտին, այս նյութերն իսպառ այլ հատկություններ ունեն, քան փայտը։

Մետաղաձևական զործարաններում, յերբ մետաղների չնըւմանվող հանքանյութից մետաղներ են ստացվում, տեղի յեն ունենում, ոլխավորապես, քիմիական փոփոխություններ։

Մետաղամշակման գործարաններում տեղի յեն ունենում ֆիզիկական փոփոխություններ՝ մետղի կտորներին տարրեր ձեզ տալը, հալումը և այլն), Արեվի ջերմությունից ձյան հալցիլը և ջրի դալորչիացումը—ֆիզիկական փոփոխություններ են: Բուժումների և կենդանիների ոնման ժամանակ տեղի յեն ունենում քիմիական փոփոխություններ, վորովհետեւվ այդ ժամանակ կերակրի նյութերը վերածվում են բոլորովին ալ նյութերի, վորոնք ժամանում են կենդանիների և բույսերի մարմարի կազմի մեջ:

Սակայն, պետք ենչել, վոր և՛ արտադրության մեջ, և՛ բնության մեջ ֆիզիկական և քիմիական փոփոխությունները կատարվում են կողը-հողքի և սերտորեն կապված են իրար հետ:

Սովորելով տարբերել քիմիական փոփոխությունները ֆիզիկականներից, անցնենք ավելի մանրամասնորեն ծանոթանալու նրանցից առաջինների հետ, վորի համար փորձենք վերլուծել ըստ յերեվույթին ամեն մեկին ել բաց հայտնի յերեվույթը—այրումը:

### Յ. Ի՞՞նՉ ԲԱՆ Ե ԱՅՐՈՒՄԸ

Կանգնած ենք ծծմբաթթու պատրաստող մի հսկա գործարանի դլամավոր մուտքի ճանապարհի վրա: Վագոնների մոտ յետառմ և աշխատանքը բերված հումքի դատարկման և ուղարկվելիք արտադրանքի բարձման համար, Բաց վագոններից ցած են թափում վոսկյա-դեղնազույն հանրի կույտեր, վորին հին ժամանակ յերենին ռավանակի վոսկի եյին անվանում, վորովհետեւվ ազետ մարդիկ նրան հաճախ վոսկի հանքանյութի տեղ եյին ընդունում: Խոկ բարձում են վագոնները զամբյուղների մեջ զրած ծանր, յուղուա հեղուկով լի հաստափոր շշեր, վորի մի քանի կաթիլ-կարսող և տանջալից այրվածքների պատճառ հանդիսանալ: Վոսկյա-դեղնազույն հանքը—ծծմբի նրաբան ե, իսկ ծանր հեղուկը—ծծմբարրաւու: Յեկ յեթե վագոնի բարձմանը հետեւվող բանվորին հարցնենք—ինչ նյութից և պատրաստվում ծծմբաթթուն այս գործարանում, ապա նա ցույց կտա վոսկյա-դեղնազույն հանրի կույտերը և կպատասխանի—«ծծմբի հրաքարից»: Սակայն այս անվնասակար քարը բոլորովին չի նմանվում այրիչ ծծմբաթթվին:

Այսուամենայնիվ բանվորը ճիշտ եւ Այդ բանում համոզվելու համար անցնենք այն մեծ շենքը, վորտեղ դրված են ծծմբի հրաքարն այրելու վառարանները: Այս վառարանների ներառւմ ամեն

բան շիկացած եւ — հրաքարն այրվում եւ Յեզ այրվում եւ ինքն իրեն, առանց փայտի ու ածխի, այրումը դահում և միայն հատուկ աշտարակից անցնող չորացրած ողբը Աշխատանքներն ոկրավելուց առաջ միարն, յերբ վառարանները դեռ սառն եյին, հրաքարը կողցրել են վառելանյութով, այժմ այդ հարկավոր չեւ

Ի՞նչպես եւ կառուցված

այս վառարանը և ի՞նչ եւ  
տեղի ունենում նրա մեջ:

Հասկանալի լինելու

համար ծծմբի հրաքարը այ-

րելու վառարաններից մեկը  
պատկերացված եւ 5 նկա-

րում՝ յերկայնությամբ  
կտրած: Մանրած հրաքարը


լցում է վառարանի մեջ  
ձագարի միջով, վոր նկարի

վրա ցույց եւ տրված ձախից  
զեպի վեր, ու թափում եւ

վառարանի վերելի դարակի  
վրա: Վառարանի թուշն  
զլանը, վոր անցնում եւ նրա  
մեջտեղով, պատվում և պտը-

տում եւ իրեն ամրացրած  
թուշն փոցիսերը նըանք հա-

վառարեցնում են հրաքարը Նկ. 5. ծծմբի հրաքարն այրելու վառարան:  
և աստիճանարար առաջ



շարժում նրան զեպի վառարանի մեջտեղը, վորտեղից նա անցը ի  
միջով թափվում է յերկրորդ դարակը: Այստեղ, որնդհակառակը  
փոցիսի ատամները հրաքարը շարժում են զեպի ծայրերը, վորտե-

ղից նա թափվում է յերսրորդ դարակը և այլն: Վերեպի դարակում  
ըսբարը շորտնում է, իսկ հետագայում այնքան եւ տաքանում,  
վոր սկսում է արդեն արգլել: Չոր ողն անցնում է խողովակների  
միջով, վորոնք ցույց են տրված նկարում վառարանի ներքեզի  
աջ ու ձախ կողմերից:

Հրաքարի այրումից ստացվում է մի զագանձան նյութ,  
ճիշտ այնպես անգույն, ինչպես ողն եւ Սակայն այդ նյութը ճիշտ

այնպիսի հոտ ունի, ինչպես այրվող ծծումբը: Հրաքարի այրու-

մից հետո մնացած չկղկղանքը վառարանից դուրս եւ հանվում այն

խողովակի միջով, վորը ցույց է տրված նկարի մեջ աջից ներքեզվ, իսկ գոյացած դազը՝ ողի հետ խառնված, դուրս և գալիս նույն խողովակի վերեվի մասով,

Հետո զազերն անցնում են մի շաբթ բարդ ապարատների միջով, վորտեղ նրանք սառչում են, մաքրվում, կրկին տաքացվում ե, վերջապես, փոխարկվում են ծծմբաթթվի: Այստեղ մենք հնարավորություններ չունենք և վոչ ել կարիք մանրամասնորեն ծանոթանալու բոլոր այդ ապարատների կազմության ու աշխատանքի հետ: Մեղ համար բավական ե իմանալ, վոր նրանցից մեկում, այսպես կոչված շփման ապարատում, հրաքարի այրումից դոյացած զազը ողի ազդեցության հետեւանքով փոխարկվում, և նոր նյութի, իսկ այս վերջինը, ջրի հետ միանալով, տալիս է ծծմբաթթու:

Ահա, ուրեմն, ինչպիսի զարմանալի փոխարկումներ կարելի յեղիտել վսակյա-դեղնազույն հանքը այրիչ թթվի փոխարկվելիս ծծմբաթթվի գործարանում: Բայց չ՛մ վոր մենք կամենում ենք վոչ միայն դիտել, այլ հասկանալ այդ փոխարկումները: Իսկ զքա համար անհրաժեշտ ե նրանք ավելի մանրամասն պարզաբանել:

Ծծմբաթթվի պատրաստումն սկսվում է ծծմբի հրաքարի այրումից: Ամեն մեկը կարծես թե զիտե, ինչ բան ե այրումը. չ՛մ վոր մարդ հաղար անզամ տեսած կլինի, թե ինչպիս ե վառվում փայտը, մոմը, լամպը, լուցկին և այլն: Բայց բացատրել—իրոք, ինչ բան ե այրումը, շատ քշերը կարող են: Այս յերեխույթը պարզաբանելու համար շատ գիտնականներ են շաբչարվել, բայց դրա ճիշտ լուսաբանումը հաջողվել ե միայն մոտավորապես հարցուր վաթուուն տարի մեղանից առաջ:

Հարյուր հաղար տարիներ գոյություն ունի մարդկային ցեղը յերկրագնդի մըրա: Շատ հնուց ի վեր, անցած անհիշելի ժամանակներում, կայծակից կամ հրաբխային ժայթքումից առաջացած կրակի մոտ եյին հավաքվում կապկանման եակների հոտեր՝ տաքանալու լուսաբացի ցրտերի ժամանակ, Սակայն այս եակներն արդեն կարողանում եյին գործեկներ պատրաստել—դրանք մարդիկ եյին: Նրանք սկզբում հանգչող կրակին ճյուղեր ու վոստեր եյին սլվելացնում, իսկ հետո նրանցից մի քանիսի գլխում հանճարեղ յենթագրություն հղացավ, վոր կարելի յե այս վառվող խանձիչը տանել իրենց բնակարանի մոտ և այնտեղ վառ պահել: Ել ավելի ուշ, դիտելով այն կայծերը, վորոնք առաջ եյին զալիս իրենց գործիքներին քարեր հաղցնելիս կամ մշակելու նպատակով փայ-

տակտորներ տաքացնելիս, մարդիկ սովորեցին և իրենք կը ակ ձեռք բերել:

Ա.գ հանդամանքն ինչպես փոխեց նախամարդու կյանքը, Նա այժմ կարող եր յեփել, թիւել, տապակել իր կերակուրը, ապրիսած պաշար միերել ցո րտ ժամանակ հավաքվել կրակի շուրջը տաքանալու, հանդինել բակով թափանցելու ավելի զածան կլիմա ունեցող վայրեր, որակի ոգնությամբ պաշապանվել ամենավտանգավոր իր թշնամիների—զիշատիչ զագանեների հարձակութիւնից: Իսկ ավելի ուշ կը այս հարավորություն ավեց նրան իր կարիքների համար կազին ամաններ մրծել, մետաղներ ձուլել և այլն, կրակի բարերար աղղեցու թունը սարդկանց կյանքի վրա այնքան խոշոր եր, վոր նախամարդու միամիտ խելքը կրակին շասովածալին ծագում եր վերազրում և մինչեվ անզամ իրեն—կրակին շասովածությունը համարում:

Մետաղները ձուլելու և մշակելու ու միշտաք այլ նպատակների համար խարունը կամ նախնական ոջախը պիտանի լինել չեր կարող, վորովհետեւ նրանց տարբությունն այդ աշխատանքների համար անբավարար եր. Ենք սարդիկ վաղուց արդեն սովորել եյին ողաբարուկ վառարաններ սարքել (նկ. 6) կամ առանձին ոջախներ, վրտեղ ուժեղ տաքություն ստանալու համար կրակը բորբոքվում եր փուրսերով, այսինքն ողի ուժեղ մատուցումով:

Թգւմ եր, թե աւասեղից վաղեւց պետք եր յեղրակացնել, վոր այրման համար ող և հարկավոր: Սակայն դեռ մի քանի հարուստ տարի առաջ զիտնա աններ կային, վոր յերկար դատողություններով ապացուցում եիին, վոր յուղաճրագները տարիներով կարող են վազվել վակ տարածության մեջ:

Ժամանակի ընթացքում կատարելազորձվեց տեխնիկան, աճեց և ընդարձակվեց արտադրությունը, առանձնապես նրա ճյուղերի մեջ՝ մետաղաձուլությունը, այսինքն՝ հանքանյութերից մետաղների ձուլումը: Ա.գին ԽI Վ-ԽV դարերում Յելիսայում տարածվեց թուջի գործարում, վորպես ձուլելու մատերիալ: Իսկ թուջի ձուլման համար ասհրաժեշտ են ավելի կատարելազորձված վառարաններ, վորոնք հսարավորություն են տալիս ստանալու նախակալից շափով ամելի բարձր ջերմաստիճաններ, քան առաջներում զործածության մեջ յեղած հնոցներում, ուր հանքան, ութից կարծր յերկաթ եյին ձուլում:

ԽVII դարում Յելիսայի առաջավոր յերկրներին այնքան շատ մետաղ եր հարկավոր արդին, վոր անհրաժեշտություն հա-

մարվեց սովորել տռանվա ոզտադրքածներից ավելի դժգաբ մշակելի  
հանքանյութեր ողտագործելու

Բայց ինչպես կարելի յեր հասնել վառարանների կառարե-  
խագործված բարձր աշխատանքի, տռանց ըժրոններու. թէ ինչ և  
տեղի ունենում այրման միջոցին. Ի՞նչպես լավացնել հանքանյու-  
թեր մետաղի ձուլումը, տռանց պար ու պատկերացնելու. թէ հատ-  
կապես այդ ժամանակ ինչպիսի քիչ հական փոփոխություններ

են կատարիում: Արտադ-  
րության պահանջները հրա-  
մայող կերպով պահանջում  
եյին զիտակաւ որեն ու ոսմ-  
նասիրել գոչ միոյն այր-  
ման պրոցեսները. այլի քի-  
միոկան ան պրոցեսները,  
վորոնք ուղի յեն ունենում  
մետաղները ձու լելիս:



Նկ. 6. Ներքերի յերկոք ձուլելու վառարանը Ան-  
թերը պարունակում են  
իրենց մեջ առանձին մի  
բաղկացուցիչ մաս—ֆլողիստոն (ինքան այրվող թյուն). Ածո-  
խը, ծծումքը, փայտը և այլն պարունակում են մեծ քանակի  
ֆլողիստոն, այդ պատճառով ել նրանք լավ են վառվում: Սովո-  
րայան մետաղակին հանքանյութերը ֆլողիստոն բոլորովին չու-  
նեն, և զրա համար ել նրանք այրվող չեն: Բայց յեթե այդ հան-  
քանյութերն ածուխով տաքացվն, այն ժամանակ ածուխը նրանց  
իր ֆլողիստոնը կտա: Միանալս ֆլողիստոնի հետ, հանքանյութը  
փոխարկվում է մետաղի: Յեթե մետաղը փորելի պատճառով իր  
ֆլողիստոնը կորցնի (որինակ, յերկաթը ժանդուի), այն ժամա-  
նակ նա զառնում է շմետաղալին հողա կամ շմետաղալին կիրա:  
Այրումը—ըստ ֆլողիստոնի տեսության—զա ջերմության ազդե-  
ցությունից բարդ մարմնի քայլքայում ե, ըստ վորում ֆլողիստոնը  
ցնդում ե: Բայց այստեղ ել ինչ գործ ունի ողջ, վոր անհրաժեշտ  
է այրման համար:

Թարմ ողը, — պատասխաննում եր Փլոգիստոնի տեսությունը. — անհրաժեշտ ե նրա համար. վորպեսզի այրման ժամանակ դոյցած Փլոգիստոնը կլանի ու հեռացնի իր հետ Յեթե այրվող մարմին շուրջը ողը շթարմանա, այն ժամանակ նաև շուտով էլեհաղենաց Փլոգիստոնով. այն ժամանակ այրումը կանգ կառնի, վորպհետեւ Փլոգիստոնը ալիքով տեղ չի ունենա անջատվելու:

Հետադայում, յերբ նյութերի փոխարկման որենքների մասին ավելի իմացան, իսկ վոր զլիսափորն ե, մի շաբթ նոր, մինչ առաջ անհատ նույթեր հայտնաբերեցին, այն ժամանակ պարզվեց, վոր Փլոգիստոնի տեսությունը փառերը ճիշտ չի բացատրում. Յակ այն հարցուն—թե ինչ ե այրումը, դիտությունը բոլորովին այլ պատասխան տվեց.

#### 4. ԶԱՐՄԱՆԱԾԻ ԴԱԶԸ

1771 թվին շվեդական համեստ դեղազործ Կառլ Շեելեն (Նկ. 7) Կյեպինզե քաղաքում իր դեղատան փոքրիկ սենյակում տարացնում եր շանդիկարին կարմիր կիրճ: Դա կարմիր փոշի յե, վորին մենք այժմ անվանում ենք կարմիր սնդիկոբսիդ, Շեելեն նկատեց, վոր այդ ժամանակ տուշանում ե ինչ-վոր Շողք (այն ժամանակներում բոլոր զաղերին Շողք ելին անվանում): Հավաքելով առ Շողքը մի առանձին ամանի մեջ, Շեելեն սկսեց նրա հետ զանազան փորձնոր կատարել:

Խոչքան մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ յերեվաց, վոր մոմի բոցն այդ Շողում մա կուրացնելու չափ պայծառ վառվում ե, վոր վառվող ծծմբի աղոտ կրակն այստեղ մողական բաց-կապույտ լույսի նման բռնկում ե, վոր առնասարակ բոլոր մարմինների այրումն այս նոր գտած Շողում ավելի ուժեղ, ավելի յեռանգով ե կատարվում (Նկ. 8, 9 և 10), քան ովկորական ողում. Գտնված նոր տեսակ Շողում տեղավորելով յերկու խոշոր մեղու, Շեելեն նկատեց, վոր այդ Շողքը նպաստում ե շնչառությանը:

Շեելեն Փլոգիստոնի տեսության համոզված կողմանիցներից մեջն եր Դեռ առաջ, սովորական ողի հետ զանազան փորձեր կատարելով, նա այն յեղահացությանն եր հանգել, վոր այս ողը յերկու մասից ե բազկացած—Ենթային ողից, վոր սաստիկ ուժգնությամբ ձգում ե գեպի իրեն Փլոգիստոնը և Շվատ ողից, վոր Փլոգիստոնին բոլորովին չի ձգում: Յեկ այժմ Շեելենի համար

պարզվաց, վոր կարմիր սնդիկոֆսիդից առաջացած գարմանալի գաղը վոչ այլ ինչ եւ, յեթե վոչ մարուր հրապարակից իր զյուտի մասին։ Բայց յեւ-եք տարի դրանց առաջ, վոչինչ չիմանալով Շենիկի աշխատանքների սասին, անգլիական գիտնական Զողեք Պրիստլեյը (նկ. 11) հայտնեց այդ միւնույն գարմանալի գաղի

հայտնաբերման մասին։ Նա ստացավ այդ գաղը, կարմիր սնդիկոֆսիդն արեվի տակ խուշոր կիզապակու ոզնու թյամբ շիկացնելով ան։ Պրիստլեյը նույնպես նկատեց այրմանն ու շնչառութ, անը խիստ նպաստող այդ նոր գաղի ապշեցուցիչ ընդունակությունը և այդ պատճառով ել նրան անվանեց «գեֆլոփիստոն» գաղ, այսինքն՝ ող, վոր ֆլուզիստոն շի պարունակում իր մեջ իսկ մյուս գաղը, վոր նյութի այրումից հետո մնում եր սովորական ողի փակված ծավալի մեջ, Պրիստլեյն անվանեց «ֆլուզիստիրացված ող», այսինքն ող, վոր ֆլուզիստոնով հագեցված և (և այդ պատճառով ել այրմանը չնպաստող)։

1774 թվի աշնանը Պրիստլեյը մի ուղեգորության ժամանակ ընկալ Փարիզ և հայտնեց ֆրանսիական մի շաբք գիտնական ների, վորոնց թվում և զեռ այն ժամանակ յերիտասարդ, բայց հայտնի քիմիկոս Անտուան Լավուալլեին (նկ. 12) իր կողմից հայտնաբերած նոր գարմանալի գաղի մասին։

Լավուալլեն մի քանի տարի արգեն ջանասիրությամբ ուսումնասիրություն եր այրվելու պրոցեսը։ Պրիստլեյի պատմածը միանդամից լուսավորեց այն ճանապարհը, վարով նա կարող եր գտնել իր զրադեցնող կարեվոր հարցի պատասխանը։

Լավուալլեյի աշխատանքի առանձնահատկությունը կայանում եր նրանում, վոր նա իր փորձերի ժամանակ ամեն ինչ ճշտությամբ չափում և կշռում եր։ Շնորհիք նրա աշխատանքներին, շափողական մեթոդը հետագայում կայուն տեղ գրավեց քիմիա-



Նկ. 7. Կառլ Վ. Է. Շ. Շենէ  
(1742-1804).

յաւմ, Այս պրիումների ողնությամբ ելնրան հաջողվեց այլըման գաղտնիքը յերեգան հանել:

Պրիուլեյի գտած զաղը սովորական ողի բաղկացուցիչ մասերից մեկն ե, և դա հենց այն գաղն ե, վոր նպաստում ե ամեն մի տեսակ այրմանը, միանալով այրվող նյութի հետ, —վորոշում ե Լավուազյեն:



Նկ. 8. ածումբի այրումը Նկ. 9. ֆռուֆորի այրումը ԲԲԳածնի մեջ.

այրումը ԲԲԳածնի մեջ.

Նկ. 10. յերնաթի այրումը ԲԲԳածնի մեջ.

Այդ ապացուցելու համար, Լավուազյեն 12 որ ապակյա թռանութում (Նկ. 13) նշված ե Ա. տոռով) տաքացնում եր սնդիկը, այն փայլուն, հեղուկ մետաղը, վորր կարելի է ահանել, որինակի համար, յերմաշափերում թորանոթը ծոված խողովակի ոգնությամբ հաղորդակցում եր ողային Յ զանդի հետ, վոր տեղափորված ե սնդիկի վրա: Նշանակում ե, վոչ արտաքին ողը կարող եր մտնել զանդի կամ թորանոթի մեջ, վոչ ել նրանցում յեղած ողը կարող եր գուրս զալ: Յեվ ահա թորանոթը տաքացնելիս սնդիկը նրանում սկսում ե վերածվել կա, միը փոշու:

Փորձից առաջ Լավուալ, ևս խնայքով չափեց զանդի և թռանոթի ծավալը, իսկ սնդիկը կշռեց:

Յերր կարմիր փոշու զուանուլը դադարեց, Լավուազյեն հանդցըց վառարանի կրակը և թռղեց, վոր ամբողջ պրիբորը սառի: Սնդիկի մի մասը Ծ անոթից մտավ Յ զանդը. դա պարզ ցույց եր տալիս, վոր զանդի ու թորանոթի մեջ յեղած ողի ծավալը փորքացավ, —նրա ինչ-վոր մասը ծախսվեց կարմիր փոշի գոյացնելու համար, Լավուազյեն կրկին խնամքով չափեց ողի ծավալի փոքրացումը և ապա կշռեց կարմիր փոշին: Այդ ժամանակ յերեվաց հետեւյալը.

1. Թորանոթում և զանգի տակ մնացած ողում այլեվս վուշինչ չեր կարող այրպել. վառվող մարխը, որինակի համար, նրանում հանգչում եր, կարծես ջրի մեջ իջեցրած:

2. Կարմիր փոշին ավելի յեր քաշում, քան այն սնդիկը, վորեց նա կազմվել եր:



Նկ. 11. Զոգեֆ Պրիսուելը  
(1733-1804).



Նկ. 12. Անտուան Լորան Լավուազյը  
(1743-1796)

Լավուազյեն դրան այսպիսի քացատրություն տվեց. ողբաղկացած և յերկու մասից,—մեկը, վոր նպաստում և այրմանը, մյուսը—վոր շի նպաստում. Սնդիկը տաքացնելու միջոցին, ողի տռաջին մասը ծախովեց, նա մրացավ սնդիկի հետ և այդ միացումից ստացվեց կարմիր փոշին: Այդ փոշին քաշով ավելի ծանր է, քան սնդիկը, վորովհետեւ վառելու ժամանակ ողի ծախսված մասն ավելացավ սրա վրա:

Ցեզ իրոք, յերբ Լավուազյեն տաքացրեց հետո ստացված կարմիր փոշին, այն ժամանակ վերջինը քառքայլեց. ու զոյացավ սնդիկ և տռանձին մի գաղ: Այդ գաղում շատ լավ վառվում ելին վոչ միայն այնպիսի նուռակեր (որ՝ մարխը, ծծումբը և այլն), վոր սովորաբար վառվում են նաև ողում, այլ մինչեւ անգամ մի

քանի այնպիսի ները, վորոնք սովորաբար ոգում չեն վառվում (սր. յերկութիւն), Այրմանը՝ յագ նպաստող այս դազին Լավուազյեն անվանեց քրվածին, վրավհետեւ նա մտածում էր, իրը թե թթվածինը բուօք բրամենի պարտադիր բաղկացուցիչ մի մասն է, Սա հետագայում յերևաց, վոր ճիշա չե, Այլ փորձերով Լավուազյեն ապացուցեց, վոր թթվածինն իր ծավալով ողի մոտավորապես մեկ հինգիրորդ մասն եւ կազմում, իսկ ողի մասցած չորս հինգիրորդը, համարած, ամբողջովին կազմված եւ այրմանը չնպաստող մի այլ դազից, վորին Լավուազյեն ազօտ անվանեց:

Այրման պրոցեսի և ողի առ նյութերի վրա Լավուազյեն շատ եւ աշխատել, Ա.դ աշխատանքների ժամանակ, վորպես գլխավոր գործիք նրան ծառայել եւ կշեռը, վարի քիմիայի համար ունեցած նշանակության մասին գերմանացի հայտնի քիմիկոս Լիքիին աւում է.


«Իր բոլոր խոշոր գուտերի համար Լավուազյեն պարտական եւ կշեռին, այս անզուզական գործիքին վոր հաստատում եւ բոլոր գիտողություններն ու գուտերուը, հաղթահարում կասկածները, յերագան հանում ճշմարտությունը, ցուց եւ տալիս մեզ այն—մոլորդմամ եւինք արդյոք մենք, թե իսկական ճանապարհի վրա յենք կանգնած յեղելու»

Ցեփ ահա, կշեռքի ոգնությամբ Լավուազյեն ապացուցեց, վոր այրման ժամանակ ծախսվեց ողի թթվածինը, իսկ արն, ինչ ստացվեց նույթի այրումից, կլոռում եւ ավելի, քան ինքը վառվագ նյութը, Վարքանով ավելի, Աւորդ անքան, վորքան կլոռում եր այրման ժամանակ ծախսված ողի թթվածինը:

Բայց, ի՞նչպես թե,—հավանական եւ, կասեք դուք, —չե՞ վոր ամսն սի յերեխու եւ դիսե, վոր յերը վառվում են փայտը, ածուխը, մոմը, լուցկին, վոշ մրայն նրանց վրա վոչինչ չի ավելանում, այլ բնդիակառակը —նյութը համարյա ամրողջովին կորչում, միայն սի փոքր կույտ սոխիք եւ մնում:

Սա միաւն թվում եւ իրր-թե նյութն այստեղ կորչում եւ Բանը նրանումն եւ, վոր փայտի, ածխի, լուցկու, մոմի արման ժամանակ ստացվում էն զիմավարապես ողին նմանվող նյութեր, թափանցիկ, անդույն գազեր, վորոնք և ող են ցնդում, իսկ յեթե արդ գազերը բռնենք ու հավաքինը, այն ժամանակ կշեռը ցուց կտա (արումիզ մնացած մոխրի հետ), վոր նրանք ավելի ծանր են, քան այրված նյութը, ահա թե այդ բանում ինչպես կարելի յե համոզվել, դիտելով մոմի այրումը».

Կղեռքի մի նժարից կախվում է լանարերան մի շիշ (նկ. 14), շշի հատակում զրված է մոսի մի կտոր. իսկ վերեվի մասը լցված է առանձին մի նյութով (նաև նի կիր), վորը լավ կերպով բռնուժ-պահում է ան բոլորը. ինչ վոր ստացվում է մոսի արումից: Ողի աղատ մուտքի համար շշի հատակում տնցք է բացված: Կղեռքի մյուս նժարի վրա զրված են անբան կըշ-սաբարեր, վոր յերկու նժարներն ել հավասար կանգնեն: Յերբ



Նկ. 13. Լավուազյեի փորձը. A—թորանումը՝ սնդչկով, B—ապակյա գանդը, C սնդչկով անոթը:


ամեն ինչ պատրաստ եր, մոմը վառում են. Յեզ թնչ, վառվող մոմով կշռանժարը, վորտեղ նյութը կարծես թե անհետանում է, սկսում է ներքեվ քաշել. Առա մուց արդեն մնաց մի փոքրիկ մնացուկ, և այնուամենայնիվ մոմով կշռանժարն ավելի շատ և կախվել: Նա գերակշռեց նա համար, վոր վասկող մոմի նյութերին ավելացավ նաև ողի թթվածինը, իսկ այդ բոլորը միասին մնաց ապակիա գլանում:

Նշանակում եւ, այրումը—դա նութը թթվածնի հետ արագորեն կատարվող միացման մի գործողություն է (յերեմն և այլ նյութերի հետ), վորի ընթացքում զոյանում է չերմության և լույսի զգալի քանակ:

Ա սպիտակ այրման գաղտնիքը վերջապես լուծվել եւ վաշ միայն արժան, այլ նաև թթվածնային հանքանյութերից մետաղներ ստանալու հարցը: Ինչպես հաստատել է Լավուազյեն, այս-

պիսի հանքանյուռներն իրենցից ներկաւացնում են մետաղի և թթվածնի քիմիական միացութները՝ թարածութով տաքա նելու ժամանակ հանքանյութի թթվածինը միանում է ածխի հետ, և մետաղն աղատվում է հանքանյութից:

Ֆլոդիստոնի հին աեսությանը խորտակիչ հարգած տրիեց: Այրման թթվածնային տեսությունը, վորը հիմնված եր անհերքելի փորձնական տվյալների վրա, ֆլոդիստոնի աեսության ուղիղ հակազատերն եր, վոր այրումը բացատրում եր (նկ. 16) փորպիս նյութերի քարայում: Վերջին աեսության կողմնակիցների՝ ֆլոդիստոնը պաշտպանելու բոլոր շանթերն ի զուր անցան—անհրաժեշտ յեղակ քիմիան վերակառուցել Հագո ազյեյի և նրա շետերդների կողմից մշակված նոր հիմունքներով:



Նկ. 16. Մոմի այրման հետ միաժամանակ մամով կշռութութը զերակը ուսում է:

Փարիզում մինչև անգամ հատուկ տոն կազմակերպվեց, վորտեղ Հավուազյեյի կինը յերաժշտության հանդիսավոր շրջունների տակ ֆլոդիստոնյան քիմիան հանձնեց արքան:

## 5. ԻՆՉՈ՞Վ ԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԻՐԱՐԻՑ ԽՈՌՆՈՒՐԴՅ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԱՑՈՒՄԸ

Այսպիսով, Հավուազյեյի աշխատանքներեց հետո անհասկածելիորեն պարզվեց, վոր սովորական ողի զլիսավոր բազկացուցիչ ժամանակը յերկու գագեր են—թթվածին, վոր ուժեղ կերպով նպաս-

տում և այրմանն ու շնչառությանը, և աղոա, վոր ընդունակ չեն նպաստելու այրմանն ու շնչառությանը: Ա, ժմ մենք կարող ենք հասկանալ, թե ձմբային հրաքարից ինչպես և պատրաստվում ձմբաթթուն:

Ծմբահրաքարը վառվում է, ըստ վորուց նրա միջով փշում են չոր ողի նշանակում է, այն նյութը, վորից կազմված և ծմբաքային հրաքարը, միանում ե ողի թթվածնի հետ: Խողովակի միջոցով հետացվում և այն լինույն գաղը (ողի հետ խառնված), վոր ստացվում և ծմբի այրման ժամանակ: Այդ խեղզող գաղն ստացվում և ծմբի և թթվածնի միացումից և կոչվում և ծմբային գաղը: Կշեռքի միջոցով քիմիկոսները ինամողվել են, վոր, որինակի համար, յեթե յերեսուներկու գրամ ծծումբ այրվի, ապա զրա փոխարեն վաթսունչորս գրամ ծմբային գաղ կոտացվի: Ուրիշ խոսքերով ասած, ծմբի այրման ժամանակ նրա հետ միանում և նույնքան թթվածին, վորքան վոր ինքն և քաշում:

Ծմբային գաղը, ինչպես մենք տեսանք, մտնում է մի այլ ապարատ, վորտեղ նրանից ստացվում և ուրիշ նյութ: Լիովին մաքրված դրությամբ այդ նյութը սպիտակ փոշու տեսք ունի, վորը նույնպես բաղկացած և ծմբից և թթվածնից: Բայց, ըստ քիմիկոսների հետազոտությունների, այս փոշու մեջ թթվածինն արդեն ավելի շատ է, քան ծծումբը: այսինքն—յերեսուն յերկու գրամ ծմբի դեմ նրա մեջ պարունակվում և քառասուն ութ գրամ թթվածին: Սա ինչ և նշանակում: Սա նշանակում է, վոր ապարատում ծմբային գաղը միացավ ողի թթվածնի հետ, և դրա հետեւանքով ել վերածվեց նոր նյութի:


Եեթե այս նյութը, վոր կոչվում և ծմբային աննմդրիս, զցենք ջրի մեջ, այն ժամանակ նաև ուժգին թշոցով միանում և ջրի հետ և կազմում ծմբաթթու: Զուրն ա, ու միջոցին ուժեղ կերպով տարանում եւ:

Իսկ ինչ մնաց վառարանում հրաքարն ալրելուց հետո: Հրաքարային մնացորդները, վորոնք իրենցից ներկայացնում են վոչ այլ ինչ, յեթե վոչ յերկամի ու թթվածնի միացում:

Այժմ մենք կարող ենք հասկանալ և ան, թե ինչից ե կազմված հրաքարը: Եեթե նրա ալրման միջոցին ստացվեց ծմբի ու թթվածնի և յերկաթի ու թթվածնի միացում, ապա նշանակում է, վոր նա ծմբի ու յերկամի քիմիկական միացումն է:

Բայց չե՞ վոր այս քարն իր ատկություններով խիստ տարբերվում և ե' ծմբից, ե' յերկաթից: Ճիշտ ե: Մի քանի նյութերի քիմիկական միացումը հենց զրանով ել ապրերվում և

նրանց հասարակ խառնուրդից, Վերցնենք, որինակի համար, 7 զրամ յերկաթե թեփ և խառնենք և զրամ ծծմբի փաղու հատ Այսպիսի հասարակ խառնուրդում անգամ աշքով, իսկ տռավել յեփս խոշորացնող ապակու ոգնությամբ ծծմբի մասնիկները կարելի յետարբերել յերշաթի մասնիկներից։ Դա հասարակը խառնուրդ եւ



Նկ. 15. Ի՞նչ բանի համար և ո՞ւաք ծծմբաթթուն։

Բայց յեթե փորձեր այդ խառնուրդը թեկուղ մի տեղում շիկացնել, այն ժամանակ նա ինքն իրեն կսկսի տաքանալ ու շիկանալ ու զրանից հետո նրա մեջ ալեփս վոչ մի ձեվով չի կարելի տարբերել վոչ յերկաթը, վոչ ծծումբը։ Ստավեց յերկաթի և ծծմբի քիմիական միացություն։

Նշանակում ե, քիմիական միացություններով խիստ տարրերվում ե այն նյութերից, վորոնցից կազմվել ե նա—քիմիական փոխարկումների ժամանակ տեղի յետնենում նյութերի խորը փոփոխություն։

Դրանից հետո հասկանալի յե, թե ինչմւ ծծմբաթթուն քոյս-  
րովին նման շե հրաքարին, կամ աղաթթուն—, երակրի աղին,  
վորից նա պատրաստվում ե, պղնձարշասպը— պղնձին. և այլն:

Ախը հրաքարից ծծմբաթթվի մեջ ե անցել միայն ծծու մըը,  
և, բացի դրանից, նա քիմիապես միացավ թթվածնի և ջրի հետ:

Հետո մնաք կծանոթանանք քիմիական փոխարշումների  
բաղմաթիվ որինակների հետ և կիմանանք քիմիական միացում-  
ների ու հասարակ խառնուրդի սհջ յեղած ալ կարեվոր տարրերու-  
թունները: Իսկ աւստեղ այժմ պատասխաննենք մի այլ հարցի,  
վոր կարող ե ծագել ո՞նքերցողի մեջ:

Եեթե ծծմբաթթու պատրաստելու համար ծծմբայն հրա-  
քարից պետք ե միայն ծծումը, ապա չի կայելի արդյոք ծծմ-  
բային գազ ստանալու համար այրել հնոց ծծումը, և վոչ թե  
հրաքարը:

Կարելի յե, և այդ մինչեվ անզամ ավելի ստրոգ ե ու հեշտո-  
նախկին ժամանակներում (մինչեվ 1838 թիվը) ծծմբաթթուն  
պատրաստում ելին համար ա միայն ծծու մրէց: Սակայն ծծմբա-  
թթու պատրաստելու համար վատնել ծծու մըը, յերբ նրա պա-  
հանջը շատ միծ ե, ձեռնտու չե, և ու զգակի չեր ել հերիքի: Բայց  
կան ե տսել, վոր այժմ ամրող աշխարհում պատրաստվու մ ե սոս  
տասմնինգ մի, իսն տոնն ծծմբաթթու, վորը քիմիական արդյունա-  
բերության ամենակարեվոր արդյունքներից սեւն եւ նա անշրա-  
ժեցա ե պարարտանյութեր, ներկեր, պայմուցիւ նյութեր ար-  
տադրելու, նավի մաքրութու և մի ամրող շարք այլ արտադր-  
քանքների համար (Նկ. 15):

Այդ պատճառով ել անհրաժեշտ յեղավ ծծմբաթթվի արտադ-  
րության համար փնտոել ավելի եծան և սատչելի հումութ.  
ինչպիսին ե, որինակի համար, հրաքարը:

## 6. Ի՞՞նչ ԲԱՆ Ե ԶՈՒՐԸ

ՄԵՆՔ ծանոթացանք ողի կազմության հետ. այն նյութի,  
վորն ամեն կողմից շրջապատում ե մեզ և առանց վորի շարու-  
նակել մեր կյանքն ան նար կրիներ: Ողի մասին անհրաժեշտ  
կլինի խոսել նաև հետազոտման իսկ այժմ հարց տանք մեզ— ի՞նչ  
բան ե ջուրը:

Ա, ո հարցը կարող ե տարորինակ թվալ: Ամեն մեկը զիտե,  
ինչ ե ջուրը: Յուրաքանչյուրին հայտնի յե, վոր նա լինում ե

հեղուկ, կամ պինդ (սառույց), և կամ գազակերպ (ջրագոլորշի): Առանց ջրի մենք չենք կարող ապահով նույնապես, ինչպես և առանց ողի: Ջուրը տեխնիկական մեջ նույնապես կարեվորագույն դեր է խաղում: Ջրի սպառաթամբ աշխատում էն մեր բոլոր շողեմեքենաները: Ֆարերիկներում և գործարաններում նա զործադրվում է զանազան նույնապես լուծելու համար, լվանալու, սառեցնելու համար և այլն: Դա ամեն մեկիս լավ ծանոթ և մեզ համար ամենաանհամեշտ նույնին և չարժե մինչեւ անզամ հարց տալ, թե նույն և ջուրը:

Սակայն քիմիկոսը կրկին կհարցնի ձեզ, ծանրթ եք արդիոք քիմիայի հետ: Յել յեթե դուք կատասխանեք, վոր վոչ, ապա նա կոսի պնդել, վոր դուք իսկի ել չգիտեք, թե ի՞նչ ե ջուրը: Դրան վորպես ապացույց նա ցույց կտա ձեզ մի զարմանալի բան—հենց ւեր աշքի առաջ, նա ամենասովորական, անվաս ջուրը կդարձնի ուժգին պայթող նյութ: Այդ կանի նա հետեւվալ ձեվավ:

Ներքելից խցանով փակված մի անոթի մեջ, վորի միջով անց են կացված ծայրերին պլատինե թիթեզներ հագցրած ելեկտրանան հաղորդալարեր, նա ջուր կլցնի, վորն ածխաթթվով մի քիչ թթւեցրած ե՝ ելեկտրական հոսանքը լավ անցկացնելու համար: Թիթե ների վրա կամբացնի նույն հեղուկով լիթը լրած յերկու ապահով զլան: Հետո յրի միջով բաց կթողնի ելեկտրական անրնդնատ հոսանքը, թիթեզների վրա իսկուն կակսեն բաժանվել ինչ-վ-ր զագերի պղպջակներ, բարձրանալ գլանների վերելի մասը և նրանցից դուրս մղել ջուրը: Աշքով կարելի յետեսնել, վոր մեկ զլանում (նկարի աջ կողմում) յերկու անզամ ավելի զարդարական գագարի մասը մյուսում:

Գլանները զագերով լցնելով, քիմիկոսն զգուշությամբ հանում է նրանց, որքիներով փաթաթում, նրանց անցքերը բիպ միացնում իրար և զլանները վեր ու վար գարձնելով. խնամքով խառնում է զագերը: Անունեաեվ, բաժաննելով գլաններն իրարից, նրանց անցքերը մատեցնում ե մոմի բոցին, յեվ... դուք լսում եք իւլացուցիչ պայթյուն: Դուրս յեկագ, վոր ելեկտրական հոսանքի շնորհիվ վերլուծվող ջրից ստացված զագերի խառնուրդը խիստ պայթուցիկ նյութ ե: Ճշմարիտ չե արդյոք, վոր զա շատ զարմանալի յե:

Բայց մենք, իհարկե, չենք բավականանա միայն զարմանքով, այլ կինդրենք քիմիկոսին բացատրելու, բանն ինչու մն ե աստեղ: Նա սիրով մեզ ամեն բան կպարզաբանի, ըստ վորում վոչ միայն պատմելով, այլև ցուցադրելով, վորն ավելի համոզե-

ցուցիչ եւ նա զլանը նորից ջըռվ կլցնի, կամրացնի թ թէղների վրա և հօսանքը բաց կթողնի:

Յերբ զլաններից մեկը գազով կլցվի, մյուսում դեռ զաղը կիսով չափ կլինի: Հանելով տուջին զլանակը, բիմիկոսը կիշեցնի նրա մեջ վառվող մարիսը: Մարիսն իսկույն կհանդիի, բայց դրա փոխարեն ինքը գաղը կրոնկի թեթեվ ճայթյունով և կսկսի վառվել հաղիվ նկատելի բաց-կապտավուն բոցով: Այդ ժամանակ դադով լցում եւ և յերկրորդ զլանը նույն ձեկով քիմիկոսը միրցնում եւ այս զլանն ու այս անգամ նրա մեջ իշեցնում վոչ թե վառվող, այլ՝ միայն անրոց այրվող մարիսը: Մարիսը հանկարծ բնձկում եւ բոցավառվում պայծառ կրակով:

Թթվածին չթ արգուք այս զլանում—կարցնեք դուք, վերսիշելով Լավուազյեի փորձերը:

Այս, մարուր թթվածին եւ,—կպատասխանի ձեղ քիմիկոսը: Բայց մյուս զլանում սի ուրիշ գաղ եր, վոր արմանը չի նպաստում, սակայն զրա փոխարեն ինքն եւ այրվում: Այն դաղը բուլոր դագերից ամենաթեթեմին եւ, թափանցիկ եւ, հստ չունի և կոչվում է ջրածին:

Ջրածինը վառվում եւ, հետեվապես, նա միանում է թթվածնի հետ: Իսկ բնչ տեսակ նյութ եւ ստացվում դրանից,—կրկն կարցնեք դուք:

Քիմիկոսը նորից փորձով կպատասխանի: Սկզբում նա ձեղ ցույց կտա, վոր ջրածին կարելի յեւ ստանալ վոչ միայն ջրից, ալեվ, որինակի համար, ծծմբաթթվից: Մի շի մեջ նա կցի ցինկի կտորներ (նկ. 17) և ձագարի միջոցով նրանց վրա կլցնի ջրով բաց արած ծծմբաթթու: անմիջապես շշում կոկսեն վատվել գաղի պղպջակներ: Միասմանակ սպասելով, քիմիկոսն ապա կյա խողովակով շշից դուրս յեկած գաղը կհավաքի դլանի մեջ և այրվող մարիսի ողնությամբ ձեղ ցույց կտա, վոր այս գաղը—ջրածին եւ նրանից հետո, վերցնելով ջրով լցված թուրը, նա ջրածինը կվառի: հենց խողովակից դուրս գալու ժամանակ—նրա վրա կտեսնեք վառվող բաց-կապտավուն բոց, Վերցնելով բուլ-բային մաքուր, չոր, սառը բաժակը, քիմիկոսը կզահի նրան այս բոցի վրա:


Դուք չեք հավատում ձեր աշքերին—բաժակը քրանեց, և նրա պատերի վրա հայտնվեցին ջրի մանրիկ կաթիլեր:

Միթե ջրածնի այրումից ջուր եւ ստացվում, կհարցնեք դուք զարմանալով:

Այս, ամենասովորական ջուր—կպատասխանի քիմիկոսը, վորովհետեւ ջուրը հենց ջրածնի ու թթվածնի քիմիական միա-

ցումն ե, ըստ վորում նրա կաղմության համար ծավալով յերկու անգամ ավելի ջրածին ե պահանչվում, քան թթվածին։ Վոր ջուրը կազմված է սիսիայն ջրածնից և թթվածնից, դա ձեզ ցուց ե արված և ջրի տարրալուծան և նրա ստանալու փորձերով։ Այժմ արդեն հասկանալի յեզ դառնում ջրածին հասկացողությունը (տղուր ծծող)։

Նախքան քիմիկոսից բաժանվելը մի բան ել հարցնենք




Նկ. 16. Ջրի տարրալու ծումը ելեկու Նկ. 17. Ջրածնի ստացում ծծմբաթթվարական հոսանքով։

Նրան—ինչու նա խողովակից դուրս յեկող ջրածինն անմիջապես չվառեց, յերբ շիշն արդեն թթվով լցվում եր, ինչու դրանից հետո նա միառածանակ սպասեց։


Նրա համար,—կպատասխանի քիմիկոսը,—վորպեսի մեր շորերն ու յերեսները չվնասվելին։ Ախր այս շիշ մեջ ոգ եր զտընվում և սկզբում նրանից դուրս եր գալիս ջրածինն ողի հետ խառնած։ Ողումն ել թթվածին կա։ Իսկ ջրածինը թթվածնի հետ խառնած իրենից ներկայացնում ե պայթող նյութ, շառաչող գաղ. վորի պայթումը քիչ առաջ ցուցադրվեց, Յեթե ժամանակից առաջ յես բոցը մոտեցնելի խողովակին, վորից դեռ շառաչող գաղը շարունակում եր դուրս գալ, առա շիշը կպայթեր և մեր շորերն ու յերեսները թթվի և ապակու կտորների մի լավ բաժին կստանային։

Ահա թե ջրից ինչ կերպ ե ստացվում պաթուցիկ նյութը։ Սակայն, չնայած նրա ուժին, քիմիկոսները սովորել են զաշ միայն իրենց և ուրիշների շոքերը պաշտպանել նրանից, այլեւ և տեխնիկայի մեջ գործադրել նրան։ Բանը նրանումն ե, վոր ջրածնի



թթվածնի մեջ արքվելու ժամանակ, այսինքն՝ նրանցից ջուր գուանալու միջոցին, առաջանում և շատ ուժեղ երմություն։ Առ ջերմությունը հատուկ դրսիքների միջոցով պատագում է մետաղներ, եռացնելու և կարելու համար։ Տասնութերորդ նկարում պատկերած այրիչի բոցի սուր ծառը յերկաթյա պլիտայի վրայով տանելով, կարելի է, որինակի համար, նրան կարել ինչպես սոմը դանակով։ Այստեղ զազերը խառնվում են այրիչից դուրս դալու միջոցին և զբա համար ել արումը հանդարտ և կատարվում։ Շառաշող զազե բոցի մեջ հալվում է մինչեվ անգամ պլատին մետաղը, վորի հալման համար պահանջվում է 1800 աստիճան ջերմություն (նկ. 19)։

Հնաթերցողի մեջ կարող են մի հարց ևս ծագել—յեթե ամեն



Նկ. 18. Շառաշող զազի այրիչ (հատած)։ Արտարին Խողովակով ներած բողնովում ջրածին, իս առ ջրա խողովակի ներսով անցնող այլ խողովակով ներս և Բողնովում թթվածին։ Ենթառ զազերը խառնվում են նեղացրած ծայրում և վառվում։

Մի տեսակ ջուր միայն թթվածնի և ջրածնի բիմիական խառնուրդ և, ապա բնչիցն եւ, վոր բնության մեջ տարրեր յթեր ել են պատահում—ծովում՝ աղի յի, զետում՝ անալի, լինում են կոշտ և փափուկ, բուժիչ և վոշ բուժիչ։


Բնության մեջ բիմիապես մաքուր ջուր չկա, նրա հետմիշտ խառնված են լինում առ կամ այն նյութերը, Գոլորշիացրեր վորելի ամանում գետի ջուրը, և դուք կտեսնեք, վոր ամանի հատուկում սպիտակ փառ և կապեր, նշանակում եւ, այս ջուր լուծված պինդ նյութեր են յեղել. Այդ պատճառով ել շողենաթանաներում, հեղաւեռներում, թենոցներում նստվածք և առաջանում. Ցեթե ամանում զոլորշիացնենք այնքան ծովի ջուր, վորքան առաջ գետի ջուր եւ ինք վերցրել, այն ժամանակ ամանում անհամեստ ավելի նստվածք կդոյանա, վորովհետև ծովային չըտմ լուծված են մեծ քանակի դանապան աղուր—կերակրի. դառը և այլ աղեր կոշտ ջրում լուծված են մեծ քանակութամբ և իր կամ զիազու Բուժիչ ջրերում լուծված են այնպիսի նյութեր, վո-

բոնք մի շաբթ հիվանդությունների ժամանակ թեթեկացում են պատճառում: Բնության մեջ յեղած ջրից բոլորովին մաքուր ջուրը ստանալու համար պետք է առանձին թրող աղաբանների միոցով մարրել բնական ջուրը (նկ. 20): Նրանց մեջ ջուրը տաքանալուց զոլորշի յեղանում, իսկ զոլորշին մի այլ մասում առենավ. ջրի յեղածվում: Այս տեսակ ջուրը կոչվում է թուրած ջուր:

Թորած ջուրը զործ է ածվում գլխավորապես յարորատուրիաներում և զիտական հետազոտությունների ժամանակ, իսկ տեխնիկայում՝ միայն մի քանի թիմիական արտադրություններում: Բայց ամենելին վոչ ամեն ջուրը պիտանի յեղացած տեխնիկական նպատակների համար:


Դորձնականում դուք շատ լավ զիտեք, վոր բնական ջուրը լինում է կոշտ և փափուկ. Կոշտ ջուրում դանդաղ ու վատ են յեփում այնպիսի որոդուկտներ, ինչպիսին են միսը, սիսնոր, լորին նրա մեջ վատ և փրփրում ոճառը, թեյը թուլլ և նստում, յեռացնելիս շատ նստածքը և առաջացնում: Այդպիսի ջուրը շոգեկաթսաների գործածության համար պիտանի չի (նստավածքը տալու պատճուռով), անսպետք և բրդալվացքաների, մետաքսագործածքային ու մետաքսանեկան գործարանների, թղթագործական, սուայի, շաքորի, կաշվի, ողեթորման և բազմաթիվ այլ արտադրությունների աշխատանքների համար: Այդպատճառով ել հաճախ անհրաժեշտություն է զգացվում շոգեկաթսաների կամ արտադրողական նպատակների համար նշանակված յուրը մ. քրել նրա մեջ պարունակած խառնուրդներից: Այդ հաջողվում է կատարել ջրի մեջ խառնելով վորոշ քանակի ու տիչ կիր, ուտիչ նատրոն, սոդա:

Իսկ ինչ է ստացվում այդ դեպքում:



Նկ. 20. Պայթուսիկ դագություններու վառարան (արգաւ): Ներթեկում — վառարանը նրա մեջ տեղավորուս են նյութը, վորը պետք է հայւլ: Օ յուր զովակի սիջոց ներս և թաղաքում թթվածինը և առաջակի միջով՝ ջրածընը, ուսուն խառնվում են և ԱԱ անցքի մոտ վազվում:

Զրի կոշտությունը, ինչպես ասված և արդեն, կախված է նրա մեջ յեղած մի քանի կողմանակի խառնու բդներից, վորոնք գտնվում են նրա մեջ լու ծված դրությամբ։ Ուտիչ կրի, սողայի կամ ուտիչ նատրոնի հետ ունեցած փոխազդեցության հետևվանքով այդ նյութերը վերածվում են այլ ջրում ջլուծվող նյութերի և այդ պատճառով վորպես տականք ներքեց են իջնում։ Տականքից անջատված ջուրն այդ հետեւյանքով փափկանում է տեխնիկական նպատակների համար միանդամայն պիտանի դառնում։



Նկ. 20. Չուր թորելու ապարատ։ Կաթոան (աջ) լցվում է ջրով և մինչեւ յեռալը տաքացվում։ Զրտին դալորորին խողովակով անցնում է կիսատակառում տեղափոխած դալարաւկի մեջ (շախից), վորի մեջ ներքեվից վեց եկ հոսում և սառը չուր։ Գուռը դալարում կում սառչում է, խտանում, ջուր դառնում և սկսում է հավաքվել ներքեց։

Զրի և ոդի հետ ծանոթանալուց հետո, այժմ խոսենք վառելանյութի մասին։ Մենք պետք ենք դիտենանք, թուշ և ներկայացնում իրենից այն նյութը, վորը համարյա ամեն մի տեսակ վառելանյութի զլխավոր բաղկացուցիչ մասն և կազմու մ։

## 7. Ի՞՞նչ և ԱՅՐՎՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՃՆՈՑՆԵՐՈՒՄ

Եերբ մոտենում ես վորեվե Փարրիկի կամ գործարանի, առաջինը, վոր աչքի յե ընկնում, ու գործարանային հսկա խողո-

վակներն են, զորոնք դործարանալին բոլոր մասցած շենքերից հպարտությամբ վերեվ են ցցված (նկ. 21):

Այս խողովակները—ժամանակակից ֆարբիկային և զործարանային հաստատումների բնորոշ կողմն ե, (յեթե, ի հարկ ե, նրանք չեն աշխատում այլ տեղից ստացվող ելեկտրական եներգիայով), վորի պատշաճ կառուցումից՝ հաճախ կախված ե լինում ամրող գործարանի աշխատանքը. Զե՞ վոր նրանք հաղորդակցվում են հնոցների հետ, իսկ հնոցը—դա այն աղբյուրն է, վոր զործարանային բոլոր հաստատումները կերակրում ե եներգիայով և շարժողության մեջ դնում մերենաները:

Ինչպէս համար այզքան բարձր ու թանգ նստող խողովակներ են շինում: Այդ հարցին զգվար չի պատասխանել, յեթե հիշենք. ինչ ե այրումը: Զե՞ վոր այրումը այրվող նյութի և թրթվածնի ուժզին կատարվող քիմիկան միացումն ե, վորի ժամանակ առաջանում ե տաքություն, Այրման համար անհրաժեշտ թթվածինը ծախսվում ե ողից: Բավական ե պատկերացնել վորելիք մեծ ֆարբիկում կամ զործարանում որենկան այրվող գառականյութի են հոկա քանակը, վորպեսզի հասկանանք, թե վորքան ոդ կպահանջվի նրա այրման հմար: Գործարանային հնոցով ահազին ոդ պետք ե անցնի, իսկ այդ հնարավոր ե միայն չափ սովագարշութան ժամանակ, այսինքն՝ մեծ, բարձր խողովակի լինելու գեպքում:

Գործարանային հնոցներում վառվում են ամենաբազմազան վառելանյութեր. Վոմանց մեջ վառվում ե փայտ, մյուսներում փայտածուխ, յերրորդներում քարածուխ, տորֆ, նազթ, այրվող զաղեր և այլն: Ցեվ սակայն, հաճախ իրար չնմանվող այդ բոլոր տեսակ վառելանյութերի մեջ համենայն գեպս ինչ-վոր ընդհանուր բան կա: Այդ ընդհանուրը զգվար չի գտնել: Որինակի համար, ինչ ե մնում փայտից, յեթե չենք թողնում, վոր նա մինչեւ վերջ արթիւ: Ածուխ. իսկ տորֆը, նա նույնպես ածխանում ե, իսկ նազթը. Ահա այստեղ, թվում ե, այս հեղուկը ածխի հետ ընդհանուր վորելիք բան չունի: Սակայն յեթե հիշենք, թե վորքան մըուր և ստացվում նավթն այրելիս, ապա պարզ կլինի, վոր նրա մեջ նույնպես ածուխ կա: Ախր ամեն մի մըուր վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ածխի շատ մանրիկ մասնիկներ: Մըուր կտա, որինակի համար, լուսատու զազը, յեթե դադարեցնենք ոդի հոսանքը դեպի այրիչը: Նշանակում ե, բոլոր մեր ամենատարածված վառելանյութերի կազմի մեջ և ածուխ կա, այդ պատճառով ել հետաքըր-

քիր կլինի իմանալ, ածխի այրումից թնչ տեսակ նյութ և ստացվում:

Կարելի յե յենթագրել, վոր այդ հարցին պատասխանելու համար բավական կլինի հավաքել և հետազոտել այն ծուխը կամ գաղերը, վորոնք խողովակից զուրս են զալիս. Վոչ, դա այնքան ել պարզ չի լինի. ԶԵ վոր հնոցում մէշտ ել մաքուր ածուխ չի այրվում, նա էր մեջ միշտ ել զանազան խառնուրդներ և պարունակում, իսկ շատ դեպքերում քիմիապես միացած և այլ նյութերի հետ, վորոնց այրումից առաջացած արդյունքների մի մասը նույնպես հեռանում և խողովակիդու Բացի զրանից. խողովակից հեռանում և և ծուխը, այսինքն՝ զաղերից բռնված կոշտ նյութերի—մոխրի, շվառված ածխի և այլոց մասնիկները; Նշանակում և խողովակից հեռացող ծրի և գաղերի մեջ բազմաթիվ տարբեր նյութերի խառնուրդ կա, և միանդամից վորոշել՝ թե նրանցից վորոնք են ածխի այրումից ստացվել, վորոնք՝ վոչ—դժվար կլինի: Գիտության մեջ նման հարցերին պատասխան ստանալու համար գործադրվում են այլ յեղանակներ: Այդ նպատակի համար կատարվում են, այսպես կոչված, փարձեր, ըստ վարում աշխատում են զործը բարգացնող բոլոր ավելորդությունները փորձից հեռացնել: Թե ինչ և նշանակում այդ, հասկանալի կդառնա այսպիսի մի որինակի վերլուծումից:

Մենք կամենում ենք իմանալ, թե թնչ նյութ և ստացվում ածխի այրումից: Մեղ համար վնրը ձեռնառու կլինի վառել—վմյութը, նմվթը, թե քարածուխը: Դե, իհաբեկ, ածուխը, և ըստ վորում հնարավորության չափ ավելի մաքուրը, վորպեսզի այլ նյութերի խառնուրդները չխանգարեն մեղ: Վորտեղ ավելի լավ և վառել այն, ողմամ, թե թթվածնի մեջ, Բայց և այնպես, իհարկե, ավելի լավ և թթվածնի մեջ, վորովհետեւ ոդում, բացի թը մածնից, կան նաև այլ նյութեր: Այդպես ել անում են, այսինքն՝ այրում են մաքուր ածուխ մաքուր թթվածնի մեջ, վորում, իմիջի այլոց. շատ ավելի պայծառ և ավելի ուժեղ և վառվում, քան ոդում: Ասիսի այրումից հետո թթվածնով անոթից կառծես թե ածուխը պիտի անհետ անհետ անար, իսկ անոթում մնար վոչ ոդից, վոչ ել թթվածնից արտաքինով չտարբերվող մի նյութ: Բայց դա միայն այդպես և թվում: Վառվող մարխը այս նյութի մեջ հանդչում ե, կարծես ջրում թաթախեն, այս նյութը կարելի յե մինչեւ

անդամ ջրի նման միանգամից մյոււսի մեջ լցնել (նկ. 22). Այս ծանր զաղը կոչվում է ածխաբբու զագ, նա ածխի և թթվածնի քիմիական միացումն է, ըստ փորում իմացել են, վոր նրա ամեն մի էշ զբամ ածխին 32 զրամ թթվածին և ընկենում Դա այն նույն զաղն է, վորի պղպջակների շնորհիլ լավ կվառը, լիմոնաղը, զարեջուրը փրփրակալում են:

Ահա թե ինչ,—կասի ընթերցուը,—իսկ վորտեղից և ընկենում ածխաթթու զաղը լիմոնաղի, կվասի կամ զարեջրի մեջ. ախր այդ խմիչքներում յերեք ածուխ չի յեցել:

Արդար և արզյոք դա: Ախր կվասը և գարեջուրը պատրաստում են ածիկի ողնությամբ: Իսկ յեթե ածիկը դնենք ուժեղ կրակի վրա—նա կածխանա, նշանակում է, նրանում ածուխ կա: Ահա հենց արդ ածուխն ել խմոր ման ժամանակ մասամբ միացած թթվածնի հետ, կաղմելով ածխաթթու զաղը Այս թթվածինը նույնպես մտնում եր ածիկի կաղմի մեջ. Ճիշտ է, այդ սիջոցին բոցավառված այրում տեղի չի ունեցել, բայց նա միշտ ել չի լինում, յերբ փորեն մարմին միանում է թթվածնի հետ: Ժանզակալումը, սրինակ, թթվածնի և յերկաթի նույն միացումն է, բայց յերբ յերկաթը ժանզում է, վոչ մի բոցավառված այրում չի կատարվում:

Լավ, իսկ լիմոնաղը, լիմոնաղն



Նկ. 22...։ ռուզինը. վոր աշուկներ, զա դործութանային հսկա խողովակներն են...։

արհեստական կերպով  
հաղեցնում են ած-  
խաթթու գաղով, իսկ  
վերջինն ստանում են  
հատուկ յեղանակով  
վառարանային գաղե-  
րից կամ, որինակի  
համար, կրաքարից:  
Այս—կրաքարից, թե-  
կուզ և դա առաջին  
հայցքից տարրի-  
նակ թվա: Յեթե կրա-

Նկ. 22. Ածխաթթու գաղի փոխազբաժնում:


Ժեղ կրակի վրա, այն ժամանակ նրանից անջատվում-հեռանում  
և ածխաթթու գաղը, մնում ե միայն չհանդած կիրը:



Նկ. 23. Կրաքար. այբելու հանքահողային վառարան:


Դըս համար կըտքարը կոքսի հետ միասին լցնում են հատուկ հանքանորային վառարանը և կոքսը վառում (նկ. 23). Դրանից զոյացած ջերմությունը քայլայում և կըաքարը, ըստ վորում նրանից ստացվում են յերկու նոր նյութեր. 1) ածխարքար զագ, վորը հեռանում և ծխանցքի միջոցով կամ ծծվում և տուանձին խողովակի միջով, 2) չնանգած կիր, վոր ննում և վառարանում.

Այս ձեռվ կամ այլ միջոցներով ստացված ածխաթթու գաղ դը լայնորեն գործադրվում և աեխնիկայի մեջ, Բացի խմիչքների գերոհիշյալ գազավորումից, գա գործ և ածվում սոդա, կապարային շպար արտադրելու համար, գործադրվում և շաքարային



Նկ. 24. Զոր ստառայցի բակները


և շատ ուրիշ արտադրություններում։ Շատ ուժեղ սղմելիս ածխաթթու գաղ դը հեշտությամբ վերածվում և հեղուկի, վորը պահում են պողպատյա ամուր բալմեններում։ Հեղուկ ածխաթթվի գոլորշիացման ժամանակ այնքան միծ սառնություն և ստացվում, վոր այդ միջուկին նրա մի մասը վերածվում և պինդ, ձևանման մասսայի։ Ուժգին սղմելով, նրան սամլում են և այսպիսով ստանում են այսպիս ասած չոր սառույցի բլոկներ (նկ. 24). Զոր ստառայցը գործադրվում և ստուցման նպատակներով, Գոլորշիացման ժամանակ գա ամբողջովին փոխարկվում և չոր ածխաթթու գողին, վորն իսպառ անվաս և մթերքների համար, հոտ չունի և սինչե անգամ հանդեպ հրդեհի ծառայում և վոր-



Նկ. 25. Հրամարիչ  
(հատած):

պես պաշտպանության միջոց, վորովհետեւ ջրի նման կրտկը հանդցնում է:

Հենց այս, արդմանը չնպաստելու հատկության վրա ել ճիշճակած և ածխաթթու գաղի գործադրումը հրամարիչներում, Այս տիպի տարածված ապարատներից մեկը բաղկացած և մետաղյա Անոթից (նկ. 25), վոր լցված և սողայի ռուծույթ և վորեւ հեշտությամբ փրփրող նութի (բնապանիր, հեղուկասոսինձ, մատուտակ) խունուրդով: Բուցի դրանից, անոթի ներսում — զամբյուղում գտնվում եւ Կյերկարավիր սրվակը թթվոր: Աւելի դարվածի ժամանակ Սարկանը ջարդում և սրվակը և թթաւն լցվում և խառնուրդի մեջ: Ծնորսի նրա սողայի հետ ունեցած փոխազդեցության, գոյանում և ածխաթթու գաղ, վորը գուրս և սղմում փրփուրը, և գաղի ու փրփուրի շիթն ուժգնությամբ Օանցքի միջով դուրս և պրծնում ապարատից:



Նկ. 26. Սծխաթթու գաղի ստացումը:

Այս շիթը շրջափակում է այրվող նյութը և զրահեանքով ողի մոտեցումը դեպի նա խափանվում է, ու բոցը հանգում է: Սովորական հրամարիչը կարող է մի քանի տասնյակ լիոր գաղ ու փրփուր տալ:

Բայց այնուամենայնիվ վորտեղից եւ վերց, ում այստեղ ածխաթթու գաղը:

Նա ջոկվում է սողայից թթվի գործողության տակ: Ածխաթթու գաղ կարելի յեւ ստանալ նաև թթվով ներգործելով կրաքարի վրա: Կրաքարը թթվի ազդեցությունից թշում է, կարծես սկսում է յեռար ու ածխաթթուն անջատվում է նրանից:

Բայց ախը հենց այդ նշանուկներում է, վոր, կրաքարում ածուխ կա:

Այս, դրանումն ել կարելի յեւ համոզվել, կատարելով հետևյալ փորձը:

Եշի մեջ լցնում են կրաքարի կտորներ (նկ. 26), վրան աղաթթու ածում և դրանից հետո անջատվող ածխաթթու գաղը հավաքում մի դատարկ բանկայի մեջ: Հետո վերցնում են ա-

առնձին մետաղի—մագնիդիումի մի բարակ շերտ (վորն սպում վառվում և զայտուցիչ պայծառ լույսով և զործ և ածվում, որին նաև, լուսանկարչության մեջ պիշերը կամ թույլ լույսի ժամանակ նկարներ հանելու), վառում են նրան և բանկայի մեջ իջեցնում։ Մագնիդիումը շարունակում և վառվել և բանկայի մեջ, քստ վորում նրա պատերի վրա նստում են ածխի մանրիկ մասնիկներ։ Վորուղից հայտնվեցին նրանք Գիտենալով, ինչ եւ այրումը, մեզ համար գժվար չի լինի լուծիլ այդ։


Յերբ մագնիդիում մետաղը վառվում և ոդում, ստացվում եւ սպիտակ փոշի—մագնեզիա։ Այդ փոշին մագնիդիումի և թրթվածնի միացումն եւ Մագնիդիումի ոյը ուսումնական գաղի մեջ կրկին ստացվում և մագնիդիա Բայց չթ վոր բանկայում աղատ թթվածին չկար, վորուեղից նա կարող եր առնվել մագնիդիա կազմելու համար։ Այս գոյ մի տեղից, քան ածխաթթու զաղից Նշանակում եւ, ածխաթթվի տթվածինը միացավ մագնիդիումի հետ, իսկ ածխաթթու գաղում յեղած ածուխն աղատվեց և նստեց բանկայի պատերի վրա։

Բայց միայն կրաքարում և սոդայում չի, վոր ածուխ կա, նա կա նույնպես, որինակի համար, կավճի, մարմարի և մինչև անգամ... աղամանդի մեջ։ Այս, թանկարժեք, ծիածանի բուրգ գույներով շողշողացող աղամանդի մեջ։

Դուք տեսած կլինեք, ի հարեւ, ինչպես են խոշորացույց ապակու միջոցով արեից վառում զւանակը։ Այս կերպ ան սրանից զեռ 230 տարի տուած մի քանի զիտնականներ Իտալիայում ցույց տվին, վոր մեծ խոշորացույց ապակու միջոցով կարելի յե աղամանդն արեգակից այրել։ այդ ժամանակ նա կանհետանա առանց հետք թողնելու, Ութսուն տարի անց, մեզ արդեն հայտնի ֆրանսիական զիտնական Լավուազյեն զրադվեց աղամանդն այրելու փորձերով (նկ. 27)։ Նա ապացուցեց, վոր աղամանդն այրելիս ստացվում է միայն ածխաթթու գազ և ուրիշ վոչինչ։ Բանից դուրս յեկավ։ վոր այդ ժամանակ ստացվում եւ քաշով ճիշտ այնքան ածխաթթու, վորքան ստացվում է նույն քանակի մի կտոր ածուխ ա.րելու ժամանակ։ Նշանակում եւ, աղամանդը կազմված եւ հենց նույն այն նյութից, ինչ վոր մաքուր ածուխը։ Թանկազին, փալլուն, թափանցիկ, պինդ քար աղամանդը և սե, փիրուն ու անդուրեկան տեսքով ածուխը կազմված են ճիշտ միենալուն տեսակ նյութից։ Բանից դուրս եւ գալիս,

Անց ալդ նյութից ել կազմված ե նաև գրաֆիտը, վորը գործ են  
ածում մատիտներ պատրաստելու համար:

Այս նյութը, վորից կազմված ե ածուխը, գրաֆիտը և ա-



Նկ. 27. Աղամանդն այբելու Հավուազիեյի փորձը:

գամանդը, կոչվում ե աջիսածին: Նշանակում ե, ածուխը, գրա-  
ֆիտը և աղամանդը մինսույն նյութի՝ ածխածնի տարրեր տես-  
քերն են: Յեվ հետևապես, մենք առաջ այնքան ել ճիշտ չեյինք  
արտահայտվում, ասելով, որինակի համար, վոր կրաքարում ա-  
ծուխ կա: Կրաքարում, ի՞չպես և սողայում, ածխաթթու գո-  
ղիք մեջ և այլն, ճիշտն ասած, վոչ մի ածուխ չկա, այլ ածխա-  
ծին կա:

### 8. ԳԻՄԻԱԿԱՆ ԵՆԵՐԴԻԱ

Մենք տեսնում ենք, վորքան շատ և տարածված ածխածի-  
նը, այն նյութը, վորը վառվում ե մեր գործարանների հնոցնե-  
րում: Հետազայուա մենք դեռ ելի կխոսենք այդ նյութի մասին  
և կիմանանք, թի նա վորքան մեծ նշանակություն ունի նաև  
կյանքի համար: Առայժմ նորից վերադառնանք հնոցներին:

Բոլոր գործարաններում ել միալն բնական վառելանյութ—  
փալտ, ածուխ, նավթ... չեն վառում: Մի քանի գործարաննե-  
րում այդպիսիներն սկզբում դարձնում են արհետական վառե-  
լանյութեր և հետո արդեն վերջինները վառում: Զննենք որի-  
նակի համար, այս տեսակ վառելանյութերից մեկը՝ ջրային զազը:

Նա գործադրվում է մետաղաձուլական և ապակե գործարաններում շինությունները տաքացնելու համար և այլն։ Այս թերինչպես են գա ստանում։

Կոքսը գարսում են ալսպես կոչված գեներատորական վառարանում և բորբոքում են տաք ողի հոսանքով։ Յերբ կոքսը լավ բոցավառվում ե, տաք ողի հոսանքը դադարեցնում են և ողի հետ միասին ջրային գոլորշին բաց թռղնում վառարանը՝ ի՞նչ և տեղի ունենում այդ ժամանակին։

Այդ հասկանալու համար հիշենք, վոր ջուրը թթվածնի և ջրածնի քիմիական միացումն եւ Խոկ կմքութ կորան ստացվում և քարածիի շիկացումից, համարյա առանց ողի մասնակցության և հետևապես, ածխածին և պարունակում իր մեջ։

Եթիցայտ կոքսի միջով անցնելով, ջրային գոլորշին վերաբերում և թթվածնի և ջրածնի թթվածինն այդ ժամանակ քիմիապես միանում է կոքսի ածխածնի հետ, վորից ստացվում եւ ածխաթթու գազ, կասեք գութ։

Վաշ, ջրից ստացված թթվածինն այստեղ այնքան քիչ ե, վոր վառարանում ածխաթթու գազ կազմվել չեր կարող։

Պատահել ե ձեզ տեսնել արդյոք այն փոքրիկ կապույտ բոցերը, վորոնք վազվում են ածխակտորների վրա, յեթե վառարանը շատ շուտ փակում են, յերբ ածուխները դռու լրիվ շեն վառվելու Անշուշտ պատահած կրինի Խոկ այսպիսի դեպքերում ի՞նչ և լինում սենյակում։ Ածխահոտ Յեթի վառարանը շատ շուտ նույն կողպում, այն ժամանակ նրա մեջ ոդաքարշություն տեղի չի ունենում, իսկ ածուխնը գեռ շարունակվում ե վառվելու Վորապեսդի գա ալրվի ու ածխաթթու գազի վերածվի, թթվածինը հերիք չի անում, ալստեղ ստացվում ե ածխածնի և թթվածնի այլ միացում—ածխածնի ոքսիդ, կամ ածխահոտալին գազ։

Ինչպէս և տարբերվում ածխածնի ոքսիդը ածխաթթու գտնից, վոր նրանում յեղած ածխածնի միննուլն կշռային քանակին ընկնում ե ուղիղ յերկու անգամ պակաս թթվածին, քան ածխաթթու գազում։ Ածխաթթու գազի մեջ ամեն մի 12 գրամ ածխածնին ընկնում ե 32 գրամ թթվածին, իսկ ածխածնի ոքսիդում միայն 16 գրամ։ Ալստեղ մենք կը կին հանդիպեցինք այն դեպքին, յերբ լերկու նլութ տարբեր հարաբերություններով միանալով, տալիս են տարբեր քիմիական միացումներ (առաջին նման գեղքը, ինչպես հիշում ե ընթերցողը, ծծմբի և թթվածնի որինակն եր)։

Ածխածնի՝ ոքսիզը շատ վտանգավոր գաղ ե, վորովհետև  
ածխահոտը հենց նրանից ե առաջանում: Յեթի մեկ լիտը ողի  
միջ պարունակվի ընդամենը վեց հազարերորդական գրամ ած-  
խածնի որոշի, այն ժամանակ այդ տեսակ ողի ներշնչումը 12  
ըովելի ընթացքում մարդու համար մահացու կլինի: Յեթի ած-  
խածնի ոքսիզն ավելի լինի, ապա այդ ողը համարյա անսիրա-  
կան մահ կպատճառի: Պետք ե կրկին հիշել վոր ածխածնի մա-  
քուր ոքսիզը վոչ զույն ե ունենում, վոչ ել հոտ և այդ պատճա-  
ռով ել նրա ներկայությունն ողում միշտ ել հեշտ չե նկատել:  
Յեկ հենց դրա համար շատ զգույշ պիտք ե լինել վառարանները  
վառելիս և խողովակները ժամանակից վաղ չփակել: Չի կարելի,  
նմանապես, ավտոմեխնայի շոբիչը փակ գարաժում գործի  
զցի, վորովհետև զուրս յնկած գաղերը ողարունակում են ած-  
խածնի ոքսիզ:

Վերադառնանք այժմ ջրային գաղին: Շիկացած կոքսի մի-  
ջով ջրային գոլորշի անցկացնելու ժամանակ վերջինը տարրա-  
լուծվում ե, իսկ դրանից ստացված թթվածինը ածխածնի հետ  
կազմում ե ածխածնի ոքսիզ: Մենք դա այս ձեռու կազմով կարող ենք  
գրել—

Ջրային գոլորշին տալիս ե ջրածին+թթվածին,

թթվածինը+ածխածինը տալիս են ածխածնի ոքսիզ:

Նշանակում ե վառարանից դուրս ե գալիս ածխածնի ոքսիզ  
ջրածնի հետ խառնված: Հենց այդ խառնուրդն ել կոչվում է  
ջրային գաղ:

Ի՞նչ կպատահի, յեթե այդ խառնուրդը վառենը ողի ներ-  
կալությամբ: Այդ հարցին այժմ մենք ինքներս կարող ենք հեշ-  
տությամբ պատասխանել: Խառնուրդ կազմող նյութերը—ջրա-  
ծինն ու ածխածնի ոքսիզը կվառվես, այսինքն՝ կմիանան ոդի  
թթվածնի հետ: Ջրածնի ալրուրից կստացվի ջուր (գոլորշու տես-  
քով), ածխածնի ոքսիզի այրումից—ածխաթթու գաղ: Կը ճատ  
ձեռվ մենք դա այսպես կարող ենք գրել—

Ջրածին+ածխածնի ոքսիզ+թթվածին (ջրային գաղ)  
տալիս են ջուր (գոլորշի)+ածխաթթու գաղ:

Ջրային գաղից և ողի թթվածնից կստացվեն յերկու այլ  
նյութեր—ջուր և ածխաթթու գաղ: Ուրիշ վոչինչ, վաչ, արդ դեռ  
բոլորը չեւ ԶԵ վոր ջրային գաղը վառելանլութ ե, նշանակում

դ, նրա տյրումից տաքություն կստացվէ։ Սակայն տաքությունը, ի հարկե, արդեն նյութ չէ, զա ինչ-վոր ուրիշ բան եւ ջերմությունը շարժման մեջ և զնում մեր մեքենաները, այլ խոսքերով, նա ընդունա՛ և աշխատանք կատարել Հետեապես, ջերմությունն առանձին տեսակ եներգիա յեւ ինչպես գիտեք, զանե այլ տեսակ եներգիաներ, որինակի համար, ելիկորական, վորը նունպես մեր մեքենաների համար ուժի աղբյուր եւ հանդիսանում), Նշանակում ե, իմիթական մի օտք յեւնալիքների ժամանակ (որինակ, այրման) եներգիա յեւ ուժակվուն։ Փորձենք վերլուծե, վորտեղից ե նա առաջանում։

Մեր բիրած որինակի մեջ տեսանք, վոր ուժեղ տաքության ժամանակ (շիկացած կոքսից) ջրային գոլորշին վերլուծավում և թթվածնի և ջրածնի, Նշանակում ե, արդ վերլուծման համար տաքություն և ծախսվում, նա կարծես թթվածնի և ջրածնի կողմից կլանվում և սի վորոշ ժամանակ թագնված ձևով մասում և նրանց մեջ։ Դա զրենք այսպիս—

ջուրը տալիս ե. թթվածին+ջրածին—տաքություն։ Մինուսնշանով (—) նշանակում ենք այն, վոր տաքությունն ալդ ժամանակ ծախսվում ե։

Եերբ ջրածինը կառվում ե, տյսինքն՝ միանում և թթվածնի հետ և ջուր կազմում, ալդ ժամանակ, ինչպես զիտենք, անպիսի ուժեղ ջերմություն և առաջ զալիս, վորի մեջ հալվում են ամենազգարահալ մետաղները։ Ա. դ ժամանակ ջերմությունն ազատվում ե, վոր այսպիս կարելի յեւ զրի առնել—

թթվածին+ջրածին տալիս են ջուր+ջերմություն։

Ճիշտ շափումներով հաստատված ե, վոր թթվածնի և ջրածնի միացման ժամանակ (յերբ ջուր և կազմում) նիս «յիշան զերմություն» և ազատվում, վորքան վոր պիտք կլինի ծախսել նրանից նույն քանակի ջուրը թթվածնի և ջրածնի վերածելու համար։

Նույն բանը նկատվում ե նաև ածխի վերաբերմամբ։ Ածխի այլպիսու ժամանակ տաքությունն ազատվում ե. ալրումից ստացվող արդյունքների (ածխաթթու զագի կամ ածխածնի ոքակի բաղկացուցիչ մասերը տաքրալուծելու համար պիտք ե ջերմություն ծախսել։ Մի շարք ալ նյութերի հետ պատահում ե և հակառակը. նրանց միանալու ժամանակ ջերմությունը ծախս-

գում ե, իսկ քայրայման միջոցին — աղատվում, Այդպիսի նյութերին են վերաբերում, որինակ, բոլոր պայթուցիկ նյութերը

Այսպիսով մենք տեսնում ենք, զոր նյութերի իմաստան փոխարկումների ժամանակ տեղի յեւ ունենում և նրանց ներ կապված եներգիայի փոփախություն՝ կամ աղատվում և կամ կրանվում։ Նյութը սերտ կերպով կապված է եներգիայի հետ (և հակառակը)։ Զրի վերլուծման մեր փորձի մեջ ջերմությունը վատնվեց և վերածվեց թթվածնի ու ջրածնի իմաստան քաղնված եներգիայի, Զրածնի այրման, այսինքն՝ նրա թթվածնի հետ սիանալու ժամանակ, յերկուսի քիմիական եներգիան ել աղատվում և վերածվում է ջերմության։ Նշանակում ե, վառելանյութ այրելով գործարանային հնոցներում, մենք ստիպում ենք նրա բաղկացուցիչ նյութերը թթվածնի հետ միանալու և աղատելու նրանց մեջ թակնված եներգիան, զորը և մենք ոգտագործում ենք զարգարանա, ին կամ ֆարբիկային աշխատանքների համար։

Այսպիս ուրեմն, պարզաբանելով, թե ինչպես ետեղի ունենում այրումը գործարանային հնոցներում, մենք կարող ենք ասել, զոր նրանցում այրվող գլխավոր նյութը ածխածինն եւ Ածխածնի լրիվ այրման ժամանակ գործարանի խողովակի միջով հեռանում և ածխաթթու գաղը։ Բայց միթե միայն այդ, Աղովակով հեռացող գաղնը մեջ չկմն արդյոք ելի վորեն այլ նյութեր։

Կանո Որինակ, վորքան ել զոր լավ չորացրած լինի վառելափայտը, նրա այրվելու միջոցին ստացվում է և ջրային գոլորշի, Զրային գոլորշի ստացվում և նույնպես նավթի ալրման ժամանակ, Հիշենք, ինչպես և սկսում քրտնել ֆարյուղամամփի ապակին, յերբ մոնք նրան նոր ենք կպցնում։ Դու քարյուղի այրումից ստացված ջրային գոլորշին և նստում սառն ապակու վրա, իսկ քարյուղը չե զոր նավթից և պատրաստվում, ի՞նչ յեղրակացություն կարող ենք հանել այստեղից։ Վերհիշենք, վոր ջուրն ստացվում է ջրածնի այրումից։ մենք ուրեմն կասենք, զոր փայտի ու նավթի կողմի մեջ նույնպես ջրածնին և մանում՝ այլ նյութերի հետ քիմիապես միացած։

Վառելանյութի տարբեր տեսակների մեջ կարելի յեւքի տեսակ նյութեր ել գտնելու Յերր, որինակ, քարածուից գաղային գործարանում յենթարկվում եցամաք թորման, այսինքն՝ տաք շինության մեջ առանց ողի տաքացման, այն ժամանակ թորման այլ արդյունքների հետ ստացվում է նաև ամմանիտի

գաղր. զա այն նույն գաղն եւ, վորն անուշաղրի սպիրտի հռու և արձակում<sup>1)</sup>, Հաստ քիմիկոսների հետազոտություններից ամմանիակը ջրածնի և աղոտի քիմիական միացություններ նշանակում եւ, քարածխի կազմի մեջ մտնում եւ նաև ազոտը:

Այսպիսով, հետազոտելով այրման արդյունքները, կարելի յի դատողությունն անե, այրվող նյութի կազմության մասին. Քիմիկոսներն այդ յեղանակն առանձնապես հաճախ զործագրում են ածխածնի միացությունների քիմիական կազմը վորոշելու համար:

Պործարանի խողովակից դուրս յեկող գազերը ցույց են տալիս, ինչպիսի նյութեր են վառվում գործարանային հնոցում, այլ խոսքերով—քիմիապես իրար հետ միացած ինչ նյութերից եւ բաղկացած այն վառելանյութը, վոր նրա մեջ այրվում եւ Բայց հնոցում, բացի դրանից, մեռմ են ելի մի շարք այլ նյութեր, վոր ամեն մեկին հայտնի յի մոխիր անունով: Այս նյութերը նույնպես մտնում եյին վառելիքի կազմի մեջ (քիմիական այլ ձեր միացություններով): Մոխրի ամենազլիսավոր բաղկացուցիչ մասերից մեկը կալիումն եւ—քիմիապես միացած թթվածնի և ածխածնի հետ (աղատ վիճակում կալիումը փափուկ, ոդում շատ անկայուն մետաղ ե), Յեթե մոխիրը ջրով վողողենք և քամենք, այն ժամանակ կալիումի այս միացումը լուծվում և ջրում և ստացվում ե մոխրաջուր: Շնորհիվ այդ միացման, մոխիրը հանգիստանում ե նաև վորպես կալիումական լավ պարարտանյութ, վորն առանձնապես ոգտակար ե հողից մեծ քանակությամբ կալիում վերցնող արմատապտուղների համար:

Այսպիսով, նշանակում ե, վոր գործարանային հնոցներում վառվում են ածխածին, ջրածին և մի շարք այլ նյութեր: Տարբեր ձեռքով իրար հետ միացած այդ նյութերը մտնում եյին այս կամ այն տեսակ վառելանյութի կազմի մեջ: Վառվելիս այս նյութերի միացությունները քայլ այլում են, նրանց մի քանի բաղկացուցիչ մասերը միանում են ողի թթվածնի հետ, և այդ ժամանակ նրանց մեջ թաղնված քիմիական հներդիան աղատվում եւ ու վերածվում վառելանյութի: Յեկ ան հենց այս քիմիական եներդիան տալիս ե այն ուժը, վոր շարժման մեջ ե դնում մեր գործարանների և ֆաբրիկների մեքենաներն այն դեպքում, յերբ

1)Անուշաղը սպիրտը հենց ամսոնիակ գողի ջրում լուծված հեղուկն եւ

այդ նպատակով՝ գործարաններում ու ֆաբրիկներում վառելանյութ և այրվում:

Իմանալով, ինչ և իսկապես այրվում գործարանային հնոցներում, այժմ անցնենք այն հարցին, թե հենց մեր մեջ չը կատարվում արդյոք այրման նման վորես գործողություն:

## 9. ԽԱՌՉ ԲԱՆ Ե ՇԱԶԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ նախորդ դարի վերին Լավուազյեն հետազոտում երադի կազմությունը և այրման յերևույթները, միաժամանակ նազրագում եր նաև շնչառության հարցի ուսումնասիրությամբ: Նա ապացուցեց, վոր մեր ներշնչած ողը տարբեր կազմությունունի, քան արտաշնչածը, վոր վերջինում անհամեմատ ավելի շատ ածխաթթու գազ կա, քան առաջինում; Համաձայն նրա հետազոտությունների՝ ներշնչած ողում նրա ամեն մի 10.000 մասին ընկնում եր մոտավորապես 2000 մաս թթվածին. իսկ ածխաթթու գազ՝ ընդամենը յերեք մաս (մնացած մասը գլխավորապես ազոտ եր). իսկ արտաշնչած ողում նույն 10.000 մասին ընկնում եր արդեն թթվածին սիսյն 1600 մաս (այսինքն՝ ողում յեղած նրա քանակը պակասեց մեկ հինգերորդ մասով), իսկ ածխաթթու գազ՝ 438 մաս, այսինքն՝ համարյա 140 անգամ ավելի շատ, քան առաջ: Դա ցույց է տալիս, վոր ներշնչված ողի թթվածնի մի մասը մեր մարմնի մեջ ծախսվում է, իսկ նրա փոխարեն կազմվում ածխաթթու գազ, վորագիսին և արտադրվում են մեր արտաշնչման ժամանակ:

Այդպես եյին այն արդյունքները, վորոնց հասավ Լավուազյեն: Այդ արդյունքները բոլորովին ճիշտ դուրս յեկան, և ցանկության գեպքում հեշտությամբ կարող ենք փորձերով ճշտել նրանք:

Եեթե վերցնենք չհանգած կրի փոշի, ջրի մեջ խառնենք ու լավ թափանարենք, ապա թողնենք պղտորությունը պարզվի և զգուշությամբ վերևի թափանցիկ հեղուկը թափենք. այն ժամանակ կստացվի այսպես կոչված կրազուր, այսինքն ջուր, վորի մեջ լուծված ե մեքիչ կիրո Յերբ այսպիսի ջրի մեջ ածխաթթու գազ անցկացնենք (վորտեղից ել որ նա ստացված լինի), այն ժամանակ նրա մեջ առաջանում է սպիտակ պղտորություն, վորն աստիճանաբար նստում է հատակին: Իր կազմությամբ այս պղտորությունը նմանվում է կոաքսարի կամ կավճի: Եեթե կրաջրե-

միջով անցկացնենք վորես այլ գազ, որինակ՝ թթվածին, ջրածին, աղոտ, այդ գեղքում վոչ մի պղտորություն չի ստացվիր Այդպիսով կրաջուրը իրենից հանդիսանում է լավ միջոց ածխաթթու գազը ճանաչելու համար, նա, ինչպես ասում են քիմիկոսները, ածխաթթվի լավ ռեակտիվ եւ,

Կրաջուրը կողնի մեղ ակնառու կերպով տեսնելու ներշնչած և արտաշնչած ողի մեջ յեղած տարրերությունը, Թսանութերորդ նկարում պատկերված է խցանով փակված յերկու փոքրիկ խողովակով մի շեր, վորը լցված է կրաջրով։ Յեթե խողովակների ողնությամբ այս ջրի մեջ սովորական ող անցկացնենք, այդ գեղքում բավական յերկար պետք է սպասել մինչև վոր հազիվ նկատելի պղտորություն հայտնվի—սովորական ողում քիչ ածխաթթու գազ կա։ Բայց բավական է բերան առնել Ա աջ խողովակը և նրա միջով արտաշնչած ող փչել այնտեղ, վոր իսկույն և յեթ պղտորություն առաջանակում կա։ պահանջանակով փչել կրաջրի մեջ),

Ածխաթթու գազը ինքնին թթվածնի և ածխածնի միացումն է, իսկ յեթե մեր մարմնի մեջ նա կազմվում է ողի թըթվածնից, ուրեմն, նշանակում է, վոր մեր մարմնում ածխածնին կա։ Այդ, ի միջի այլոց, կարելի յեւ տեսնել և այն փաստից, վոր ուժեղ տաքության ժամանակ ամեն մի կենդանի եակի մարմին ածխանում է (որինակ, հրդեհի զոհ գնացած մարդու գիտակը)։ Ալսպիսով, մեր մարմնի մեջ վերջին հաշվով ածխածնը միանում է թթվածնի հետ, կազմելով ածխաթթու գազ։

Բայց այս մենք շնչում ենք վոչ մաքուր թթվածնով, այլ ողով, վորի բաղկացուցիչ գլխավոր մասը (քանակով) կազմում է աղոտը ի՞նչ, աղոտը նմայնպես պետք է շնչառության համար, նա նմայնպես միանում է մեր մարմնի վորես նյութի հետ։

Բանից դուրս է գալիս, վոչ։ Շնչառության միջոցին աղոտն ինչպես մտնում է մեր թոքերը, արտաշնչելիս այդպիս ել դուրս է գալիս և ինչ քանակով վոր մտնում է, նույն քանակով ել դուրս է գալիս։ Նա միայն կարեն թե ջրալի յեւ գարձնում շընչառության համար անհրաժեշտ թթվածինը, իսկ ինքը շնչառու-



Նկ. 28. Արտաշնչած ողում ածխաթթու գազ լինելու աղացուցելու գործիք։

Քյան համար պետք չեւ Լավուազյելի ողնականներից մեկը փորձեց անգամ այսպիսի մի փորձ կատարել — նա վերցրեց մաքուր ջրածին և նրան ավելացրեց այնքան թթվածին, վոր ողի նման մի խառնուրդ ստացավ, միայն այն տարբերությամբ, վոր նրանում ազուրը փոխարինված եր ջրածնուր Այս խառնուրդով նա փորձեց շնչել Յեկ Բնչ Յերևաց, վոր նա ել կարելի է նույնպես ազատորեն շնչել, ինչպես և ողը:

Սովորական վառելիքի այրման ժամանակ (փայտի, քարածխի, նավթի) բացի ածխաթթու դադից, ստացվում և նաև ջուր, վոր առաջանում ե վառվող նյութի ջրածնի և ողի թթվածնի միացումից Վրբեն նման բան նկատվեմ և արդյոք շնչառության միջոցին:

Հիշեցնք, ինչ ե ստացվում. պատուհանի սառն տղակու վրա շնչելիս, կամ գոլորշու ինչպիսի կծիկներ են դուրս պրծնում մարդու քթածակերից, յերբ նա ստունամանիքային ոգ և շնչում Նշանակում ե, շնչառության ժամանակ ել ջուր և ստացվում Նշանակում ե, սեր մարմնի կազմի մեջ նույնպես և ջրածնին մտնում...

Այդ այգպես ե, կարող ե ասել ընթերցողը, — իսկ ինչու այրման ժամանակ առաջանում ե ուժեղ կրակ, ստացվում և ջերմություն, իսկ շնչառության դեղքում արդպիսի բան չի պատահում:

Ճիշտ չե, շնչելիս մեր մարմնում նույնպես տաքություն և առաջանում, ինչպիսի սառնամանիք ել լինի փողոցում, մեր մարմնի ջերմաստիճանը միշտ ել հավասար և լինում, որինակ, յերեսունվեց ու կես աստիճանին Այդ ջերմաստիճանը պահպանելու համար տաքություն ե պետք, վորպիսին ստացվում և մեր մարմնի նյութերի և թթվածնի միացումից: Ճշմարիտ ե, վառելանյութի այրման դեղքում զարդանում և խիստ մեծ աաքություն և բոց նկատվում, վորպիսիները շնչառության ժամանակ շեն լինում:

Նման ձևով (այսինքն՝ ողից կլանելով թթվածինը և անջատելով ածխաթթու գաղը) շնչում են և բոլոր կենդանիները, ինչպես ցամաքում, նույնպես և ջրում ապրողները, Վերջիններն այդ ժամանակ ոգտագործում են այն թթվածինը, վոր միշտ լուծված ե լինում բնական ջրում, Յեփած ջրում, վորից հեռացած են առաջուց նրա մեջ լուծված գաղերը, ջրային կենդանի-

Ներն ապրել չեն կարող և այդ պատճառով ել վերջիվերջո վո-  
չընչանում են:

Այսպիսով, շնչելու, ինչպես և այրման ժամանակ, որինակ, փալտի, անջատվում են ածխաթթու գազ և ջրային գոլորշիներ։ Դուքս և դալիս, իրը թէ, վոր այրման և շնչառության միջև մեծ նմանություն կա։ Յեթ վորովինեաւ շնչառության կտպակցու-  
թյամբ, ինչպես առված ե արդեն, ջերմություն և առաջանում, ապա և վոչ շատ վաղուց (15—20 տարի սրանից առաջ) գիտնա-  
կանները մտածում ենին, իրը թէ մեր որդանիզմում տեղի լի-  
ունենում ինչ-վոր դանդաղ ալրման մի բան—մեր որդանիզմի հյուսվածքների ածխածինն ու թթվածինը ներշնչված ողի թթվա-  
ծնուով ոքսիդանում են և ինտիմ ալս գործողության որդա-  
նիզմն ստանում և իր ջերմությունը։

Սակայն հետադառությունները ցուց տվին, վոր իրակա-  
նում բանն այդքան ել հասարակ չե։ Այժմ դիտեն, վոր որդա-  
նիզմում շնչառության կապակցությամբ տեղի յեն ունենում  
նշանակալից չափով ավելի բարդ որբողություններ, վորոնց  
մեջ թթվածինն այլ գեր և խաղում, քան վասելանյութի այր-  
ման միջոցին։

Մեր խնդրի մեջ չեն մտնում այս որբողությունների ման-  
րամասն վերլուծումը, Կասենք միայն, վոր շնչառությունն ըստ  
եյության հանդիսանում և վորպես փոխանակություն կենդանի  
որդանիզմի հյուսվածքների գաղերի ու արտաքին միջավարի  
(ողի, ջրի) միջե, վորանդ նրանք ապրում են։ Արտաքին մի-  
ջավայրից որդանիզմի մեջ և մտնում հյուսվածքների կենսա-  
գործության համար անհնաժեշտ յեղած թթվածինը, իսկ ածխա-  
թթուն և ջուրը, վորպես անպետք նյութեր, անջատվում են նրա-  
նից։ Այս արտադրանքները կադմվամ են որդանիզմի մի շարք  
բարդ նյութերի քայլքայման դեպքում, ըստ վորում անջատվում  
են և վերջիններում մթներված քիմիական եներգիան, վոր հան-  
գիսանում և որդանիզմի եներգիայի աղբյուրը, իսկ շնչառու-  
թյան ժամանակ կլանված թթվածինը քիմիապես փոխներգործ-  
վելով որդանիզմում քայլքայումից մասցած վոչ բարդ նյութերի  
հետ, կրկին կազմում և արտածելի բարդ նյութեր և զրանով ել  
որդանիզմը կրկին ըլցնում եներգիայով։

Այսպիսով կենդանի որդանիզմում շնչառության ժամա-  
նակ տեղի յեն ունենում ըոլորովին յուրահատուկ գործողու-  
թյուններ, վորոնք անկենդան ընության մեջ չեն նկատվում։

Բայց ինքնին հասկանալի յե, վոր և այս գործողություններ-տեղի յեն ունենում ֆիզիկո-քիմիական վորոշ որենքների համաձայն:

Այժմ հետեւյալ հարցը տանը մեզ:

Մենք իմացանք, վոր կենդանիները շնչառության միջոցին մշտապես ողից թթվածին են կլանում։ Հսկայական քանակի թթվածին և վատնվում նաև բնության ու տեխնիկայի մեջ այրման և ոքսիդացման պրոցեսների ժամանակի Սրա հետեւ վանքով չի սպառվի արդյոք յերկրի ազատ թթվածինը, Զի հասնի արդյոք մի ժամանակ, յերբ ողի ամբողջ թթվածինը կփոխարինվի ածխաթթու գազով և բոլոր կենդանիները շնչառ կլինեն առանց թթվածնի: Յեզ ինչու մինչև այժմ այդ չի պատահել. յեթե կյանքը, ինչպես ազացուցում և զիտությունը, յերկրի վրա արդեն միլիոնավոր տարիներ գոյություն ունի:

Զի պատահել այդ նրա համար, վոր յերկրի վրա ամենահին ժամանակներից սկսած կենդանիների հետ միասին զոյլություն ունեն և կանաչ բույսեր, վորոնք ողից կլանում են ածխաթթու գազը և նրա փոխարեն արտադրում ազատ թթվածին և հենց գրանով ել մշտապես մաքրում ողը:

## 10. ԲՈՒՑԱԸ ՅԵՎ ԱՇԽԱԹԹՈՒ ԳԱԶԸ

Բուսականության այն կանաչ գորգը, վորով ծածկվում են մեր յերկրի զանազան վայրերը, կարծես թե ազատ թթվածին արտադրող հսկա, բնական մի լարորատորիա յե: Անհիմն չե, վոր մարդ կանաչ անտառում այնպիս ազատորեն և շնչում, իզուր չե. վոր խեղդող բնակարանում կատարած որվա հողեմաշ աշխատանքից հետո այնքամն լուրեկան և զրունել կանաչ մարդագետնում: Մեր թռքերն այստեղ հողմանարգում են փշացած ողից և թարմանում բույսերի ընձեռութ կենդանարար թթվածնով:

Այս հաստատել կարելի յե փորձերով, վորոնք ցանկության դեպքում կարող ե ամեն վոք կատարել:

Փորձի համար ավելի լավ ե վերցնել վորմե ջրային բույս: Բայց ջրում կմ արդյոք ածխաթթու գազ Այս, կա, Դրանում համոզվելու համար կոգնի արդեն մեզ ծանոթ միջոցը—կրաջուրը: Յեթե գետակի, արհեստական լճակի կամ լճի ջուր վերցնենք և նրա վրա ավելացնենք կրաջուր, այդ դեպքում իսկույն

պղտորություն կնկատվի, վորագ և գալիս կը և ածխաթթու զազի իրար վրա ունեցած քիմիական փոխազդեցությունից, Յեթե արհեստական լճից կամ գետակից վերցրած ջուրը նախորոք մի լավ յեռացնենք, իսկ ավելի լավ կլինի—թորենք, այդ դեպքում պղտորություն արդեն չի ստացվի, վորովհետև յեռացնելիս կամ թորելիս ածխաթթու գազը կցնդի ջրից, Մաքուր ջրում ածխաթթու գազ չկա, իսկ բնական ջրում—գետային, լճային և այլն—նա համարյա միշտ ել լինում եւ ԶԵ վոր այդ տեսակ ջրում քիչ ող և լուծված լինում, վորի մեջ, թեկուզ և չնչին քանակությամբ, ածխաթթու գազ ե պարունակվում։ Ջրում լուծվում և նույնպես և ջրային կենդանիների շնչառության ժամանակ ստացված ածխաթթու գազը. նա կարող է այնտեղ ընկնել և այլ ճանապարհներով։

Մեր փորձի համար ամենից լավ կլինի նախապատրաստել ածխաթթվով հազեցած ջուրը Դրա համար հարկավոր և միայն կրաքարից, կալինից կամ մարմարից աղաթթվի ոգնությամբ ածխաթթու գազ ստանալ և միաժամանակ նրան ջրի մեջ անցկացնել։

Այսպիս ուրեմն, լուծված դրությամբ ածխաթթու պարունակող ջրով լցնենք մի ապակյա բաժակ և տեղավորենք այնտեղ վորեւ ջրային բույսեր։

Նրանց փոխարեն կարելի յե ծառից պոկել քիչ ավելի շատ կանաչ տերևներ, միայն նրանց ջրի մեջ պետք եւ դնել քանի դեռ թարմ են ու դեռ չեն թառամել։ Բույսերը ծածկենք ձագարով, իսկ ձագարի վրա անցկացնենք նույն ջրով լցված մի փորձանոթ և այդ բոլորը միասին դնենք լույսի տակ։ Մի քանի ժամանակակից հետո կտեսնենք, վոր տերևները ներքնի կողմից կծածկվեն ինչ-վոր գազի պղպջականման արծաթագույն շերտով։ Յեթե մեր գործիքը մի քիչ ավելի յերկար այդ դրությամբ թողնենք, այդ դեպքում մեր փորձանոթի վերեկի մասում բավական քանակությամբ գազ կիավաքվի, ըստ վորում ջրի մի մասը նրանից դուրս կմղվի ու կլցվի բաժակի մեջ (նկ. 29)։ Յեթե այդ գազը վառվող մարմուկ փորձենք, ապա կտեսնենք, վոր նա գազի մեջ բռնկում ե պայծառորեն ու վառվել սկսում։ Բույսը բրկածին եւ տնջատել։


Այժմ փորձենք միենույն փորձը կատարել բայց այս անգամ վերցնենք վոչ թե ածխաթթու պարունակող ջուր, այլ յեփած ջուր, ինչքան ել վոր մեր գործիքը նույն դրությամբ թող-

նենք, միւնույնն ե, այդ գեպքում թթվածին չի ստացվի: Նշանակում ե, բույսի մեջ թթվածինը գոյանում և հենց ածխաթթու գաղից, վոչ թե վորեն այլ բանից:

Ածխի այրման և նրանից ածխաթթու դազ զոյանալու ժամանակ տաքություն և անջատվում, այսինքն՝ ածխի քիմիական եներգիան փոխարկվում և ջերմության: Ածխաթթու գաղից թթվածնի ու ածխածնի տարրալուծվելիս, ինչպես մենք արդեն ասել ենք, պետք և ընդհակառակը, եներգիա ծախսել: Վերատեղից և վերցնում բույսը զրա համար անհրաժեշտ եներգիան:

Հենց նոր ասվեց, վոր մեր փորձի ժամանակ բույսը ողեաք և լույսի տակ դնել: Ցեղե բույսը կատարել ճիշտ այնպես, ինչպես նկարագրված ե, իսկ հետո գործիքը մթության մեջ թողնել, բայց և այնպես բույսը թթվածնի չի տրացրի Ուրիմն, նշանակում ե, վերտակ ողեաք և փնտուել եներգիանի այն աղբյուրը, վորը բույսն ողատագործում և ածխաթթու գաղը տարրալուծելու համար: Սրեգակը—այն հզոր շարժիչն եցվորն ստիպում է բույսի ներսում թաղնված ապարատներին աշխատելու, վորոնք վերջին հաշվով ածխաթթու զաղը տարրալուծում են թթվածնի և ածխածնի:

Մի զիանական, ապացուցելու համար, վոր բույսը թթվածին և արտադրում, այսպիսի փորձեր և կատարել: Նա ապակյա կափարիչի տակ մուկ և տեղափորել: Սկզբներում մուկը կափարիչի տակ սովորականի նման վազվագել ե, բայց հետո նրա շարժումներն աստիճանաբար դանդաղել, ավելի ու ավելի ալարկու են դառել և վերջիվերջո մուկը սատկել եւ Սատկել և այն պատճառով, վոր կափարիչի տակ յեղած ողի թթվածինը ծովասվեց նրա շնչառության վրա, կափարիչի տակ յեղած ողի պարունակութ ածխաթթու գաղը մկան շնչառության հետևանքով ավելի ու ավելի շատացել եր, իսկ թարմ ողի հոսանքն արդեն դադարել եւ մուկը խեղդվել եւ Բայց ահա զիանականը, մուկը կափարիչի տակ դնելով,



Նկ. 29. Ածխաթթու գաղի տարրալուծումը բույսով:

մուկ և տեղափորել: Սկզբներում մուկը կափարիչի տակ սովորականի նման վազվագել ե, բայց հետո նրա շարժումներն աստիճանաբար դանդաղել, ավելի ու ավելի ալարկու են դառել և վերջիվերջո մուկը սատկել եւ Սատկել և այն պատճառով, վոր կափարիչի տակ յեղած ողի թթվածինը ծովասվեց նրա շնչառության վրա, կափարիչի տակ յեղած ողի պարունակութ ածխաթթու գաղը մկան շնչառության հետևանքով ավելի ու ավելի շատացել եր, իսկ թարմ ողի հոսանքն արդեն դադարել եւ մուկը խեղդվել եւ Բայց ահա զիանականը, մուկը կափարիչի տակ դնելով,

տեղում տեղավորել եւ և մի կանաչ բույս ու նրանց զըրել ելույ-  
սի տակ Մուկը յերկար ժամանակ վաղվզում եւ կափարիչի տակ  
և շնչարդելության վոչ մի նշան ցույց չե տալիս Նրա շնչառու-  
թյան ժամանակ գոյացած ածխաթթու գաղը կլանել եւ բույսը,  
իսկ վերջինը զրա փոխարեն արտադրել եւ թթվածին, վոր նորից  
ծախսվել եւ մկան շնչառության համար:

Այս փոքրիկ փորձը ակնառու կերպով պատկերացնում ե  
մեղ այն, ինչպոր մեծ մասշտարով կատարվում եր բնության  
մեջ,—բոլոր կենդանիներն իրենց շնչառությամբ ռփչացնում են»  
ողը, կլանելով նրանից թթվածին և արտադրելով ածխաթթու  
դագ: Այդ միենույնն եւ կատարում ամեն մի ֆաբրիկ-գործարա-  
նային հնոց, մեր բնակարանի յուրաքանչյուր վառարան, ամեն  
մի վառված մոմ ու լուցկի Յեթե ցիներ կանաչ բույսը, այն  
ժամանակ ողի թթվածինն աստիճանաբար կծախսվեր, քիմիա-  
պես կմիանալը այլ նյութերի հետ և կենդանիները շնչելու այ-  
լևս գոչինչ չեյին ունենա, Բայց բույսն ուղղում ե այդ բանը:  
Նա կլանում ե ողի ածխաթթուն, արեգակի ճառագայթների ոգ-  
նությամբ քալիքայում նրան և անջատում աղատ թթվածինը:

Մեծ քաղաքներում, վորտեղ մեծ քանակությամբ մարդիկ,  
ֆաբրիկներ, գործարաններ կան, բայց քիչ կանաչ, ամռանն ողը  
ծանր ե ու խեղդող և միայն բույսները կարող են մաքրել ու թար-  
մացնել քաղաքային ողը: Այդ պատճառով ել պետք ե աշխատել  
քաղաքի յուրաքանչյուր աղատ հողակտորի վրա կանաչ աճեց-  
նել և առավել ևս բոլոր միջոցներով անհրաժեշտ ե աշխատել ար-  
դեն յեղած կանաչը պահպանել: Թաղաքի յուրաքանչյուր բնա-  
կիչ, վոր փչացնում և պարկերի ու բուլվարների ծառատնկում-  
ներն ու կոխկոտում այնտեղ յեղած կանաչը, դրանով ծանր հան-  
ցանք ե գործում հանդեպ իր համաքաղաքացիների առողջության-  
նա վոչնչացնում ե թթվածնի բնական, քիմիական գործարա-  
նը», վորը մաքրում ե քաղաքային փչացած ողը և քաղաքի  
բնակիչների տղոտոված թոքերին մատակարարում նրանց հա-  
մար այնքան անհրաժեշտ կենդանաբար գաղը: Իզուր չե, վոր  
մենք այժմ աշխատում ենք հնարավոր չափով լայնացնել մեր  
քաղաքների կանաչաղարդումները:

Հավանուեն, բոլոր այստեղ ասածներից ընթերցողը կարող  
ե յեղբակացնել, վոր բույսները շնչում են վոչ այնպես, ինչպես  
կենդանիները: Այն ժամանակ, յերբ կենդանիները շնչելիս կլա-  
նում են թթվածին և արտադրում են ածխաթթու դագ, բույսե-

ըը հակառակն են անում—նրանք շնչելիս կլանում են ածխաթթու գաղ, իսկ արտադրում թթվածին:

Այսպիսի յեզրակացությունը ճիշտ չի լինի Բույսերը շընչում են ճիշտ այնպես, ինչպես և կենդանիները, այսինքն՝ այդ ժամանակ կլանում են թթվածին, արտադրում ածխաթթու գաղ, Դա ապացուցված է բույսերի մթության մեջ շնչառության հետապոտություններով, ծլող սերմերի շնչառության ուսումնասիրություններով և այլն, կույսի տակ բույսերի շնչառության հետ միաժամանակ տեղի յե ունենում և նրանց սնման գործողությունը կանաչ բույսը սնվում է ողի ածխաթթու գաղով, վերցնելով նրանից ածխածինը, վորը գործադրվում է բույսի մարմինը կազմող նյութերի վրա: Բույսերի սնման այս գործողությունն անհամեմատ ավելի յեռանդուն է կատարվում, քան շընչառության պրոցեսը, այդ պատճառով ել լուս ժամանակ նա անհամեմատ ավելի շատ թթվածին և արտադրում, քան պետք են նրա շնչառության համար:

Եեվ այս գործողությունը կատարվում է բույսի միայն կանաչ մասերում: Կանաչ տերևը—ահա այն տեղը, վորտեղ մաքրվում է ածխաթթու գաղով կեղտոտված ողը, ուր միաժամանակ և աղատվում է բույսերի սնման համար անհրաժեշտ ածխածինը,

Ահա ինչպես սերտ կապված են բնության մեջ բույսերն ու կենդանիներն իրար հետո ֆրանսիական գիտնական Գոտյեն հաշվել ե, վոր կենդանիների շնչառությունից ու այլ պրոցեսներից ողի մեջ յուրաքանչյուր տարի մուտք է գործում մինչև հինգ միլիարդ տոնն ածխաթթու գաղ, Անոելի թիվ ե, Սակայն այդ ամբողջ քանակությունը կլանվում է բույսերի կողմից, գործադրվելով նրանց սննդառության վրա: Այստեղ թթվածինը կարծես թե բույսերի համար ածխածին մատակարարող ե—նա ածխածինը վերցնում է կենդանիներից և մատակարարում բույսերին:


Մարդկային հասարակությունը չի կարող արդյոք արհեստականորեն խառնվել ածխածնի այս շընչառության մեջ: Զի կարող արդյոք նա և ալստեղ ակտիվորեն յենթարկել բնությունն իր կարիքներին:

Այս, կարող ե,

Ինչպես վերևում արդեն հիշված ե, ողի ամեն մի 10.000 մասին ընկնում է 3 մաս ածխաթթու գաղ, Սակայն վոչ այն-

քան վաղուց կատարված փորձերով ապացուցված է, վոր բուլ-սերն ավելի լավ են աճում, յլը ողի 10.000 մասին ընկնում և մոտ 800 մաս ածխաթթու գաղ, այդպիսի պայմաններում բույսերի քաշը միշտանի անդամ մեծանում է, և նրանք մեծ բերք են տալիս: Որինակ, այսպիսի ող ունեցող ջերմոցում պոմիզարի բերքը յերեք անգամ բարձրացել է, վարունգինը — յերկու անգամ և այլն:

Բայց ածխաթթու գաղով հագեցնել կարելի յէ վոչ միտյն



Նկ. 30. Հրահալոցներ (դաշտա):

ջերմոցի ողը, այս բաց տեղի գեղվոր ածխաթթու գաղը ծանր դադ է և բաց թողնելով գետնի մակերեսին, նա բավական յերկար ժամանակ փռված մնում է ներքենում: Այդ ժամանակամիշոցում բույսերին հաջողվում է կլանել նրան: Այդպիսի փռձեր կատարվել են կարտոֆիլի, գարու և սպանաղի ցանքսերի հետ: Ցեվ այդ ժամանակ կարտոֆիլի բերքատվությունը բարձրացել է յերեք անգամ, իսկ գարունը և սպանաղինը՝ ավելի քան յերկու անգամ:

Այսպիսով գտնվել ե արհեստական նոր պարարտացում —

գաղային Բայց վերտեղից զտնել այս ձեի պարաբռացման այն աղբյուրները, վորոնք կարող եյին բավարար քանակի ածխաթթու դադ մտակարարել:

Դուք անշուշտ գիտեք, վոր առանձին, ալսողես կոչված հրահալոց վառարաններում (նկ. 30) լերկաթյա հանքանյութերից թուջ են ձուլու: Այդ դեպքում հանքանյութը խառնում են կոքսի և մի շարք այլ նյութերի հետ և բարբոքում առաք ողի հոսանքով: Կոքսը վառվում է, ըստ վորում գոյանում և մեծ քանակությամբ ածխածնի ոքսիդ, վորը խլում և հանքանյութի թթվածինը, վերածվելով այդ միջոցին ածխաթթու դաղի: Շնորհիվ դրան, հրահալոցում գոյանում և մեծ քանակությամբ ածխաթթու դագ: Ահա այս հրահալոցային զաղերը մաքրելուց հետո կարող են ոգտագործվել վորովես գաղային պարաբռանյութ: Ե՞նչ հսկայական քանակի ածխաթթու դագ են արտադրում, որին նաև, միայն մեր մագնիստոգրակյան գրանցիով հրահալոցները:

Արտասահմանում տեղտեղ հրահալոցային զաղերն արդեն գործադրվում են գյուղատնտեսական կարիքների համար: Դրա համար նրանց սկզբում մաքրում են, իսկ հետո ստորերկրյա ցեմենտե խողովակներով տանում գտաները: Այն զաղերը վորոնք առաջ անողութ կերպով ցրվում եյին ոգի մեջ, հսկայական շահավետությամբ կողտագործվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության համար:

Այս որինակից պարզ յերկում ե, վորքան սերտորեն են կապված իրար հետ գիտությունն ու տեխնիկան: Զանազան նյութերի հատկությունների հետ մարդիկ ծանոթացել են իրենց արտադրական պրակտիկայի պրոցեսի ընթացքում: Գիտությունն աճել ե այդ հիման վրա: Բայց գիտությունն ել իր հերթին փոխադարձաբար ներգործում ե տեխնիկայի վրա, բեղմնավորում նրան, զարգացման նոր ուղիներ գծում նրա համար և նոր միջոցներ տալիս նրան: Մարդկային հասարակությունը միշտ ավելի ու ավելի լավ ճանաչելով բնությունը, միաժամանակ փոխում ե նրան և իր կարիքներին ծառայեցնում:

Շարունակենք այժմ մեր ծանոթությունը զանազան նյութերի հետ:

## 11. ՈՒԽՑԱՏՎԱԴՐ ՊԱՐԱԲՐԱՆՅՈՒԹԵՐ

Հետաքրքրվելով ծծմբի հրաֆարից թթու ստանալու հարցով, մենք իմացանք, իմիջի այլոց, վոր ողում կա յերկու նյութերթվածին և ազու: Մենք տեսանք, ինչ կարևոր նշանակությունն

ունի թթվածինը։ Առանց նրան ողում վորեկ այրում տեղի ունենալ չեր կարող։ Դե լավ, իսկ ազնության Ստանձնմ և արդյոք արդյունաբերությունը նրանից վորեկ ողում Ունի արդյոք վորեկ նշանակություն մեր կյանքի համար։ Այժմ այդ մասին կխոսենք։

Մեզանից հեռու, Հարավային Ամերիկայում կա մի փոքրիկ պետություն—Չիլի։ Այդ պետության մեջ կան անապատներ, վորեկ տարիների բնմացքում անձրև չի գալիս Չարմանալի չեր, վոր յերկար ժամանակ այդ անապատներում վոչ վոք բնակություն չեր հաստատում, վորովինեկ այնաեղ կերակրվելու վոչինչ չկա և ցանել վոչինչ չեր կարելի։ Մոտավորապես անցյալ գարե կեսերից սկսած այնտեղ բնակություն հաստատեցին շատ բան՝ վորներ, վորովինք տարեցտարի ավելի ու ավելի յեն խրվում այս անապատների ընդերքում։ Նրանք այնտեղ ձեռք են բերում վոսկի, արծաթ, պղինձ, բորակաքար, քարաղ, ցինկ, արճիճրայց ամենից շատ այնաեղ մշակում են բարակ, վորը յերեք մետր հաստության, համարյա 15 մետր լայնության շերտերով ձգվում ե մինչև 850 կիլոմետր յերկարությամբ։ Մի քանի տասնյակ խոշոր գործարաններ մաքրում են այս բորակը և տարածում աշխարհի համարյա բոլոր կողմերը։ Ո՞ւր ե գնում նա և ինչի՞ համար և պետք։

Բորակը գործադրվում ե ազոտական թթու, դանաղտն ոլայթուցիկ նյութեր, ներկեր, իսկ վոր դլխավորն ե, հողի համար պարարտանյութ պատրաստելու համար Բորակը հիանալի պարարտանյութ ե և նրա գործադրումը խիստ բարձրացնում ե հացահատիկների բերքը։ Վոչ այնքան վաղուց, առանց բորակի Յեկրոպայի խիստ բնակեցրած մասերում մշակվող հողերին կարող եր սպառնալ ուժասպառություն, իսկ մարդկությանը—սովամահության վտանգը թի վորքան բորակ ե գործածվում պարարտացնելու համար, յերեսում ե հենց թեկուզ նրանից, վոր 1929 թվին Չիլիից դուրս ե տարվել յերեք միլիոն տոննից ավելի բորակ, վորից 2 միլիոն տոննից ավելի հատկացվել ե պարարտացնան համար։

Դեռ մինչև համաշխարհային պատերազմը գիտնականները հաշվել են, վոր ինչքան ել շատ լինի բորակի քանակը Չիլիում, նա համենայն դեպս վոչ հեռու առաջացում սոլառվելու յեւ Իսկ այդ կնշանակեր, վոր ալն ժամանակ կուլտուրական յերկների հողագործությունն ընկնելու յեւ այս պարարտանյութի անբավա-

բար քանակի պատճառով և նրանք մնալու յեն առանց հացի:  
Դրան ավելանում եր և մի այլ կարևոր նկատառում:

Այն ժամանակ բոլոր խմանիսական պետությունները,  
ինչպես և այժմ, ուժգին կերպով պատերազմի եյին պատրաստ  
վում: Իսկ չեղ վոր բորակը պետք եր և պայթուցիկ նյու-  
թեր պատրաստելու համար Յեկ ահա այդ պետություններից  
շատերի, առանձնապես Գերմանիայի առաջ հարց դրվեց, իսկ  
ի՞նչ կլինի, յեթե պատերազմի ժամանակ բորակի ներմուծումը  
կարգի:

Այդպիսով արտադրության և պատերազմի պահանջները գի-  
տությանն ու տեխնիկային հրամայականորեն հարց առաջադրե-  
ցին—գտնել չիլիական բորակին փոխարինող եժան և մատչելի  
նյութ: Գիտությունը և տեխնիկան փայլուն կերպով լուծեցին  
այս խնդիրը: Նրանք հասան այն բանին, վոր չիլիական անա-  
պատճերի փոխարեն սկսեց բորակ տալ... ողբ:

Ընթերցողն, ի հարկե, տարակուսանքի մեջ եւ ի՞նչպես կա-  
րելի յե բորակի պինդ, սպիտակ, շոշափելիս քիչ խոնավ բյու-  
րեղները գազանման նյութից—ողից ստանալ վոր բոլորովին  
նման չե բորակին: Ի՞նչ ընդհանուր բան կա ողի և բորակի մի-  
ջեվ:

Պատասխանի համար դիմենք քիմիային: Նրա ոգնությամբ  
կարելի յե վորեն նմանություն գտնել և իրար չնմանվող այն  
տեսակ նյութերի մեջ, ինչպիսին են բորակն ու ողբ:

Առաջ մենք արդեն պատմել ենք, թե Լավուազյեն սնդիկից  
ստացված կարմիր փոշին տաքացնելիս ինչպես եր մաքուր թըթ-  
վածին ստանում: Այդ ճանապարհով (և շատուրիշներով) կարելի  
յե այդ գաղը և մաքուր տեսքով ստանալ Մաքուր տեսքով կարելի  
յե ստանալ և մի այլ գաղ, վոր պարունակվում ե ողում—ազուրը  
վոչ տեսքով և վոչ հոտով նա նույնպես չի զանազանվի ողից,  
այնպես, ինչպես և թթվածինը, ազուրը նույնպես փայլուն ե,  
թափանցիկ և վոչ մի հոտ չունի:

Ի՞նչ կստացվի, յեթե մաքուր թթվածինը խառնենք մաքուր  
ազուրի հետ: Կարելի յե խառնել նրանց ինչպես վոր հաճելի յե,  
խառնուրդը կնմանվի ողին և հոտ չի տւնենա: Բայց փորձենք  
առանձին ելեկտրական գործիքի ոգնությամբ այսպիսի խառ-  
նուրդի մեջ ելեկտրական կայծեր բաց թողնել: Խառնուրդը կսկը-  
սի ու աստիճանաբար ագելի և ավելի կթխանա ու կծու և թուխ,  
սուր, անորոշ հոտով գոլորշիներ կազմել (ազուրի ոքսիդներ):  
Յեթե այդ գոլորշիները ջրի մեջ անցկացնենք, այն ժամանակ

նրանք այստեղ կլուծվեն, քիմիապես կմիանան ջրի հետ և կդույնա ազուտաթթու:

Եեթե այդ գոլորշիները ջրի փոխարեն անցկացնենք ոճառի արտադրության մեջ գործածվող կիզական սողայի (ուտիչ նաւարիոնի) կամ սովորական սողայի լուծույթի մեջ, իսկ հետո լուծույթը գոլորշացնաք, այդ դեպքում կմնան սպիտակ բորակի բյուրեղները Ալսպիսի ճանապարհով հաջողվում և արհեստականորեն բորակ պատրաստել վորպես հիմք ծառայեցնելով թթվածին և ազուտ դազերը:

Եել այդ ճանապարհով այժմ հատուկ գործարաններում մեծ քանակությամբ բորակ պատրաստում են հենց ողիք, վորովհետեւ, ախր ողը ազուտի և թթվածնի խառնուրդ և Գործ և ածվում նա գլխավորապես պարարտացման համար, ուրեմն նշանակում ե, այդ դեպքում հողը կողմանակի կերպով պարարտացնում են... ողով:

Մենք արդեն գիտենք, վոր ողում շատ ազուտ կա. նա կազմում ե ողիք չորս հինգերորդական մասը Ուրեմն, այժմ ավելորդ և վախենալ Զիլիի բորակի պաշարի սպառումից, ԶԵ վոր ողը մի քանի տասնյակ կիլոմետր բարձրությամբ տարածվում և յերկրագնդի վրա, հաշված ե, վոր ընդամենը յերկու հեկտար հողի վրա յեղած ողիք ազուտի քանակի վերամշակումից ստացված բորակը բավական լինի բավարացելու բոլոր յերկրների այդ պարարտանյութի պահանջը մի ամբողջ տարով:

Բայց այժմ արդեն միայն վերևում՝ նկարագրված լեղանակով չե, վոր ողիք ազուտն ոգտագործում են պարարտանյութեր պատրաստելու համար Նրանից սովորել են ստանալ և բազմաթիվ այլ նյութեր, վորոնք նույնպես լավ են, վորպես ազուտային (այսինքն՝ ազուտ պարունակող) պարարտանյութեր:

1913 թվին հողագործության մեջ գործադրվող ազուտային պարարտանյութերի կեսից ավելին տալիս եր չիլիական բորակը, ողիք ստացվածները—մի տասներորդուց պակաս իսկ այժմ՝ գործադրվող ազուտային պարարտանյութերի ճնշող մեծամասնությունն արդեն ողիք և պատրաստվում, վորի կապակցությամբ չիլիական բորակի հանույթն ուժեղ չափով ընկել եւ:

Դժբախտաբար, մենք այստեղ չենք կարող նկարագրել այս պարարտանյութերի պատրաստման տեխնիկական ձևերը: Հետաքրքրվողները այդ մասին կարող են մանրամասնորեն իմանալ հատուկ գրքեր կարդալով: Իսկ այժմ պետք է պատասխա-

Նել այն հարցին, վոր վաղուց կարող ե ծաղած լինել ուշադիր ընթերցողի զլխում:

Խոչժու համար են այդ բոլորը Յեթե հացանատիկներին (առ վելացնենք, նաև այլ բույսերին) ազոտ ե պետք, ապա ինչժամ նրանք այդ անմիջապես ողից չեն վերցնում, վորից ինչքան առես կա նրանց տրամադրության տակ:

Այդ հարցին որինակով պատասխաննենք. քարյուղ (կերոսին) պատրաստող գործարաններում այդ նույն քարյուղը մաքրելու համար թունդ ծծմբաթթու յե անհրաժեշտու Այդ ուրիշ հեղուկը հետությամբ լուծում ե իր մեջ քարյուղը կեղասաղ բազմաթիվ խոռնուրդներ։ Ծմբաթթուն, ինչպես մենք գիտենք, ծծմբի, թթվածնի և ջրի քիմիական միացումն եւ Կարելի՞ յե արդյոք քարյուղը՝ մաքրելու համար ծծմբաթթվի փոխարեն վերցնելու ուղղակի ծծմբի, թթվածնի և ջրի խառնուրդը— ինարկե վոչ։ Ախը յեթե կիսով չափ ջուր ածած մի շաբաթ մեջ ծծմբի կտորներ լցնենք, վերեկց ել թթվածնին բաց թողնենք ու այդ բոլորն ամուր փակենք խցանով, այդ գեղքում վոչ մի ծծմբաթթու չի ստացվի։ Ծծմբի կտորները հենց ենպես կմնան շաբաթ մեջ հատակում, ջրի յերեսին կմնա թթվածնը. — ու դրանով ել վոչ մի քարյուղ չես կտրող մաքրել։ ԶԵ վոր դա խառնուրդ ե, վորի մեջ հեղասաթյամբ կարող ես տարբերել նրա բաղկացուցիչ ամեն մի նյութը, վորի մեջ ծծումբը մնացել ե վորպես ծծումբ, ջուրը— ջուր, իսկ թթվածնինը թթվածնն։ Սակայն ծծմբաթթուն ջրի, թթվածնի և ծծմբի քիմիական սինցումն ե, դա բոլորովին այլ նյութ ե, վոր վոչ ջրին ե նման, վոչ թթվածնին ե վոչ և ծծմբին։

Այդպիս ե գործը նաև ազոտի հետ Ազուն ինքնին, մաքուր գրությամբ, բույսի համար պիտանի չե, ինչպես վոր պիտանի չե, որինակ, մաքուր գրությամբ ծծումբը քարյուղը մաքրելու համար։ Վորպեսզի բույսերը կարողանան յուրացնել ազոտը, նա պետք ե իսկապես սիացած լինի մի շարք ոյլ նյութերի հետ, նրանից պետք ե ստացվեն նոր, իրեն չնմանվող նյութեր։ Այդպիսին նյութերից մեկը և հանդիսանում ե, որինակի համար, բորբակը, նա աղստի, թթվածնի և մի առանձին— ազատ գրությամբ նատրիոն մետաղը հիշեցնող նյութի քիմիական միացումն եւ իսկ ողն աղստի, թթվածնի և մի քանի այլ քիչ քանակի գաղերի հասարակ խոռնուրդ ե։

Իսկ բայության մեջ ինչպես ե գործը. ԶԵ վոր մարդկային հասարակությունը համեմատաբար վաղուց չե, վոր սովորել ե

ողի ազոտը գործարանային ճանապարհներով քիմիական միացումների փոխելու և նրանցով հողը պարարտացնելու յեղանակը, իսկ բույսերը մինչ այդ աճում ելինու վերտիղից եյին նրանք աղոտ ստանում:

Հողից իսկ ահա թե վորտեղից եռ բնկնում նա հողի մեջ՝ վերջիվերջո ամեն մի բույս մեռնում եւ Նա բնկնում և հողի վրա, փառմ, իսկ նրանում յեղած աղոտի քիմիական միացումները մանում են հողի մեջ՝ Առանձին բակտերիաների աղողեցոթյամբ նրանք այնտեղ վերջիվերջո փոխվում են բորակի նման քիմիական այլ միացումների, վորոնք նորից դուրս են քաշվում այդ նույն հողի վրա աճող բույսերի կողմից: Եթե կենդանին բույս և ուսում, այն ժամանակ բուլսի աղոտն անցնում և կենդանու մեջ, վորը վերջիվերջո իր արտաթորությունների միջոցով էրկին հետ և տալիս հողին, նմանապես և մեռնելուց հետո, յերբ նրա մարմինը քայլայվում և հողում Այդ աղոտը էրկին գուրս և քաշվում բույսերի կողմից, ու յերկրի վրա այսպես մշատապես շարունակվում ե, քանի գոյություն ունեն կենդանիներն ու բույսերը—տեղի ունենալ ազօտի օրգանակարգությունը կենդանիների, բույսերի և հողի մեջև: Բայց այդ դեռ բուրը չեւ:

Կան բույսեր, վորոնք ի վեճուկի յեն աճել այնպիսի հողի մեջ, վորտեղ բացակայում են աղոտի քիմիական միացումները: Այդպես են, որինտեկի համար, բակլան, սիսեռը, յերեքնուեկը, տուվույտը և այլ այսպես կաչված բակլայտրույերը (վոլունաբույսերը), իսկ մինչդեռ, ինարկե, նրանց մարմնի մեջ աղոտ կատ իսկ վերադարձի են նրանք վերցնում այդ:—Ողից:

Ըհը՝—կմտածի ընթերցնողը,—ուրեմն կան այնպիսի բույսեր, վորոնք կարող են կերակրվել անմիջապիս ողի մաքուր աղոտով: Եթե կսխալի նա, յեթե այդպիս մտածի:

Բանը նրանումն ե, վոր բակլայտրույման բույսերն ունեն հասարակ աչքով անտեսանելի շողնականներ: Վորոնք նրանց համար ողի աղոտից պատրաստում են քիմիական միացումներ Այս ոգնականները — մանրագույն կենդանի արարածներ են, առանձին բակտերիաներ, վորոնք ապրում են բակլայտրույման բուլսերի արմատների պալարիկների մեջ (նկ. 31): Եթե բակլայտրույմանները կերակրվում են վաչ, թե մաքուր աղոտով, այլ այս բակտերիաների կողմից նրանից պատրաստած քիմիական միացություններով: Այդպիսի ճանապարհով ընության աղոտի մի

մասը կտպվեմ ու վոխադրվում ե հողի, բույսերի ու կենզանիների մեջ կա և այլ ճանապարհ:

Եերբ դուք հիանում եք ամառային ամպրոպով, լուսմ կալծակի ուժգին ճայթումները և դիտում յերկնօքի վրա փայլատակող կայծակները, դուք հազիվ թե այդ միջոցին ազոտի մասին մտածեք, իսկ մինչդեռ հւաց ալդ ժամանակ տեղի յե ունենում ողի ազոտի կապակցման հրաշալի յերեսոյթը: Այս կայծակը ինքնին վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի հսկա ելեկտրական կայծ, վոր ոլանում ե յերկու ամպերի կամ ամպերի ու յերկրի միջև: Առ ժամանակ նա անցնում է ողի միջով, այսինքն՝ ազոտի և թթվածնի խառնուրդի միջով: Նրա ազդեցությամբ ազոտի և թթվածնի մի մասը քիմիապես միանում են իրար հետ, վորը լուծվում է անձրևի կաթիների մեջ և նրանց հետ միասին ընկնում հողի մեջ, վորպեսի այնտեղ մասնակցություն ունենա ազոտի շրջանառության մեջ:




Նկ. 31. Բակլայաննեան բույսերի արժատների վրա յեզած պալարիկները

Սակայն բնության մեջ տեղի յե ունենում է հակառակ յերեսությը—մաքուր ազոտի զատումը նրա քիմիական միացություններից: Հողում պատահ ւմ են առանձին տեսակի բակտերիաներ, վորոնք տարրալուծում են ազոտի ք միական միացությունները, ըստ վորում նրանցից ազոտը ցնդում է ողի մեջ: Նույնը մասամբ պատահում է և մեռած կենզանիների ու բույսերի մարմինների քայլայման ժամանակի:

Հարյուր հազարավոր տարիների ընթացքում մարդիկ վոչ մի պատկերացում չունեյին բնության մեջ տեղի ունեցող ազոտի այն մեծ շրջանառության մասին (նկ. 32), վորի մեջ մասնակցում եյին և իրենք լնդամենը միայն մոտ հարյուր տարի առաջ գիտնականների համար շատ թե քիչ չափով պարզվեց այս շրջանառության պատկերը: Բայց, կատարելագործելով տեխնիկան և ազելի ու ավել լի լավ ճանաչելով բնությունը, մարդկային հասարակությունը լիովին տիրում է նրան ու յենթարկում

իր շահերին Մարդկային հասարակության տեխնիկայի զարգացման վորոշ աստիճանի ժամանակ ազոտի բնական շրջանառությունն այլևս ի վիճակի չեղավ բավարարելու մարդկության արտադրական կարիքները Մարդիկ տիրաբար խառնվեցին նրամեջ և ազոտի կապակցություններն իրենց գործարանային միջոցներով շատ անգամ մեծացրին ազոտի զանդվածները, վորոնքներգրավվեցին շրջանառության մեջ:



Նկ. 33. Ազոտի շրջանառությունը բնության մեջ:

Սակայն, միաժամանակ պետք է նշել, վոր կապիտալիստական իրավակարգի ժամանակ անխուսափելիորեն առաջացող ոլտահրազմների ժամանակ տեղի յին ունենում ազոտի հակայական քանակի անարդյունք վատնումներ, ժամանակակից պայմանագիր նյութերի մեծամասնությունը պարունակում և կապված ազոտ, վորը վառվելու ժամանակ վերածվում և ազատ ազոտի և ցնդում մթնոլորտում: Այս անմիտ վատնումներին վերջ կդըրսի միայն ամբողջ կապիտալիստական իրավակարգի կործանումով:

## 12. ՀՆԱԴԱՐՅԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ: ՎՈՍԿԻ ՎՈՐՈՆՈՂՆԵՐ

Այն ընթերցողը, վորն ուշադրությամբ կարդաց մինչև այժմ ըոլոր գրածները, արդեն ծանոթացավ զանազան նյութերի մեջը մյուսի փոխարկվելու բազմաթիվ որինակների հետ: Նա իմացավ, ինչպես ծծմբային հրաքարը այլ նյութերի հետ ունեցած

փոխադրեցության ժամանակ փոխարկվում և ծձմբաթթվի, ազուրը—բորտկի, ածուխը—ածխաթթու գազի, ջուրը տարրալուծվում և ջրածնի ու թթվածնի և այլն: Մի շաբք նյութեր, յերբեմն քիմիակես միանալով իրար հետ, յերբեմն քայլայվելով տալիս են ուրիշ, բոլորովին նրանց չնման չող նյութեր: Զի՞ կարող արդյոք նույն ճանապարհներով ամեն մի նյութ փոփոխության յենթարկվել: Ենք չի՞ կարելի արդյոք սովորել բնության մեջ պատահող ցանկացած նյութը փոփոխել այնպես, վորպեսզի նրանից կարելի լիներ ըստ ցանկության վորեն այլ նյութ ստանալ: Այլ խոսքերով մեզ շրջապատող աշխարհի ամենաբազմազան բոլոր նյութերն արդյոք վորեն մի հիմնական նյութի ձևափոխությունները չեն կամ թե չե, մի քանի հիմնական նյութերի տարբեր կոմբինացիաները:

Այսպիսի հարցով զբաղվում եյին՝ դեռ խորը հնադարի գիտնականները: Մոտ 2500 տարի առաջ ապրող հին հունական իմաստուն ֆալես Միլետոսին ընդունում եր, վոր ամեն ինչ աշխարհի վրա առաջանում ե զբազ, նրա ժամանակակից Անաքսիմենն ամեն ինչի առաջնահիմքը համարում եր ողը, Հերակլիոս Եփեսակին—կրօնը (կրակն այն ժամանակ նույնպես նյութ եյին հաշվում), իսկ իմաստուն Եմպեղոկլը սրանց վրա ավելացրեց և նոզը: Իր պնդումներն ապացուցելու համար Եմպեղոկլը, որինակ, այսպես եր դատում:

«Յերբ կանաչ ծառն այրվում ե, միթե կրակ չի հայտնվում, ծուխ չի ցնդում, վորպեսզի դառնա ոդ, ջուրը չի յեռում և մոխրում արդյոք հող չի մնում»:

Այսպիսով հին գիտնականները ջուրը, ողը, կրակը և հողը հաշվում եյին «նախահիմունքները», կամ հիմնական ելեմենտները, վորոնցից գոյանում են բնության բոլոր նյութերը: Բայց ժամանակի ընթացքում ելեմենտների մասին յեղած այս հին ուսմունքը սաստիկ բարդացավ: 2300 տարի սրանից առաջ ապրող հունական նշանավոր գիտնական Արիստոտելն (նկ. 33) արդեն սովորեցնում եր, վոր բոլոր իրերի նախասկզբնությունը վոչ թե մեր ճանաչած այն նյութական եյութլուններն են—ջուրը, ողը, հողը և կրակը, այլ նրանց ունեցած առանձին հատկությունները: Իրենք, թվարկած ելեմենտները, Արիստոտելի ուսմունքի համաձայն, կազմվում են հատկությունների զուգական միացումից—կրակը—տաքության և չորության, ողը—տաքության և խոնավության, ջուրը—խոնավության և ցրտի, իսկ

Հողը—ցրտի և չորության։ Ըստ վորում ջուրը և կըակը, ողը և հողը ներկայացնում են վորպես զույգ-զույգ ներհակություններ (նկ. 34)։ Այս ելեմենտնատկություններն ել ներկայանում են վորպես բոլոր մարմինների բաղկացուցիչ մասերը։

Ինչպես մենք տեսնում ենք, Արիստոտելն այստեղ սխալմամբ անջատում եր առարկայից նրան հատուկ առանձնահատկությունները և հակադրում այս առանձնահատկությունները հենց իրենց՝ նյութերին։ Ավելի ուշ այս առանձնահատկություններին վերագրում երին նաև ինքնուրույն գոյություն։


Միջին դարերում (այսինքն՝ քրիստոնեական թը-վականութ). V-XV դարերում) կրոնական քրիստոնեական հայացքները չափազանց բացասական, հետապիմական ազդեցություն ունեներին գիտության

վրա։ Հին հրեական էսուրբ» գրքում—«Աստվածաշնչում»—աշխարհի մասին ռացատրված պատկերացումները, վորոնք մեծ մասմբ ժառանգված եյին դեռ ավելի հին «կոռապաշտական» ժողովուրդներից—անխախտ ճշմարտություններ եյին համարվում։ Սակայն շատ բաներում միջնադարյան գիտությունը հիմնվում եր նաև հոգևորականության կողմից խեղաթյուրված Արիստոտելի ուսմունքի վրա, այդ թվում և նրա ելեմենտների մասին ունեցած ուսմունքի վրա։ Բայց վորովհետեւ կրոնական ուսմունքի եյությունը կայանում եր «հոգու», վորն իբր-թե ինքնուրույն գոյություն ուներ, հակադրությունը մարմնին, բնության աշխարհի հակադրությունը—«վոգիների» ֆանտաստիկ աշխարհին, ապա և միջնադարյան գիտությունն ելեմենտների մասին յեղած ուսմունքի մեջ ևս հատկություններին ու վորակներին, անկախ նյութից, ինքնուրույն գոյություն եր վերագրում։



Նկ. 33. Արիստոտել (384-322 մինչև քրիստոնեական թվականությունը)։

Կյանքը կանգ չեր առնում տեղում։ Զարգանում եյին արհեստներն ու հողագործությունը, աճում եր հանքանյութերից դանազան մետաղների հանույթը, իրենց արտադրական պրակտիկայի հետևանքով մարդիկ ել ավելի լավ եյին տեղեկանում դանազան նյութերի հատկությունների մասին, սովորում եյին պատրաստել նոր, մինչ այդ ժամանակ անձանոթ նյութերը Դրա հետ միասին դարձանում եյին տարրերը յերկրների հարաբերություններն իրար հետ, աճում եր առևտութը։ Իսկ այդ կաղակցությամբ վոսկին հերիք չեր անում։ Յեկ ահա հայտնվեցին



Նկ. 34. Արիստոտելի ելեմենտները։

«Վոսկի վորոնողները», այսպես կոչված՝ ալքիմիկուները։ Յելնելով Արիստոտելի, ընդ այնմ ել միջնադարյան՝ դիտության կողմից աղավաղված ելեմենտների ուսմունքից, ալքիմիկուները կարծում եյին, թե բավական ե միայն եժան մետաղներից հետացնել վոսկուն վոչ հատուկ վորակները և գրանց վրա ավելացնել վոսկուն հատուկ վորակները, վոր այս մետաղները փոխարկվեն վոսկու։

Ալքիմիկուների այն համոզմունքին, վոր մի շաբք մետաղների փոխարկումն այլ մետաղների միանգամայն հնարավոր ե, նպաստում եր նաև այն ժամանակվա արտադրական փորձը։

Մետաղները առարկերվում են մի շաբթ վորոշուկի հատկություններով, վորոնց մեջ առանձնապես աչքի յե ընկնում մետաղային փայլը՝ Մի քանի մետաղներ կրակի մեջ չեն փոփոխվում — դրանք «ազնիվ» մետաղներն են, մյուսներն այդ ժամանակ կորցնում են իրենց փայլն ու ձգելիությունը, — դրանք «անկատար» մետաղներն են Այդպես եյին դատում ալքիմիկոսները:

Բայց մետաղային փայլ ունեն և այնպիսի նյութեր, ինչպես որինակ, մեղ արդեն ծանոթ ծծմբային հրաքարը կամ կապարային փայլը (կապարահանքը), վոր իր գույնով չի տարբերվում կապարից: Այս յերկու նյութերից կարելի յե թրծելու միշտով ծծումը հանել իսկ թրծվածքի պրոդուկտը ածխի հետ հալելով, ստանալ մետաղները Նշանակում ե, ծծմքի հեռացման միշտով, որինակ, հենց նույն կապարային փայլից կարելի յե ըստանալ մետաղային դյուրակուելի կապարը: Այստեղից բնական կլինիկ յեղբարկացնել, վոր կապարի հատկությունները «փչացնում եր» ծծումը, վորը հանդիսանում ե մետաղների բաղկացուցիչ մաս, և լեթե հաջողվեր կապարից հեռացնել ավելի շատ ծծումը, այն ժամանակ նա կփոխարկվեր «ազնիվ» արծաթի, իսկ կարող ել լինել և անդամ վոսկու: Յեկ իրոք, ալքիմիկոսներին հաջողվել է կապարահանքից ստանալ արծաթ, թեկուզ և շատ քիչ: Բայց դա արդեն, մտածում եյին ալքիմիկոսները, կախված ե միայն դործի ձեռնարկման մեր անբավարար ունակությունից:

Ալքիմիկոսները լավ գիտեյին, վոր սնդիկը, այդ տիպիկ մետաղը, ջերմությունից հեշտությամբ գոլորշիանում ե: Այստեղից ծագեց այն յեղբարկացությունը, վոր գերաթրծման կամ ընդհանրապես ժանդակալման ժամանակ «անկատար» մետաղների մետաղային հատկությունների կորուստը կախված ե նրանցից սնդիկի անջատումից, վորը նույնպես մետաղների բաղկացուցիչ մասերից մեկն ե:

Ալգախով ալքիմիկոսները հին ելեմենտներին ավելացրին և նորերը — ծծումը, սնդիկ, նաև աղ, ըստ վորում այդ ելեմենտները հանդիսանում եյին վորոշակի հատկություններ կրող, այն և — ծծումը — ալքելիության, սնդիկը — մետաղային հատկությունների, աղը — լուծելիության:

Ի՞նչ միջոց պետք ե գործադրել անկատար մետաղները վոսկու և արծաթի փոխարկելու համար:

Ալքիմիկոսներն այդպիսի միջոց եյին համարում մի տասն-

Ճին խորհրդավոր նյութ—«Փիլիքոսիայական քարը», վորին անգանում եյին նաև «իմաստունների քար», «կյանքի պանացեցա»<sup>1)</sup> (նրան վերազրում եյին նաև բոլոր հիվանդությունները բուժելու, ծերերին յերիտասարդացնելու ընդունակություն), «կարմիր տինքտուր» և այլ ել ավելի խորիմաստ անուններով։ Յեկանական յեկան բազմաթիվ մարդիկ, վորոնք ամբողջ կյանքն անց եյին կացնում իրենց լարորատորիաներում (նկ. ձօ), գտնելու «Փիլիքոփայական քարը», այդ նպատակի համար կատարելով ամեն տեսակ «կախարդական հմայումների» հետ կապված բազմաթիվ փորձեր։

«Փիլիքոփայական քարի» գոյությանը հավատալու կարելիությունը համականալու համար պետք եւ վերհիշել, վոր այն ժամանակներում սրբությամբ հավատում եյին աստծուն, ըրեշտակներին և սատանաներին, յերկիրը համարում եյին տիեզերքի կենտրոնը, վորի համար գոյություն ունեն արևը, մոլորակներն ու աստղերը. ամպի զռուցի, կալծակի, փոթքրկի ու կարկամի մեջ պատկերացնում եյին անտեսանելի «վողիների» պայքարը. աստվածային փառքի համար խարույկների վրա այրում եյին հարյուր ու հազարավոր «կախարդներ» և այլն։ Այսպիսի հայցքների տիրապետության ժամանակ, ինարկե, և «Փիլիքոփայական քարի» գոյությանը հավատալը վայրենի չեր կարող թվալ։

Ալքիմիկուների մեջ կային և շատ շառլատաններ, վորոնք պնդում եյին, վոր իրենք հարաբերության մեջ են «չար վազու» հետ, վորը բացել եւ նրանց առաջ տենչալի գաղտնիքը ծշմարիտ եւ, այն ժամանակներում «չարի» հետ հարաբերություն-պահպանող կասկածելիներին սովորաբար չարչարում եյին, տանջում, իսկ հետո կենդանի-կենդանի այրում խարույկների վրա։ Բայց ալքիմիկոս—շառլատանները դրանից քիչ եյին վախճանում, վորովհետև նրանք միշտ ել կարողանում եյին մեծազոր խնամակալներ գտնելի Այն ժամանակվա վորմե «լայն ու փարթամ ապրող» տիրակալ իշխանի կամ զրաֆի համար զովասանք եր համարվում վորմե ալքիմիկոս ձեռք բերելն ու նրան իր պալատում պահելը։ Չե վոր նա, այսպիս ասած, վոչնչից պատրաստում եւ վոսկու դեղեր, իսկ վոսկին հնարավորություն և տալիս մեղավոր աշխարհում այնպիսի բավականություններ ստա-

1) Պահապեյա—հռոմաբն նշանակում եւ ուժինաբռնմէլչ միջոց։

նալ, վորոնց վրա հազիվ թե կարելի յեր հույս դնել ապագա, տերտերական ձանձրալի դրախտում։ Իսկ ինչ վերաբերում ե մեղքին և նրանից սպասվող պատիժներին, վորոնցով յեկեղեցին սպառնում եր չքավորներին, այդ բանումն ել վախենալու վոշինչ չկա։ Ամեն մի կուտակրոն կամ տերտեր և մինչև անգամ հոռամեական սրբազնագույն պապը վոսկու փոխարեն թողություն կտա վոչ միայն արդեն կատարած մեղքերի համար, այլև նրանց, վորոնք դեռ ապագայում պիտի կատարեն։

Բայց ամենաէին վոչ բոլոր ալքիմիկուներն ել շառլատաններ եյին նրանց մեջ կային և աղնիվ ու անկեղծ մարդիկ, վորոնք սրբությամբ հավատում եյին «անազնիվ» նյութերը վոսկու փոխարկելու հնարավորությանը։ Նրանք բարեխղճորեն միջոցներ եյին փնտում, քիմիական բազմաթիվ փորձեր կատարում և նրանց աշխատանքները հետագայում քիչ ողուտ չեն բերել իսոկական գիտությանը։ Սակայն շնորհիվ խորհրդավոր միջոցների ողնությամբ վոսկի ձեռք բերելու հնարավորության ընդհանուրը հավատի, այդպիսի ալքիմիկուների վեճակը հաճախ շատ տխուր եր լինում։ Այսպես, միջնադարյան նշանավոր գիտնական Ռոջեր Բեկոնը (նկ. 36), ամենաէին ել չեր պնդում, վոր ինքը վոսկի պատրաստելու գաղտնիքը գիտե, այնուամենայնիվ բանտարկության արժանացավ և համարյա մինչև իր մահը բանտարկված մնաց։ Մոռամբ այդ պատահեց նրա համար, վոր մենակլացներն ու ինքը հոռմեյտական պապը հավատացած եյին, իրբ-թե Բեկոնը գիտե այդ գաղտնիքը, միայն թագցնում ե իրենցից։ Յեվ թեպետ «սուրբ հայրերն» ասում եյին, վոր նրանք բացառապես միայն յերկնքի մասին են մտածում, այնուամենայնիվ նրանք վոսկին շատ ավելի գերազանցում եյին իրենց «սիրած տիրոջից»։

Ինչպես կարող եյին նրանք թեկուղ և բանտի միջոցով չփորձել գիտնականից բռնութիւնամբ տեղեկանալ թանկագին գաղտնիքի մասին։

Նման վոսկի վորոնողներ—ալքիմիկուներ շատ կային միշին դարերում։ Բայց վորքան ել նրանք ջանում, ինչպիսի միջոցներ ել վոր գործադրում եյին, այնուամենայնիվ, նրանց չեր հաջողվում վոսկու փոխարկել անգամ փոքրիկ մի կտոր այնպիսի նյութ, վորի մեջ առաջ վոսկի չի յեղել։ Դրա փոխարեն նրանց աշխատանքները և կատարած բազմազան ու բազմաթիվ փորձերը հարուստ նյութեր են տվել գիտությանը։ Յերբեք չպետք ե շփոթել ալքիմիկու-գիտնականներին շառլատանների հետ և մտա-



Նկ. 35. Ալբոմիկոսի արդյունաբեն:

ձեւ իրը թե ալքիմիան սահմանափակվում եր միայն «փիլիսոփայական քարի» փնտութերով։ Ալքիմիան մշակել ե բազմաթիվ գուտ արտադրական հարցեր, հայտնաբերել ե քիմիական հետազոտության շատ ու շատ ձևեր։ «Ալքիմիան գիտություն եր, գոսկի շինելու մի արվեստ, վոր պարունակում եր իր մեջ բոլոր տեխնիկական-քիմիական ու արհեստային մասնաճյուղերը»—ալքիմիայի մասին ասում ե Լիբիիսը։ Իսկ ինչ վերաբերում ե «փիլիսոփայական քարին» և քիմիայի հետ կապված ոյլ խորհրդապաշտության, դա ել այն ժամանակվա մարդկանց պարզամիտ հասկացողության

մեջ տիրապետող կրօնի ազգեցության արդյունք եր։

Տեխնիկայի զարգացումը, քիմիական խոշոր արդյունաբերության առաջացումը, արտադրական հարուստ փորձի կուտակումը—ալդ բոլորը հետագայում քիմիական գիտությունները հասցրին անսովոր ծաղկման։ Յեվ հենց այդ, ի միջի այլոց, թույլ եր տալիս ալքիմիկոսներին հաջորդող քիմիկոսներին նկ. 36. Ռոջեր Բեկոն (1214—1294). ճշառությամբ պատասխանելու վասկի վարոնողների եֆան մետաղները ազնիվ մետաղների վերածելու փորձների անազողության պատճառների հարցին։

Ալքիմիկոսների հիմնական միտքը ճիշտ գուրք յեկավ, վարը, իմիջի այլոց, նրանցից գեռ շատ առաջ արտահայտել ելին և հին գիտնականները.—յերկրի վրա յեղած բոլոր, ամենաբազմազան նյութերը կազմվում են համեմատաբար քիչ քանակի հիմնական ելեմենտներից։ Միայն, առաջին, դրանք այն ելեմենտները չելին, վորոնք առաջ այդպիսիների տեղ եյին ընդունվում, իսկ յերկրորդը, նրանք 4—7-ը չելին, ինչպես վոր յենթադրում ելին առաջվա գիտնականները, այլ մոտավորապես ինն տասնյակ։ Քիմիկոսներն ինչպես յեկան ալդ յեղրակացությանը:



Նկ. 36. Ռոջեր Բեկոն (1214—1294).

Այս գրքույկում մեզ վիճակվեց խոսել մի քանի նյութերի տարալուման դեպքերի մասին: Զուրը, որինակ, նրա մեջ ելեկութական մշտական հոսանք անցկացնելով, վերլուծվում է յերկու նոր նյութերի՝ ջրածնի և թթվածնի: Ածխաթթու զաղը, նրանում ժագնեղիում այրելիս, բաժանվում է ածխածնի և թթվածնի (թթվածինն այդ ժամանակ միանում է մագնեղիումի հետ):

Նման ձևերով ել (տաքացնելով, ելեկտրականությամբ, այլ նյութերի ներգործությամբ և այլն) հաջողվում է տարրալուծել նաև շատ այլ նյութեր, նրանցից ստանալ յերկու կամ մի քանի նոր նյութեր: Շատ, բայց... վոչ բոլորը:

Վորքան ել վոր չարչարվում եյին քիմիկոսները, ինչ միշտցներ ել գործադրում եյին, բայց այնուամենայնիվ նրանց յերբեք չեր հաջողվում տարրալուծել այնպիսի նյութեր, ինչպիսիներն են, որինակ, ջրածինը, թթվածինը, ածխածինը, աղոտը, յերկաթը, վոսկին, պղինձը: Այդ նյութերից կարելի յեր լինում նոր նյութեր ստանալ միայն այն զեղքում, յերը նրանք միանում ելիս մեկ կամ միքանի այլ նյութերի հետ, բայց նրանց տարրալուծել չեր հաջողվում:

Պարզվեց, վոր նյութերի մի ամբողջ շարք քիմիայի մեջ գործադրվող վոչ մի սովորական միջոցներով չի կարելի տարրալուծել վորմեն նոր նյութերի: Առա հենց այս փաստի վրա ել գեռ 1661 թվին անգլիական նշանավոր գիտնական Ռոբերտ Բոյլ այլ գիտնականների ուշադրությունը հրավիրեց (նկ. 37.): Նա ասում եր, վոր չնայած բոլոր փորձերին, նրան յերբեք չի հաջողվել տարրալուծել մետաղները սնդիկի, ծծմբի և աղի, վորոնք իրբ-թե հանդիսանում են, ինչպես պնդում են ալքիմիկոսները, վորպես մետաղների բաղկացուցիչ մասեր: Այդ պատճառով ել Բոյլն առաջարկում եր վորպես ելեմենտներ ընդունել այնպիսի Շնախնական կամ հասարակ մարմինները... վորոնք կազմված չեն վորմեն այլ մարմիններից կամ իրարից: Բնության բոլոր, ամենաբազմազան այլ նյութերը, ըստ Բոյլի, բարդ նյութեր են, վորոնք կազմված են այս կամ այն ելեմենտներից և ընդունակ են վորոշ պայմանների ժամանակ քայլքայվել այս ելեմենտների:

Բոյլի ժամանակից սկսած քիմիկոսներն սկսեցին բոլոր նյութերը բաժանել յերկու տարրեր խմբերի՝ բարդ նյութեր, վորոնք ընդունակ են տարրալուծվել այլ նյութերի ու յերկու կամ

մի քանի ելեմենտների քիմիական միացություններ են, և նուարակ նյութեր, վորոնք ընդունակ չեն տարրալուծվել այլ նյութերի ու կազմված են միայն մի քիմիական ելեմենտից: Որինակ ջուրը, ածխաթթու գաղը, ծծմբաթթուն — բարդ նյութեր են, վորովհետև ջուրը կարելի յե տարրալուծել ջրածնի և թթվածնի, ածխաթթու գաղը — ածխածնի և թթվածնի, ծծմբաթթուն — ջրածնի, ծծմբի և թթվածնի Բայց ջրածնը, թթվածնը, ածուխը — հասարակ նյութեր են, վորովհետև նրանց արդեն հնարավոր չե տարրալուծել վորում այլ նյութերի:

Այդ պեսըում պետք ե  
հիշել, վոր «հասարակ  
նյութ» և «քիմիական ելե-  
մենտ» հասկացողություն-  
ները միևնույնը չեն: Մեզ  
հայտնի, որինակի համար,  
դադեր — ջրածնը, աղոտը  
և թթվածնը, մետաղներ—  
պղինձը, կապարը, սնղիկը,  
վոսկին և ուրիշները, այս-  
պիսի նյութեր, ինչպիսին  
են ծծումբը, ածուխը, գը-  
րաֆիտը — այդ բոլորը տար-  
րեր հասարակ նյութեր են:  
Բայց մենք արդեն ասել  
ենք, վոր ածուխը, գրաֆի-  
տը և աղամանզը հանդի-  
սանում են ածխածնի կեր-  
պարանափոխությունները: Բոլոր այդ յերեք տեսակի տարրեր  
հասարակ նյութերը կազմված են միևնույն էլմիտական ելեմենտ-  
ածխածնից: Ցիշտ այդ ձեռվ պատահում են ծծմբի տարրեր  
կերպարանափոխություններ, վորոնք հանդիսանում են տարրեր  
պարզ նյութեր, բայց կազմված են միևնույն քիմիական ելե-  
մենտ — ծծմբից:

Բազմաթիվ նման որինակներ կարելի յե բերել: Ցեվ այս-  
պիսով պարզ և բարդ նյութերի մեջ յեղած տարրերությունը  
կայանում ե նրանում, վոր առաջինները կազմվում են մի էլմիտա-  
կան ելեմենտից, իսկ յերկրորդները — յերկուսից կամ ավելի տա:

Տարրեր կազմության զանազան նյութերի ուսումնասիրու-



Նկ. 37. Ռոբերտ Բոյլ (1627—1691).

Քյան ինչիքը նշանակալից չափով հեշտացավ այն ժամանակ, յերբ քիմիկոսներին հաջողվեց պարզել, թե նրանցից վորժնք են պարզ և չտարրալուծվող: Ախր վորևե բարդ նյութի կազմությունն, իմանալ, դա նշանակում ե իմանալ—ինչպիսի իմիական ելեմենտներից և բաղկացած դա, ինչպիսի պարզ նյութերի կարելի յե վերածել դրան: Յեթե, որինակ, հաջողվում ե ջուրը տարրալուծել թթվածնի ու ջրածնի, ապա նշանակում ե, վոր ջուրը թթվածնի և ջրածնի քիմիական միացումն ե. ածխաթթու գաղը հանդիսանում ե թթվածնի և ածխածնի միացումը, ծծմբաթթուն—ջրածնի, թթվածնի և ծծմբի միացումն ե և այլն: Իսկ ճանաչելով պարզ նյութերը և լավ ուսումնասիրելով նրանց հատկությունները, կարելի յե զանազան միջոցների ողնությամբ տարբեր ձևով միացնել նրանց իրար հետ և այդ ճանապարհով ստանալ միշտ նորանոր նյութեր: Հենց այդ ձևով ել հաջողվել է քիմիկոսներին ստանալ ահազին քանակությամբ ամենաբազմազն նյութեր, վարոնք այժմ պատրաստվում են քիմիական գործարաններում և քիմիական լաբորատորիաներում: Մարդկային հասարակության արտադրական գործունեյության պրոցեսում բուժոր այդ նյութերը տարբեր ձևով են կազմվում համեմատաբար վոչշատ քիմիական ելեմենտներից: Ճիշտ այդպես ել և բնության մեջ անընդհատ տեղի ունեցող նյութերի բոլոր դարմանամի փոխարկումները կախված են նրանից, վոր միևնույն քիմիական ելեմենտները տարբեր ձևով միանում են իրար հետ:

Դա չի նշանակում, ի հարկե, վոր այս կերպ առաջացած բարդ նյութերի հատկությունը ուղղակի կրկնություն և կամ նրանց կազմող ելեմենտների հատկությունների դումաբը: Վոչ, նոր նյութերը սովորաբար ունենում են նոր հատկություններ, վոր նման չեն նրանց կազմի մեջ մտնող ելեմենտների հատկություններին: Այստեղ առաջանում ե, ինչպես ասում են փիլիսոփաները—նոր վորակ:

Այժմ մեզ պետք ե հասկանալի լինի, ինչո՞ւն և կայանում միջնադարյան վոսկի վարոնազների անհաջողության պատճառը: Ախր նրանք կամենում եյին վոսկի ստանալ այնպիսի եֆան նյութերից, ինչպիսին են սնդիկը կամ կապարը, Բայց սնդիկը և կապարը հասարակ նյութեր են, վարոնց կազմի մեջ վոսկին չի մտնում: Վոսկին ել իր հերթին, նույնպես հասարակ նյութ է, վորը չի կարել քայլայել վոչ մի այլ նյութի: Իսկ յեթե չի կարելի քայլայել, նշանակում ե և չի ել կարելի այլ ելեմենտ-

ներից կաղմելու վոսկի կարելի յե ստանալ միայն այնպիսի՝ նյութերից, վորոնց մեջ նա արդին կա ինչպես այդպիսին։ Ալքեմիկոները զեռ այդ չգիտեյին, և զբա համար ել նրանց բոլոր աշխատանքները մնում եյին անպառուղի։

Ուշադիր ընթերցողը, յեթե նա լով և հիշում այս գրքույշ կում ավելի տռաջ բոլոր ասածները, համենայն զեպս կարող և փորձել պաշտպանելու ալքիմիկոներին Նա կվերհիշի, ինչ ենք ասել մենք կաղարի փայլ հանքի մասին։ Մաքուր հանքանյութի հետազոտությունը ցույց է տալիս, վոր նա կաղարի և ծծմբի քիմիական միացումն եւ Խոկ մեր գրքի 69 յերեսում շատ պարզ գրված ե—«... կաղարի փայլից հաջողվում եր արծաթ ստանալ»... Արդյոք այդ նշանակում ե, վոր ծծմբի ու կաղարի միացումից կարելի յե ստանալ պարզ նյութ—արծաթ։

Վոչ, չի նշանակում։ Արհեստականորեն պատրաստված մաքուր կաղարտհանքից չի կարելի ստանալ արծաթի ամենափոքր մասնիկ տնդամ։ Խոկ բնական կաղարի փայլը մեծ մասամբ մաքուր չի լինում, նրա հետ խառնված են, տեղ կա քիչ, տեղ կոշտ, մի քանի ուրիշ տեսակ նյութեր, և մասնավորապես, յերբեմն արծաթի փայլ—արծաթի և ծծմբի միացումը։ Ահա հենց այս խառնությունը ստացվում եր և ստացվում ե այն արծաթը, վոր ալքիմիկոներին մոլորության մեջ եր զցում և վորը կարող է տարակուանք առաջացնել և մեր ընթերցողի մեջ։

Այդպիսով կաղարի փայլից արծաթ ստանալու փաստը ամենեին ել՝ ալքիմիկոների ողոտին չի խոսում։ Սակայն... առայժմ զեռ վերջնականորեն և անդառնալիորեն չժխտենք նյութերի անսահման փոխարկության հնարավորության մասին յեղած նրանց հիմնական գաղափարը։ Վերջերս գիտությունը հայտնաբերել ե մի շարք այնպիսի փաստեր, վորոնք կրկին վերածնում են այս գաղափարը, թեկուզ, ճշմարիտ եւ բոլորովին նոր հիման վրա։ Այդ պատճառով ել սակալված կլինենք հետագայում նորից վերադառնալ զեպի ալքիմիկոները, խոկ մինչ այդ մենք ծանոթանանք քիմիական կարեռագույն ելեմենտների հետ։ Այս, ինչ վոր ներքնում ասվում ե նրանց հատկությունների և գործադըրման մասին, վերաբերում ե, ի հարկե, այս ելեմենտներից կաղմած համապատասխան հասարակ նյութերին։

Բոլոր, մինչև այժմ հայտնի, մոտ իննասուն քիմիական ելեմենտները, բաժանվում են յերկու խոշոր խմբի—1) մետաղներ (նրանց թվին են պատկանում ելեմենտների մեծ մասը) և 2) վոչ

մետաղներ կամ մետալսիդներ (մետաղակերպեր), Մետաղները, վորպես կանոն, լավ են անցկացնում տաքությունը և ելեկտրականությունը, տարբերվում են մետաղային փայլով, իսկ մետաղիդները—տաքության և ելեկտրականության վատ հաղորդիչներ են և մետաղային փայլ չունեն:

Մետաղներից ամենակարևորները հանդիսանում են բոլորին հայտնի լեռկարը, պղինձը, զինկը, անտարը, ալյումինինիումը, անճիկը, արծարը, վոսկին, և նմանապես ավելի պակաս հայտնի—մանգանը, եռոսը, մագնզիումը, Մեքենաներ և դանաղան տեսակ գործիքներ պատրաստելու համար յերկաթը հանդիսանում է վորպես հիմնական նյութեղեն, պղինձը ծառայում է եներդիքայի և հեռավորության վրա ազդանշաններ հաղորդելու համար (ելեկտրական հաղորդական աղորդալարեր, ռադիո և այլ ելեկտրական հաստատումներ). ցինկը և անդարը—բազմաթիվ տեխնիկումներն թանկարժեք ձուլումներ պատրաստելու համար, ալյումինիիումը, վորը մտնում է ամեն մի տեսակ կավի կազմի մեջ, և մագնեսիումը—ավելացնաբարության համար հիմնական նյութեղեններն են, անդիկը—անփոխարինելի նյութեղենն է բազմաթիվ դատական ճիշտ գործիքների համար (ծանրաչափեր, ջերմաչափեր և այլն), մանգանը և քրոմը—անհրաժեշտ նյութեղեններ են հատուկ բարձրորակ պողպատներ ստանալու համար և այլն, Մյուս կարևոր մետաղներից նշենք ելի:

Նատրիումը փափուկ, թարմ, կտրված գրությամբ փայլուն, արծաթաւասպիտակ մետաղ է, ողում արագությամբ միանում է թթվածնի ու խոնավության հետ, յեռանդով քայլայում է ջուրը, անջատելով ջրածինը: Խոհանոցի աղը, սոդան, չիլիական բորակը, գլաուրերյան աղը, պինդ ոճառը և բազմաթիվ այլ տեխնիկապես կարևոր նյութերը հանդիսանում են նատրիումի քիմիական միացությունները այլ ելեմենտների հետ:

Կալիումը նատրիումի նման փափուկ մետաղ է: Նրա քիմիական միացություններն անհրաժեշտ են բույսերի սննդառության համար, վորի հետևանքով կալիումը կազմում է հանքային պարաբանյութերի բաղկացուցիչ կարևոր մասը:

Կալցիումը փափուկ մետաղ է: Կալցիում ելեմենտը մտնում է կրաքարի, կավճի, մարմարի և շատ այլ մետաղների կազմի, նմանապես և կինդանի որդանիզմների մեջ:

Ռադիումը զարմանալի մետաղ է, վորի մասին մեր գրքույթում դեռ կպատմվի ավելի հանգամանորեն:

Թորիոնը և ուրանիոնը ծանը մետաղներ են, վորոնց մասին  
նույնպես ստիլված կլինենք հետո խոսելու

Մետալրիդներից կարեւրագույններն են—

Զետծինը անզույն, վառվող գազ ե, համ ու հոտ չունի, բռ-  
լոր գաղերից ամենաթեթևն եւ Տեխնիկալում գործադրվում եւ ա-  
մոնիակ ստանալու համար (ողի ազոտի հետ միանալու հանա-  
պարհով) ողապարիկները, զիրիֆարները, ստրատոստատները  
լցնելու, բուսական հեղուկ ճարպերը պինդ ճարպերի փոխարկե-  
լու, մի քանի քիմիական արտադրություններում, ավտոգեն գո-  
գումների ու մետաղները կտրելու համար։ Վորպես ելեմենտ մըտ-  
նում ե ջրի, կենդանիների, բույսերի և բազմաթիվ ուրիշ նյու-  
թերի կազմի մեջ։

Նելիումը թեթե, անգույն գազ ե, առանց հոտի ու համի,  
այլ նյութերի հետ քիմիական միացության մեջ չմտնող։ Չնչին  
քանակությամբ պարունակվում ե ողի մեջ, հանգում ե հողից  
անջատվող մի քանի բնական գաղերից։ Շնորհիվ իր թեթեռու-  
թյան և վառվելու ընդունակության գործադրվում ե զվարավո-  
րապես զիրիֆարները լցնելու համար։

Ածխածինը բուսական և կենդանական որգանիզմների, վա-  
սելանյութի մեծամասնության տեսակների և բազմաթիվ այլ  
նյութերի կարևորագույն բաղկացուցիչ մասն եւ

Ազօտը քաշով ողի զվարավոր բաղկացուցիչ մասն ե կազմում,  
ազոտի քիմիական միացությունները մտնում են որգանիզմների,  
պայթուցիկ նյութերի, պարարտանյութերի կազմի մեջ և այլն։

Թթվածինը ողի, ջրի և կենդանի եակների բաղկացուցիչ  
մասն ե, յերկրի վրա ամենատարածված ելեմենտն եւ Յերկրա-  
գընդի կեղևի մեր հետազոտության համար մատչելի մասը կիսով  
չափ ըստ քաշի բաղկացած ե թթվածնից։

Սիլիկիոնը մի ելեմենտ ե, վոր մտնում ե բազմաթիվ հանքե-  
րի, տեխնիկական ցեմենտների, ապակու և շատ ուրիշ նյութերի  
կազմի մեջ։ Սովորական մաքուր ավազը, որինակ, սիլիկիոնի և  
թթվածնի միացումն եւ

Ֆոսֆորը գործածվում ե լուցկիներ պատրաստելու համար,  
մտնում ե որգանիզմների և մի քանի հանքերի կազմի մեջ։ Ֆոս-  
ֆորային պարարտանյութերն անհրաժեշտ են հողերի բերքատը-  
զության պահպանման ու բարձրացման համար։

Նծամբը մեծ քանակությամբ պատահում ե բնածին գրությամբ  
և գործադրվում ե գյուղատնտեսական վասարուների դեմ մղած-

պայքարի գործում, ըեղինի արդյունաբերության մեջ, ծծմբա-  
թթու, սև վառող ստանալու համար և այլն, Բազմաթիվ հանքեր  
կազմում են ծծմբի միացութեարք, նա մտնում է նույնպես որ-  
դանիզմների կազմի մեջ:

Քլոր դեղնագույն-կանաչ գաղ ե, վոր համաշխարհային  
սպատերազմի ժամանակ գործածվում եր վորպես մարտական թու-  
նավոր նյութ ինքնուրույնորեն և այլ նյութերի կազմի մեջ,  
մտնում ե (ինչպես ելեմենտ) խոհանոցի աղի կազմի մեջ: Գու-  
նաթափում ե շատ նյութեր, որինակը, ծաղիկները: Տեխնիկա-  
յի մեջ գործադրվում է գործվածքները սպիտակացնելու, ողիս-  
տուկացնող կեր, մի քանի ներկեր ստանալու համար և այլն,

Մենք թվեցինք այստեղ քիմիական ելեմենտներից միտյն  
ամենակարևորները, վորոնց թիվն այժմ, ինչպես ասացինք վե-  
րեռում, իննսուն եւ:

Ծանոթանալով քիմիական ելեմենտների հետ, այժմ մենք  
կտշխառենք ել ավելի խորանալ նյութերի կազմության դադա-  
նիքների մեջ:

#### 14. ԱՏՈՄՆԵՐԻ ՑԵՎ ՄՈԼԵԿՈՒԼՆԵՐ

Ժամանակով մի իտալացի գիտնական դրել ե մի ընդար-  
ձակ յերկասիրություն այն մասին, վոր Ետնա<sup>1)</sup> և Զվիցերական  
Ազգերի բարձրությունների վրա յեղած ձյունը կազմված ե միե-  
նույն նյութից և հավաքում եր բազմաթիվ ապացույցներ պնդե-  
լու համար, վոր թե այս և թե այն ձյունը հալվելով, տալիս հե-  
միատեսակ կազմության ու հատկություններով ջուրը:

Այն ժամանակներում այդպիսի փաստը դեռ ապացույցներ  
եր պահանջում: Բայց դրա փոխարեն մենք այժմ շատ լավ գի-  
տենք, ինչ ճանապարհներով ել վոր մաքուր ջուր ստանանք,—  
որինակ, բնական ջրերը թորելով, թթվածնի մեջ ջրածինը վա-  
ռելով, սպիրտը, քարյուղը կամ ջրածին պարունակող այլ նյու-  
թեր վառելով, վերջապես վորեւ քիմիական միացումներից,  
միշտ ել այդ տեսակ ջուրը կլինի անգույն հեղուկ, առանց հոտի  
ու համի, օ աստիճանի ժամանակ սառչող, 100 աստիճանի դեպ-  
քում յեռացող, խոհանոցի աղը կամ բորակը լուծող և այլն:

Միևնույն բանը մենք դիտում ենք նաև այլ քիմիական

<sup>1)</sup> Ցեվը պայի ամենաբարձր հրաբութը, վոր դանվում է Սիցիլիա կղզում:

միացությունների մոտ Ծծմբաթթուն կարելի յե, որինակ, պատրաստել զանազան նյութերից և զանազան միջոցներով Նրան պատրաստում են, ինչպես գիտենք, և ծծմբային հրաքարից, պատրաստում են և ծծմբից կարելի յե վերցնել և' ուրալյան, և' կովկասյան, և' ամերիկական ծծմբային հրաքար, և ինչպիսին հաճելի յե, միայն թե ծծմբահրաքար լինի Ծծմբաթթուն պատրաստում են վոչ միայն այնպես, ինչպես պատմված ե այս զըրքույիում, այլև ուրիշ միջոցներով Սակայն վարաել ել, ինչպես ել և ինչից ել վոր չպատրաստեն ծծմբաթթուն, նա միշտ ել միատեսակ կստացվի, յեթե միայն նա մաքուր եւ Սաքուր ծծմբաթթուն, ինչ գործարանից ել վերցված լինի—խորհրդային, գերմանական, անգլիական, ամերիկական—ուտիչ, թափանցիկ, անդույն հեղուկ ե, մոտավորապես յերկու անգամ ավելի ծանր, քան նրան ծավալով հավասար քանակի ջուրը, յեռացվող 338 աստիճան ջերմության ժամանակի Ածխաթթու դաղը, անշուշտ մաքուրը, միշտ միատեսակ կլինի, թե ածխի այրումից ստացվածը, թե թթվի ոգնությամբ կրաքարից ստացվածը, թե կենդանու շնչառության ժամանակ գոյացածը և այլն:

Ինչպի բացատրել այդ առջեցուցիչ փաստը:

Հին ժամանակներում, յերբ քիմիական գիտելիքները դեռ թերի եյին, այնքան ել հեշտ չեր լինի այդ փաստը հասկանալ Բայց բանը փոխվեց, յերբ քիմիկոսներն իրենց աշխատանքների համար սկսեցին կշեռք գործադրել: Այդ գործիքն ոգնեց բացարելու քիմիական միացության հատկությունների անփոփոխությունը:

Յեթե ածխաթթու գաղը վերլուծենք նրա բաղկացուցիչ մասերի, այսինքն՝ ածխածնի և թթվածնի, իսկ այնուհետև կշռենք թե այս և թե այն ու համեմատենք իրար հետ, այն ժամանակ կերևա, վոր ածխաթթու գաղի ամեն մէ 44 մասերի մեջ (ըստ ըաշի) պարունակվում ե 12 մաս ածխածնին և 32 մաս թթվածնին Յել, ընդհակառակը, յեթե այրենք ածխի 12 կշռային մասեր առանք կմիանան թթվածնի 32 մասերի հետ և կկազմեն ածխաթթու գաղի 44 մասեր,

Լամվ, իսկ ինչ կլինի, յեթե թթվածնի 32 կշռային մասերում այրենք ածխի, ասենք, վոչ թե 12 մասեր, այլ 6, կմիանման արդյոք ածխի այս 6 մասերը թթվածնի բոլոր 32 մասերի հետ, թե վոչ: Դուրս ե գալիս, վոր վոչ Նրանք կմիանան թթվածնի միայն 16 կշռային մասերի հետ և կտան ածխաթթու գաղի 22

մասեր, իսկ թթվածնի 16 մասերը կմնան ազատ Նշանակում ե, և այստեղ ածխաթթու գաղի մեջ ածխածնի և թթվածնի հարաբերությունը մնում ե նույնը—առաջ յերեսուն յերկու մասին ընկնում եր տասներկու մաս, կամ նույնը կլինի. յեթե ասենք, ութին յերեք, իսկ այստեղ տասնվեցին վեց, կամ ութին յերեք, Միշտ և ամենուրեք վարտեղ ել, բնչպես ել վոր նա չկազմվի, ածխաթթու գաղն ունի ածխածնի ու թթվածնի վերաբերմամբ միշտ միկնույն կշռային հարաբերությունը—յերեքը ութինու Ուրիշ խոսքերով, ածխարրու զագի կազմուրյունն անփոփոխ ե.

Կշեռքի գործադրումը նույնանման արդյունք ե տալիս և ամեն մի քիմիական միացման հետազոտման դեպքում: Ծծմբաթթուն ջրածնի, թթվածնի և ծծմբի միացումն եւ ՅԵՎ մաքուր ծծմբաթթվում, բնչպես ել, և բնչից ել վոր նա պատրաստված չլինի, միշտ ջրածնի ամեն մի շ կշռային մասին կընկնի ծծմբի 33 նույնպիսի մասեր և թթվածնի 64 մասեր: Մաքուր ջրում—ջրածնի շ կշռային մասերին միշտ հասնում ե թթվածնի 16 մասեր, ծծմբային գաղում—ծծմբի 32 մասերին ընկնում ե թթվածնի 32 մասեր և այլն:

Այսպիսով կշեռքը լուծեց քիմիական միացման հատկությունների անփոփոխության հարցը—այս անփոփոխությունը կախված ե նրա կազմի անփոփոխ լինելուց:

Ամեն ոի քիմիական սիազման կազմն անփոփոխ ե, անկախ այս միացման կազմվելու լեղանակներից ու տեղից, դա նյութի կազմության գաղտնիքներից առաջինն ե, վոր յերկան հանեց կշեռքը բայց հենց նա ել բաց ե արել և յերկրորդ ուշադրավ գաղտնիքը:

Մենք արդեն տեսանք, վոր յերկու կամ մի քանի քիմիական ելեմենտներ միանալով իրար հետ, յերբեմն մեկից ավելի քիմիական միացումներ են տալիս վերհիշենք, վոր ծծումը թթվածնի հետ տալիս ե վոչ միայն ծծմբային գաղ, այլև ծծմբային անհիբրիդ: Ածխածնը թթվածնի հետ տալիս ե վոչ միայն ածխաթթու գաղ, այլև ածխածնի ոքսիդ: Յեթե ստուգենք զրբի տյն տեղերը, վորտեղ այդ մասին խոսվել ե, և ավելի ուշադրությամբ զննենք այստեղ բերված թվերը, այն ժամանակ կըկին կարելի յե հետաքրքիր զուգադիպություն նկատել.

ծծմբային գաղում ծծմբի 32 կշռային մասերին ընկնում ե թթվածնի 32 կշռային մասեր,

ծծմբային անհիդրիդում ծծմբի 32 այդպիսի կշռային մասերին ընկնում և թթվածնի 48 կշռային մասեր,

ածխածնի ոքսիդում ածխածնի 12 կշռային մասերին ընկնում և թթվածնի 16 մասեր,

ածխաթթու գաղում ածխածնի 12 այդպիսի կշռային մասերին ընկնում և թթվածնի 12 մասեր:

Համեմատենք իրար հետ թթվածնի այն քանակությունները, վորոնք ընկնում են մի այլ ելեմենտի միևնույն քանակության վրա: Առաջին գեպքում այդ կլինի 32 և 48, Բաժանելով նրանցից յուրաքանչյուրը 16-ի վրա, մենք կտեսնենք, վոր նըրանք հարաբերում են իրար այնպիս, ինչպես յերկուսը յերեքին, այսինքն՝ ծծմբային գաղում ծծմբի վորոշ քանակին (32) ընկնում և կարծես թե թթվածնի յերկու բաժին, իսկ ծծմբային անհիդրիդում նույն քանակին ընկնում և յերեք այդպիսի բաժին, Յերկորդ գեպքում թթվածնի քանակությունները կլինին 16 և 32: Բաժանելով այդ թվերը 16-ի վրա, կտեսնենք, վոր ածխածնի ոքսիդի մեջ ածխածնի 12 կշռային մասերին ընկնում և թթվածնի մեկ բաժին, իսկ ածխաթթու գաղում—յերկու, Տեսնում եք, ինչպիսի հասարակ հարաբերություններ են ստացվում:

Ավելի զարմանալի ու ակնառու յին այս հարաբերությունները թթվածնի և ազոտի միացություններում: Ազոտը թթվածնի հետ տալիս ե վոչ թե մեկ, այլ հինգ զանազան միացություններ, ըստ վորում ազոտի միևնույն քանակին նրանցից առաջնին ընկնում և թթվածնի մեկ բաժին, յերկորդին—յերկու, յերրորդին—յերեք, չորրորդին—չորս, և հինգերորդին—հինգ: Դուրս ե գալիս, վոր թթվածինը կազմվում ե ինչ-վոր ամբողջական մասնիկներից—բաժիններից: Թթվածինը ազոտի վորոշ քանակի հետ միանալու համար կարող ե մեկ, յերկու, յերեք և այդպես ինչ-վոր ամբողջական բաժիններ գնալ, բայց վոչ այսպիսի բաժնի կեսը կամ մի յերրորդ մասը: Բանն ինչժմեմ ե այսաեղ, ինչպես կարելի յե բացատրել այսպիսի հետաքրքիր փաստը:

Այստեղ արդեն պետք է մտածել այն մասին, թե ամեն մի նյութ ինչպիս և կազմված—միապաղաղ (անընդհատ) ե նա, թե իրոք կազմված ե առանձին մասնիկներից—բաժիններից: Այդ հարցը տալիս ելին իրենց դեռ հին հունական գիտնականները, վորոնք ապրում ելին մեր ժամանակագրությունից մի քանի հարյուր տարի առաջ: Նրանցից մեկը, Դեմոկրիտ անունով (նկ. 38), այս հարցին պատասխանում եր այսպիս:

Զի կարող պատահել, վոր նյութը միապաղադ լինի: Ցերեալդակես լիներ, ապա ձուկն ինչպես կարող եր շարժվել ջրում, մարդը—ողի մեջ, ինչպես կարող եր վարդի բուրմունքը հասնել մեր քթին... Նյութը պետք ե կազմված լինի մեզ համար անտեսանելի մանրագույն մասնիկներից: Անձրևային տմպը նույնպես միապաղադ և թվում մեզ, իսկ նա չե վոր կազմված և անձրևային առանձին կաթիլներից, վորոնց չենք կարող հաստրակ աչքով նկատել նրա մեջ բարձրում: Նյութի մասնիկները



Նկ. 38. Դիմոկրիտ (470—380) մինչ քրիստ. դարաշրջանը



Նկ. 39. Ջոն Չալտոն (1766—1844)

պետք ե ել ավելի լիոքը, անհամեմատ փոքր լինեն անձրևային կաթիլից, բայց այնուամենայնիվ նրանք պետք ե լինեն:

Այս մասնիկները, կամ առօները, վաղեմի դոյության ունեն: Նրանք չեն առաջանում ու չեն վահանում և իրարից տարբերվում են՝ ձեռվ, մեծությամբ և դասավորությամբ: Որինակ՝ սուր, աղաճամ, դառը, թթու [նյութերը] կազմված են անկյունավոր, ծակող ատոմներից: Չըի կաթիլները—կլոր ու հարթ ատոմներից և այլն: Ատոմները, ըստ Դիմոկրիտի, գտնվում են մշտական շարժման մեջ: Իսկ նրանք կարող են շարժվել, վորովհետեւ գոյությունը ունի անվերջ դատարկություն:

Դեմոկրիտն իր փիլիսոփայության մեջ կառուցել և աշխարհի մատերիալիստական պատկերացումը, վորովհետեւ մատերիան (նյութը) համարում եր վոչ թե աստծու, կամ հօգու ըստեղծագործություն, ինչպես այդ պնդում են կրոնները և իդեալիզմը, այլ ինչ-վոր նախասկզբնական ու մշտնջենական։ Դեմոկրիտացը—հին չունաստանի մեծագույն զիտնականն ու փիլիսոփան, չեր ընդունում աստվածների գոյությունը, իսկ աստվածոյին «նախախնամությունը» համարում եր տգետ ու նախապաշարված մարդկանց կողմից հնարյած մտացածին բան, նա ժխտում եր հօգու աննյութեղենությունը և ուսուցանում, վոր նա հանդիսանում ե վոչ ավելի, քան նյութեղենի (մատերիայի) մի առանձին տեսակ, վոր բաղկացած ե կրակի ամենամանը, կլոր և չափաղանց շարժուն ատոմներից, Բնական ե, վոր Դեմոկրիտի ուսմունքն իր մեջ պարունակում եր շատ միամիտ բաներ, բայց դա իր ժամանակին աշխարհի մատերիալիստական բացատրության գործում մի հսկայական քայլ եր դեպի առաջ։ Դեմոկրիտի հիմնական գաղափարը՝ թե նյութեղենը (մատերիան) բաղկացած ե մանրագույն մասնիկներից, ատոմներից, անվիճելիորեն հանճարեղ յենթադրություն եր, վորը մեծ մտածողի մահվանից շատ դարեր հետո հաստատեց գիտությունը և ապացուցեց նրա արդարացիությունը։

Անգլիայի արդյունաբերական հեղաշրջումից հետո տեխնիկայի և արդյունաբերության անսովոր ծաղկումն անցյալ դարի սկզբամ նախադրյաներ ստեղծեց և ատոմային վերածնության համար՝ նոր հիման վրա։

Դեռ 1861 թվին մեզ արգեն հայտնի Մորերտ Բոյլն ասում եր, վոր քիմիական ելեմենտները կազմվում են միատեսակ ատոմներից, իսկ քիմիական միացումները՝ զանազան տեսակ ատոմներից։ Բայց ատոմային ուսմունքն իր ժամանակակից կերպարատնքով վերակենդանացավ շնորհիվ անգլիական մի չքափար ջուհակի վորդու աշխատանքների՝ նշանավոր քիմիկոս Դալտոնի (նկ. 39), վորի մասին նույնելու ասում ե, վոր նա հանդիսանում և ժամանակակից քիմիայի հայրը։ Հենց Դալտոնը յերեան հանեց այն պարզ (կամ, ինչպես նրանց ելի անվանում են, բազմապատճեկ) հարաբերությունները, վորոնք յերբեմն նկատվում են մինչույն ելեմենտների իրար հետ զանազան միացումների գեղըում։ Այդ բացատրելու համար նա հետեւյալ յենթադրություններն ե արել։

Վոչ մի նյութ չի կարելի անվերջ բաժանել մասերի։ Մի կտոր ածուխ կարելի յե բաժանել յերկու ավելի փոքր մասերի, այս փոքր կտորներն ել ազելի փոքրիկ կտորների և այլն։ Բայց վերջիվերջո, ածուխը մանրացնելու համար ինչ միջոցներ ել գործադրելու լինենք, մենք կտանանք այնպիսի փոքրիկ մասնիկներ, վորոնց այլես վոչ մի կերպ բաժանել չենք կարող։ Միևնույն բանը կլինի և ուրիշ, ամեն մի հասարակ նլութի հետ նշանակում ե, յուրաքանչյուր հասարակ մարմին կազմված ե վորոշ քիմիական ելեմենտի ամենամանր, անբաժանելի մասնիկներից։ Այս մասնիկները կարծես թե այն փոքրիկ աղյուսիկներն են, վորոնցից կազմվում ե նյութը։

Այն աղյուսիկները, այն մանրագույն տնրաժանելի մասնիկները, վորոնցից ստացվում (գումարվում) են քիմիական ելեմենտները, Դալտոնը առանձնելու և անվանելու

Ցերը յերկու կամ մի քանի քիմիական ելեմենտներ միանում են իրար հետ, կազմելով քիմիական միացություն, այդ դեպքում տեղի յե ունենում այս ելեմենտների առուներին իրար հետ միանալով կազմում են բարդ նյութի ամենամանր մասնիկը, զոր կոչվում ե մոլեկուլ։ Այսպես, ջրածնի առանձները, միանալով թթվածնի առանձների հետ, կազմում են ածխաթթու գազի մոլեկուներ կամ ածխածնի ոքսիդի մոլեկուլներ։ Սաեւ վորևե մի քիմիական ելեմենտի առունելի միանում են իրար հետ և կազմում համապատասխան հասարակ մարմնի մոլեկուլներ։ Նշանակում ե, մոլեկուլները կարող են կազմվել և միանման առուներից։

Տվյալ նյութի մոլեկուլը պահպանում է նրա հիմնական բիմիական հատկությունները։ Բայց մոլեկուլը մենք կարող ենք և կրկին բաժանել մասերի, սակայն այդ մասերը—առանձները, վորոնք կազմում են նրա ելեմենտները, արդեն բոլորովին այլ հատկություններ ձեռք կրերեն, քան նախնական նյութը։ Ցեր այստեղ այնուամենայնիվ պետք ե լավ հիշել—մոլեկուլների հատկությունները, մինչև անգամ հասարակ նյութերի մոլեկուլները, ամեներն ել չեն հանդիսանում նրանց կազմող ատոմների հատկությունների հասարակ գումարը։ Մոլեկուլը սովորաբար ունենում ե այլ հատկություններ, նաև ներկայանում ե վորպես նոր վորպեկ, ինչպես առում են փիլիսոփաները։

Ինչպես հետո կտեսնենք, առանձներն ել դեռ նյութի բաժա-

նելիության վերջնակետը չեն հանդիսանում, — նրանց նույնպես կարելի յէ հատուկ յեղանակներով ժամանել Սակայն ոյս մասերն արգեն տվյալ քիմիական ելեմենտի ատոմների հատկությունները չեն ունենաւ: Բայց այս մասին հետո իսկ այժմ նշենք, վոր նյութի բոլոր սովորական փոխարկումների ժամանակ, քիմիական բոլոր փոխարկումների ժամանի քիմիա-նակ, քիմիական ելեմենտների ատոմները, ինչպես այդպիսիները, կան միացումից փոխվում են մյուսի:

Ահա ամենահամառոտ խօսքերով ժամանակակից ատոմային ուսմունքի եյությունը, վորի հիմքերը դրված են Դալտոնի կողմից: Այս ուսմունքի ոգնությամբ հեշտութեամբ բացառը-վում են քիմիական միացությունների անփոփոխելիության որենքը և բազմապատի՛ հարաբերությունների դեպքերը՝ մի քանի քիմիական ելեմենտների իրար հետ միանալու ժամանակը:

Իսկապես — ինչև ջրի մեջ յեղած ջրածնի վորոշ քանակին միշտ ել թթվածնի միենույն քանակն եւ ընկնում: Դեռ, ակնհայտ նի լե նրա համար, վոր ջրի ամեն մի մոլեկուլի մեջ ջրածնի վորոշ թվով տառմներին միշտ ընկնում եւ թթվածնի տառմների նույն թիվը — վոչ ավել, վոչ պակաս: Ինչև ածխածնի ոքսիդի մեջ ածխածնի վորոշ քանակին ընկնում եւ թթվածնի մի բաժին, իսկ ածխաթթու գաղում — յերկու: Նրա համար, վոր ածխաթթու գաղի մոլեկուլի մեջ ածխածնի վորոշ թիվ տառմներին ընկնում են թթվածնի յերկու անգամ ավելի լի տառմներ, քան թե ածխածնի ոքսիդի նույն քանակին: Եհեթե, ասենք, ածխածնի ոքսիդի մոլեկուլի կազմվելու ժամանակ մի ատոմ ջրածնի հետ միանում են մի ատոմ թթվածին, ապա ածխաթթու գաղի մոլեկուլի կազմը վելու ժամանակ ածխածնի մի ատոմի հետ միանում են լեռնու ատոմ թթվածին: Մի ատոմ ածխածնի հետ չի կարող միանալ թթվածնի վոչ մեկ ու կես ատոմ, վոչ կես, վոչ ել նրա այլ, վորեւ կոտորակային մասը, վորովհետեւ չթ վոր ատոմները քիմիական փոխարկումների ժամանակ անբաժանելի յեն:

Այդպիսով, ատոմների և մոլեկուլների գոյության մասին յեղած յենթագրությունը շատ լավ բացատրում եւ այն որենքները, վորոնք քիմիկոսներին հաջողվեց հաստատել կշեռքի ոգնութեամբ: Բայց չթ կարելի արդիոք վերջնականապես ճշտել այս յենթագրությունները, չթ կարելի ակնառու կերպով համոզվել մոլեկուլների և ատոմների գոյության մեջ:

Մինչև համեմատարար շատ թիշ ժամանակ առաջ այդ բանն  
անել չեր կարելի: Մոլեկուլների և ատոմների զոյության հարցի  
մասին մի քանի զիտնականներ՝ պատասխանում եյին—զա շատ  
հաջող ու հարմար յենթադրություն ե, վորը հեշտացնում և մեր  
աշխատանքը, այդ պատճառով ել և մենք ոգտվում ենք նրանից:  
Սակայն մոլեկուլներ և ատոմներ վոչ վոք չի տեսել, և ասել—  
արդյոք նրանք իրոք զոյություն ունեն, թե վոչ—չի կարելի:  
Կարող ե պատահել, այս, իսկ կարող ե լինել, և վոչ:

Բայց վորքան զարգանում եյին տեխնիկան ու զիտությունը,  
այնքան ավելի եյին կուտակվում այնպիսի տվյալներ, վորոնք  
խոսում եյին այն մասին, վոր մոլեկուլներն ու ատոմներն իրաք  
վոր գոյություն ունեն, և վոչ թե մարդկարին խելքի հորինում-  
ներն են: Գիտնականներն ամենաբազմազան ձևերով փորձում ե-  
յին հաշվել, ինչպիսի չափերի պետք ե լինեն մոլեկուլները, յեթե  
նրանք գոյություն ունեն. Յեթե, որինակ, ջրի մեջ կաթեցնենք  
ձիթապաղի յուղի մի փոքրիկ կաթիլ, այն ժամանակ նա շատ  
բարակ փառի նման կփուլի ջրի յերեսին: Նախորոք կարելի յե-  
նաշտությամբ չափել յուղի կաթիլը, իսկ այնուհետև նույն ճշտու-  
թյամբ վորոշել մակերեսույթի չափը, վորի վրա տարածվել եր նա  
և զեա հիման վրա հաշվել այս փառի և հաստությունը: Իսկ  
այս փառը չե վոր պետք ե կազմված լինի բնավլ վոչ պահած, քան  
մոլեկուլների մի շերտից: նշանակում ե, փառիկի հաստությունը  
պետք ե հավասար լինի մոլեկուլի տրամագծին, կամ յերկու,  
յերեք և այլն անդամ նրանից ավելի: Ամենաբարակ փառերի հաս-  
տության հաշվումների ժամանակ, վորոնք մի կերպ հաջողվում  
եր ստանալ, յերեսում եր, վոր մոլեկուլների չափերն այնքան փոքր  
են, վոր նրանց ակնառու կերպով պատկերացնել անդամ՝ անկա-  
րելի յեր:


Սակայն ահա թե ինչն ե հետաքրքիր: Յերբ փորձում եյին  
մոլեկուլների չափերը վորոշել բազմաթիվ այլ, մեր նկարազրա-  
ծին բոլորովին շնմանվող միջոցներով, ան ժամանակ կրկին ըս-  
տանում եյին, համարյա, նման չափեր: Ի՞նչպես կարող ե այս-  
պիսի դարմանալի զուգադիպություն ստացվել և ի՞նչ ե ապա-  
ցուցում զա, Այս, ակնհայտնի յե միայն այն, վոր մոլեկուլնե-  
րը մտացածին չեն, այլ իրականում զոյություն ունեն, այլ  
կերպ զուգադիպություն չեր կարող լինել: Ամենավերջին ժամա-  
նակներում այդ հաստատվել ե վերջնականապես, վորի մասին  
հետազոտմ կիսումի:

Իսկ ինչպիսի՞ն են մոլեկուլների չափակը:—Նրանց մասին հասկացողությունն են տալիս 40 և 41 նկարները:

Ընթերցողը, կարող ե պատահել, գիտե, վոր արյունն ինքնին անզույն հեղուկ ե, իսկ նրա կարմիր գույնը կախված ե նրա մեջ լողացող առանձին կարմիր մարմնիկներից: Այդ արյան մարմնիկները կարելի յե դիտել միայն սաստիկ ի-ոշորացնող գործիքների—խոշորացույցների տակ: Ցեղե մարդու արյան մարմնիկի տրամագիծը մեծացնենք տաս հազար անգամ, այն ժամանակ նա կունենա նկար 40 (Ա) վրա ցույց տրված չափակը: Նրա կողքին ցույց են տրված նույնապես տաս հազար անգամ մեծացրած մի առանձին, այսպես կոչված վոսկու կոլլոիդալ լուծութի մասնիկները (Բ). Նրանք այնքան փոքր են, վոր սովորական, մինչև անգամ խիստ մեծացնող խոշորացույցով նրանց նկատել չի կարելի: Ցայ այնուամենայնիվ մոլեկուլներն այնքան փոքր են վոսկու այս մասնիկներից, վոր նկարի վրա նրանց ամենափոքր կետով ել պատկերել չես կարող: Այստեղ արդեն տաս հազար անգամ մեծացնելը քիչ ե, պետք ե խոշորացնել, զոնե, միլիոն անգամ, վորը և արված ե նկար 41 վրա: Նրա վրա պատկերացված են վոսկու միեննույն մասնիկները, ինչ-վոր նախորդ նկարի վրա, բայց արդեն միլիոն անգամ մեծացրած (Բ). իսկ նրա կողքին գտնվում են միլիոն անգամ մեծացրած մոլեկուլները (Բ):

Իսկ իրականության մեջ մարդու արյան մարմնիկի տրամագիծը հավասար ե, մոտավորապես, սանտիմետրի յոթ ու կես տաս հազարերորդական մասերին, այսինքն՝ ամենաբարակ մակից ել շատ ավելի բարակ:

Մոլեկուլների իսկական տրամագիծները չափվում են միլիմետրի մի բանի միլիմետրային մասերով: Մասնոցի ծավալի մեջ,



Նկ. 40. Մարդու արյան կարմիր մարմնիկի չափակը կոլլոիդալ վոսկու մասնիկների չափակը համեմատությամբ: Ա-արյան կարմիր մարմնիկը, Բ-վոսկու կոլլոիդալ մասնիկները (մեծացրած տաս հազար անգամ):


որինակի համար, ողի մոլեկուլների այնպիսի անոելի քանակի և տեղավորվում, վոր յեթե նրանցից ամեն մեկը նարնջի չափ մեծացնենք, այն ժամանակ նրանք 300 մ. հաստության շերտով կծագեւին Ամերիկայի Միացալ Նահանգների տարածությունը:

Այս թե վորքան փոքր են մոլեկուլների չափսերը: Իսկ, վորքինետե մոլեկուլներն իրենք ել կազմվում են առանձին բաժիններից, ուրեմն առանձին առականալի յե, մոլեկուլներից նև ավելի փոքր են: Յեզ այնուամենայնիվ քիմիկոսներին հաջողվել ե վորոշել,

վորքան անդամ ալենի կամ պակաս և կշռում վորեն քիմիական ելեմենտի տառմը այս կամ այն քիմիական ելեմենտի տառմից, և շատ ճշտությամբ վորոշել:

Առաջին հայացքից այդ բանը բոլորովին անհավատալի յե թը վում: Ի՞նչպես կարելի յե կշեռքի վրա դընել ու կշռել առանձիները — նույթի այդքան փոքրիկ մասնիկները, վորոնց վոչ մի կերպ չես տեսնի վոչ

Նկ. 41. Կոլորիդալ վոսկու մասնիկների նույն չտփուերը սոլեկուլների չափսերի համեմատությամբ: Ե—վոսկու կոլորիդալ մասնրկը Յ—մոլեկուլները (մեծացրած մեկ միլիոն անգամ):



մի խոշորացույցի տակ: Սակայն իսկի կարելի ել չկա այդ բանն անելու:

Այսոր, վորպեսզի իմանալ, թե կապարի կոտորակը քանի անդամ ավել և կշռում, քան, ասենք, նույն մեծության փայտեգնդիկը, կարելի յե և չկշռել կոտորակն ու զնդիկն առանձին-առանձին: Դրա համար ավելի հեշտ և սկզբում կշռել կոտորակով լցված տոպրակը, իսկ հետո փայտի զնդիկներով տոպրակը: Յեթե հաստատ հաւատնի յե, վոր յերկրորդ տոպրակում ճիշտ այնքան գնդիկներ կան, վորքան կոտորակներ առաջին տոպրակում, և վոր բոլոր գնդիկներն իրար հավասար են, իսկ մյուս կողմից բոլոր կոտորակներն իրար հետ նույնպես հավասար են, այն ժամանակ բաժանելով տուային քաշը յերկրորդի վրա, մենք կիմանանք, վոր-

քան անգամ կոտորակն ավելի ծանր եւ փայտի գնդիկից, առաջ եւ հաղար կոտորակն ել նույնպես 15 անգամ ավելի ծանր կլինի հաղար նման գնդիկներից։ Նույնանման միջոցով ել զիտնական ներն են վորոշում ատոմների քաշը։ Իմանալով, սրբնակ, վորոշակեսակ ջերմաստիճանի ու ճնշման ժամանակ թթվածին և ածխածին գազերի միատեսակ ծավալների մեջ գտնվում են մեկի ու մուսի ատոմների հավասար քանակ, ուղղակի կշռում են այս ծավալները։ Դուրս ե զալիս, վոր թթվածնի վորոշ ծավալը 16-անգամ ավելի ծանր ե ջրածնի նույնանման ծավալից։ Իսկ վորոշինեւ նրանց մեջ կա ատոմների միատեսակ քանակ, ապա նշանակում ե, վոր և թթվածնի մեկ ատոմը 16 անգամ ավելի ծանր է ջրածնի մեկ ատոմից։

Ջրածնի ատոմը բոլոր ելեմենտների ատոմներից տմենաթեթելը դուրս յեկալի։ Այդ պատճառով ջրածնի ատոմի քաշն ել ընդունեցին վորպես միավոր, արտահայտելով այլ ատոմների քաշը ջրածնի համեմատությամբ։ Որինակ, ատոմմ են, վոր թթվածնի ատոմային քաշը հավասար է 16-ի, ազոտինը—14-ի, ածխածնինը—12-ի, յերկաթինը—56-ի, կապարինը—267-ի և այլն։ Դա նշանակում ե, վոր թթվածնի ատոմը 16, ազոտինը 14, ածխածնինը 12, յերկաթինը 56 և կապարինը 207 անգամ ավելի ծանր ե, քան ջրածնի ատոմը։

Սակայն, հետագայում մի շաբթ պատճառներով ավելի հարումար յեղափակութեան միավոր ընդունել վոչ թե ջրածնի ատոմը, այլ նրան մոտիկ մի մեծություն—թթվածնի ատոմային քաշի մեկ տասնվեցերորդական մասը։ (Վերենում մենք բերում ենք ատոմային քաշերի կլորացրած մեծություններ, իսկ իրականում նրանք մեծ մասամբ ամբողջ թվերով չեն արտահայտվում),

\* \* \*

Մենք արդեն բավական խորը թափանցեցինք նյութի կազմութան դադանիքների մեջ։ Մենք իմացանք, վոր ամենաքաղաքան նյութերի այն անթիվ քանակությունը, վորոնք կյանքի մեջ շրջապատում են մեզ և վորոնք մենք պատրաստում ենք մեր դործարաններում և ֆարբիկներում, կազմվում են համեմատարար վոչ-շատ թվով, մոտ 90 քիմիական ելեմենտներից։ Մենք իմացանք, վոր այս ելեմենտները կազմված են անտեսանելի մանրագույն մասնիկներից, վորոնք կոչվում են ատոմներ։ Մենք իմացանք, վոր ամեն մի ելեմենտի ատոմն ունի միանգամայն վորոշ ան-

փոփոխ ատոմային քաշը Այնուհետև մենք իմացանք, վոր մի քանի ելեմենտների քիմիական միացման ժամանակ այս ելեմենտների տում միանում են իրար հետ և կազմում բարդ նյութի ամենամանը մասնիկը—մոլեկուլը. Այս հանգամանքով մենք բացատրեցինք և ամեն մի քիմիական միացման կազմի անփոփոխականությունն ու շատ գեղքերում բաղմապատճեն հարաբերությունները, յերբ յերկու ելեմենտ տալիս են վոչ թե մեկ, այլ մի քանի միացությունները, Բայց այդ ժամանակ մենք տեսազությունից բաց եյինք թողել մի շատ կարևոր հանգամանք:

Կազմի անփոփոխականությունն ու բաղմապատճեն հարաբերությունները հասպավոր են միայն այն գեղքում, յերբ տարրեր առողջեր, կազմելով բարդ նյութի մոլեկուլը, պանդանում են իրենց ատոմային քաշը: Իրաքանչափ այդպես և դա: Իրենք թթվածնի առոմը թթվածնի մոլեկուլի մեջ նույնանություն և կշռում, վորքան, սրինակ, ջրի մոլեկուլի մեջ: Ի՞նչպես կարելի յե այդ ապացուցել:

Այս կարևոր հարցի պատասխանը տալիս և մեզ քիմիկունեցի նույն անդավաճան գործիքը—կշեռքը:

## 15. ՆՅՈՒԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔԸ

Ամենորյա փորձը կարծես թե ցույց և տալիս, վոր նյութը կարող և անհետ կորչել: Դուք սկսում եք գլանակ ծխել, և շուտով ծխախոտի փոխարեն թեթև մոխիք և մնում, իսկ կապտավուն ծուխն անհետորեն ցրվում և ոգում: Գցեցիք մնացորդը գետնին, նրան կկոսկառեն, անձրեզ կթրջի, կեղավով ու փոշիով կը ծածկվի, և վերջիվերջո նա կփոխի: Մաշվում են զործարանում յուրաքանչյուր մեքենան, զործարանային շենքերը, նյութեղենները... Զկա մի բան, վորին կարելի լիներ հավիտենական անվանել: Մինչև անդամ ամենապինդ ժայռերը բնության մեջ մասնիկ առ մասնիկ փշրվում են և վերջիվերջո անհետանում են յերկրի յերեսից:

Բայց յեթե լավ խորասուզվենք այդ բոլոր յերևութների մեջ, այն ժամանակ պարզ կլինի, վոր այդ յերեսույթներից միքանիսի ժամանակ նույթն այնուամենայնիվ անհետորեն չի վոշնչանում: Ժայռի ավագանատիկներն ու փոշենատիկները կցրվեն գետնի վրա դանաղան տեղեր, կթափվեն մասամբ գետերի մեջ, կտարքեն գեպի ծովը, վորպեսզի այնտեղ նստեն յերկար-յերկար ժամանակով: Ժայռն արդեն դոյլություն չունի, նրա բաղկացուցիչ:

մասները ցրվեցին, բայց շկորան — համենայն դեպս վորեն տեղ դանիվում են նրանք, Մաշվող մեքենայի յերկաթի կամ պողպատի մասնիկները նույնպես չեն կորել, նրանք միայն դանազան կողմեր են թռել, նստել են, շատ կարելի յե, արհեստանոցի հատակին, ավելված են ազրի հետ և այլն:


Լավ, իսկ գլանակի հետ գործն ի՞նչ դրության մեջ եւ Ախրայստեղ հենց զլանակի մասնիկներն ուղղակի դես-դեն չեն թըռչում, այստեղ տեղի յեն ունենում և նյութի քիմիական փափախուրյաւններ—զլանակը գառվում ե, մնացուկը փոռում: Պահպանված են արդյոք այնուամենայնիվ քիմիական փոփոխությունների ժամանակ նյութի ատոմները, մննմ և արդյոք այդ ատոմների քաշը այնպես, ինչպես վոր կար:

Ահա մի փոքրիկ փորձ, վոր դյուրըմրանելի պատասխան ետալիս այս հարցին: Ապակյա մի փոքրիկ բաժակի մեջ կիսից մի քիչ ողակաս ջուր և լցվում, վորի մեջ լուծված և խոհանոցային աղը Աղի լուծույթը բոլորովին մաքուր և թափանցիկ: Մի այլ բաժակի մեջ լցվում և նույն չափով դժոխաքարի լուծույթ, այն նյութի, վոր բժիշկները յերբեմն զործ են ածում այրումների համար: Դժոխաքարն արծաթի, ազոտի և թթվածնի քիմիական միացումն եւ, Յերկու բաժակներն ել զրվում են զգայուն կշեռքի մի թաթի վրա և կշռաքարերով ճշտությամբ հավասարակշռվում (նկ. 42): Դրանից հետո մի բաժակի պարունակությունն ածվում և մյուսի մեջ, իսկ դատարկ բաժակն իսկույն հետ և դրվում կշռեքի վրա (նկ. 43): Բայց դա ի՞նչ բան եւ նրանից հետո, յերբ յերկու մաքուր թափանցիկ հեղուկն ել խառնվեցին իրար, նրանց մեջ ստացվեց թանձր, սպիտակ, տվարողանման նստվածք, վորն արդեն ջրի մեջ չի լուծվում, այլ աստիճանաբար նստում և հատակին:

Բաժակում տեղի ունեցավ նյութերի քիմիական փոխարեկում: Դրանից առաջ մի լուծույթում աղ եր, այսինքն՝ նստրիումի և քլորի քիմիական միացություն: Մյուս լուծույթում դժոխաքար—արծաթի, ազոտի և թթվածնի քիմիական միացում: Յեթե այժմ հետազոտենք խառնելու ժամանակ ստացված լուծույթի սպիտակ նստվածքը, այն ժամանակ կերևա, վոր նա հանդիսանում է արծաթի և քլորի քիմիական միացում: Քիմիային միացած արծաթն ու քլորը կազմեցին նոր նյութ—հյուրաւարձք: Իսկ յեթե գոլորշիացնենք լուծույթը, վորի մեջ կազմվեց այս նստվածքը, այս դեպքում ամանի հատակում կմնա նատրիումի ազտարբու փոթի, այլ խոսքերով—բորակ՝ նատրիումի, ազոտի և

թթվածնի քիմիական միացությունը։ Խչպես տեսնում ենք, յերկու նյութից—խոհանոցային աղից և գմոխարարից (ազոտաթթուարծաթ)՝ ստացվեցին յերկու նոր նյութեր—քլորուտ արծաթ և բրուտի Բայց այդ ժամանակ փոխվեց արդյոք փոխարկություններում մասնակցող նյութերի բնդւանուր քաշը Բոլորովին Փոխարկումից հետո կշռվի յերկու թաթերն ել նույնպես հավասար են կանգնած, ինչպես և առաջ:

Ճիշտ այդպիսի հետևանք ներ են ստացվում բոլոր քիմիական փոխարկութերը կշռելու ժամանակ, վորտեղ ել և յերբ ել



Նկ. 42. Յերկու բաժակներում լցված են տարբեր լուծույթներ:

Նկ. 43. Լուծույթների միացումից ստացվեց նույնագույն կշռութիւն յերկու թաթերի հավասարակշռ սությունը չխախտվեց:

առաջացած լինեն, ինչպիսի նյութեր ել փորձի համար վերցրած լինենք, Փոխարկութերի մեջ մասնակցող նյութերի ընդհանուր քաշը միշտ միևնույնն է մնում, Դա ճշտված և ամենաճիշտ ու նուրր փորձերով։ Բարդ նյութերի մոլեկուլները բաժանվում են ատոմների, ատոմները կրկին միանում են իրար հետ, բայց այլ ձևով։ կազմելով ուրիշ բարդ նյութերի մոլեկուլներ։ Յեկ այդ գեպքում և վահ մի ատոմ չի կորչում անհետ, չի փոխվում նմանապես և նրա քաշը։

Բն ւթյան մեծ որենքը—Ելուրերի պանպանման ու ենթը հաստատեց նշանագոր զիանական կալուազյեն—Շվոչ նչ չի ստեղծվում վոչ արհեստական, վոչ բնական գործողությունների ժամանակ, և վորպես կանոն կարելի յե ընդունել այն սկզբունքը,

վոր ամեն մի պլոցեսի մեջ նրա սկզբնական ու վերջնական մո-  
մենտին գտնվում ե նույնի անփոփոխ քանակը:

Սակայ դեռ 16 տարի մինչ Լավուագյեն մեր հանճարեղ քնածին գիտնական Միխայլ Վասիլեիչ Լոմոնոսովը (նկ. 44) արտահաւտեց նույն որենքը, հետեւալ դար վագրներով:

«Բնության մեջ պատահող բոլոր փոփոխություններն այն-  
պիսի վիճակի յեն, զոր յերր մի առարկայից ինչքան բան խըլ-  
վում ե, նույն չափով ել միանում ե մի ուրիշիւ Այսպես, յեթե  
վորեն տեղ նրա թեղենը վորոշ չափի պակասի, ապա ուրիշ տե-  
ղում նա կավելանաւ:

Նյութի պահպանման որենքը հսկայական նշանակություն  
ունի դիտության համար՝ ծշմարիտ ե, վերջին տարիների գի-  
տական հետազոտություններն ստիպում են յենթադրել, զոր յե-  
թե մեր տրամադրության տակ լինելին չափագանց զգայուն կը-  
շեռքներ, վորից մեր տեխնիկան դեռևս հեռու յե, այն ժամանակ  
մենք կհաւանաբերելինը նյութերի փոխարկութերի մեջ մասնակ-  
ցողների քաշի վորոշ փոփոխություն Դուքս ե զալիս, զոր մարմին  
և ներզակառակի ամեն մի փոփոխություն (իսկ նա միշտ տեղի յե ու-  
նենում քիմիական պլոցեսների ժամանակ) ու զեկոցվում ե նրա մաս-  
սայի հաժապատասխան փոփոխությամբ (իսկ հետեւապես և քաշի)  
և ընդհակառակիր: Այս հարցին մենք դեռ կվերադառնա՞ք զրքի  
վերջին գույններից սեկում: Իսկ այսուղ առայժմ նկատենք մի-  
այն, զոր այս ձեռվ հայտնաբերված քաշի փոփոխություններն  
այնքան չնչին կլինելին, զոր գործնականորեն զոչ մը դեպքում  
նրանդ ու շաղը թյան առնել չեր կարելի մինչև անդամ ամենա-  
նուրը ու բարդ աշխատանքների ժամանակ: Այդ պատճառով զործ-  
նականորեն նյութի պահպանման որենքն իր ու ժն ամրողավին  
պահում ե հենց այն կերպարանքով, ինչպես նկարագրված ե նա  
վերեւում:

Նյութի պահպանման որենքը քիմիկուն երին և տեխնիկնե-  
րին հնարավորություն ե տալիս նախորոք ճշտությամբ ու հա-  
սարակ ձևով հաշվել, զոր նյութերի զանազան փոխարկութերի  
ժամանակ զոր նյութից փորքան պետք ե ստացվի: Հենց այս  
որենքը թուլ ե տալիս շատ ճշտությամբ զորոշելու զոր նյու-  
թից փորքան ե մտնում այս կամ այն բարդ նյութի կազմի մեջ,—  
այլ խոսքերով, ճշտությամբ իմանալ քիմիական միացության  
քանակական կազմը:



Նկ. 44. Միխայլո Վասիլիեվիչ Լոմնիչև (1711—1765)

16. ՆՅՈՒԹԸ ԿԱԶՄՈՂ ՄԱՍԻԿԱՆԵՐԸ ՄՇՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ  
ՄԵջ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ

Մենք այժմ զիտենք, վոր ամեն մի նյութ կաղմված է ամենամանր, անդամ ամենաառածեղ խոշորացույցների տակ անտեսանելի մասնիկներից—մոլիկուլներից և առօմներից, Յերբեմն ասում են, (մենք ել արդպես եյ, նք ասում), վոր նյութը կաղմված է այս մանր մասնիկներից այնպես, ինչպես զենքն աղյուսներից, և այդ պատճառով ել մոլեկուլներին և ատոմներին անվանում են «աշխարհաշենքի աղյուսներ»։ Բայց արդուոք լիովին ճիշտ է այս համեստու թյունը. փորձենք վերլուծել այս բանը։

Կարելի՞ յե արդյոք պատկերացնել այնպիսի մի շենք, վորի մեջ աղյուսներն իրենց տեղերն անդադար փոխեյին հազիվ թե մեկը համաձայնվեր ապրել աղյուսաշեն տան մեջ, յեթե նա հավատացած չլիներ այն բանում, վոր այս տան աղյուսներն ամրացված են իրենց տեղերում և մեկը մյուսի վերաբերմամբ իրենց դիրքը չեն փոխում, մինչև անդամ նրանց վրա գործած արտաքին համեմատարար ուժեղ աղղցությունների ժամանակի Բայց արդյոք իրավունք ունենք պնդելու, վոր ե՞նյութը նույն ձևով կաղմված է մոլեկուլներից, այսինքն, ինչպես և, ասենք, վորոց ծավալի գազի մոլեկուլուները՝ (որինակ՝ ողի), հեղուկի (որինակ՝ ջրի), կամ մինչև անդամ պինդ մարմնի (թեկուղ և նույն աղյուսի) պահում են վորոց տեղեր։

Հասարակ փորձերը մեղ ցույց կտան, վոր մենք վոչ միայն իրավունք չունենք նման հաստատում կատարել, այլ, ընդհակառակը՝ պետք և ճիշտ հակառակ յեզրակացության գանք։

Փշացած ձվի հոտը կախված է ծծմբաջրածին գազի գարշելի հոտից (ծծմբի և ջրածնի միացում), վորը սպիտակուցային նյութերի քայրայման պրոՊուկտաներից մեկն և (նրանց մասին հասունութիւն) Փորձեցեք փշացած ձուն կոտրել սենյակում, ծծմբաջրածնի զզվելի հոտը սենյակի բոլոր անկյուններում իսկույն կըզգացցին Այդ ինչնիվ բացատրել, ԶԵ վոր քանի դեռ ձուն կոտրված չեր, ծծմբաջրա ինը փակված եր ձվի մեջ, իսկ այժմ նրա մասնիկները տարածվում են ամրող սենյակով մին, սինչև անդամ և այն զեպում, յեթե ողն այնտեղ բոլորովին հանդարտ եւ

Ա,դ կարելի յե բացատրել միայն նրանով, վոր ծծմբաջրածին մոլեկուլերը զանվում են արագ տարծման մեջ, այնքան արագ,

վոր նրանք տարածվում են նրանց տրամադրված ամրող տարածության մեջ:

Ճիշտ նույնը նկատվում է նաև բոլոր այլ գաղերի նկատմամբ: Յեթե մենք փորձենք ողաճան մերենայի ոզնությամբ շշում փակված ողի կես մասը դռւրս հանել, այն ժամանակ նրա մյուս կես մասը հավասար չափով կտարածվի ամրող շշի մեջ: Յեզ ինչքան ել վոր դուրս քաշենք ոդր 22ի միջից, նրա մնացորդը միշտ ել հավասարապես կտարածվի շահ ամրող ներսի տարածության մեջ և նրա մեջ վոչ մի այնպիսի տեղ չի լինի, վորտեղ չշարժվելին ողի մոլեկուլները:

Այսպիսով, վոչ մի կասկած չկա այն բանում, վո՞ գաղի մոլեկուլները գտնվում են մօսական տրած տարման մեջ: Բայց կարող են պատճել դա արդարացի յեւ միայն գաղերի վերաբերմամբ:

Զրոյ լցված ափսեն զնենք վորեն տեղ և հանգիստ թողնենք նրան: Ափսեյում ջրի բանակն անընդհատ կալակասի, և գերջի վերջո ջուրն այնտեղից կանհետանա: Մենք ասում ենք, վոր ափսեից ջուրը գոլորշիացավ: Բայց ինչով կարելի յեւ ռացատրել այդ բանը: Միայն նրանով, վոր ջրի մոլեկուլները գտնվում են մօսական տարման մեջ և մեկը մյուսի հետեւից պոկիվում են շրջապատող տարածության մեջ: Թափած սպիրոտի հոտը լավում է հետագոր տարածության վաս: Ուրեմն և սպիրոտի մոլեկուլները դանը վում են մշտական շարժման մեջ, և նրանք մեկը մյուսի հետեւից պոկիվում են շրջապատող տարածության մեջ:


Հեղուկի մոլեկուլների շաւ ժումն ակնառու կերպով մեզ ցույց կտա հետեւյալ փորձը:

Վերցնենք բոլորին հայտնի ողնձեւ արջասողի կապույտ բյուրեղները և նրանցից պատրաստենք թունդ ջրային լուծույթի: Թամենք ան ծծողական թղթով, վորպեսզի լուծույթը մաքուր լինի: Այժմ մի բարձր բաժակի մեջ մինչև նրա կեսը մաքուր ջուր լցոնենք, ինչեցնենք նրա մեջ յերկար խողովակով մի ձաղար և զգությամբ ձաղարի միջով ածենք, պղնձեւ արջասողի լուծույթը:


Նա ծանը և ջրից և այդ պատճառով կճավագվի բաժակի ներքին մասերում, այնաեղից ջուրը հետ վանելով դեպի վեր (նկ. 45): Մեր բաժակում կտացավի հեղուկի յերկու շերտ—ներքենում պղնձեւ արջասպի լուծույթի գեղեցիկ, կապուտ շերտը, իսկ վերենում՝ ջրի անդույն շերտը: Յերկու շերտն ել բաժանված են իրարից նկատելի սահմանողակի:

Այժմ բաժակն զուշությամբ փոխադրենք մի այլ, հանգիստ

անդ, վորտեղ նա վոչ մի ցնցումների չհնթարկվի, ու յերբեմն-յերբեմն զիտումներ կատարենք նրա վրա՝ Մենք կտեսնենք, վոր էամեմատարար կարճ ժամանակում շերտերի մեջ յեղած սահմանադիմը կազմադնա, իսկ այնուհետև կապուլտ լուծույթի մասնիկները կոկան միշտ ավելի ու ավելի թափանցել մաքուր ջրի մեջ, ապա ուրեմն և հակառակը, մաքուր ջրի մասնիկները կուը-սեն իշնել գեղի ներքեւ Յեթե մենք բավական յերկար սպասենք, այդ դեպքում վերջիվերջո ամբողջ լուծույթն առանց արտաքին



Նկ. 45. Զուրը և  
պղնձե արջասպի  
լուծույթը:



Նկ. 46. Ներկի մասնիկի բրոսունյան շարժումը  
ջրի մեջ. կետերով նշանակված են մասնիկի  
զերբերը յուրաքանչյաւը 30 վայրկյանից հետո:

վորեն աղղեցության միատեսակ կդառնա: Կարմիր եր արդյոք նման վորեն բան պատահել, յեթե հեղուկի մոլեկուլներն անընդառ շարժման մեջ չգտնվելին:

Հեղուկի մոլեկուլների շարժման արդյունքը դժվար չեն ակ-նառու կերպով դիտել խոշորացույցի ողնությամբ: Այդպիսի դի-

տողություն առաջին անգամ կատարել և անդիխական զիտնական Ռուբերտ Բրոունը 1827 թվին:

Մի փոքր չինական տուշ կամ կարմիր կարմին ներկ խառնենք ջրի հետ ու թափանարենք. Առաջին գեպօւմ մենք կստանանք սև, իսկ յերակորդում—կարմիր հեղուկ. Ուժեղ խոշորացույցի տակ դիտենք այդպիսի հեղուկի սի կաթիր Մենք կտեսնենք, վոր հեղուկը յերկու գեպօւմն ել ամենեին ել միապաղապ. սև կամ կարմիր չե, ինչպես այդ թփում և զգինված աշքին Սիկրոսկոպի տակ պարզ տեսնվում ե, վոր թափանցիկ, անդույն հեղուկի մեջ ավելի կամ պակաս հավասարորեն բաշխված են, և կշոված ենք ներկի ամենամանը սասնիկները. Այս մասնիկները շատ փոքրիկ են, նրանց կարելի յե նկատել միայն խոշորացույցի տակ, բայց և այնպես զրանք մոլեկուլներ չեն,—նրանք անհամեմատ ավելի խոշոր են մոլեկուլներից:

Այսմ ավելի ուշազդիր ներկի մասնիկներին. Դուք կտեսնեք, վոր նրանք ցատկում են, պարումք. մի կողմից մուռաը թռչում, գոնվում են անդաղար շարժողության մեջ... Ճիշտ նաև նույն կերպ են շարժվում ճարպի փոքրացույն մասնիկները կաթի մեջ, ծխինը՝ ողի մեջ և այն ինչնեւ:

Յերկար ժամանակ այդ շարժումը (վոր կոչվում է Շրբունայան շարժում) զիտնականների համար մնաւմ եր վորպես հանելուկ. Սակայն վերջիկերպ պարզվեց, վոր բրոունյան շարժումը հեղուկի մոլեկուլների մեջ համար անտեսանելի շարժման արդյունք ե: Պատկերացրեք ձեզ, վոր հեղուկի մոլեկուլները միշտ գտնվում են նման կատաղի պարագին վիճակում, ընդհարվում են իրար հետ, հետ ցատկում, զարնվում ուրիշ մոլեկուլների և այլն. Յեթե հեղուկի մեջ տեղայուրներ կողմանակի վորսե մասնիկ, այն ժամանակ չորս կողմից նա կենթարկվի կատաղի սլացող մոլեկուլների հարվածներին: Այն զեպքում. յերբ մասնիկը չափանց փորր չե, զանաղան կողմերից նրա վրա թափվող անթիվ մոլեկուլների հարվածների ուժը կհավասարակշռվի, և զրա հետեւանքով մասնիկը կմնա իր տեղում: Վորոշ կարճ ժամանակի ընթացքում նա աջ կողմից կտանաս նույնքան հարգածներ. գործան և ձախից, վորքան վերսից, նույնքան և ներքեմից և այլն: Բայց յեթե կողմանակի մասնիկների մեծությունը, ինչպես մեջ տուշի կամ կարսինի մասին բերած որինակներում, փոքրանամինչ վորոշ սահմաններ, այն ժամանակ այդպիսի հավասարակշռություն արդեն տեղի չի ունենաւ: Կլինի մոսենտ, յերբ մոլե-

կուլների հարվածներն ավելի շատ կլինեն առ կողմից. մուս մոմենային—ձախից. յերբ-ըդին—առաջից և այլն, գորի հետեւանքով մասների կակսի անկանոն կերպով տարրեր կողմեր նետվել, միշտ փոփոխելով իր շարժման ուղղությունը (նկ. 4).

Այսպիսով, կասկած չի կարող լինել նաև այն բանում, վայ նեղուկի մոլեկուլները նույնպես միտե ռուժության սեղ են գքընվում. Իսկ պինդ մարմինների վերաբերւալ բան Բնչ դրության մեջ է, մի թե և աստեղ ողեկուլները հանդիսատ չեն մնու. և

Այս, այս ել նմանապես հապտատված եւ ամենամոզեցուցիչ փորձերով Ուժեղ ճնշումով սեղմում եյին կապարի կտորը վոսկու կարի հետ և յերկար ժամանակ այդ դրությամբ թողնում. Մի քանի տարրի անցնելուց հետո կապարում հալոնարերվել ե մի քիչ վոսկի, իսկ վոսկում՝ կապար. Ի՞նչպես կարող եր պատահել այդ, յեթե վոսկու և կապարի մոլեկուլներն անդադար շարժման մեջ չգտնվելին:

Վերհիշենք ելի մի քանի պինդ մարմինների հոտի մասին, որինակ, սաստիկ հոտավետ մի նյութի՝ մուշկի մասին. Այսոր այս հոտը, վոր դգացվում ե սեծ տարածության վրա, պարմանավորված ե նրանով, վոր մուշկից անդադար պոկվում են նրա ամենասանր մասն կները և ցրվում ջրջապատի տարածության մեջ. վերջիվերջո հասնելով և մեր հոտառության դգաւարանին, Այսպիսի բացատրության ճշտությունը հաստատված օ դգայուն կշեռքների ողնությամբ—բայց զրությամբ ընկած մուշկի կտորը շարունակ պակասում ե բաշով:

Այդ բոլոր ասածներից մենք պետք ե այն լեզրակացության գանք, վոր ինչ զրության մեջ ել գտնվելիս լինի մարսինը, զագանման, հեղուկ, թե պինդ.—ազատ տարածություններով իրարից անջատված նրա մոլեկուլները գտնվում են անդադար շարժման մեջ. Ըստ վորում առանձնապես սեծ արագություն ունեն զաղերի մոլեկուլները. հաշված ե, որինակ, վոր 0° և նորմալ ճնշման ժամանակ ամենաթեթև զաղի—ջրածնի մոլեկուլն ըստ շարժում են մի վայրկյանում մոտ յերկու կիլոմետր արագությամբ. թըթվածնի և ազոտի մոլեկուլները—մոտ կես կիլոմետր վարկյանում ե այլն:

Անհրամեշտ ե կրկին նշել, վոր տաքացման ժամանակ մարմնի մոլեկուլների շարժումն արագանում եւ Յեթե պինդ մարմինը պաքացնենք, ապա վերջիվերջո ամեն մի նյութի համար վորոշ ջերմատոիճանի ժամանակ նրա մոլեկուլների շարժումն այնչափ

կարաղանա, վոր մոլեկուլների մեջ յեղած կապը նշանակալից շափով կթուլանա և մարմինը կհալիքի, հեղուկ վիճակի կանցնիւ Տարբացումը շարունակելու գեղքում մուեկուն թի շարժման արագությունը նորից շարունակ կաճի, և վերջապես վրա կհասնի այնպիսի մի մոսենտ, յերբ այդ արագությունը կհաղթահարի մուլեկուների կապակցումը—մոյեկուն ըերբ կսկսեն հետ մզգել, փախչել իրարից. հեղուկը յեռալ կոկոսի ու կփոխարկի գոյորշու:

Գաղի տառացումը նույնպես մեծացնում է նրա մոլեկուլների արագությունը, վորն արտահայտվում է այն փակ անոթի պատերի վրա զործած ճնշումի ավելացումով, վորի մեջ դանվում է զազը—զազի ճնշումը ախր առաջանում է հենց նրանից, վոր նրա արագությամբ շարժվող մոլեկուլները թափով խփվում են պատերին, այնպես վոր անսթի մակերեսի ասեն մի մասը զազային մոլեկուլներից անընդհատ ստանում է հարվածների տեղատարափ կարկուտ:

Մենք արդեն ծանոթացանք բնության ու տեխնիկալի մեջ կատարվող նյութի փոխարկման բաղմաթիվ որինակները հետ, ծանոթացանք նաև սի բանի ամենակարենոր որենքների հետ, վորոնց յենթաքարկում են այդ փոխարկութեան մեջ այդ փոխարկութեան մեջ:

Այժմ հարց է առաջանում—պահպանվում են արդյոք այդ որենքները և կենդանի բնության համար, կենդանի որդանիզմների, նույն թվում և մարդկային որդանիզմի համար:

Փորձենք վերլու ծել այդ հարցը:

## 17. ՆՅՈՒԹԸ ՑԵՎ ԿՅՈՒՆՔԸ

Համեմատաբար վոչ այնքան վաղուց մեղ մոտ (իսկ բռնքուական յերկրներում և այսմ ել) լայնորեն տարածված ելին կրօնական յերեակայություններ: Այդ յերեակայությունների համաձաւին յերկիրը համարվութ եր այենքերի կենտրոնը—ցերկընքի բոլոր կողմերից դեպի յերկիր են ձգտում ստեղծագործական ուժեր և աշխարհա, ին զործեր կառարում, —ասում եր, որինակ, մեղ հայտնի միջնադարյան զիտնական Ռուսեր Բեկոնը: Իսկ յերկիրի վրա ամեն ինչի կենտրոնը հանդիսանում է սարդը—բոլորս վին մի առանձին զոյություն, ըստ աստվածաշնչի հերիաթների, շաստծու կողմից իր պահերի ու իր նմանությամբ ստեղծվածք: Այս հեքիաթներում նա բնության մեջ զրավում է առաջին տեղը, իսկ ամրող մասցածք զոյություն ունի ի սեր նրա և նրա համար—ամբողջ ոգտակարն շաստծու կողմից ստեղծված և մար-

զու կարիքի համար, ամբողջ վնասակարը—պատճի համար։ Մինչեւ անդամ յերկնալին մոլորակները, այդ յերևակայությունների համաձան, մասնակցում ելին առանձին մարդկանց գործերի ու նրանց հետ պատահած զեպքերի կառավարման մեջ, իսկ առանձնապես շայս աշխարհի հզորներին։ Գիսավոր աստղերը համարվում ելին վորպես ամբողջ ժողովուրդների համար աղետների համրավարերներ։ Որդանական կանքի յերևույթներում, նույնական են բնության խոշոր յերևույթներում—մրգեր, առպրոպի, կայծակի և այլն, տեսնում ելին անտեսանելի վաղիների պայքարը։

Մարդուն իսպառ առանձնացնում ելին նրան շրջապատող աշխարհից, հաշվում ելին, զոր նա ծեփված ե ինչ-վոր մի առանձին խմորից և վոր նրա մարմի մեջ տեղի ունեցող բոլոր յերևույթները կախված են նրա մեջ նստած, նյութեղենից անկախ ինչ-վոր մը ու ժի՛ ռհողութ աղղեցությունից։

Ահա հենց այս միտքը համառությամբ շարունակում եր մարդկանց զիխում նստած մնալ, և Նրանից չելին կարողանում աղատավել մինչեւ անդամ զիտնականները։ Յերր, որինակ, պարզեցին այն բանը, վոր բազմաթիվ կենդանիներ և՛ իրենց մարմի կազմությամբ (կմախք, սիրտ, յերիկամունքներ, թոքեր և այլն), և՛ իրենց կրանքի արտահայտություններով (սննդառություն, աճ, զգայություն, բազմացում և այլն) շատ նման են մտրդուն, այն ժամանակ սկ եցին ասել, վոր այս կենդանիներն ել ինչ-վոր հոգու նման բան ունեն, միայն ցածը տեսակի՛ Յերր իմացան, վոր բոււսերն-ել իրենց կրանքի արտահայտություններով շատ բաններում նմանվում են կենդանիներին, այն ժամանակ սկսեցին և նրանց մեջ փնտռել միշտ միենույն հատուկ ուժի ներգործությունը, վորին վերջի վերջո անվանեցին էկենսական ուժաւ։ Ասում ելին, վոր կենդանին վոչ-կենդանուց տարրեցում ե նրանով, վոր նա բոլորովին այլ կերպ և կազմված, և վոր նրանում արտահայտվում ե հոգեկան կարգի հասուլ ուժի, նյութեղենից անկախ ուժի աղղեցություն։ Ամբողջ բնությունը բաժանում երին յերկու տարրեր մասերի—կենդանի և վոչ-կենդանի—և այդ յերկու մասերի մեջ վոչ մի ընդհանուր բան չելին տեսնում և չելին կամենում տեսնել։

Նժան հայադքներ առաջացել ելին դեռ շատ հեռու ժամանակներում մարդկանց հենց իրենց սեփական ու արտաքին բնության մասին ունեցած, մութ, միամբ հասկացողություններից։

Իսկ հետագայում այս հասկացողությունները պաշտպանում եյին տիրող զասակարգերը, վորովհետև այս հասկացողությունները հեշտացնում եյին ճնշված զասակարգերի շահագործումը, Սակայն տեխնիկայի ու տնտեսական կյանքի զարգացումը և դրանցով պարմանափորփած գիտության հաջողությունները վերջիկերջո ապացուցեցին նման բերեակայությունների լրիվ սնանկությունն այն մասին, վոր բնության կենդանի ու վոչ-կենդանի մասերի մեջ վոչ մի ընդհանուր բան չկա, Այդ առնչությամբ քնչ ծառայութուններ շեն մատուցել և քիմիկոսները, գորոնք սկզբից կենդանի նյութն ուսումնասիրելուն մատեցան այն նույն յեղանակներով վորոնք գործադրում եյին և իրենց մլուս աշխատանքներում Ամենից առաջ լուծվեց կենանի նյութի հարցը:

Կմ արդյոք վորեն ընդհանուր մի բան մսի, արյան, վոսկորների և, որինակի համար, զանազան քարերի, ջրի, ողի կաղաքների միջև, Առաջին հայացքից այս նյութերը բուսըսովին տարբեր են և նրանց մեջ վորեն ընդհանուր բան լինել, կարծեսք, չի կարող իրականում այդ գես դուրս չեկալ, յերբ քիմիկոսները հետագոտում ելին գանազան կենդանի նյութերի կազմը, այսինքն՝ ճշտությամբ վորուում ելին՝ ինչ ելեմենտից են կազմված բօլոր կենդանի նյութերը, Դուրս յեկավ, վոր տարբեր կենդանի մարմիններում գտնվել եյին հետեւյալ ելեմենտները—

Թթվածին	ծծումբ	յերկաթ
ջրածին	ֆոսֆոր	նատրիում
ածխածին	կալիում	քլոր
աղոտ	սիլիկոսն	ալյումինիում
կալցիում	մաղնեղիում	ցինկ,


Իսկ բացի դրանցից, շատ քիչ քանակությամբ պղինձ, մանղան, բրոմ, յոդ, մանղեղ և մի շարք այլ ելեմենտներ:

Եթե համեմատենք ելեմենտների այս ցուցակը գրքիս առաջին հավելվածում տպված ելեմենտների աղուսակի հետ, այն ժամանակ հեշտ է տեսնել, վոր այստեղ վոչ մի հատ նոր, վոչ մի վորին առանձին, միայն կենդանի նյութին յուրահատուկ են եմենտչկա: Կենդանի նյութի կազմի մեջ մտնող բոլոր ելեմենտները պատահում են նույն անկենդան բնութան մեջ:

Սակայն, հատուկ, ուկենսական ուժի պաշտպանները չփոթվեցին այս ուշագրավ փաստից: Ե՞ս, հետո ի՞նչ, —ասում եյին

նրանք, — ելեմենտներն առենք նույնն են, բայց դրա փոխարեն կենդանի եակներում նրանցոց կաղմվում են այնպիսի միացումներ, զորոնք անկենդան բնության մեջ չեն պատահում, զորոնց արհետականորեն կաղմել չի կարելի: Յեզ այդ միմիայն նրա համար, զոր այդ միացումները կաղմվում են բացառապես միայն կենդանի ուժի ազդեցության տակ:

Այն ժամանակներում այս առարկությունը շատ ծանրակշիռ



Նկ. 47. Ֆրիզրիս Վալեր  
(1800—1882):

Նկ. 48. Յովանես Հիմիկ  
(1803—1873):

եր հաշվվում: Այնպիսի նյութեր, ինչպիսին են, որինակ, շաքարը, ոսլան, ճարպերը, քացախը, բույսությոց ձեռք բերվող գանդան ներկերը, սպիրտը և այլն, կարելի յեր ստանալ միայն կենդանի եակների հայթայթած նյութեղենն ոգտագործելով: Քիմիկուներն արդեն զիտեյին, զոր, որինակ, ջաքարը բաղկացած է ածխածնից, ջրածնից և թթվածնից, բայց արհետականորեն ստանալ թեկուզ և մի հատիկաշափ ջաքար այս ելեմենտներից նրանք չելին կարողանում: Այդ պատճառով ել ամրողջ քիմիան այն ժամանակ բաժանվում եր յերկու բոլորովին առանձին մասի — անօգանական քիմիա և սրբանական քիմիա: Անորգանական քիմիան դրազմում եր այն նյութերի ուսումնասիրությամբ, զորոնք պա-

առահում են անկենդան բնության մեջ կամ ստացվում են արձասականորեն, իսկ որդանական քիմիան հետազոտում եր կենդանի եակների—որդանիդմների կազմի մեջ մանող նոր թերը, կամ նրանցից ստացվածները:

Գործն այդ գրության մեջ եր մինչև 1824 թիվը՝ Բայց 1824 թվին պատահեց մի կարեոր գեղքը—գերմանական դիտնական Ֆրիդրիխ Վելերին (Նկ. 47) հաջողվեց իր լաբորատորիայում որհնոտականորեն պատրաստել միզանյութ, այսինքն՝ մի միացություն, վոր միշտ պատահում է զենդանիների մեզի մեջ և, հետևապես, մշակվում է կենդանի որդանիդմի մեջ՝ Վելերի թեթև ձեռքի շնորհիվ քիմիկոսներն այնուհետև սկսեցին մհկը մուռի հետեւց արճեստականորեն պատրաստել միշտ նոր ու նոր որդանական միացությունը հենց նույն յեղանակիներով. վորոնցով սովորաբար ոդտվում եյին նրանք իրենց լաբորատորիաներում, այսինքն՝ առանց մի մասնակցության ինչպոք հնարյալի կենսական ուժի. Ավելի ու ավելի պարզ եր դառնում, վոր իրականության մեջ վոշ մի կենսական ուժ գոյություն չունի և վոր կենդանի որդանիդմներում պատահող միացությունը կարող են ստացվել արձասական ճանապարհով, ինչպես և անորդանականները, վոր և՛ կենդանի որդանիդմում տեղ ունեն քիմիական որենքները, ինչպես և անկենդան բնության մեջ, օեվ արդին անցյալ դարի կենսերին Վելերի բարեկամը, գերմանական հայանի քիմիկոս Լիբիկը գրում եր (Նկ. 48).

«...Նրանք հնարում են մեզ համար ամենաանիրազործելի կարծիքներ և ստեղծելով պահանական ուժը բառը, տեսնում են նրա մեջ ինչ-վոր հարաշաղործ բան ու նրանով բացատրում բոլոր յերկույթները, վորոնք շեն հասկանում ինչ-վոր իսպառ անհասկանի, տնօրուշ բանով մտածում են բացարել այն ամենը, ինչ վոր անհասկանալի յե... Բոլորովին հակառակ այն կարծիքի, ըստ վորի իրր-թե քիմիական ուժն<sup>1)</sup> այն աստիճան ե լինթարկված կենսական ուժին, վոր նրա գործունեյությունը վրիպում է մեզ պիտողություններից, մենք, որինակ, շնչառության պլոցեսի մեջ ուժեն մի վայրկյանում տեսնում ենք թթվածնի քիմիական ուժի լրիվ գործունեյությունը. մյուս կողմից, մըջնային ու ջրարդագությունը.

1) Այստեղ Լիբիկին ոգագում է այն ժամանակներում առաջած սովորությունից՝ զանազան յերկույթների պատճառներն անվանել ուժեր. Բիբիկան կոռում խռոքը քիմիական հներգայալ և նյութը վրա քիմիական մեխոդների ներգրածության սապէն եւ

Ների թթուները, թրթնջուկաթթուն, վալերիանի արմատի ցնդպղ յուղը—ինարկե, կենսական պրոցեսի արդյունքներն են, բայց հարց և տրվում—արդյո՞ք նրանք կենսական ուժի արտադրություններն են:

Միայն քիմիական ուժի ողնությամբ մենք ի վիճակի յենք առաջ բերել այդ միացութերը:

Այսպիսով քիմիայի մեջ կենսական ուժի հարցին մի անդամ ընդմիշտ վերջ և տրվելու Սակայն քիմիայի բաժանումն որդանական քիմիայի և անորդանական քիմիայի, պահպանվում և մինչեւ մեր ժամանակները՝ Ինչպէս Անա թե ինչու:

Բոլոր, այսպիս կոչված, որգանական միացութերի կաղմի մեջ մտնում և ածխածին, զորն այլ ելեմենտների, զլիավորապես յրածնի, թթվածնի և աղոտի հետ կազմում և բազմաթիվ ամենաբազմազան և հաճախ շատ բարդ միացութերը։ Ածխածնի ու այլ ելեմենտների հետ կազմած միացութերն անհամեմատ ավելի շատ են, քան բոլոր միացած ելեմենտների միացութերն իրար հետեւ մացի դրանից, ածխածնի միացութերն ունեն մի շարք առանձին հատկություններ, փորոնցից զուրկ են մյուս միացութերը։ Այդ պատճառով ածխածնի միացութերը սովորաբար ավելի հարմար և ուսումնակարելու բոլոր մյուս միացութերից անջատ կերպով։ Անու և այմի սպանական հիմքի լի կոչվաւմ—ածխածնի միացութերի քիմիան ի տարրերություն բոլոր միացած ելեմենտների քիմիայից—անորդանական քիմիայից։

Իսկ պատճառնի լինչպիսի միացութերից են կազմվում կենդանի եակները։ Դուրս ե գալիս, վոր այս միացութերի գլխավոր և ամենակարելոր տեսակները՝ յերեք են—սպիտակուցմեր, նարզեր, ածխաջրաներ։

Սպիտակուցմերի համար վորպես որինակ կարող ե ծառայել ձվի սպիտակուցը, վորի հետ բոլորն ել ծանոթ են Սպիտակուցները—այդ ամենաբարարդ ու փոփոխական միացութերն են, վորոնք հաւանի, յեն զիտությանը։ Նրանք կազմվում են զլիավորապես ածխածնից, յրածնից, թթվածնից, աղոտից և ծծմբից։ Բացի այդ, նրանց մեջ հաճախ քիչ քանակությամբ մտնում ե և ֆոսֆոր։ Փշացած ձվի զզվելի հոտը կախված ե հենց նրա սպիտակուցի մեջ պարունակվող ծծմբից, վորը սպիտակուցի քայլքայման ժամանակ միանալով ջրածնի հետ, կազմում ե զարշահոտ զազ—ծծմբաջրածին։ Սպիտակուցների մոլեկուլը բաղկացած ե մեծ քանակությունություններից (մինչ տասնյակ հազարներ), վորով և բացատրվում ե

նրանց կազմի բարդությունը. Այս ատոմների մեծ քանակությունն է կարող ե իրար հետ միանալ շատ տարրեր ձևերով (на многие лады по разному) և այսպիսով կազմել ամենաբազմազան միացումները: Այդ պատճառով զարմանալի չե, վոր քիմիկոսներն այժմ կարողանալով որդանական տարրեր միացումների անթիվ քանակ պատրաստել, արհեստականորեն սպիտակուցներ ստանալը մինչև այժմ դեռևս չեն սովորել: Բայց արտեղ ել արդեն գործն այնուամենայնիվ հաջող ե զնում, և յեթե քիմիկոսները դեռ չեն կ-բողանում սպիտակուցներ պատրաստել, սակայն նրանք արդեն կարողանում են արհեստականորեն ստանալ առանձին նյութեր — կիսապեպիդներ, վորոնք սպիտակուցների շատ հատկությունները ունեն: Իսկ յեթե այդպես ե, ուրեմն, վաղ թե ուշ քիմիկոսները կկարողանան և սպիտակուց պատրաստելու:

Ենդեւսի հետևյալ արտահայտությունները պայծառորեն ցույց են տալիս, թե ինչ նշանակություն ունի այդ:

«Սպիտակուցի գոյության պայմաններն անվախճանորեն ավելի բարդ են, քան մեզ հայտնի բոլոր այլ ածխածն-օյին միացության գոյության պայմանները, վորովհետեւ մենք այստեղ գործ ունենք վոչ միայն ֆիզիկական ու քիմիկական հատկությունների հետ, այլև սննդ-սուսթյան և շնչառության փունկցիաների հետ, վորոնք պահանջում են քիմիկական ու քիմիկական տեսակետից միանդասայն վարոշակի միջավայր»:

Կյանքը — այդ սպիտակուցարին մարմինների գոյության ձևն ե, վորի եական մոմենտը հանդիսանում է նրանց շրջապատող որբարին բնության հետ ունեցած նյութերի մշտական փոխանակությունը: և վորը դադարում է նյութերի այս փոխանակության դադարման հետ միաժամանակ, տանելով իր հետեւից սպիտակուցի քայլայումը»<sup>1)</sup>)

Սպիտակուցարին մարմինները միշտ ել գոյություն չեն ունեցել յերկրի վրա, — նրանք առաջացել են անկենդան բնության նյութերից յերկրի պատմական զարգացման վորոշ աստիճանի միջոցին, յերբ դրա համար ստեղծվել են նպաստավոր պայմաններ: Դրա հետ միաժամանակ յերկրի վրա առաջացել են առաջին կենդանի որդանիդմերը, վորոնց կարեռագույն հատկությունն ե շրջապատող միջավայրի հետ նյութերի փոխանակություն կա-

1) Ֆը. Ենդեւս. — Բնության դիուեկտիկան. հըտա. 1936 թ ռաւերեն էջ 28 - 29

տարելը։ Այդպիսով, սպիտակուցալին միացությունները տարբերվում են բոլոր մյուսներից վոչ միայն իրենց կազմի և մոլեկուլի կազմության ավելի և աճ բարձրությամբ, այլև բոլորովին նոր հատկութամբ, վոր կտրուկ կերպով տարբերում են բանց մրուս բարձր գիծիական միացությունից—դա միջավայրի հետ տեղի ունեցած նյութերի փոխանակությունն է Յեզ նշանակում ե, յերբ քիմիային հաջողվի ստեղծուարհետական սպիտակուց, այն ժամանակ հենց դրա շնորհիվ տեղի կունենա արհետական անցում անկենդանից դեպի կենդանիս, վոր ունի անկենդան բնության մեջ չպատահող նոր հատկություններ։

Ճարպերը հայտնի յեն յուրաքանչյուրին։ Տավարի մսի կամ խոզի ճարպը, կովի յուղը, մարդկային ճարպը. փայտյուղը, կանեփի, արևածաղկի յուղը և այլն— այդ բոլորը կենդանական և քուսական ծագում ունեցող ճարպերի զանազան տեսակներն են։ Նրանք բաղկացած են ածխածնից, ջրածնից և թթվածնից տարբեր հարաբերություններով։ Կիզական սոդայի (ուտիչ նատրիոն), ուտիչ կալիի և այլն հետ տարացնելու ժամանակ նրանք կազմում են ոճառ ու զլիցերին, վորով և ողտվում են ոճառ պատրաստելիս։

Ուլան, շաբարը և մի շաբք ու թիշտ ածխածնալին միացությունը քիմիայում կոչվում են ածխածնարից<sup>1)</sup>, Կազմված են նրանք ճիշտ այնպիս, ինչպես և ճարպերը՝ ածխածնից, թթվածնից և ջրածնից բայց տարբեր։ հարաբերություններով, ու թիշտ կերպ միացած իրար հետ, և ընության մեջ նույնպես պատահում են միայն կենդանի եակների մեջ։

Կենդանի եակի մարմնի զլխավոր զանդվածը բաղկացած է սպիտակուցներից, ճարպերից և ածխածնարից, յեթե չհաշվենք, ի հարկե, ջուրը, վորը կազմում ե մարդկային մարմնի ամրողքաշի յերեք քառորդը։ Այս մրացություններն անհամար ածխածնի ածեղտ են կյանքի համար։ Ուրիշ անորդանական միացություններ կենդանի եակի սեջ քի, են (բացառությամբ ջրի)։ Իսկ Բնշպես են կազմվում այս բարդ որդանական միացությունները։

Այս դեպքում կենդանիների և բույսերի սեջ գույություններն ի հակայական տարբերությունների մասին պատճեն է առաջարկություն։

1) Այս անունն առաջացել է նրանից, վոր ոռաջ մատածում ելին իբրև բեածն մի ածխածնը։ Վորպես թէ բաղկացած է ածխածնից և ջրից։ Հետագայում յերկաց, վոր դա ճիշտ չե։

իր սպիտակուցները, ճարպերն ու ածխաջրատները կաղմում է այն նյութերից, գորոնք ստանում են նա հողից և ողի ածխաթթու զաղից, այսինքն՝ անորդանական նյութերից, կենդանին այդ անել չի կարող կենդանին ընդունակ եր սպիտակուցները, ճարպերն ու ածխաջրատները մշակել միայն արգեն պատրաստի նյութեղենից (խոտակեր կենդանիներ), կամ կենդանիներից (մսակեր կենդանիներ) և կամ, վերջապես նրանցից և մյուսներից (ամենավեր կենդանիներ, վորոնց շաբրին և պատկանում և մարգը). Յեթև ժամանենք, վոր մսակեր կենդանու կողմից կերպած կենդանին այնուամենայնիվ իր սպիտակուցները, ճարպերը և ածխաջրատները վերջին հաշվով ստացել են բույսից, այն ժամանակ ոժվար չի հասկանալ, վոր ամբողջ կենդանական աշխարհը զոյսւթու. Ն ունի ի հաշիվ բույսերի և առանց նրանց ամենակարճ ժամանակամիջում կփառչանար: Այսպիսով պարզ են, վորքան սերտ կերպով շաղկապված են իրար հետ կենդանական ու բուսական աշխարհները:

Մենք արդեն տեսանք, վոր կենդանիների կողմից արտաշնչված ածխաթթու զաղը կաղմում են բույսերի համար, ամենապղինավոր կերակուրը. սակայն դա գեռ քիչ եւ Յերբ մենք սւասում ենք ձու, յուղ, շաքար կամ այլ կերակուր, այն ժամանակ նրան կազմող նյութերից մեր մարմնում մշակվում են մարդկային ճարպեր, սպիտակուցներ և ածխաջրատներ. Բայց չեն վոր նրանք ընդմիշտ չեն մնում մեր մարմնի մեջ:

Որդանիզմի կյանքը կայանում են շրջապատի միջավայրի հետ անբնդհատ կատարվող նյութերի փոխանակության մեջ, վորն անհրաժեշտուրեն ու դեկցիոնում են մեր մարմնի բջիջների և նյութավածքների քայլայումով և նորերի ստեղծումով. Բայց զբանից, մենք շարժվում ենք, աշխատաւմ, մեր մարմինը շարունակ տաք եւ այդ բույրի համար եներգիա յեւ պետք, վորն ստացվում է ի հաշիվ մեր մարմնում կատարվող գլխավորապես ճարպերի և ածխաջրատների դանդաղ սփսիդացման և ի հաշիվ նրանում տեղի ունեցող քիմիական ուրիշ պրոցեսների քիմիական եներգիա, ի՛ Այսպիսով մեր կերած կերակուրը հանդիսանում եւ միաժամանակ և վորպես նյութեղենն մեր մարմնի քայլայլած մասնիւների կառացման համար և վորպես ազքուր, վոր եներգիա յեւ հալթաթում բարդ կառուցված մարդկային որգանիզմին: Իսկ այրժան բոլոր արգլունքները և մեր մարմնի քայլայլած մասնիւների թափթափուկները, նույնպես և մեր ընդունած կերակուրի չողագործ-

ված մեացորդները, այդ բոլորը մեր կողմից արտաշնչված ածխաթթու զագի, մեզի, քրանքի, կղկղանքի կերպարանքով արտաթորվում և դուրս է իսկ չե՛ վոր հաւանի յե, բույսերի համար վարքան լավ պարարտանյութ և հանդիսանում աղբը նշանակում է, կենդանիների բոլոր արտաթորությունները, ինչպես և նըանց արտաշնչած ածխաթթու զագը կարող և ծառայել վորպես հիանալի կերակուր բույսերի համար:

Բայց այդ և գեր քիչ և Յեթե կենդանին իր կուանքի պահպանման համար կուանքից զըկում և բույսերին, ապա դրա փոխարեն և ինքը՝ կենդանին իր մահվանից հետո նպաստում և ըստ, սերի կուանքին, կենդանու մարմինը մեռնելուց հետո քայլավում վերածվում և ազելի հասարակ նյութերի, վորոնք ծրծվում են հողի մեջ և վերջիվերջո վերստին կարող են ծառայել վորպես կերակուր բույսերի համար: Յերկրի վրա, հետեապես, ըստ, սերի և կենդանիների մեջ կատարվում է նյութերի մշտական փոխանակություն:

Սակայն, այդպես և արդյոք այդ բոլորը:

Ապագիսի շրջադարձություններ կարող են տեղի ունենալ միայն այն պայմաններում, յերբ նյութն անհետորեն չի վոչընշանում և վաշնիցի նորից չի ստեղծվում: Բայց չե՛ վոր դա ապացուցված ե, միայն անկենդան բնության համար: Իսկ ինչ, յեթե կենդանի մարմին մեջ առանձին պատճառների աղղեցութան տակ, վորն անկենդան բնության մեջ չի պատահում, նյութն ստեղծվում ե, վոչնչից կամ վոչնչանում և անհետորեն: Կարելի՞ յե արդյոք ապացուցել, վոր իրականում այդպիսի բան չկա:

Կարելի յե, և զիտության կողմից արգեն հաստատապես ապացուցված ե:

Գիտնականներն այսպիսի փորձեր եյին կատարում: Կենդանուն նրանք տեղափորում եւին մի առանձին արկղի մեջ, վորանեղնա կարողանար աղատորեն շնչել, շարժվել, ուտել, խմել քննել և այլն: Կենդանուն արված ուտելիքն ու խմելիքը նախօրոք խնամքով կշռվում եր: Խնամքով կշռվում եր նույնաղետ և կենդանու արտաթորանքները: Այդ քիչ և կենդանու շնչառության համար անհրաժեշտ ողն արկղի մեջ անց եր կացվում առանձին խողովակիրվ, ըստ վորում ճշտությամբ վօրոշվում եր, վօրքան թթվածին, ածխաթթու գաղ ու ջրալին գոլորշի կա այս սղում: Մի այլ խողովակով կենդանու շնչառության համար ծառայող սղը զանգա-

դությամբ դուրս եւ քաղվում. ու վերստին ճշտությամբ վորոշվում թթվածնի, ածխաթթու գազի և ջրալին գոլորշու քանակությունը, թթվածինը նրա մեջ, ի հարկե, ամելի քիչ եր, վորովհնատե նրա մի ռասր գործադրվել եր կենդանու շնչառության վրա. ինչ վերաբերում եւ ածխաթթու գազին ու ջրալին գոլորշուն, ապա նրանց քանակությունն ավելանում եր շնորհը շնչառության պրոցեսի ժամանակ մեկի և մյուսի կազմվելուն. Իրոն, կենդանուն նույնպես կշռում եյին ինչպես փորձի սկզբում, նույնպես և փորձը վերջանառուց հետո իսկ ինչ եր դուրս զայխաւ

Դուրս եր գալիս, վոր կենդանիների կողոք գործածվող նյութերի քանակը (ուտելիք, խմելիք և թթվածին) յերբեմն շատ եր, յերբեմն ավելի պակաս կենդանիների արտադրած նութերից (մեղք, կղզանք, ածխաթթու գազ, ջրալին գոլորշի բաց այս քաշերի տարրերությունը միշտ ճշտությամբ համապատասխանում եր ևնց կենդանու քաշի տարրերու թյանը, մինչ փորձն ու փորձից հետո նեթե կենդանին ավելի նյութերու եր արտադրում, բան պործ եր ածում, ապա նույնքան և կորցնում եր քաշում, և բնդէակառակը—յեթե կենդանին դործ եր ածում ավելի նյութեր, քան արտաթրում, ապա նույնության և ավելանում եր քաշովի իսկ դա նշանակում է, վոր և կենդանի եակում նութին անհետորեն չի կորշում և նորից չի ստեղծվում վոշնչից. ճի տ այնպիս, ինչպես և անկենդան բնության մեջ, նա փոխում է միայն իր անուքը, վերածվելով այս կամ այն սիցութերի. իսկ նրա բնդէանու քանակը մնում է անփոփոխ. Այս փաստը կր ին անդամ համոզեցուցիչ կերպով պացուցում է, վոր կենդանի եակների մեջ վոչ մի նատօնկ կենսական ուժ կա և վոր քիչութիւմիական որևէնքները շարու նակում են պահել իրենց ուժը և՝ կենդանի բնության մեջ.

Դա չի նշանակում, ի հարկե, վոր կենդանի ոռոգանիզմներում տեղի ունեցող յերևույթներն ապառվում են ֆիզիկո-քիմիական սրենքներուց Վոշ. որգանիզմը նյութերների գոյության յուրահատուկ ձևն է, վոր առաջացել է անկենդան բնությունից պատմական զարգացման վորոշականի ժամանակ, որպանիզմն իրենից ներկայացնում է վորպես նոր վորակ, ինչպես ասում են վիլլուսուփաները. Այդ պատճառով ել որգանիզմի կյանքը ֆիզիկու, իմիական որենքների հետ համասարապես յենթարկված ե իր առանձին, անկենդան բնության մեջ չպատճառող որինաւափություններին. Քննել այս որինաշափությունները մենք սույն զբանում շենք.

կարող, այդ պատճառով ել միայն նկատենք, զոր նրանք նույնապես ամենեին ել իրենցից գերբնական վոչինչ չեն ներկայացնում և վոչ մի տեսակ կենսական ուժի տեղ չեն թողնում:

Այժմ մի քանի խոսք ասենք մարդկային մարմիկ շինարարական նյութերի և տվառելանյութի կազմի, այսինքն, ուտելիքի մասին: Նմատ կերակուր և արգյուր պետք տոռղջ, նորմալ մարդու համար և թնդպիսի: Գիտնականները հաշվել են, զոր առողջ, կը առ 65—70 կիլոգրամ կշռող մարդու համար միջին աշխատանքի ժամանակ որական պետք ե՝

սպիտակուցներ	100	գրամ
ճարպ	100	»
ածխաջրատներ	200	»
ջուր	2500	»
աղեր (զլիսավորապես խոհանոցային)	25	»

Բոլոր այդ նյութերը (բացառությամբ ջրի) մատավորապես վերոհիշյալ քանակություններով պարունակվում են, որինակ, յերեք ու կես ֆունտ համարի հացի մեջ: Սակայն միատեսակ կերակրի յերկարատև դործածությունն ողտակար չի դործածության համար, վորովհետեւ նաև վերջիվերջո կծանրաբեռնի ստամորու և վատ կմարսվի: Բացի զրանից, կերակրի շատ տեսակները պարունակում են-մեզ պիտանի շատ միատեսակ «ննդանյութեր» և շատ քիչ այլ տեսակ նյութեր: Մսի մեջ, որինակ, շատ սպիտակուց կա, ոսկորաբար ավելի կամ պակաս չափով բավարար քանակի ճարպ, բաց ածխաջրատներ համարյա չկան: Իսկ կարտոֆիլը, ընդհակառակը, կազմված ե համարյա միայն ամբողջովին ուղարկից, այսինքն, ածխաջրատից: Նշանակում ե, մսից մենք ջրածին չենք ստանա, իսկ կարտոֆիլից համարյա չենք ստանում սպիտակուց: Բացի զրանից, զիտությունը հաստատել ե, զոր կանոնավոր սննդառության համար անհրաժեշտ ե, զոր մեր սննդի սպիտակուցների մի յերբորդը կենդանական ծագում ունենա (վորպես միս, ձու, կաթ և այլն), իսկ յերկու յերբորդը—բուսական (հաց, կանաչեղեն, կարտոֆիլ, լոբի և այլն): Ամենաոգտակարը, հետևապես, մարդու անդի համար կլինի խտոր, զանազանակերպ ուտելիքը, զորի մեջ մտնում են ինչպես կենդանական, նույնապես և բուսական պլրուզուկտներ: Մեր մարմինն այդ տեսակ կերակրից ավելի հեշտությամբ կմշակի որդանիզմի համար անհրաժեշտ քի-

միական միացութերը, և այդ տեսակ ուտելիքը նույնպես կծառացի նրա համար վորպես եներդիայի ամենալավ աղբյուր: Յերեխաներին ավելի ոգտակար կլինի ավելի շատ գործածել կենդանական սպիտակուցներ, քան բուսաւան:

Վերջին տասնամյակներում հայտնաբերվել ե մեր մննդի համար ելի մի կարևոր բազկացուցիչ մաս, զորի նշանակության մասին նախկիններում լավ դեպքում միայն յենթաղրություններ եյին անում:

Առաջիկա ժամանակներում կատարվող յերկարատև ճանապարհորդությունների ժամանակ, առանձնապես ծովային առագաստավ բնափերով ավելի թարմ մթերներ ձեռք բերելու անկարելիության պատճառով, ստիպված ելին բավականանալ ազածու ապիստած ուտելիով. առ պայմանները շատ շուտ առաջ եյին բերում սարսափելի հիվանդություն—լնդախտը, վորը տանում եր շատ զուեր: Տասնութերորդ դարի անգլիական նշանակոր ծովագնաց Զեմս Կուկը նկատեց, զոր լնդախտի առաջացումից կարելի յե խուսափել, յեթե ոննդարամնի մեջ մուծենք ածիկ, գարեջրի խոտացրած մակարդ, գազարի «մարմելադ» և նման մթերքներ: Բացի դրանից, կանգառութերի ժամանակ Կուկն ստիպում եր իր նափազնասներին հնարավորին շափ շատ ուտել թարմ մրգեր ու կանաչեղեն: Յեվ այդ ճանապարհում նրան հայողվում եր յերկարատև ճանապարհորդությունների ժամանակ իր նավերի ծառայողների կազմը նախաղանդանել լնդախտից:

Յերկար ժամանակ Կուկի գործադրած միջոցների ներզործության պատճառը զիտության համար մնում եր վորպես զազանիք: Յեզ միայն մոտ յերկու տասնյակ տարի սրանից առաջ հասջողվեց բաց անել այդ գաղտնիքը: Յերեաց, զոր լնդախտն առաջնուա և ուտելիքի մեջ քիչ քանակութամբ գանվող մի առանձին տեսակ որդանական նյութի բացակայությունից զոր այժմ կոչվուա և վիթամին C<sup>1)</sup>: Այս վիթամինը գլխավորապես պարունակվում է կանաչեղենում—կաղամբ, գազար և այլն ու պտուղներում—խնձոր, նարինջ, լիմոն և այլն<sup>2)</sup>: Սակայն այս կանաչեղենի և պտուղների աղելու և չորացնելու ժամանակ վիթամինը քարայզում ե, զորը և հանդիսանում եր վորպես լնդախտի պատճառ: Թարմ ուտելիքի բացակայության ժամանակը:

1) C—լատինական առա ե, զոր արտասանվում ե ցիւց:

2) Նա առա ե զանգում և վայրի գրիթյառ առող բույսերի մեջ, որին ակա, մասրենու պառզների մեջ, ունու և յեղենու փշտօերեների մեջ:

Հետո պարզվեց, վոր ուստելիքի մեջ պետք է լինի մի ամբողջ շարք այսպիսի նյութեր—զանազան վիճակիններ, վորոնց բացակառ,ու թյունն առաջացնում ե զանազան հիվանդություններ։ Վիտամինները ներգործում են կենդանի որդանիքմի վրա շատ քիչ քանակությամբ, նրանց մեծամասնությունն անկա,ուն միացումներ են հանդիսանում, վոր առաջացնումից և այլ պատճառներից հեշտությամբ քայլայվում են։

Վիտամինների աղբյուր, բացի թարմ բուսական մթերքներից, հանդիսանում են նույնպես թարմ միսը, ձուն, կաթը, յուղը և այլն։

Վիտամինների գլուտը մի անգամ ևս հաստատեց նախկին հայացքները մարդու համար զանազանակերպ խառն ուստելիքի ողտակար լինելու մասին, վորի կաղմի մեջ պետք ե մուծել ամեն մի հնարագործության դեպքում նաև պտույներ և թարմ կանաչներն, ներկայումս սովորել են համակենտրոնացման ձևով բազմաթիվ վիտամիններ ձեռք բերել, իսկ նրանցից մի քանիսն արդեն քիմիկոսներն ստացել են նաև արհեստականորեն։

## 18. ՆՅՈՒԹԻ ՇՐՋԱՆԱՊՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ


Այսպիսով, մենք տեսանք, վոր նաև՝ կենդանի որդանիքների մեջ մշտապես տեղի յին ունենում մ նյութի քիմիական փոփոխություններ, վոր կյանքը կապված ե կենդանի որդանիքների և անկենդան բնության սիջն անընդհատ կատարվող նյութերի փոխարկության հետ։ Քիմիական ելեմենտները ընության մեջ գտնը գումար են մշտական փոփոխման ու շարժման մեջ, նրանց ատոմները տարրեր ձևերով միանում են իրար հետ, մի քիմիական միացումից փոխվելով մի ուրիշի կամ պարզ նյութեր կազմելով, յեթե իրար հետ կապվում են միատեսակ ելեմենտների ատոմները։

Բնության մեջ մշտապես տեղի յի ունենում նյութերի սեծ օգտառություն, վորի մի քանի որինակների հետ մենք արդեն ծանոթացանք։

Վերցնենք մեզ շրջապատող ողը, վորի գլխավոր բաղկացուցի, մասերն են ազոտն ու թիվածինը. 64—65 եւերում նկարագրված ե այն շրջանառությունը, վորի մեջ մասնակցում ե քիմիական ելեմենտ ազոտը, վորը կատարի սրողի—սպիտակուցի անպայման բաղկացուցիչ մասն ե կազմւմ։

Մշտական շարժման ու փոփոխության մեջ ևն գտնվում նաև

ողի մյուս բազկացուցիչ մասի—թթվածնի ատոմները։ Դուք ներ-  
շընչում կատարեցիք, ձեր արյան կողմից կլանված ողի թթվածնի  
մի մասը հենց նրա (արյան) հետ տա, ածվեց ձեր ամբողջ մարմ-  
նի մեջ։ Այսաեղ թթվածինը որգանիզմի զանազան նյութերի հետ  
քիմիական փոխադարձ ներդրության մեջ մտավ։ Վերջին հաշվով  
նրա ատոմներն արդեն քիմիապես կապվեցին ածխածնի ատոմների



### Նկ. 49. Ածխածնի զբանառությունը։

հետ ածխաթթու զազի կերպարանքով, վորն արտաշնչման ժամա-  
նակ ցրվեց ողում և վերջիվերջո հասավ կանաչ բույսերին։ Մի  
շաբթ փոխարկումներից հետո բույսից կրկին անջատվեց աղատ  
թթվածնն ու ցրվեց ողի մեջ։

Այդ քիչ եղու. ողի թթվածինը միշտ մասնակցություն և  
ունենում անկենդան բնության մեջ տեղի ունեցող այրման, ոք-  
սիդացման բոլոր պըսցեսների մեջ։ Անլասկան, և անկենդան բնու-  
թյան մեջ կան պըսցեսներ, վորոյ ժամանակ տեղի յէ ունենում  
աղատ թթվածնի անջատումը։

Այսպիսով, ողի մեջ, վորն աւսոր շրջապատում և մեր Յեր կիրք, ապօտի և թիվածնի, ատոմներն այն չեն, վորոնք կային նրա մեջ ավելի առաջ, և նրանք չեն մաս ողի մեջ ընդուշտ նաև ապագայում:


Անգաղար շրջանառություն են կատարում և ածխածնի—կյանքի այդ ելեմենտի ատոմները. Կենդանիները միշտ փոխանակում են զրանք բույսերի հետ և բույսերը կենդանիների հետ (Նկ. 49). Այս շրջանառության ուղիներն ընթերցին պարզ կլինեն այն ժամանակ, յեթե նա վերհիշի բույսերի սննդառության մասին 54—55 եցերում ասվածը:

Բայց ածխածնի ատոմները յերկրի վրա ներգրավվում են նև ավելի լայնածավալ շրջանառության մեջ: Գիտնականները յենթադրում են, վոր յերկրի պատմության հին-հին ժամանակներում յերկրախն մթնոլորտն ավելի հարուստ եր ածխաթթու գազի պարունակությամբ, քան այժմ, իսկ յերկրի կեղևն անհամեմատ ավելի բարձր ջերմաստիճան ուներ: Յերկրի կեղևի սառելու և յերկրագնդի վրա հեղուկ ջուր կազմվելու (բարձր ջերմաստիճանի ժամանակ մթնոլորտում ջուրը գտնվում եր դուրս տեսքով): Հետ սիածամանակ ածխաթթու գազը և խոնավությունն սկսեցին քիմիապես աղղել այն նյութերի վրա, վորոնցից կազմված եր յերկրի սկզբնական կեղևը: Այդ ժամանակ կազմվեցին առանձին նյութեր, այսպես կոչված ածխաթթվային աղեր, վորոնց համար վորպես որինակ կարող հն ծառայել բոլորին հալանի սուսան (նատրիոնի ածխաթթվային աղ), ողոտաշը (կալիումի ածխաթթվային աղ) կամ կրաքարը, մարմարը, կավիճը (կալցիումի ածխաթթվային աղեր) և ուրիշները: Այս աղերի մի մասը կուտակվում եր հողի մեջ, իսկ մի մասը լուծվում ջրի հետ ու վողովդվում-հոսում գեպի ծովերն ու ովկիանոսները: Այսպիսի պրոցեսներ տեղի յին ունենում և ներկայումս:

Ծովն ընկած ածխաթթվային աղերն այնտեղ մտնում են տարրեր քիմիական փոխադարձ ներգործությունների մեջ: Մասնավորապես կալցիումի և մագնեզիումի ածխաթթվային աղերն սպագործվում են ծովային կենդանիների կողմից, որինակ, խեցիներ կառուցելու համար և այլն: Այդ ժամանակ մասնակիորեն անջատվում ե աղատ ածխաթթու գազը և լուծված ածխաթթվային աղերը վերածվում են ջրում անլուծելի աղերի: Այդպիսի կենդանիների մահից հետո, նրանց փաթթոցներն իջնում են հատակ, կազմելով կավճային նստվածքներ, կամ մնում են ծովում

վորպես կորալւան խոռոքեր և այլն։ Այդ նստվածքները ծովի հետ քաշվելու ժամանակի միանում են ցամաքի հետ, այստեղ ածխաթթու զաղի և խոնավության միատեղ ազդեցությունից կրկին մասնակի կերպով փոխարկվում են լուծելի միացու մեջ, նորից վողողվում-հոսում ծով և այլն։

Բացի զրանից, ածխաթթու զաղ և անջատվում էրկրի կեղծից հրարխային ժաթքումների ժամանակ, նմանապես և բաղմաթիվ բնական գաղափին աղբյուրներից։ Այս գաղը մուտք և



Նկ. 50. Ֆունդումենտալ թյուները

գործում մթնոլորտ և հետո գործուն մասնակցություն ունենում ածխածնի խոշոր շրջանառության մեջ Յերկրի վրա։

Շրջանառության մեջ միշտ ներգրավվում են նաև ֆոսֆորի առողջությունը՝ մի ելեմենտ, վոր կյանքի համար նույնական կարևոր նշանակություն ունի։ Գերմանացի գիտնական Մալեշոտն ասել է, վոր ռառանց ֆոսֆորի չկա միտք։ Իսկապես, ֆոսֆորը (քիմիական միացու մեջ) կերպարանքով) «եր սննդառության ամենակարևոր ելեմենտներից մեկն ե բացառիկ նշանակություն ունի՝ մարդու ջղային և մտավոր գործունեյության համար, նա

զնում և նույնպես և վոսկրների կազմության համար և այլն:  
Բայց փոսֆորինան այն ատոմները, առանց վորոնց անհնար և մեր  
ուղեղի ամենապատասխանատու աշխատանքը, առաջ գտնվում  
ենին բույսերի մեջ, հողում, այլ կենդանիների մեջ (նկ 50):

Ֆոսֆորի հիմնական պաշարները հանդիսանում են բնու-  
թյան մեջ փոսֆոր պաշունակող հանքերը, զլիավորապես այսպիս  
կոչված ապառիտաները, վորոնց բուրեղներն ամբացգած են զա-  
նազան լեռնային հանքերի մեջ: Սովորաբար այդ տեսակ հանքե-  
րը քիչ քանակությամբ ըրված են լինում այլ լեռնային տեսակ-  
ների մրջներ, բայց նրանք յերբեմն պատահում են հսկայական շեր-  
տերով, որինակ, մեզ մոտ Խիբինյան տունդրաներում կոլայի թե-  
րակզգու վրա:

Ապատիտների ֆոսֆորային միացումները համարյա անլու-  
ձելի յեն ջրում և այդ պատճառով քիչ են յուրացվում բույսերի կողմից: Բայց այսպիսի միացումները (ֆոսֆորաթթու աղ—ֆոսֆատ) այնուամենայնիվ առտիճանարար լուծույթի յեն փոխվում լուծ-  
ված ածխաթթու գաղ պարունակող ջրի ազդեցությունից, կամ  
բույսերի արժատների արտադրած թթու նյութերի ազդեցությունից: Լուծված ֆոսֆատների մի մասը ջրի կողմից, գերջիվերջո  
տարգում և ծով, վորտեղ նրանք կլանվում են ծովալին որգա-  
նիզմների կողմից և վերջիններում ֆոխարկվում որգանական միա-  
ցումների: Մի մասը հողից անմիջականորեն անցնում է բույսերի  
մեջ: Ֆոսֆատների անլուծելի դրությունից լուծելի դրության  
փոխվելու մեջ մեծ դեր են խաղում նաև զանազան հողային բակ-  
տերիաներ—ամենամանը, չգինված աչքին անտեսանելի, ամենա-  
հասարակ որգանսկմները: Հողի լուծված ֆոսֆատները հեշտու-  
թյամբ յուրացվում են բույսերի կողմից և այնտեղ մտնում են  
որգանական բարդ միացումների կազմի մեջ: Բույսերի հետ միա-  
սին ֆոսֆորի ատոմներն ընկնում են կենդանի որգանիզմների մեջ,  
վորտեղ կազմում են կենդանական ֆոսֆորալին միացումները: Ուրիշ  
նյութերի հետ միասին նաև ֆոսֆոր պարունակող կենդանիների  
արտաթորանքները, նմանապես և մեռած բուսերն ու կենդանի-  
ներն ընկնում են հողի մեջ, վորտեղ նրանց ֆոսֆորային միա-  
ցումները մասնակիորեն կըկին ներդրավվում են կենդանի բնու-  
թյան շրջանառության մեջ, իսկ մասամբ ել առանձին բակտե-  
րիաների ազդեցությունից կրկին դասնում են չլուծվող ֆոս-  
ֆատներ...

Այսպես և կատարվում ֆոսֆորի այս մշտական շրջանառու-

թյունը։ Մեր հայտնի դիտական ակադեմիկոս Ե. Ա. Ֆերսմանն  
առ կապակցությամբ խիրինյան ապատիտի (վորը, ինչպես գի-  
տենք, զործազրգում ե պարաբանյութեր պատրաստելու համար)՝  
մասին ասում ե.

«ԵԱՀ Միության ամեն մի քաղաքացի... բերանը դրած ամեն-  
մի պատառ հացի հետ կուլ կտա մոտ 50.000.000.000.000.000  
ֆուֆորի առանձին վոր բենուարին Կուկիսվումշորրի հանրահորից  
հեռավոր ու բարդ ճանապարհներով մեղ և հասել... Այս, հացի  
ամեն մի պատառ, վուշի զործվածքի ամեն մի մանրաթել, բամ-  
րակեղեն ամեն մի շապիկ պարունակում ե ապատիտի առանձին  
և անզամ մեր թեյում յեղած շաքարն ապրում ե մեր խիրինյան  
ապատիտով»։

Այսաեղ կարելի յեր յերկրի վրա տեղի ունեցող ուրիշ քի-  
միական միացումների շրջանառության բազմաթիվ որինակներ-  
ես բերել, բայց մենք կսահմանափակվենք ելի մի որինակով մի-  
այն։

Բոլորը ծանոթ են յոդի հետ, վորը զործ և ածվում կտըր-  
վածքները, գերբերը և այն վարակաղերծելու համար, սակայն  
շատ շատերը չգիտեն, վոր սովորական ջերմաստիճանների ժամա-  
նակ մաքուր յոդը հանդիսանում է վորպես պինդ մարմին և իրն-  
ից ներկայացնում է պողպատա-դորշ գույնի բյուրեղներ (այն-  
ուղղաց, վորի հետ մենք սովորաբար զործ ենք ունենում, յոդի  
լուծույթն և սպիրտում): Յեզ ել ավելի քչերը զիտեն, վոր յոդը-  
թեկուղ և շատ քիչ քանակությամբ, անհրաժեշտ և մեր օրդանիդ-  
մի կանոնավոր գործունելության համար: Բանից գուրս և զալիս,  
վոր կերակրի և խմելու ջրի մեջ յոդի պակասն առաջացնում և  
խորիս (ուսուցք), իսկ յերբեմն մինչև անզամ և տկարամառու-  
թյուն, ինչպես զա նկատվում է լեռնային բնակիչների մոտ (որի-  
նակ՝ Շվեյցարիայում), վորոնք միծ մասամբ զործ են ածում սառ-  
ցադաշտերի հալումից զոյացած և յոդից զուրկ կամ համարյա-  
ղուրկ ջուրը։

Յոդի թիմիական միացումներ պարունակող հանքերը բնու-  
թյան մեջ շատ ցրված են, այսինքն՝ վոչ մի տեղ չեն կուտակ-  
վում ինչքան և իցե նշանակալի քանակությամբ: Այդպիսի հան-  
քերի հոգմանարության ժամանակ (այսինքն՝ ոդի, ջրի և աւճ-  
ազդեցության տակ նրանց քայլքառանիների ժամանակ) յոդը ժառ-  
նակիորեն ընկնում է ծովը: Նրա մի մասը յուրացվում է ծովա-  
յին որգանիզմների կողմից (առանձնապես մի քանի ջրասեղների-

կողմից), իսկ մի մասը գոլորշիացող ծովային ջրի հետ բարձրացնում և ժթնոլորտ և անձրսի ու ձյան հետ ընկնում և հողի մեջ, իսկ այստեղից ել կենդանիների և բռւյսերի որդանիքների մեջ:

Այսպես և կատարվում յերկրազնդի վրա ելեսենսների այս հոյակապ շրջանառությունը, Յեզ ինչպիսի սերտ կապ և հաւտնաբերվում ամեն մի կենդանի եակի և ամրող աշխարհի միջն:

Դուք կերաք մի կտոր հաց, վոր պատրաստված և Ուկրաինայի վորնեա տեղից բերված ալուս բից, Ածաւածնի այն մասնիկները, վորոնք այս հացից կյուրացնեած մեր մարմինը և վորոնք կմըտնեն այն բանի կազմի մեջ, վորը դուք անվանում եք իմ Շյեսալը, մի ժամանակ գտնվում եյին ուկրաինական ցորենի հասկերի մեջ: Իսկ ուկրաինական ցորենն ստացել եր այդ մասնիկներն ողի ածխաթթու զաղից, Ածխաթթու զաղի այն մոլեկուլները, վորոնք ցորենի կանուչ տերնի մեջ տարբալուծված եյին ածխածնի և թթվածնի ատոմների, մինչ ա.գ. շատ կարելի յե, յերկար ժամանակ տարութերվում ելին ողում, նրանից հետո, յեր Նրանք կազմել եյին յերկրի հնուազոր անկյունում ապրող վորնեա կենդանու շնչառության հետեանքով: Մի քանի ժամանակից հետո ածխածնի այս մասնիկները կարգեն ձեր մարմին մեջ, նորից կմիանան թթվածնի հետ և ածխաթթու զաղի կերպարանքով յերկար ժամանակ կտարպեն ողի քմանաճ հոսանքների կողմից, քանի զես նորից շնումտել վորնեա բռւյսի կազմի մեջ, շատ կարելի յե, յերկրագնդի միանդամայն ուրիշ ծայր ւմ:

Ողում ալանում և աղոտի ժամանիկների անհամար քանակություն թթվածնի մասնիկների հետ կողք-կողդի: Հանկարծ պայթեց փոթորիկը, խփեց կայծակը, և նրա ազդեցութան տակ աղոտի մի քանի մասնիկներ միացան թթվածնի մասնիկների հետ, լուծվեցին անձրսի կաթիւների մեջ և նրանց հետ միասին ընկանհողի մեջ: Հողից դուրս քաշեց նրանց բռւյսը, վորի մարմին մեջ նրանք վերափոխվեցին ուրիշ նյութերի: Բույսը կարող է ուտվել կենդանու կողմից և աղոտի մասնիկները, կենդանու մարմնի կազմի մեջ լինելով, վերջիգերց դուրս կդան այնտեղից. Կրկին կընկնեն հողի մեջ, նորից բռւյսի մեջ, ելի կենդանու մեջ և այլն: Սակայն կարող ե պատահել, այն սուեկուլները, վ. բռնց բազկացուցիչ մասն հն հանդիսանում նրանք, հողում առանձին բակտերիաների կողմից կտարբալուծվեն և աղոտի աղատ մասերը վերըստին գոր սու կպրծնեն գեղի ողը: Կարող է լինել, պատահմունքը կտանի նրանց ողի ամենաբարձր շերտերը, վորտեղից նրանք

կարսղ են սլանալ դեպի տիեզերական անգունգները, վարպեսզի այնտեղ, մեզնից անսահման տարածությունների վրա նորից մասնակցություն ունենան նոր նյութերի կազմության մեջ, հնարավոր ե և մեզ անհայտ կենդանի եակների կազմության մեջ...

«Ի՞ր դարն ապրած սերնդի մահը կամ քայլայում» նորն համար ծառայում ե վորպես կրանքի աղբյուր, —ասում ե Լիրիսիր: —Ածխածնի հենց այն ատուր, վորը, ինչպես մկանային թելերի բաղկացուցիչ մի մասը, արյունը յերակներով տանում ե դեպի մի ժարդու սիրտ, շատ կարելի յե, յեղել ե նրա նախորդներից վորընե մեկի սրտի բաղկացուցիչ մասը: Մեր ուղեղի ազոտի ատումը, շատ կարելի յե, յեղել ե յեղիպտացու կամ նեղրի ուղեղի բաղկացուցիչ մասը: Ինչպես մարդկանց ներկա սերնդի հոգին անցած աշխարհի հոգմոր գործունեյության արտադրություններից անունդ ե ստանում, վորը ծառայում ե նրա զարդացման ու զույցության համար, այնպես ել անցած-զնացած սերնդի մարմնի ելեսենտները կարող ն փոխանցվել ե մեր սեփական կենդանի մարմնի բաղկացուցիչ մասերը դառնալ:

Մեր մարմնի յուրաքանչյուր մասը մի ժամանակ յեղել է սրից նյութերի կազմի մեջ. և նրանցից յուրաքանչյուրը կմասնակցի նյութեղենի մշտական շրջանառությանը տիեզերքի մեջ: Բնությունը միասնական ե, իսկ դա կազմող նյութեղեննը գտնում ե մշտական փոփոխության և փոխարկութների մեջ, մշտական շրջանառության մեջ: Այսն մի կենդանի եակ, մարդն ել այդ թվում, հանդիսանում ե նրա միայն ամենաշնչին մասնիկը և յենթարկված ե նրա որենքներին: Այս շրջանառության նշանակությունը հանճարեղորեն արտահայտված ե Ենգելսի խոսքերով.

«Մտերիան շարժվում և հավիտենական շրջանառության մեջ, և բոլորում ե իր տրանկտորիան<sup>1)</sup> այնպիսի ժամանակամիջոցներում, վորոնց համար յերկրային մեր տարին չի կարող ծառայել վորպես բավարար միավոր շրջանառության մեջ, վորում զարդացման ամենաբարձր ժամանակը, որպանական կյանքի ժամանակը և առավել ես զիտակից եյակների կյանքը նույնքան աղքատիկ ե չափված, ինչպես տարածությունը կյանքի ու ինքնազիտակցության մեջ, շրջանառության մեջ, վորում մատրիայի գույության ամեն մի առանձին ձեւ—միևնույնն ե, արև լինի կամ

1) Ցւղի:

մշուշաղանդված, առանւին կենդանի կամ կենդանա-ան տեսակ, քիմիական միացում կամ քայրալում, միատեսակ անցողի և, և վորի մեջ վոչ մի բան հավիտենաւան չեւ բացի մշտնդենապես փոփոխվող բացի հավաք շարժվող մատերիալից և նրա շարժման ու փոփոխման որենքներից (Յ. Ենգել—Բնության դիալեկտիկան, հրատ. (ոռւսերեն) VII էջ 99):

Վորպեսդի ամելի լավ հասկանանք Ենգելսի այս նշանավոր խոսքերի շարունակութունը, վորը մեջ կրերվի մեր գրքույկում ավելի ուշ, մեզ անհրաժեշտ և ել ավելի խոր թափանցիլ նկութի կազմության գաղտնիքների մեջ, իսկ դրա համար պետք և նուխորոք ծանոթանաւ քիմիկոսների միջազգային լեզվի հիմունքների և մի քանի կարեռ որենքների հետ, վորոնք վերաբերում են քիմիական ելեմենտներին:

## 19. ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ

Այս, քիմիկոսներն ունեն այնպիսի լեզու, վորը հասեանալի յեւ ամեն մի ազգության պատկանող, ամեն մի լեզվով քիմիա ուսումնասիրող մարդու համար. Այս լեզվի ամենասկզբնական հիմունքների գիտենալը մեզ շուտով պետք կգա, իսկ բացի դրանից, բոլորին, ով ցանկանում է հանգամանորեն ուսումնասիրել քիմիան, ոգտակար կլինի քիմիայի մասին գրված այլ գրքույյկներ կարդալու և հասկանալու համար ուսումնասիրել քիմիական լեզվի հիմունքները:

Քիմիայում քիմիական ելեմենտները նշանակվում են կարճ լատինական մեկ կամ յերկու տառերով, վորոնք ելեմենտների լատինական կամ Հունական անունների սկզբնատառերն են. Այսպես, որինակ, ջրածինը նշանակվում է H տառով (արածանավում և հաշվում), թթվածինը—O (արտասանվում և ո), ազոտը—N (են), ֆոսֆորը—P (պե), պղինձը Cu(կու.), լիբկաթը—Fe(ֆե)և այլն. Դրբիս առաջին հավելվածում բերված ե բոլոր մինչև այժմ հալտնի քիմիական ելեմենտների ցուցակը՝ նրանց քիմիական նշաններով (վորոնք նաև սիմվոլ—նշանակ են կոչվում) և առուժային քաշերով. Այս աղյուսակը ընթերցողին հետազայում ոգտակար կլինի տեղեկանքների համար:

Ամեն մի ելեմենտ; նշանակում ե, ունի իր հատուկ նշանը. Ցեթե գրված ե նշան H, ապա ամեն մի քիմիկոս,—գերմա-

նացի, անգլիացի, ռուս, ճապոնացի—միենույնն եւ, հասկանում՝ եւ, վոր խոսքը վերաբերում եւ ջրածնին։ Սակայն այդ քիչ եւ։

Այդ ժամանակ ամեն մի քիմիկոս իմասնում եւ, վոր խոսքը վերաբերում եւ ջրածնին վոչ թե ընդհանրապես, այլ ջրածնի մեկ առօնիթ։ Ա նշանը ցույց եւ տալիս ջրածնի մեկ առօն։

Եերբ պիտք եւ քիմիական վորեն բարդ նյութ նշանակել, այն ժամանակ կողքին զրում են այն ելեմենտների նշանները, վորոնցից կազմված եւ այս նյութը։ Որինակ, ածխածնի ռքսիդիմոլեկուլը բաղկացած եւ մի ատոմ ածխածնից (C) և մի ատոմ թթվածնից (O)։ Ածխածնի ռքսիդի նշանը, կամ, ինչպես ասում են, նրա Փորմուլան, կլինի CO. խոհանոցային աղի մոլեկուլը բաղկացած եւ մի ատոմ նատրիումից (Na) և մի ատոմ քլորից (Cl), նրա Փորմուլան ե—NaCl։


Ապա, իսկ ինչպես եւ լինում, յերբ բարդ նյութի մոլեկուլի կազմի մեջ մտնում են մյուսների հետ և մի քանի միատեսակ ատոմներ, այսինքն հենց միենույն ելեմենտի մի քանի ատոմներ։ Այդպիսի գեղքերում շատ հասարակ ձևով են վարդում—համապատասխան ելեմենտի նշանի աջից ներքում փոքր գիրքով գրում են այն թիվը, վոր ցույց եւ տալիս միացության մեջ այս ելեմենտի ատոմների քանակը։ Զուրը, որինակ, բաղկացած եւ յերկու ատոմ ջրածնից (H) և մի ատոմ թթվածնից (O), զրի ֆորմուլան, հետեւպես, կլինի  $H_2O$  (կարդացվում է «հաշ յերկու եւ ո չորս»). Ծծմբաթթվի մոլեկուլը բաղկացած եւ յերկու ատոմ ջրածնից (H), մեկ ատոմ ծծմբից (S) և չորս ատոմ թթվածնից (O), նրա Փորմուլան ե— $H_2SO_4$  (կարդացվում է «հաշ յերկու եւ ո չորս»). բորակը (չիլիականը) կազմված եւ մեկ ատոմ նատրիումից (Na), մի ատոմ աղոտից (N) և յերեք ատոմ թրթվածնից (O), նրա Փորմուլան, ե— $NaNO_3$  (կարդացվում է «նատրիում են ո յերեք»)։

Եերբ հարկավոր եւ ցույց տալ, վոր խոսքը վերաբերում եւ վոչ թե վորեն նյութի մեկ մոլեկուլին, այլ խոսքը մի քանիսի մասին եւ, այն ժամանակ այս Փորմուլայի առաջ մեծ թվով գրում են այն թվանշանը, վորը ցույց եւ տալիս այս նութի մոլեկուլների թիվը։ Այսպես,  $2H_2SO_4$  նշանակում է ծծմբաթթվի յերկու մոլեկուլ,  $3NaNO_3$ —նատրիումի սիլիստրայի յերեք մոլեկուլ,  $5H_2O$ —զրի հինգ մոլեկուլ և այլն։


Քիմիական լեզուն շատ հարմար միջոց եւ տալիս համառատրեն արտահայտելու նյութի քիմիական դանաղան վոփոխու-

թյունները, քիմիական ռեակցիանները։ Այսպիսի փոփոխություններն արտահայտելու համար գործ են ածում ալսպես կոչված քրիտական նաև արաւմներ։

Որիսակ, թթվածնում կամ ողում ածխի այրման ժամանակ ստացվում եւ ածխաթթու գազ Նյութերի ալս փոխարկությունն արտահայտող հավասարություն այսպես կլինի—




Եերբ ջրածնի և թթվածնի խառնուրդը պալթում եւ, ուղղակիում կազմվում եւ չուր—



այսինքն՝ ջրածնի լերկու մոլեկուլ միանում են մեկ մոլեկուլ թթվածնի հետ և տալիս են ջրի լերկու մոլեկուլ

Մծմբային անհիգրեղը ջրում լուծելու ժամանակ կազմվում եւ ծծմբաթթու—



Իսկ ինչը վրա յեն հիմնվում քիմիկոսներն ալսպիսի հավասարությունը կոզմելու ժամանակ, ինչն եւ նրանց իրավունք տալիս հավասարման նշան դնելու այս հավասարությունների ձախ և աջ մասերի միջև։ Մտածելով, անշուշտ, ընթերցողը զիխի կընկնի, վոր այս իրավունքը տալիս եւ նյուրի պահպանառն ունենի։ Նյութերի փոխարկությունների ժամանակ վոչ սի ատոմ չի կորչում—ինչպիսի ատոմներ կային հավասարման ձախ մասի մեջ, հենց այդպես ել պետք եւ մետք և աջ մասում, վորքան եյին ձախում, հենց նույնքան ել կլինեն և աջում—վոչ մեկով ավելի և վոչ մեկով պակաս։ Ատոմների քանակը չի փոխվում, փոխվում են միայն նրանց տարրեր կոմբինացիաներն իրար հետ, այսինքն՝ նրանք տարրեր ձևով են մրանում մեկը մյուսի հետ։

Այդ ժամանակ, յեթե վերհիշենք, վոր անփոփոխ մնում նաև ատոմալին քաշը, այդ դեպքում հեշտությամբ կարելի լի տես-

1) Մը քանի պարզ մարմինների մոլեկուլները (որինակ, թթվածնի, ջրածնի և ուրիշների) կազմված են յերկու առանցքություններում գործում է առաջական առանձին առանձին գործություններ։ Այսպիսի մարմինների մոլեկուլները կազմված են յերկու առանձին գործություններում գործում է առաջական առանձին գործություններ։

ներ, վոր քիմիական բարդ նյութի ֆորմուլան միաժամանակ ցույց ե տալիս և նրա մոլեկուլային քաշը՝ Ածխածնի ատոմային քաշը = 12, թթվածնին = 16, նշանակում ե ածխածնի ոքսիգնի (CO) մոլեկուլային քաշը հազարար և 23. Ածխաթթուգաղի մոլեկուլի մեջ ջրածնի սեկ ատոմը և թթվածնի յերկու առանձը, — ածխաթթուգաղի մոլեկուլային քաշը կլինի  $12 + 2 \cdot 16 = 40$ , Սծսթթթթվի ( $H_2SO_4$ ) մոլեկուլային քաշը կլինի  $1 \cdot 2 + 32 + 16 \cdot 4 = 96$  (այստեղ մենք ատոմային քաշը ըստ կերպնում ենք կլորացած թվերով):

Այս քիմիկուների միջազգային , եղիքի ալն հիմունքները, վորոնք այս լեզուն իմացող ամեն սեկին հասարավորություն են տալիս յուրաքանչյուրին հասարակ ձևով, համառոտակի և հասկանալիուրեն գրի առնել նյութերի իրար մեջ կասարվող զանազան փոխարկումները:

## 20. ՆԼԵՄՍՆՏՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱՎԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Մենք արդեն բավական խորը թափանցեցինք նյութի կաղմաության գաղտնիքների մեջ և իմացանք, վոր բնության մեջ բոլոր նյութերը կազմվում են քիմիական ելեմենտների մանրագույն ատոմներից: Այժմ հաշվեցեք հազելված առաջնի ելեմենտների ցուցակով նրանց քանակը: Դուք կտեսնեք, վոր ներկայումս մեզ հայտնի յեն իննուուն քիմիական ելեմենտներ: Դա այնքան ել քիչ չե: Յեվ ինքն իրեն հա ց և ծագում - չի կարելի արգյուք վորեւ «կարպի» բերել այս ելեմենտները, համակարգել նրանց բաժանել վորոշ խմբերի:

Մենք առաջ քիմիական ելեմենտները բաժանեցինք յերկու մեծ խմբերի — 1) մետաղների խումբ և 2) վոշ-մետաղների կամ մետալիդների խումբ (տես էջ 77—78):

Մետաղներին են վերաբերում մոտավորապես բոլոր ելեմենտների յերեք քառորդը, իսկ մետալիդներին սիայն սեկ քառորդը: Այժմ տեսանենք. չի կարելի արգյուք քիմիական ելեմենտները խմբերի բաժանել ըստ վորեւ այլ նշանների և դրանեւ միասին նկատել վորոշ որինաշափություններ:

Քիմիկուներին արդեն վազուց են փորձել նման բաժանում կատարել: Որինակ, դեռ 1829 թվին գերմանական քիմիկոս Դեռբերիները նկատել եր, վոր յեթի հատկություններով նման մի քանի քիմիական ելեմենտներ խմբավորենք յեռլակներով, այն

ժամանակ յեռյակի միջին ելեմենտի ատոմալին քաշը մոտավորապես հավասար կլինի ծայրարի յերկու ելեմենտների ատոմային քաշերի գումարի կեսին։ Ահա Դեբերեյների լեռյակներից մի քանիսը —

Քլոր (Cl)

Միթիում (Li)

Ճծումբ (S)

Բրոմ (Br)

Նատրիում (Na)


Աելենիոն (Se)

Յոդ (J)

Կալիում (K)

Թելուր (Te)

Ոգտագործ հավելված առաջնից, փորձեցեք ստուգել Դեբերեյների պնդումների ճշտությունը։ Ինչպես մենք հետո կան-



Նկ. 51. Դ. Ի. Մենդելեյև (1834—1907.)

նենք, այսուհեղ յեռյակներում միացված ելեմենտները, իրոք վորիբար մեջ բազմաթիվ նմանություններ ունեն։

Սակայն, պետք եւ ասելի վոր քիմիական ելեմենտները համակարգելու նման վորձերը յերկար ժամանակ եական արդյունքներ չեցին տալիս, և միայն 1869 թվին մեր տաղանդառոր ոռւս քիմիկոս Դմիտրիլ Խվանովիչ Մենդելեյևին (նկ. 51) հաջողվեց յերեան հանել Հպարքերական որենքը՝ ժամանակակից քիմիայի ամենակարոր որենքը։

Իսկ թնդումն ու կայանում այդ որենքը։

Այդ հասկանալու համար քննենք քիմիական ելեմենտ-

Ների պարբերական սիստեմը՝ (տես հավելված II), վորի մեջ Մենդելեյևի կողմից թիմիական ելեմենտները դասավորված են ըստ ատոմային քաշերի աճող կարգի, ասինքն՝ սկսելով ամենաթիթեած—ջրածնից<sup>1)</sup>. Պարզության համար արտապրենք այստեղ իրար տակ լիբրիորդ և յերրորդ պարբերությունների քիմիական սիմվոլները (խորհրդանշանները).

Li	Be	C	N	O	F	Ne
Na	Mg	Al	Si	P	S	Cl
						Ar

Վերելի շարքում այստեղ դասավորվեցին (ձախից աջ) լիթիում, բերիլիոն, բոր, ածխածին, ազոա, թթվածին, ֆլուոր և ներում, իսկ ներթեռում—նատրիում, մագնեզիում, ալյումինիում, սիլիկիոն, ֆոսֆոր, ծծումբ, քլոր և արգոն ելեմենտները:

Այժմ քննենք մի քանի զույգ այս ելեմենտներից, վարոնք զրչած են այստեղ իրար տակ:

Առաջին զույգի մեջ գրված են լիթիում և նատրիում: Այս յերկու ելեմենտներն ել թեթև մետաղներ են, վորոնց պետք է պահել կերպինի մեջ, վորովհետեւ բաց ողում նրանք արագությամբ միանում են թթվածնի հետ և ոքսիդանում: Յեթե այս մետաղները գցում ենք ջրի մեջ, ալդ դեպքում տեղի յի ունենում ուժեղ ռեակցիա, վորի հետևանքով ջրածինին անջատվում է կաղմագում են ուժեղ ուտիչ ալկալիներ (LiOH կամ NaOH), այս միացումներից մեկը, այսինքն՝ ուտիչ նատրիումը (NaOH), հավանորեն ձեզ ծանոթ ե կիզական սովորի անվան տակ: Մի շարք ալլ հատկություններով լիթիումն ու նատրիումը նույնպես նմանվում են իրար:

Այժմ զերցնենք ելեմենտներից մի զույգ մեր աղյուսակի մլուս ծայրից—Անոն և արգոն: Այս յերկու ելեմենտները մետալուգներ են, հոտ չունեցող անգույն գազեր, պարունակվում են ողում զատ քիչ քանակությամբ:

Յեթե դուք Մոսկվայում կամ մի ուրիշ մեծ քաղաքում տեսել եք լույսային մակագրություններ և ոեկլամներ, վորոնք կադարված են գունավոր լուսավորված փոքրիկ խողովակներից, ուրեմն իմացեք, վոր նարնջակարմիր խողովակներում պարու-

1) Այն ժամանակ, յարբ Մենդելեյևը ստեղծում էր իր սիստեմը, այժմ հայտնի ելեմենտներից շտաբերը զեր հայտաբերված չէին, և զբա համոր աղյուսակն ուներ մը վորք ալլ տեսք:

նակզում են նեռն, իսկ կապույտներում—արգոն, նրանք լուսավորվում են գունավոր լույսով, յերբ նրանց միջով անցնում ե ելեկտրական լիցը, նեռնը և արգոնը պատկանում են այսպես կոչված իներտ կամ շաղնիվ գազերի թվին, նրանք զանազան գումար են ծայր աստիճանի քիմիական պասսիվությամբ և, վորպես կանոն, այլ ելեմենտների հետ քիմիական միացման մեջ չեն մտնում: Այսպիսով այս յերկու ելեմենտները նույնպես շատ նման հատկություններ ունեն:

Այժմ կրկին քննենք ելեմենտների մի այլ գույք, որինակ, ազուր և ֆոսֆորը, Ազոտը, ինչպես զիտեք, հոտ չունեցող, անգույն գաղ և այրման չի նպաստում. քանակությամբ նա կազմում ե ողի գլխավոր բաղկացուցիչ մասը: Ֆոսֆորը—դա ամուր նյութ է, հայտնի մի շարք կերպարանափոխություններում, վորոնցից հիմնականներն են հաշվում սպիտակ ֆոսֆորը և կարմիր ֆոսֆորը, Սպիտակ ֆոսֆորն արագությամբ բռնկում ե և սաստիկ թունավոր է, իսկ կարմիրը, վոր այլ նյութերի հետ խառնած գործ ե ածվում լուցկու արկղիկների կողքերի լեռնեները քսիլու համար, անհամեմատ ավելի դժվարությամբ ե բռնկվում և թունավոր չեն:

Կարծես թե ըստ հատկությունների վոչ մի նմանություն չկա ազոտի և ֆոսֆորի մեջ: Սակայն դա այդպես չե։ իրենց իրմիտական հատկություններով այս ելեմենտներն իրար շատ նման են: Որինակ, ազոտի և ջրածնի ամենակարենը միացության—ամմոնիակի մոլեկուլը կազմված է մի ատոմ ազոտից և յերեք ատոմ թթվածնից (քիմիական ֆորմուլան ե  $\text{NH}_3$ ). այսպես ել ֆոսֆորն ածխածնի հետ կազմում և համապատասխան միացություն—ֆոսֆորավոր ջրածին— $\text{P}\text{H}_3$ , Ազոտի և թթվածնի ամենակարենը միացումներին— $\text{N}_2\text{O}_3$  և  $\text{N}_2\text{O}_5$ : ամմապատասխանում են ֆոսֆորի միացումները— $\text{P}_2\text{O}_3$  և  $\text{P}_2\text{O}_5$ , ազոտական թթվին— $\text{HNO}_3$ —մետաֆոսֆորային թթու  $\text{HPO}_3$  և այլն: Պետք ե առասպարակ նկատել, վոր ելեմենտների պարբերական սիստեմում գլխավոր դեր ե խաղում ելեմենտների առանձին խմբերի ներքին իրմիտական նմանությունը: Յեթե մենք շարունակեյինք 185 եջում մեր աղյուսակի իրար տակ զրված ելեմենտների քննությունը, այն ժամանակ մենք կտեսնելինք, վոր յուրաքանչյուր զույգում գտնվեմ են հատկություններով նման ելեմենտներ, առանձնապես քիմիական հատկություններով: Ընդհակառակը, իրար կողքի դրված ելեմենտների հատկությունները մեկից մյուսը միշտ փոխվում են: Տիպիկ մետաղներ լիթիոնից և նատրիումից

մենք աստիճանաբար անցնում ենք այնպիսի տիպիկ մետալո-  
րդների ինչպիսին են ֆլուորն ու քլորը և, զերջապես, ազնիվ  
գազեր՝ ներկին և արգոնին:

Ալպիսով մենք դիտում ենք մի զարմանալի յերեսություն:  
Առողմալին քաշի մեծանալու հետ մրասին ելեմենտների քիմիա-  
կան հատկություններն ել թոփշքանման փոխվում են քանակն  
անցնում և զորակի, ինչպիս ասում են փիլիսոփաները: Բայց  
յեթե մենք զորեն ելեմենտից սկսած համրենք ութ ելեմենտ,  
այն ժամանակ հետեւյալ համրգած ելեմենտն արդեն կլրկնի այն  
ելեմենտի հատկությունները զորից սկսեցինք համրանքը: Հատ-  
կությունները փոխվում են պարբերաբ, այսինքն՝ զորոց տա-  
րածությունից հետո նրանք ընդհանուր զծերով կրկնվում են:

Յ.թե դուք ուշադրո՞ւթյամբ կրկին անզամ նայեք պարբե-  
րական սիստեմի աղյուսակը, այն ժամանակ դուք կտհոնեք. զոր  
չորրորդ կարգից սկսած զործը մի փոքր բարդանում եւ—այն-  
տեղ հատկությունները կրկնվում են վոչ թե ամեն մի ությունի,  
այլ ամեն մի տասնեռութ ելեմենտից հետո (որինակ, կալիումի—  
Կ նմանվող ելեմենտներ կլինեն ուռիղիում Rb և ցեղիում Cs):  
Բայց մի քանի հատկություններ նաև այստեղ՝ յուրաքանչյուր ու-  
թերորդ ելեմենտի մոտ կրկնվում են: Այդ պատճառով ել աղյու-  
սակում չորրորդ և հետեւյալ «պարբերություններ» պարունա-  
կում են արդին վոչ թե մեկ կան, այլ յերկուական չշարք»:  
Ութերորդ խմբում ամեն մը տեղը գրավում է իրար նման ելե-  
մենտների յիոյակը: Ութերորդ շարքում բարիումի (Ba) և հաֆ-  
նիումի (Hf) սիջն միխի նման ցցվում է հազվագյուտ հողային  
ելեմենտների սի խումբը:

«Հասարակ մարմինների հատկությունները, նույնպիս և  
միացումների ձեն ու հատկությունները գտնվում են պարբերա-  
կան կախման մեջ ելեմենտների առողմային քաշի մեծությու-  
նից՝ ալսպես և ձևակերպել Մենդելյովը 1869 թվին պարբերա-  
կանության որենքու, զորը քիմիական ելեմենտների պարբերա-  
կան սիստեմի հիմքն և դարձել:

Ինչպիս մենք հետո կտեսնենք, ներկալումս ալս որենքը մի  
փոքր այլ կերպ և ձևակերպվում, զորը, սակայն, ամենեին չի  
նեմեազնում Մենդելյովի հսկայական գիտական արժանիքը, զոր  
հայտնաբերել և պարբերական որենքը:

Իր գյուտափ հիման վրա Մենդելյովը վոչ միայն ուղղեց մի  
շաբաթ ելեմենտների առողմալին կշիռը, այլև ճշությամբ նախա-

այն ժամանակ դեռ անհայտ յերեք ելեմենտների գոյությունն ու հատկությունները, վորոնք այժմ կոչվում են սկանդիոն, հալլիում և գերմանիում։ Այս ելեմենտների հետագա հայտնաբերումն ու նրանց հատկությունների զարմանալի գույքադիպումը նախասած հատկությունների հետ պարզորոշ ցուց եր տալիս, վոր քիմիական ելեմենտների պարբերական սխստեմը վոչ թռ գորպես մի հասարակ խմբավորություն ե, այլ արտացոլում ե բնության այն մեծ որենքը. վոր զրգած ե քիմիական ելեմենտների պատմության զարգացման հիմքում։ Հալլիում ելեմենտի գոնզիլուց հետո Ֆ. Ենդելսը գրել ե.՝ «Մենք ալժմ զիտենք, վոր ելեմենտների քիմիական հատկությունները հանդիսանում են վորպես ատոմային քաշերի պարբերաւան ֆունկցիան», վոր հետեւապես նրանց գորակը պայմանավորված ե նըրանց ատոմային քաշերի գասավորված բնածին ելեմենտների շարքերում կան դանազան բաց տեղեր. վորոնք ցուց են տալիս այն, վոր այստեղ պետք ե դեռ գտնվեն նոր ելեմենտներ ։ Նա նախորդ նկարագրեց այս ելեմենտներից մեկի ընդհանուր քիմիական հատկությունները, վորն անվանեց եկաալլումին, վորովհետեւ համապատասխան շարքում նա գալիս ե անմիջականորեն ալլումինից հետո, ու նախասեց մոտավորապես նրա տեսակարար ու ատոմային քաշը... Մի քանի տարի անց Լեկոկ-դը-Բուարոզրանն իրոք հարոնարերեց աւա ելեմենտոր, և գուրս լեկավ. վոր Մենգելիյի նախասածներն արգարացան աննշան շեղումներով.՝ եկապումինը մարմնավորվեց հալիումի մեջ... Մենգելիյի վը, անգիտակցորեն գործադրելով քանակը վորակի փոխվելու սաօրն աեցելան որենքը, կատարեց գիտական մի սխըագործություն, վոր համարձակորեն կարելի յե գնել Լեվեռըյեյի գլուտի կողքին, վոր հաշվել եր դեռ անհայտ մոլորակ-նեպտունի որրիտան<sup>1)</sup>։ (Ենդելս — Բնության դիալեկտիական ձրատ. 7-ըդ, ոռուր, եջ 128—129):

Հենց մի քիչ առաջ ասացինք, վոր պարբերական սխստեմաբացոլում ե բնության մեծ որենքը, վոր կազմում ե քիմիական ելեմենտների պատմության հիմքը. Խնչման ե կայտամայս որս որենքը:

1) Մոլորակի ուղին (ուղեղիկը) Աբեդակի շաւրչը:

Այդ հարցին պատասխանելու համար մենք պետք ե իմանանք, ինչըվ և բացատրվում քիմիական ելեմենտների հատկությունների կրկնողությունը: Մենքելեյնվի ժամանակներում այդ գեռ մնում եր վորպես հանելուկ, բայց ժամանակակից զիտությունն այդ հարցի համար արդեն ունի միանգամայն բավարար պատասխան: Քիմիական ելեմենտների տասննինը կազմուրյան մասին յեղած ժամանակակից ուսմունքը հնարավորություն և տալիս լուծելու պարբերական սիստեմի արտահայտած զարմանալի որինաշափությունները:

«Ատոմ» հունարեն նշանակում է «անբաժանելի»: Ցեվ յերկար ժամանակ քիմիական ելեմենտների ատոմներն իրոք համարվում ելին վորպես նյութի բաժանելիության սահման, վորպես հարատես չքայքալիող մասնիկներ, այսպիս ասած, վորպես տիեզերքի հիմնական աղյուսիկներ: Սակայն զարմանալի ելեմենտ ուղիումի և այսպես կոչված ռադիոակտիվ նուռների հայտնաբերումը և ուսումնասիրությունն անկասկածելիորեն ցույց տվին, վոր այսպիսի հայացքը սիսակ և յեղել:

## 21. Ռ Ա Դ Ի Ռ Ի Մ

1895 թվին գերմանացի գիտնական Ռենտինը (Նկ. 52) գտավ զարմանալի ճառագայթներ, վորոնք հետո նրա անունով կոչվեցին ունեցեթյան և վորոնք հիմա բժիշկների կողմից զործ են ածվում լուսարկելու և նկարահանելու մարմին ներքին որդանները, իսկ տեխնիկների կողմից՝ հետազոտելու մետաղային շինվածքները՝ նրանց ներքին զանազան պակասությունները յերևան հանելու համար: Աչքով անտեսանելի այս ճառագայթներն ընդունակ են մեծ կամ փոքր չափով նյութի խոռոչ, ան համեմատ թափանցելու սովորական լույսի համար անթափանց մարմինների միջով, ազդելու լուսանկարչական թիթեղիկի վրա, տուաջացնելու մի քանի նկութերի լուսարկում և այլն:


Ռենտինիան ճառագայթների բաց անելու գլուխն ալեկոծեց գիտական աշխարհը, և շատ գիտնականներ զբաղվեցին նրանց ուսումնասիրությամբ: Գիտնականների այդ թվումն եր գտնվում և ֆրանսիական Փիզիկոս Անդրի Բեկկերելը (Նկ. 53): Նա, ի մի շի ալլոց, ալսպիսի հարց եր դրել:

Եեթե ռենտգենյան ճառագայթներն առաջ են բերում մի շարք նյութերի ճառագայթացում, ապա կարող ե լինել և հո-

կառակը, — այս նյութերը, վորոնք ընդունակ են իրենք լուսավորվելու՝ նրանց վրա լույսի ազդեցության ժամանակ (այսպիսի նյութերը կոչվում են ֆլուորիսցող եր) ընդունակություն ունեն և բաց թողնելու ունտգենյան ճառագալիթներ:

Այս հարցի պատասխանն ստանալու համար, Բեկկերելն սկսեց ուսումնասիրել լուսավորության ներգործությամբ ֆլուորեսցող լուսավորություն արձակող գանազան նյութերու Յև ահա 1896 թվին յերեան հանեց մի գարմանալի փաստ:

Սովորաբար իր աշխատանքների ժամանակ Բեկկերելը ֆլուորեսցող նյութն ամրացնում էր և թղթի մեջ փաթաթած, և հետևապես, լուսանկարչական թիթեղիկի լույսի ազդեցությունից լավ պաշտպանված էր և արելի լույսի տակ դնում, իայց մի անգամ նա իր պահարանից վերցրեց լուսից պաշտպանված թիթեղիկը, վորի վրա գրբած երեսից պարունակող հանքի մի կտոր և նրան գրեց յերեսկիչի (պրոյավիտելի) մեջ, ի զարմանա Բեկկերելի, թիթեղիկի այն տեղը, վորտեղ դրված եր ուրանային հանքը, սևացել եր: Իսկ ինչմեծ այս փաստը Բեկկերելին զարմանք պատճառեց:




Նկ. 52. Վարդեգ Կոնրադ Ռենագին  
(1845—1923)

Ինչպես հայտնի յե, լուսանկարչական թիթեղիկը պատճ և այնպիսի արծաթի աղեր պարունակող չերտովվ, վորոնք լույսի ազդեցության տակ քայլայվում են՝ անջատելով մետաղային արծաթի սև փոշի: Իսկ յերեսկիչները, այդ այն նլութերն են, վորոնք արագացնում են արծաթյա սև փոշու անջատումը լուսանկարչական թիթեղիկի ալիս տեղերում, վորոնց վրա աղճել և լուկումը:

Բայց հենց ամբողջ բանն ել նրանումն եր, վոր ուրանային

Հանքը վրեն գրված թիթեղիկի վրա լույսը չեր ազգել, Բեկկերեն այն պատրաստել եր Փոքրի համար, բայց յիշելարատե ամպամած յեղանակի պատճառով չեր կարողացել զա զնել արևի լույսի տակ:

Երանից հետո Բեկկերեն արդեն զիտավորյալ կերպով լավ պաշտուանված թարմ լուսանկարչական թիթեղիկի վրա տեղավորեց ուրանային հանքի մի կտոր, Միքանի ժամանակից հետո թիթեղիկը պարզացնելով յերեակիչի մէջ նա նորից սկասում ահսավ:



Նկ. 53. Անդրէ Բեկկերել (1852—1909).

և իրտ թղթի միջով և այլն, այսինքն՝ այնպիսի առարկաների միջով, վորոնք սովորական լույսի համար անթօփանցելի յեն:

Իսկ ի՞նչ ճառագայթներ են դրանք, մի գուցե ունտղենքն:

Վոչ, դրանք ունտղենյան ճառագայթներ չեն, վորր հասաւագում ե թեկուզ և այսպիսի մի փաստով—ունտղենյան ճառագայթների ոգնությամբ նկարահանման ժամանակ նկատվութեամբ ոգնությամբ նկարահանման ժամանակ նկատվում է միայն ձեռքի ուրվագիծը:

Նոր գտնված ճառագայթներն անվանեցին ուղիոտիթվ ճառագայթներ, Ռադիոակտիվություն նշանակում ե ճառագայթներ:

Յեզ Բեկկերելը վորքան վոր կրտնում երի իր փորձերը, միշտ ել միենույն հետեւանքներն ելին ստացվում: Դա ցույդ ե սալիս, վոր ուրանային նաթը բաց ե քոյնում ինչ-վոր անուվոր, աչով անհսանելի ճառագայթներ,

վորոնք անցնում են

փայտի, մետաղային

բարակ թիթեղիկների,

բաց թողնելու ընդունակություն (ուղիուս — լատիներեն նշանակում և լուս, ակտիվ — գործունյա)։

Բեկկերեն իր փորձերը կատարում եր վոչ միայն ուրանացին հանքերի վրա, այլ նաև ուրան ելեմենտի զանազան այլ միացումների վրա և այդ ժամանակ գտնում եր, վոր նրանք բոլորն ել ուղիուակարիվ են Սակայն այն ժամանակ, յերբ ուրանի միացումների ակտիվությունը, առինքն՝ համեմատաբար թույլ եր, բնական ուրանացին հանքի — խեժային ցնկազոտուկի ընդունակությունն անհամեմատ ավելի ուժեղ դուրս յեկավ։

### Ինչպէս


Անշուշտ նրա համար, վոր խեժային ցնկազոտուկի մեջ, բացի ուրանի միացումներից, պարունակվում ե ելի վորեն այլ, անհամեմատ ավելի ուղիուակտիվ նլութ, քան ինքն ուրանը։ Յեզ տհա լեհուհի Մարիա Ակոգովսկայա-Կյուրին իր ֆրան-իացի ամուսին Կյուր իի (նկ. 54, 55) հետ միասին սկսեցին խեժային ցնկազոտուկի մեջ փնտոել այս խորհրդա, որ Նյու Ֆը։

Կյուրի ամուսիններին պիճակված եր դժվարին պայմաններում աշխատելի իրենց նպատակին հասնելու համար նըանք պետք ե քիմիապես մշակելին ոի քանի տոնի ուրանալին հանքանյութ, և Առանձնապես կարեռ եր շենքի խնդիրը — իր հիշողություններում զրում ե Մ. Կյուրին, — մենք չզիտեկինք վորտեղ կարելի յե կատարուի քիմիական վերամշակումը։ Սորիզ ված յեղանք այն կազմակերպել մի յետ ընկած սրահատան մեջ։ Դա տախանակներից պատրաստված, ցեմենտի հատակով ու պապակյա կտուրով, անձրեսից անրավարար պաշտպանված մի քարեկ եր՝ առանց վորեե հարմարությունները։ Նրանում կային միայն փայտե հին սեղաններ, անրավարար տաքացնող թու ջե մի վառարան և մի գրատախտակ, վորն այնքան սիրով ոգտագործում եր Կյուրին, Այնտեղ չկային քաշող պահարաններ՝ վնասատու գաղերի հետ փորձեր կատարելու համար, այդ պատճառով ստիպված ելինք այդ ոպերացիաները բակում կատարել յերբ յեղանակները ներում ելին, կամ թե չե պատռահանները բաց շենքում։ Այս Շնարուստ՝ լարորատորիայում մենք յերկու տարի աշխատեցինք՝ համարյա առանց ոգնականների, միասին տանելով ինչպես քիմիական վերամշակությունը, այնպես ել ուսումնասիրելով միշտ ավելի ու ավելի ստացվող ուղիուակտիվ նյութերի հառագայթացումը։

Յեզ ահա 1898 թվին Կյուրիների ջանքերը պսակվեցին հաջողությամբ, Բարդ ու դժվարին աշխատանքից հետո, նրանց հաջողվեց ստանալ նոր ռադիոակտիվ նյութի—ռադիումի մաքուր միացության շատ քիչ քանակություն։ Խնչպիսի աշխատանքով ձեռք բերվեց այս հաջողությունը, կարելի յեւ տեսնել թեկուզ և նրանից, վոր Կյուրի ամուսիններն ստիպված յեղան վերամշակել համարյա տաս հազար կիլոգրամ ուրանային խեժային ցընկապոտուկ, վորապես կարողանային այդ հսկայական քանակությունից ստանալ մոտ չորս գրամ ռադիումի միացություն։ Հե-



Նկ. 54. Մ. Սեւերին Կյուրի  
(1867—1934)



Նկ. 55. Պ. Կյուր Կյուրի  
(1859—1908)

տագայում հաջողվեց անհատել այս միացությունից և մաքուր ելեմենտ՝ ռադիումը, վորը պարզվեց, վոր ծանր մետաղ եւ մոտ 226 ատոմային քաշով։

Բայց գրա փոխարեն ինչ զարմանալի հատկություններ ունեյին ռադիումը և նրա միացությունները։ Մթության մեջ նրանք իրենց իրենց լուսավորվում եյին, նրանք միշտ ավելի տաք եյին, քան նրանց շրջապատող առարկաները, վորովհետեւ ռադիումն անընդհատ տաքություն եւ անջատում։ Նրանց ներկայությունը ողի միջով սկսում եր անցնել ելեկտրականությունը, վորը, ինչպիս հայտնի յեւ, առհասարակ ողի միջով չի անցնում։ Ռադիումի մոտ աեղավորված բույսերն սկսում եյին նվա-

գել և վերջիվերջո վոչնչանում եյին։ Կենդանիների կաշվի վրա սաղիումն ազգում եր ամենաքայքայիչ կերպով։ Անըի Բեկկերելու, վոր վորոշ ժամանակի իր կողքի ձախ գրպանում միշտ կրում եր քիչ քանակի ռադիումի աղով մի փոքրիկ տուփիկ, վերջիվերջո այդ տեղի դիմաց ստացավ այնպիսի այրվածքներ ու վերքեր, վորոնք հետո միայն մեծ դժվարությամբ հաջողվեց բժշկի ուսումնական աղով միշտ բժշկության այժմ բժշկության մեջ ողափում են, ի միջի այլոց, յերբեմն զործադրելով այն վատորակ ուսուցքները բուժելու համար։ ռադիումի հառագայթացումն աղով են նրանց վրա քայքայիչ կերպով։ Ռադիումն ու նրա միացություններն անընդհատ արձակում եյին անտեսանելի ճառագայթներ, վորոնք անցնում եյին փայտի, սև թղթի, հագուստի և այլն միջով և սաստիկ ներգործում լուսանկարչական թիթեղիկի վրա։ Ռադիումը և նրա միացությունները թանկազին քարերը վերաներկում եյին այլ գույների—այսպես, որինակ, ռադիումի մոտ աղամանդը փայլում եր կապտավուն փայլով, բաց-կապտավուն կորինդոնը վերաներկվում եր մուգ-կանաչ գույնի, իսկ թանկարժեք դեղին սուստակը վերաներկվում եր կարմիր սուստակի։ Յեվ վերջապես ամենից ապշեցուցիչը—

Ռադիումից և նրա միացություններից իրենց իրենց մօտավես կազմվամ ելին Աօր Ալարեր—ռադիոակտիվ գազ—ռադիումի եմանացիա, կամ ռադիում՝ մոտ 222 ատոմային քաշով (տես հավելված II) և արգեն հայտնի գազ—նելիխամբ։

Անա հենց այդ վերջին փաստն ստիպեց գիտնականներին առանձնապես շատ գլուխ կոտրել։ Ի՞նչպես թե, իրմք։ Ախր, թվում եր, թե դիտության կողմից ամրապես հաստատված ե արդեն, վոր քիմիական ելեմենտները և վոչ մի տեսակ այլ նյութերի քայքայվել չեն կարող։ Նրանք հանդիսանում են այն վերջին, հիմնական շինարարական «աղյուսիկները», վորոնցից կազմվում են բոլոր բարդ նյութերը։ Յեվ այստեղ հանկարծ յերեան ե գալիս այնպիսի մի ելեմենտ, վորը վերածվում ե այլ ելեմենտների, և նրանց թվում այն ժամանակ արդեն հայտնի հելիումի։ Յեվ այն ել ինչպես ե վերափոխվում, ինքն իրեն, չարունակ... Այս փոխարկումները գիտությանը մինչև այժմ հայտնի վոչ մի տեսակ միջոցներով վոչ կարելի յե կանգնեցնել, վոչ արագացնել, վոչ գանդաղեցնել։ Այս փաստը բոլորովին չեր համատեղվում առաջվա քիմիական դիտելիքների հետ, և այդ պատճառով նա պահանջում եր առանձնապես ուշադիր, դժվար և

բազմանող ուսումնասիրությունն Այս ուսումնասիրության միքանի արդյունքների մասին հետո հարկադրված կլինիկը դեռ խոսել վորովհետև հենց նրանք ոգնեցին գիտությանն իմանալու նյութերի կազմության գաղտնիքները իսկ ինչ վերաբերում են ռադիումի այլ զարմանափառ հատկությունների բացարձությանը, աեղի պակասության պատճառով նրանց մասին այստեղ յերկար խոսել չենք կարող Միայն ավելացնենք հետեւյալը,

Ինչպես ասված են, կյուրի ամուսիններին հաջողվեց համարյա տաս տանն ուրանային խեժային հանքից ձեռք բերել շատ քիչ քանակությամբ ռադիում իսկ մինչդեռ այդ հանքանյութը ռադիումի պարունակությամբ ամենահարուստներից մեկը դուրս յեկավ: Նշանակում են, յերկրի վրա շատ քիչ ռադիում կա, և զարմանալի չեն, յեթե նրա մաքուր աղի մեկ գրամն արժեն առանցակ հաղար ոռությունները Յեկ ալյումինայինիվ, ինչքան ել նա առաջին հայացքից տարրինակ չթվա, յերկրի վրա շատ և շատ տեղերում ռազբիում են հայտնաբերելու նրա ներկաւությունն (ի հարկի ամենաչափանիշն քանակությամբ) ապացուցված են և ողում, և՝ ջրում, և՝ շատ քարերում: Արինակ, շատ բուժիչ հանքային ջրերը հենց այն պատճառով են բուժիչ դուրս լիկել, վոր նրանք պարունակում են իրենց մեջ ռադիումի քայլքայումից ստացված միքանի նյութերը Բազմաթիվ ալսպիսի աղրյուրների ջուրը պարունակում են ռադիում և ռադիումի գարմանալի չեն, վոր նման հանքային ջրերը բուժիչ աղդեցությունն ունեն միայն իրենց բնական գունված վայրերում—ռադիումը շատ անկայուն նյութ եւ ջորս որից ել պակաս միջոցում նրա առձեռն քանակի կեսը կարողանում են արդեն փոխարկվել ուրիշ նյութերի:

Բայց, ինչպես պարզել են զիտություննը, միայն ռադիումը չեն, վոր ինքն իրեն շարունակ քայլքայվում են: Անտարակուսուրեն հաստատված են, վոր ինքն իրենց նույնպես քայլքայվում են, որինակ, ուրան և աօրինում ելեմենտները, միայն սրանց քայլքայումն անհամեմատ ավելի դանդաղ եւ լնթանում, քան ռադիումինը: Մին դեռ հաշված են, վոր մի զրամ ռադիումի կիսով չափ քայլքայման համար պահանջվում են մոտ 1580 տարի: Ի սիջի ոյլոց, իմացված են նաև, վոր հենց ինքը ռադիումի ստացվում եւ ուրան ելիմենտի քայլքայման հետևանքով:

Այժմ ուշադրություն դարձրեք հետեւյալ հանգամանքի վրա, Յեթե դուք նայեք յերկրորդ հավելվածում տպված ելեմենտների ողյուսակին, ապա կտեսնեք, վոր ելեմենտներ՝ ուրանը, թու-

բիումը և ռազիումը բոլոր մյուս ելեմենտների համեմատությամբ ունեն ամենամեծ առումային քաշերը։ Այն ե՛ ուրանի տառմային քաշն և (կլոր թվերով)՝ 238, թորիումինը՝ 232, ռազիումինը՝ 2:6, Այս հանգամանքի մասին մեզ հարկ կլինի դարձյալ խոսիլ հետագայում։

Վերպես լիդրակացություն այս գլխի, ավելացնենք, վոր քացի վերոհիշյալ ելեմենտներից (ուրան, թորիում և ռազիում), ոյժմ ապացուցված ե՛ սի քանի ուրիշ ելեմենտների անձնահաճ քայլայումը Բայց այս քայլայումն այնքան դանդաղ և տեղի ունենում, վոր յերկան հանել այն ահճամեմատ ավելի գլւար ե՛, քան վերոհիշյալ քիմիական ելեմենտների քայլայումը։

## 22. ԱՏՈՄԻ ԽՈՐԳԵՐՈՒՄ

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո, յերբ կարմիր Բանակի փայլուն հաղթանակները ճեղքեցին պըոլետական հեղափոխության շուրջն ստեղծված ոտարերկոյական իրականությունը սկսեցին լուրեր հասնել մեզ արտասահմանյան զիտության նոր, ապիցուցիչ նորությունների մտաբն, Այդ լուրերի մեջ ամենաուշագրավը մի շաբաթ ելեմնետներ արհեստականության այլ ելեմնետների փախարկելու լուրն եր, Այդ բանին հաջողվեց հասնել անգլական նշանավոր գիտական Ռեզերֆորզին (նկ. 56):

Ռեզերֆորզը մի քանի ելեմենտներ, ինչպես որին նակ, ազոտը, ֆոսֆորը, ալյումինիումը և ուրիշները յենթարկում եր ռազիումակարգվ նլութերի ճառագայթեցման ազդեցությանը, ըստ վորում նրան հաջողվեց ցույց տալ, վոր այդ ժա-



Նկ. 56. Երևան Ռեզերֆորզ (1871—1937):

թագավորական ազգային գիտական ազդեցությանը, ըստ վորում նրան հաջողվեց ցույց տալ, վոր այդ ժա-

ժանակ յերբեմն ստացվում ե ջրածնի չնչին քանակություն, ոեզ  
ճշտորեն հաստատվեց, վոր ջրածնն ստացվում եր վոչ թե ոռ  
գիտակտիվ նյութերից, այլ հենց այնպիսի նյութերից, ինչ-  
պիսին են աղոտը, ֆոսֆորը կամ ալյումինիումը, Այստեղ,  
հետևապես մարդուն հաջողվեց մի ելեմենտները փոխարկել  
մյուսների: Այն ժամանակից (առանձնապես 1932 թվից) ելե-  
մենտների արհեստականորեն փոխարկման նման փորձեր հա-  
ջողությամբ սկսեցին կատարվել շատ գիտնականների կողմից,  
մասնագորապես և մեզ մոտ՝ ԽՍՀ Միության մեջ:

Ներկայումս գիտությունը հայտնաբերել ե վոչ միայն մի  
շաբթ ելեմենտների անձնահաճ փոխարկումն այլ ելեմենտների,  
այլև հենց գիտնականներն իրենք ել կարողանում են արդեն  
այլ ելեմենտներից մի քանի նորերն ստանալ: Ճշմարիտ ե, այդ  
բոլորն առայժմ հաջողվում ե շատ մեծ ջանքերով և ելեմենտ-  
ներն իրար են փոխարկվում միայն ամենաչնչին չափերով: Բայց  
գիտության ներկայիս ապշեցուցիչ արագ հաջողությունների  
պահին հեռու չե, հավանորեն, այն ժամանակը, յերբ մենք ի  
վիճակի կլինինք նույնպես հեշտությամբ արհեստականորեն ե-  
լեմենտներն իրար փոխարկել, ինչպես այժմ մենք կարողանում  
ենք նրանցից հազարավոր, տասնյակ հազարավոր ամենաբազ-  
մազան բարդ նյութեր շիներ: Սակայն, այնքան ել շատ ջնորա-  
նանք ապագալի մեջ, այլ այսպիսի մի հարց առաջադրենք մեզ:

Իսկ ինչու ելեմենտները կարող են իրար փոխարկվել

Մինչև այժմ մենք շատ խորացանք նյութի կազմության  
գտղանիքների մեջ—ընդհուպ՝ մինչև ամենամանը, վոչ մի խո-  
շորացույցի առաջ չտեսնվող մասնիկները—մոլեկուլներն ու ա-  
տոմները: Իսկ առաջադրված հարցին պատասխանելու համար  
մենք պետք ե ել ավելի հեռու ու խորը թափանցենք: մենք  
պետք ե մտքով լինենք տօնմի խաներաւ:

Այդքան հեռավոր ճամբորդություն սկսել առանց վորեն  
հախապատրաստությունների չի կարելի,—ճանապարհ համար  
վորեն բան պետք ե մեզ հետ վերցնենք: Սակայն, մենք կաշ-  
խատենք յուշ գնալ շատ թեթև բազաժով, վոր կազմված կլինի  
ելեկտրականության վերաբերող աեղեկությունների շատ սահ-  
մանափակ պաշարից:

Մեր ժամանակում հազիվ թե գտնվի այնպիսի մի մարդ,  
վոր յերբեք ելեկտրականության հետ գործ ունեցած չլինի կոմ-

դոնե, նրա մասին լսած չլինի. Սակայն շատերը, կարող ե լինել, սաստիկ կզարմանան, յեթե մենք ասենք, վոր գոյություն ունի. ճիշտն ասած, վոչ թե մի, այլ կարծես լերկու տարբեր տեսակ ելեկտրականություն, իսկ այնինչ, ու դժվար չի ապացուցել:


Յեթե ապակյա չոր ձողիկը շփենք կաշվով կամ մետաքսով, այն ժամանակ նա կսկսի դեպ իրեն ձգել թղթի մանրիկ կտորները կամ բմբուլներն այն նմանությամբ, ինչպես մագնիտն ե ձգում յերկաթը: Այդ տեղի յե ունենում ալն պատճառվ, վոր շփումից ձողիկը ձեռք բերեց մի առանձին հատկություն—նա, այսպես ասած, ելեկտրականությամբ լցվեց, նույն այդ յերեվույթը կարող ենք դիտել, յեթե մահուղով շփենք, որինակ, զմուռախ ձողիկը կամ կառւչուկես սանըը, նրանք նույնպես կստանան ելեկտրական լից և նույնպես կսկսեն դեպ իրենց ձգել թղթի մանրիկ կտորները կամ բըմբուլները:

Բայց արդյոք միատեսակ լիցեր հայտնվեցին ապակե ձողիկի և, ասենք, կառւչուկի սանըի մեջ:

Չե, վհչ միատեսակ: Յեկ այս հետառությամբ կարելի յե տեսնել այսպիսի փորձերի ոգնությամբ:

Մետաքսե բարակ թելիկից (այդպիսի թելն ելեկտրականություն չի անցկացնում) կախենք թանթրվենուց շինած թեթև մի փոքրիկ գնդակ և եւ լեկտրականությամբ լցված սանրով դիպչենք նրան, Գնդակն ոկզրում կձգվի դեպի սանը, իսկ հետո անմիջապես հետ կցատկի նրանից (նկ. 57): Բանը նրանունն ե, վոր յերբ գնդակը կպչում ե ելեկտրականորեն լցված սանըին, այն ժամանակ սանըից ելեկտրականության մի մասն անցնում ե գնդակին, այլ խոսքերով—գնդակն ինքն ելեկտրական լից և ձեռք բերում: Յեկ ահա դուրս ե գալիս, վոր յերբ յերկու առարկաներ լցված են ելեկտրականությամբ, այդ դեպքում նրանք վանվում են իրարից:


Լավ, իսկ թենչ կլինի, յեթե թանթրվենու գնդակին դիպչենք վոչ թե ելեկտրականացրած սանը, այլ ասենք, կաշվով շփված ապակյա ձողիկով: Դարձլաւ նույն ը կպատահի—թանթը-



Նկ. 57. Դիպչելով ելեկտրականությամբ լցված սանըին, գնդակը հետ և մզվում նրանից:

զենու գնդակն սկզբում կձգվի դեպի ձողիկը, իսկ հետո հետ կմղվի: Սակալն, գործը ըրլորովին այլ կերպ կլինիր լեթե հետեւյալ կերպ վարվենք:

Թանթրվենու գնդակը լցնենք ապակյա ձողիկի ելեկտրականությամբ, գնդակը ձողիկից հետ կմղվի: Մոտու ցնենք այս գնդակին շփուած սանրը: Դուրս եւ գալիս, վոր գնդակը վոչ միայն հետ չի մղվի սանրից, այլ ընդհակառակը, կձգվի դեպի նաև կարելի յեւ մի ալսպիսի փորձ ել կատարելը Բարակ թելերից իրար կողքի կախում են: Թանթրվենու յերկու գնդակներ:



Նկ. 58. Միատեսակ ելեկտրականությամբ լցված թանթրվենու գնդակները հետ են մղվում, իսկ առողջ ելեկտրականությամբ լցվածները՝ մղում են իրար:


Եթե նրանց յերկուն ել ելեկտրականացնենք ապակյա ձողիկից կամ կառչուկե սանրից, այդ դեպքում նրանք հետ կմղվեն իրարից: Բայց հերիք և վոր մեկը լցնես ձողիկից, իսկ մլուսը՝ սանրից, յերկու գնդակներն ել կձգվեն դեպ իրար (նկ. 58):

Իսկ ի՞նչ են ցույց տալիս այս փորձերը: Նրանք ցույց են տալիս, վոր այն ելեկտրա ան լիցիրը, վորոնցով լցվում են աղուտ ձողիկը և կառչուկե սանրը, միատեսակ չեն, այլ տարբեր են: Նրանցից առաջինը (վորով շփման ժամանակ լցվում են ապակե ձողիկը) կոչվում է դրական, իսկ յերկորբդը (վորով շփման ժամանակ լցվում ե կառչուկե սանրը)՝ բացասական: Կացի դրանից, այս փորձերը ցույց են տալիս, վոր յերբ մենք վերելքում տառամ եյինք, թե ելեկտրականությամբ լցված յերկու ա-

սարկաներ հետ են մղվում իրարից, դա այնքան ել խսպառ ճիշտ չեր:

Ավելի ճիշտ կլիներ առել - նետ են վանում իրար այն առարկաները, վարանք ունեն նույնանութեան լիցեր, իսկ այլանուն լիցեր ունեցող առարկաները ձգվում են դեպ իրար:

Նկատի առնելով այս յերկու փաստը, այն եւ-վոր գոյությունն ունեն յերկու տարրեր տեսակ ելեկտրականություններ՝ դրական և բացասական - և վոր այդ յերկու ելեկտրականություններն ել իրար ձգում են, մենք ալժմ կարող ենք ծանթանալ այն բանի հետ, թե զիտնականներն ինչպես են պատկերացնում առօմի ներքին կազմությունը:



Նկ. 59. Զբաժնի առօմի Նկ. 60. Հելիումի ա-  
կազմությունը, առօմի կազմությունը, առօմի կազմությունը:

59, 60 և 61 նկարների վրա պարզացրած ձեռվ պատկերացված ե պարբերական սիստեմի առաջին յերեք ելեմենտների - շրածնի. ներիումի և լիբիումի ատոմների կազմությունը:

Յուրաքանչյուր ատոմի կենտրոնում գտնվում է միջուկ (ան շրջանակով նկարված), վորի շուրջը նրանից տարրեր տարածությունների վրա խիստ արագությամբ շարժվում են առանձին մասնիկներ, վորոնք կոչվում են ելեկտրոններ (նկարների վրա սպիտակ շրջանակներ). Միջուկը լցված է դրական ելեկտրականությունով, իսկ ելեկտրոններն այն մասնիկներն են, վարոնք լցված են բացասական ելեկտրականությունով. Դրական ելեկտրականությունով լցված միջուկը ձգում է դեպ իրեն բացասական ելեկտրականությունով լցված ելեկտրոնները:

Այս ելեկտրոնները շատ փոքր են. — յեթե հարավոր լիներ ելեկտրոնը կշռութիւն վրա կշռութիւն այն ժամանակ նա առենաթերե

ատոմից, այսինքն՝ ջրածնի ատոմից 1840 անդամ ավելի թեթև կլիներ, Ավելի ծանր ատոմների ելեկտրոնների թիվը շատ ե, ավելի թեթևներինը—քիչ Այսպես, որինակ, ջրածնի ատոմի միջուկի շուրջը պտտվում է միայն մի ատոմ, լինիումի ատոմի միջուկի շուրջը—յերեք, յերկաթի ատոմի—26, ռազիումի ատոմի—88, ռուբանի ատոմի—92, Ուրանի ատոմի միջուկի շուրջը պտտվում էն ամենաշատ ելեկտրոնները, բոլոր մյուս ելեմենտների ատոմների ալյումինի ելեկտրոնների թիվն ավելի քիչ ե: Ավելի հետո մենք կքննենք, թե ինչպես են բախչվում այս ելեկտրոններն առանձին ելեմենտների միջուկների շուրջը:

Մենք արդեն գիտենք ինչքան աննշան փոքր են ատոմների չափսերը: Բայց ատոմների միջուկների և ելեկտրոնների համեմատությամբ այս աննշան չափսերը հակայական են, ելեկտրոնի տրամագիծը մոտավորապես մի միլիոն անգամ ավելի պակաս ե մոլեկուլների չափսուց, իսկ միջուկի տրամագիծը գեռանհամեմատ ավելի փոքր ե ելեկտրոնի չափսերց Յեթե ատոմը յերկրագնդի չափ մեծացնենք, միջուկն ընդամենը կմեծանամի ուստինե գնդակի չափով: Չնչին ատոմը բաղկացած ե զլիավորապես... աղատ տարածությունից, Յեթե մենք վերհիշենք, վորքանով ելեկտրոնն ավելի թեթև ե ջրածնի ամենաթեթև ատոմից, այդ դեպքում մենք հեշտությամբ կհասկանանք, վոր ատոմի ամբողջ մասսան (վորից և կանգած ե քաշը) կենտրոնացված ե այս ամենափոքրիկ ատոմային միջուկի մեջ:

Ահա ինչպես են կազմված, ըստ գիտնականների լենթադրությունների, քիմիական ելեմենտների ամենամար սասնիկները—ատոմները: Այս յենթադրությունների ոգնությամբ են բացատրվում բազմաթիվ լերեղությունները, վորոնք առանց անհասկանալի կլինեյին: Այստեղ, վորպես որինակ մենք պատմենք, թե ինչպես ե նրանց ոգնությամբ բացատրվում ռազիումի վերածումը հելլիումի:

Մենք արդեն գիտենք, վոր ռազիուակաթիվ նյութերից մըշտապես դուրս ե գալիս մի առանձին, աչքի համար անտեսանելի ճառագալթացում, վորը հեշտությամբ անցնում է շատ մարմինների միջով ու ազդում լուսանկարչական թիթեղիկի վրա: Գիտնականները զանազան լեղանակներով մանրամասնությամբ ուսումնասիրել են այս ճառագալթացումն ու գտել, վոր նա բաժանվում է յերեք տեսակ տարբեր ճառագայթների—ալֆա-նառագայթներ, բետα-նառագայթներ և գամմա-նառագայթներ: Այդ

ժամանակ պարզվեց, վոր բետա-ճառագալթներն իրենցից ներկաւացնում են վորպես շատ արագությամբ թուշող ելեկտրոնների հոսանք, իսկ գամմա-ճառագայթներն իրենց ընույթով նման են սենտդենյան ճառագայթներին, Բայց ինչ են ներկայացնում իրենցից ալֆա-ճառագայթները:

Դուրս յեկավ վոչ այլ ինչ, յեթե վոչ նելխաւմ ելեմենտի տառմերի դրական ելեկտրականությունով լցված միջուկներ, Վարտեղից են ծաղում այս դրականապես լցված միջուկները,


Նրանք կազմվում են մի քանի ռադիոակտիվ ելեմենտների միջուկների հայեցայման ժամանակ: Որինակ, ռադիումի ռադիոակտիվ քայլայման ժամանակը նրանք կազմվում են ռադիումի ատոմի միջուկից, վորն ապացուցվում է հետևյալ փաստով: Ռադիումի ատոմի քայլայման ժամանակ, հելիումից բացի, կազմվում է, ինչպես մենք արդեն ասացինք, ելի մի գագ—ռադիումի եւմանացիա կամ ռադոն: Ռադիումի ատոմային քաշը (վոր կախված է, ինչպես արդեն ասված է, հենց այդ միջուկից) հավասար է 226: Յեթե ռադիումի ատոմի միջուկը կորցնի հելիում ատոմի միջուկը (հելիումի ատոմային քաշը հավասար է 4) այն ժամանակ, ուրիշներ, կմնա միջուկ՝ 222 ատոմային քաշով: Յեվ ահա բանից զուըս և գալիս, վոր ռադիումի քայլայման յերկրորդ պրոզուկաը—ռադիումը, իրոք ունի 222 ատոմային քաշ: Հետևապես, և՛ դրականապես լցված հելիումի ատոմի միջուկն իրապես զուըս յեկավ ռադիումի ատոմային միջուկից:

Անգլիական գիտնական կրուքսին (նկ. 62) հաջողվեց հնարել արագիսի մի միջոց, վորով հնարավոր եր մինչև անգամ տեսնել ալֆա-ճառագայթների հելիումի ատոմի առանձին միջուկի գործողությունը: Հայտնի յեղավ, վոր յերբ ալֆա-ճառագայթներն ընկնում են հատուկ քիմիական միացումով (ծծմբային ցինկով) ձածկված ապակիա թիթեղիկի վրա, այն ժամանակ թիթեղիկը մթության մեջ լույս է տալիս: Կրուքսն այսպիսի մի թիթեղիկ ԱԲ (նկ. 63) տեղավորեց սեացրած խոզովակի մեջ: Թիթեղիկի վերևում հարմարեցրեց ասեղ, վորի ծայրը թաթախված եր ոսղիումի (Ra) աղի թիթեղիկը լուծույթի մեջ: Խողովակի մյուս ծայրում տեղավորված եր խոշորացնող ապակի Լ. վորի միջով կարելի յեր գիտել թիթեղիկը: Յեվ ահա այս գործիքում տեսնվում եր ամեն մի տռամմանին բռնիումը, վորն ստացվում եր հելիումի ատոմի առանձին կորիզի թիթեղին հացրած հարվածի ժամանակը: Դա ցույց է տրված նկարի շրջանակի ներքեաւմ: Այդ միջոցին

Հենց իրենց ատոմիսերին տարրերեւ, իհարկե, չեր կարելի. բայց զրա փոխարեն քոնկումները հիած ալի տեսնվում եյին. Դրանից հետո ել Բնշպիսի ապացույցներ են պետք, զոր ատոմիսերը զիտ-նականների կողմից հնարված բաներ չեն, այլ զոյություն ունեն ամենասույզգ իրականության մեջ. Կրուքսի զորձիքը—այսպես կոչված սպիրոտարիսկոպն առմ զոլոցական սովորական դորձիք և համարվում. Այսպիսով, նշանակում ե ոտղիօւմի բայթայման



Ն. ու. Պ. Վ. Կուվիե Կոււքս  
(1809—1910).



Նկ. 53. Սպիրոտարիսկոպ—ալֆա-ճառագայթ-ների ազդեցությունը դիտելու գործիք

ժամանակ, քայլայվում ե նրա առօմային միջուկը—նա կարծես թե այդ միջոցին բաժանվում է յերկու անհավասար մասերի—հելիումի առօմի թեթև միջուկի և ուագոն զազի ծանր միջուկի: Բայց միայն ուագիումի ատոմը չե, վոր ինքն իրեն քայլայվում եր Քայլայքայի ամբողջ շարք ուագիուականիք նյութերի ատոմիսերը, ըստ գորում. նյութերից շատ շատերը նույնպես ճառագայթում են ալֆա-ճառագայթներ, աւսինքն՝ հելիումի ատոմիսերի զբական ելեկտրականությամբ լցված միջուկներ: Յով անա պարզվում ե, զոր այդ բոլորը—մեծ ատոմային քաշով ելեմենտներ են, այսինքն՝

բարդ կազմություն ունեցող ատոմիկը, վորոնք, հետևաբար, հանգիստանում են վոչ բավականաչափ կայուն:

Վերևում մենք արդեն ասացինք, վոր նուութի բոլոր ֆոխաըն կումիերը կտպված են կամ եներգիա արտադրելու կամ այն կլանելու հետ: Բայց ախք մի քանի ելեմենտների մյուսների փոխարկվելը նույնպես նյութի փոխարկում է, այս տեսակ փոխարկումը կապված է արդյոք եներգիա արտադրելու կամ կլանելու հետ:

Այդ հարցի պատասխանն արդեն պարզ է նրանից, վոր ռազմիում մի մասին ասված է առաջ Թանի վոր ռադիումն ու նըա ազերը մշտակիս ավելի տաք են, քան նրանց շրջապատող առարկաները, ապա այդ նշանակում է, վոր նրանց քայրայման ժամանակ եներգիան աղատվում է: Ենք ահա հենց այս աղատված ներատոմային եներգիան է հանդես գալիս այստեղ ջերմության կերպարանքով: Դիտնականները հաշվել են, վոր ներատոմային եներգիան շատ խոշոր է և յեթե մենք սովորելինք ատոմներն ըստ ցանկության՝ ուզած քանակությամբ մանրացնել և յեթե տիբեյինք այդ դեպքում աղատված եներգիային, այն ժամանակ վորեվելի նյութի շատ սահմանափակ քանակի քայլայումը բոլորովին քայլարար կլիներ շարժման մեջ գնելու գործորանային հզոր մեքենան, ովկիանոսալին շողենավը և այլն: Այդ կարողությունը բոլորովին շուռ կտար մեր ամրող տեխնիկան և անհարկավոր կդարձներ, որինակ՝ ածխի, նավթի, փայտի և ալ տեսակ վառելանյութերի՝ գործածումը: Բայց... առայժմ այդ ձեռնհասությունից զեռ հեռու յենք:

Ընթերցողն այժմ կարող է հետեյալն ասել մեզ: Հավ, եկեկարոնը նյութեղենի մի փոքրիկ մասնիկն է, վոր ունի ելեմենտար բացասական ելեկտրական լից: Բայց լինչ և ներկայացնում իշենից նյութեղենի մյուս տեսակը՝ ատոմային միջուկը, ինչպես և նա կառուցված:

Հենց նոր ասվեց, վոր շատ ռազմիոակտիվ նյութերի ատոմների միջուկներն էրենց քայլայման ժամանակ արտադրում են ալֆա-ճառագայթներ, այլ խոսրերով հելիումի միջուկներ: Ի՞նչ է նշանակում այդ: Խոկ դա նշանակում է, ի հարկե, վոր հելիումի միջուկները մտնում եյին այս նյութերի ատոմների միջուկների կազմի մեջ—վորևէ այլ տեղից վերցվել՝ նրանք շեյին կազող:

Այժմ զերհիշեցեք, վոր Ռեզերֆորդի փոքրձերի մեջ, վորոնց

մասին հիշատակված ե այս դլխի սկզբում, մի քանի նյութերից սաղիոսակտիվ նյութերի ազդեցությունից ստացվում եր ջրածին, Պարզ ե, վոր ջրածնի միջուկները պետք ե մտնելին այս եւեմենտների ատոմային միջուկների կազմի մեջ, Բանը նրանումն ե, վոր այդ գեպում քայլայումը կատարվում եր սաղիոսակտիվ նյութերի արտադրած ալֆա-մասնիկների ազդեցության տակ, Կարծես այս մասնիկները հանդիսանում եյին ոռւմբեր, վորոնք ընկնելով ատոմային միջուկի մեջ, ավերում եյին նրան և դուրս բցում նրանից ջրածնի միջուկները:

Դրանից հետո բոլորովին բնական և յենթագրել, վոր քիմիական ելեմենտների կազմի մեջ (արդ թվում և հելիումի) մտնում են ջրածնի միջուկներ, Նշանակում ե, ջրածնի միջուկը, վոր գիտության մեջ պրօսոն ե կոչվում, հանդիսանում և նյութեղենին ներկայում մեզ հայտնի մյուս հիմնական սասը: Նա ունի մեծությամբ նույնպիսի ելեկտրական լից, ինչպես և ելեկտրոնը, բայց վոչ բացասական, այլ դրական: Դրանով ել բացատրվում է ջրածնի սովորական ատոմի չեզոքությունը, վոր բազկացած և պրոտոնից և ելեկտրոնից:

Մինչև նորերս, բոլորովին վոչ վաղուց, գիտեյին միայն յերկու մասնիկ, վորոնք մասնակցություն ունեյին քիմիական ելեմենտների ատոմների կազմության մեջ—Ելեկտրոնները և պրոտոնները: Բայց 1932 թվին անզիմական գիտնական Զաղվիկը, ոմբակոծելով բերիլիոն ելեմենտի ատոմներն ալֆա-մասնիկներով, ապացուցեց, վոր այդ ժամանակ անջատվում են ինչ-վոր նոր, մինչ այդ անհայտ մասնիկներ: Այդ մասնիկները կոչվեցին մելյուրներ: Այդպիսի անվանման ձագումը հասկանալի կ'ինչի, յեթե ասենք, վոր նոր հայտնաբերված մասնիկներն ելեկտրականություն չեզոք են, այսինքն՝ չունեն վոչ դրական, վոչ բացասական ելեկտրական լից: Իրենց զանդվածով նեյտրոնները մոտիկ են պրոտոնին (այսինքն՝ նրանց զանդվածը մոտ ե ջրածնի ատոմի զանդվածին):





1932—1933 թվերին գիտնականներ Անգերսենը, Բլեկկետը և Ուկիալինին հայտնաբերել են և ուրիշ ուշազրավ մասնիկներ, վորոնք առաջանում են զամմա-ճառադայթների (տես եջ 145) ատոմների միջուկների վրա ազդելու միջոցին: Այս մասնիկներն ունեն ելեկտրոնի զանդված, բայց ի հակադրություն ելեկտրոնի՝ լցված են դրական ելեկտրականությամբ, այլ վոչ բացասական, այդ պատճառով ել նրանց անվանեցին պազիտրոններ:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր քիմիական ելեմենտների

առողջերի ամենաժանր միջուկներն ել բարդ գոյացութեր են հանգիստում, վորոնց կազմը ներկայում բավարար ճշտությամբ դեռ պարզված չեւ Ցել նյութի կազմության ուսումնասիրության վեցարերյալ գիտության այս նորագույն հաջողությունները կրկին անդամ փայլուն կերպով հաստատում են Լենինի խոսքերն այն մասին, վոր

«Ելեկարոնը նույնպես անսպառ է, ինչպես ատոմը»,  
և վոր

«Ատոմի քայլայելիությունը, Նրա անսպառելիությունը, մատերիայի բոլոր ձևերի փոփոխանակությունը և շարժությունները միշտ հանդիսացել են դիալեկտիկական մատերիալիզմի հենարան»:



Նկ. 64. Պարզերական սիստեմի տևակին առանձնությունների առողջերի կազմության պարզացըած պատկերացումը

Այժմ մի քիչ ավելի մանրամասն քննենք, ինչպես են կազմված մի քանի քիմիական ելեմենտների ատոմները։ Դա պարզացըած ձևով պատկերացված է նկար 64 վրա, վորտեղ ցույց են ըրված, վոր շարժվող ելեկտրոններն ատոմային միջուկների շուրջը դասավորված են կարծես շերտերով։ Ըստ վորում ջրածնի (H) և հելիումի (He) ելեկտրոնային ըթաղանթն ունի մի չշերտա ելեկտրոններ, լիթիումի (Li), բերիլիոնի (Be) և նրանցից հետո յեկող ելեմենտների թաղանթը մինչև նեոն (Ne)ներառյալ—յեթե շերտ, հետեւյալ շարքի թաղանթը—նատրիումից (Na) մինչև արգոնը (Ar) ներառյալ—յերեք շերտ և այլն։

Դժվար չեն նշատել, վոր մեր նկարի վրա ատոմների կազ-

մության սխեմաները ներկայացված են հենց նույն կարգով, ինչ կարգով վոր մեջ քերված ելեմենտները դասավորված են պարբերական սիստեմում: Իսկ յեթե ավելի ուշադրությամբ դիտենք նկարը, այն ժամանակ կերեա, վոր քիմիապես իրար նման ելեմենտների ատոմները, վորոնք տեղավորված են պարբերական սիստեմի մի խմբում, ունեն նաև արտաքուստ նման ելեկտրոնափառք: Աստեղից կարելի յե անել յեզրակացություն, վոր ելեմենտների գիմիական նաև արյունական նիւթեալիքում կախված են նրանց առոմեների առաջին բաղանքի կազմության:

Վորպես յեզրակացություն այս զլիսի, այժմ կրկին վիրապառնանք քիմիական ելեմենտների պարբերական սիստեմին:

Պարբերական սիստեմի մեծ ստեղծող Դ. Ի. Մենդելյևին ասում եր, վոր քիմիական ելեմենտների հատկությունները պարբերական կախման մեջ են գոնվում նրանց ատոմային քաշերից:

Մենդելյևի ժամանակին երանից ել հետո այնպես ելին համարում, վոր միենույն ելեմենտի բոլոր ատոմները բոլորին իրար նման են և ունեն միատեսակ ատոմային քաշ: Բայց այդպես ե արդյոք:

Սկզբում ռադիոակտիվ ելեմենտների, իսկ ավելի ուշ այլ ատոմների հետազոտությունները ցույց տվին, վոր դա այդպիս չեւ Յերևաց, վոր ելեմենտների պարբերական սիստեմի ամեն մի վանդակն զրադեցնում է վոչ թե մի ելեմենտ միատեսակ ատոմներով, ինչպես մտածում եյին առաջ, այլ մի ամրող խումբ («պլեյադա») ելեմենտներ, վորոնց ատոմներն ունեն տարբեր ատոմային քաշ: Այդպիսի ելեմենտները, վորոնք նմանվում են իրար իրենց քիմիական հատկություններով և զրադեցնում են պարբերական սիստեմի միենույն վանդակը, կոչվում են լիզոտպիներ: Որինակ, ատոմի ամենապարզ կազմվածքով ջրածին ելեմենտը կազմված է 1, 2 և 3 ատոմային քաշ ունեցող յերեք իզոտոպների խառնուրդից, ըստ վորում ամեն 3 ատոմային քաշ ունեցող իզոտոպին ընկնում է մուավորապես 2000 ատոմ՝ յերկու ատոմային քաշով և տաս միլիոն ատոմ՝ մեկ ատոմային քաշով: Հետեւարար, ջրածնի հիմնական իզոտոպը հանդիսանում է մեկ ատոմային քաշով իզոտոպը՝ Քլոր ելեմենտը բաղկացած է յերկու իզոտոպներից՝ 35 և 37 ատոմային քաշերով, կապարը—ութ իզոտոպներից՝ 203-ից մինչև 210 ներառյալ ատոմային քաշերով և այլն:

Աւապիսավ, յերբ մենք առում ենք, թե Քլորի ատոմային քաշը, որինակ, հավասար է 35,457, ապա դա նշանակում է, վոր ոյդ թվով մենք վորոշեցինք միայն նրա իզոտոպների խառնուրդի միջին ատոմային քաշը:

Սակայն ի՞նչպես վարվել աւժմ պարբերական սիստեմի հետ, կհարցնի ընթերցողը՝ Ախր, ասենք թե կապարի իզոտոպը՝ 203 ատոմային քաշով զրված կլինի նրա մեջ թալլիոնի իզոտոպից հետո, վոր ատոմային մեծ քաշ ունի (205), իսկ կապարի իզոտոպը՝ 210 ատոմային քաշով, զրված կլինի 209 ատոմային քաշ ունեցող բիսմուտից առաջ. Ախր դա նշանակում է, վոր քիմիական ելեմենտների հատկությունները կախված են վոչ թե նրանց ատոմային քաշերից, այլ ինչ-վոր այլ բանից:

Այս ժամանակակից դիտությունը ճշտությամբ հաստատել են այդ Մենք արգեն ասել ենք, վոր քիմիական ելեմենտների ատոմային միջուկները լցված են դրական ելեկտրականությամբ, Յեզ ահա յերեաց, վոր յեթե չափենք միջուկների լիցերը, վորով պես միավոր ընդունելով պրոտոնի լիցը, այն ժամանակ միջակի լիցը նավասար կլինի այն տեղի նամարին բառ կարգի, վոր գրավել ելեմենտը պարբերական սիստեմը,

Զեղոք ատոմում միջուկի զրական լիցը հավասարակշռվում է այն ելեկտրոնների լիցերով, վորոնք գտնվում են ատոմի ելեկտրոնային թաղանթում: Այսպիսով պարզ է, վոր ատոմի արտաքին ելեկտրոնների քանակը հավասար է նրա միջուկի զրական լիցերի քանակին:

Այժմ բաց արեք յերկրորդ հավելվածը և ուշադրությամբ նայեցեր քիմիական ելեմենտի ամեն մի նշանի առաջ զրված թվանշաններին: Այդ թվանշանները կոչվում են դասական թվեր կամ դասական նամարներ, և արտահայտում են շատ կարենոր մեծություն—այսինքն՝ ավյալ քիմիական ելեմենտի ատոմի միջուկի լիցը և միաժամանակ ատոմի ելեկտրոնային թաղանթի մեջ յեղած ելեկտրոնների թիվը:

Իսկ ինչո՞ւ իզոտոպները—տարբեր ատոմային քաշերով, սակայն սիմետրիակ քիմիական հատկություններով ելեմենտներն ընկնում են պարբերական սիստեմի միենուն վանդակում:

Վորովհետեւ այս ելեմենտների միջուկներն ունեն միտական լիցեր, Որինակ, ջրածնի իզոտոպների լիցերի միատեսակությունը՝ 1 և 2 ատոմային քաշերով լավ բացատրվում է, յեթե ընդունենք, վոր ատոմային 2 քաշով իզոտոպի միջուկը կազմված է զրական ելեկտրականությամբ լցված պրոտոնից և լից չունեցող նեյտրոնից: Յերկու դեպքում ել միջուկի լիցը միավորի յե հավասար: Այսպիսով մենք կարող ենք ասել, վոր ելեմենտների նաև կարուները պարբերական կախման մեջ են գտնվում վոչ քերած ատոմային բառերից, այլ նրանց դասական բվերից:

Ելեմենտների դասական թվերը կարելի յե չափել առանձին

յեղանակով փորձային ճանապարհով։ Ցեվ այս չափումները լիռովին գուգաղիպում են ելեմենտների պարբերական սիստեմի այն գասավորման հետ, վորը կատարել ե զեռ Մենդելեյևից։ Նրանք փայլուն՝ կերպով հաստատում են նույնպես այն տեղափոխությունները, վորոնք կատարել ե Մենդելեյևի իր սիստեմում հաշվառակ իր սկզբունքի՝ դասավորել ելեմենտներն իրենց ատոմային քաշերի կարգով։ Գտեք, որինակի համար, աղյուսակում արգոն (Ար) և կալիում (Կ) ելեմենտները։ Մենդելեյևի այդ կարգով ել դասավորել ե այս ելեմենտները, առաջնորդվելով նրանց քիմիական հատկություններով։ Բայց չե՞ վոր արգոնի ատոմային քաշը (39,944) պակաս չե, այլ ավելի յե կալիումի ատոմական քաշից (39,096). Սակայն դասական թվերի չափումները նույնպես ցույց են տալիս, վոր արգոնն առաջ պետք ե դրվի. այլ վոչ թե կալիումից ավելի հետո, նման գեպքեր կան պարբերական սիստեմի նաև այլ տեղերում։


Այսպիսով ժամանակակից հետազոտություններն ել ավելի յեն ամբապնդում Մենդելեյևի հանճարեղ գյուտար—քիմիական ելեմենտների պարբերական սիստեմը։ Ցեվ միևնույն ժամանակ ավելի ու ավելի անկասկած ե դառնում, վոր հիմքական ելեմենտների տասմները, իմշպես և ամեն ինչ բնուրյան մեջ, յենթարկված են մօտական փոխախուրյաւմների, վոր հիմքական ելեմենտները փոխակամ են մեկը մյուսի, վոր նշանէ բոլորն ել ընդհանուր ծագում ունեն։ Պարբերական սիստեմն արտացոլում ե իր մեջ մատերիայի զարգացման պատմությունը տիեզերքի մեջ։ Բնության այս մեծ որենքն ե ահա արտահայտված պարբերական սիստեմում։

Դեռ անցյալ դարի ամենավերջում մարդիկ վսիինչ շղիտեյին ելեմենտների մեկը մյուսի փոխարկվելու մասին։ Այս ժամանականից քառասուն տարի յել չի անցել, իսկ այժմ վսի միայն կարողացել ենք յերեան հանել բնության մեջ կատարվող ելեմենտների փոխարկումը և նրան դիտելը մատչելի դարձնել, այլև սովորել ենք ըստ մեր ցանկության արագաղնել այս փոխարկումը և առաջացնել այդ արհեստականորեն ծշմարիտ ե, հաջող վում ե այդ անել առայժմ շատ մեծ դժվարություններով ու շընչին արդյունքներ ստանալ։ Բայց ժամանակակից զիտության և տեխնիկայի փայլուն հաղթանակներից հետո մվ կարող ե կառկածել այն բանում, վոր հեռու չեն և՛ հետագա հաղթանակները, վորոնք վերջիվերջո թույլ կտան մարդկային հասարակությանը տիրելու ներառումային եներգիայի անսպառ պաշարներին։

Մեղ հայողվեց արդեն բավական շատ բան իմանալ այն նյութի մասին, զորից կազմված և ամեն բան, ինչ-վոր տեսնում ենք մեր շուրջը, զորից կազմված ենք և մենք ինքներս։ Մենք իմացանք, ինչից են բազադրվում դանազան նյութերը յերկրի վրա, ինչպես են նրանք մեկը մյուսի փոխարկվում, ինչպես են կազմված նրանց ամենամանր մասնիկները—մոլեկուլները և առանձները, Բոլոր այն գիտելիքները, զոր մենք ստացանք, հիմնված են վոչ ստերի, վոչ ել զանազան Շուրջը զրգերից այլնալ յերեւակայությունների վրա, այլ բնության յերևութների գիտողությունների վրա, զանազան արտադրությունների ընթացքի ուժում մասիրությունների վրա, լարորատորիաներում գիտնական ների կատարած փորձերի վրա։ Յեզ մեղ անհրաժեշտ և պատասխանել հիմա գարձյալ մի հարցի—յերկրի վրա կատարված ու տեղի ունեցած բոլոր արդ գիտողություններն ու փորձերն ունեն բայց վորսե նշանակություն և մնացած ամրող տիեզերքի համար։

Նախկին ժամանակներում մտածում եիին (և այդ սովորեցնում եր յեկեղեցին), վոր յերկիրը հանդիսանում է տիեզերքի կենտրոնը, վորն «աստծու» կողմից ստեղծվել և մարդու համար, իսկ արեր, լուսինը և յերկնային այլ լուսատուները գոյություն ունեն միայն նրա համար, վորպեսզի լուսավորեն յերկիրը, ու թերևս զեռիրենց դասավորությամբ ներգործեն առանձին մարդկանց ճակատագրերի վրա։ Յերկիրն ըստ այս հասկացողությունների ներկայանում նոր ինչ-վոր առանձին, յերկնային մարմիններից իր հատկությամբ տարրեր մի բան, Բայց այժմ մենք լավ գիտենք, վոր արդ բոլորը—մանկական հեքիաթներ են, Մենք գիտենք, վոր ինչքան ել խոշոր չթվա մեզ մեր մոլորակը, նա ընդամենը միայն մի չնչին ավազահատիկ և մնացած տիեզերքի համեմատությամբ Նայեղեք յերկնքին մութ ու պայծառ, անլուսին գիշերով։ Դուք այնտեղ կտեսնեք հազարավոր աստղեր ամենատարեր լուսաշուզության, դուք կտարրերեք տեղահեղ ինչ-վոր հազիվ առկայծող սպիտակավուն կետեր։ Այդ բոլորն աստղեր են, ճիշտ այնպիսի հօկայական արեգակներ, ինչպիսին եւ և մերը, իսկ շատերը մինչև անգամ անհամեմատ ավելի մեծ են նրանից և մեզ այդքան փոքրիկ են թվում միայն նրա համար, վոր անչափելիորեն վիթխարի տարածությունների վրա յեն գտնվում մեղանից։ Սպիտակավուն կետերն ուժեղ հեռաղիտակների մեջ դուրս են գալիս նույնպես

Աեծ մասամբ այսպիսի բազմաթիվ աստղերից — արեգակներից կազմված, իսկ նրանցից վուժանք հանդիսանում են նյութի մանրիկ մասնիկների մշուշազանդված կոչվող կուտակութներ, այն կուտակութները, վորոնցից, գիտնականների կարծիքով, հետազայտմ առաջանում են աստղերը—արեգակները, Յեվ անսահման և իրարից վիթխարի տարածությունների վրա դառնված աստղերով, մշուշազանդվածներով ու այլ յերկնալին մարմիններով լցված այս տիեզերքը, Կարելի՝ յե իմանալ արդյոք, ի՞նչ նյութերից են բաղկացած բոլոր այս մարմինները, նման են արդյոք այդ նյութերը նրանց, վորոնք պատահում են Յերկը վրա:




Նկ. 65. Առակելյան ուրիշմայի միջով բաց թողնված արեկի ճառագայթը արոն վաւմ և մի շաբթ գունավոր ճառագայթների ներքեւմ առանձին պատկեր բացված է որիկենա:

Առաջին հայացքից այսպիսի հարցը բոլորովին անհեթեթ և թվում: Ախր վորմե նյութի կազմությունն իմանալու համար, քիմիկոսը նրան ձեռքի մեջ և վերցնում, լուծում և, կշռում, տառեցնում, նրա հետ դանագան փորձեր և անում, այլ խոսքով կատարում ե նրա քիմիական անալիզը: Բայց ինչպես կարելի յե քիմիական անալիզի համար, ձեռք բերել արեի, աստղերի կամ մշուշազանդվածի նյութը, վորից մեզ յերենն հասնում ին միայն լույսի թույլ, հազիվ նկատելի ճառագայթները: Ախր միայն այս լուսատուների արձակած լույսով և, վոր մենք կարողանում ենք իւսնալ նրանց գոյության մասին: Կարելի՝ յե արդյոք լույսից իմանալ այն լուսատուի կազմության մասին, վորից արձակվում և այս լույսը:

Դուքս ե զալիս, վոր կարելի յե: Դուքս ե զալիս, վոր ժամանա-

կակից զիտությանը բավական ե վորսալ և հետազոտել լույսի մի թույլ ճառագայթ, վորպեսզի նա կարողանա դրանով դատողություններ անել այն ազբյուրի կազմության մասին, վորից դուրս ե յեկել այդ լույսը:

Պատահել ե արգուք ձեզ տեսնել. ինչպես յերբեմն արևից լուսավորված անձրեսի կամ ցողի կաթիլները խոտի վրա շողշողում են ծիածանի բոլոր գույներով. Այդ արեգակի ճառագայթն ե նրանց մեջ տրոհվում զեղեցիկ, պայծառ բազմազույն ճառագայթների: Իսկ յեթե արեգակի լույսը բաց թողնենք շատ հասարակ մի զործիքի՝ թափանցիկ յերեք կողանի պրիզմայի (նկ. 65 միջով, որինակ, ապակյա, այն ժամանակ նրա սպիտակ պատ):




Նկ. 65. ա—նատրիումի գույքիների սպեկտր, բ—ջրածնի սպեկտր, գ—ջրածնի և նատրիումի գույքիների խառն սպեկտր (սպեկտրների վրա զբաժ գերեի թվանշանները սուզվակների բաժանումներն են ցույց տալիս, վորոնցով սպազում են սպեկտրները զիտելու):

Վրա հեշտությամբ կստացվի զանազան գույներից կազմված ծիածանի մի շերտ (նկ. 65): Ինչպես ել և վորտեղ ել վոր բաց թողնենք այսպիսի պրիզմայի միջով արեգակի լույսը, ծիածանի շերտիկի մեջ գույները կզանավորվեն միշտ միևնույն կարգով, այն ե—կարմիր, նաբնջագույն, զեղին, կանաչ, յերկնագույն, կապույտ, մանուշակագույն:

Այս ծիածանային շերտիկը կոչվում է սպեկտր (յերփներանգ): Յեկ բանից դուրս ե զալիս, վոր հենց այդպիսի յոթ գույների շերտ, հենց այդպիսի միապաղապ, ծիածանային սպեկտր ստացվում է վոչ միայն արեգակի լույսից, այլև ամեն մի սինչեւ շիկացումը կարմրացրած պինդ կամ հեղուկ մարմնի արձակած լույ-

սից, որինակ՝ մինչև շիկացումը կարմբացրած յերկաթից կամհալ-  
ված պողպատից: Բայց բոլորովին այլ սպիկտր և ստացվում նատ-  
րիումի շիկացրած գոլորշիներից: Յեթե նրանց լույսը բաց թող-  
նենք պրիզմայի միջով, այն ժամանակ մենք պայծառաշեղին դիմ  
կնկատենք սև ֆոնի վրա (նկ. 66):

Պրիզմայի միջով բաց թողած շիկացած ջրածնի լույսից ու  
ֆոնի վրա կստացվեն կարսիր, յերկնագույն, կապույտ և մա-  
նուշակագույն գծեր՝ իրարից վորոշ տարածությունների վրա



Դկ. 67. Սպիկարուկոպի Ա խողովակի միջով ուսումնափուղ լույսն ընկնում և  
Ք պրիզմայի մեջ և սպիկտր կտղմում, վորը զննվում և Յ խողովակի միջով,  
յերրորդ Ը խողովակի միջով միշտմանակ նախագեցնում և սպիկարը չափե-  
լու համար սանդղակ:

(նկ. 66): Նատրիումի շիկացած գոլորշիների և շիկացած ջրածնի  
խառն լույսը կտա և նատրիումի գիծը և ջրածնի բոլոր գծերը  
(նկ. 66): Նշանակում է, որիկացած գաղտկերայ մյօւրերի խառնութ-  
դի սպիկտրից կարելի լի խմանալ այս խառնութի կազմը և տառեց  
քիմիական անալիզի:

Այսպիսով, առայժմ հիշենք — պինդ և հեղուկ լուսաշեկ մար-  
մինները միապաղաղ սպիկտրներ են տալիս, իսկ շիկացած գոլոր-  
շիներն ու գաղերը տալիս են առանձին գունավոր գծերից բաղ-  
կացած բնդհատվող սպիկտրներ: Այս բոլոր սպիկտրներն ուսում-  
նափուլ են մի առանձին գործիքի — սպիկտրոսկոպի ողնու-  
թյամբ (նկ. 67):

Լավ, իսկ լինչ կստացվի, յեթե պինդ կամ հեղուկ շիկացած

մարմնի լույսն անմիջապես պըրիզմայի միջով բաց չթողնենք, այլ նախորոք անցկացնենք ավելի ցածր ջերմություն ունեցող շիռ կացած դադի կամ դոլորշու միջով, ի՞նչ կստացվի, յենթաղբենք յեթի մինչև կարմրացումը շիկացրած ածխի լույսը, վարի ջերմությունն ավելի բարձր ե պայիտային այրիչի բոցի ջերմությունից, անցկենա սկզբում այսպիսի այրիչի բոցի մեջ շիկացած նատարիում գոլորշիների միջով, իսկ հետո արդեն պրիզմայի միջով:

Այդ գեղգում սպեկտրոսկոպում կտեսնվի միապաղակ յոթգույնանի սպեկտր, վոր մուգ գծով հատված և ճիշտ այն տեղում, վորտեղ գտնվում եր նատրիումի դեղին գիծը, յերբ լույսը գալիս եր միայն նատրիումի գոլորշիներից, Յեթե նատրիումի գոլորշիների փոխարեն ածխի լույսն անցկենա շիկացած ջրածնի միջով, այն ժամանակ մուգ գծեր կկազմվեն, այնուամենայնիվ ճիշտ հենց այն տեղերում, վորտեղ գտնվում էյին ջրածնի չորս զունավոր գծերը, Ահա մի փաստ, վորը հնարավորություն տվեց, ողտվելով ըստպեկտրոսկոպի, իմանալ, ինչ նյութեր կան արեգակի վրա, Յեկառանց վարևե քիմիական անալիզի, Ահա թե բանն ինչումն եւ

Արեգակի լույսը, վոր պարզ որերին այնպես պայծառորեն հեղեղում և յերկիրը, դուրս ե գալիս արեգակի շիկացած միջուկից, և նա սկզբում անցնում ե շիկացած այն գոլորշիների ու գաղերի միջով, վորոնք շրջապատում են արեգակի միջուկը, Արեգակի այս կեղեի ջերմությունը ավելի ցածր ե, քան շիկացած միջուկի ջերմությունը: Այդ պատճառով սպեկտրոսկոպի մեջ արեգակի տպեկտրը միապաղաղ ծիածանային շերտ չի հանդիսանում, այս շերտը հատված ե մի շարք մութ գծերով: Ինչի՞ց հայտընվեցին այս մութ գծերը:

Դե, ակներև ե, հենց նրանից, վոր լույսն անցել ե արեգակի կեղեի շիկացած գոլորշիների և գաղերի միջով: Նշանակում ե, բարտպական ե միայն համեմատել և չափել արեգակի սպեկտրի մեջ յեղած մութ գծերի տեղերը, վորպեսզի իմանանք, ինչպիսի նյութեր կան արեգակի կեղեի մեջ: Սպեկտրի այն տեղում յեղած մութ գիծը, վորտեղ նատրիումի գոլորշիներից առաջացած դեղին գիծն ե լինում, ցույց ե տալիս, վոր արեգակի մթնոլորտում յերևան են հանում ջրածնի ներկայությունը: Յեկ այլն և այլն Յեկ այդպիսի համեմատությունը, այդպիսի սպեկտրալին անալիզը ցույց տվեց, վոր արեգակի վրա կա ջրածնին, թթվածին, ածխածին, հելիում, սիլիկիոն, նատրիում, կալիում, յերկաթ, մի շարք ուրիշ մետաղներ, մի խոսքով, համարյա այն բոլոր նյութերը, Կորոնք կան յերկրի վրա: Դրա հետ միասին հետաքրքիր ե ընդ-

գծել, վոր հեղիում գաղը, վորի մասին մի շարք անդամներ հիշվել եւ այս գրբույկում, սպեկտրային անալիզի ոգնությամբ սկզբում հայտնաբերվել եւ արեգակի վրա, և միայն դրանից շատ տարիներ հետո նա գտնվել եւ յերկրի վրա:

Ահա ձեզ մի որինակ այն բանի, թե սպեկտրային անալիզի ոգնությամբ ինչպես եւ իմացվում յերկնային լուսատուի կազմությունը ի հարկե, սպեկտրային անալիզի այլ յեղանակներ ել կան, կան և այլ տեսակ ելեկտրոսկոպներ, քան քիչ առաջ նկարագրվածները, և նրանք բոլորն ել շատ կարենոր նշանակություն ունեն գիտության և տեխնիկայի համար Բայց մեզ այս տեղ բավական եւ ստանալ միայն ընդհանության յեղանակների մասին, վորոնցով ոգտվում եւ զիտությունը յերկնային մարմիններն կազմն ուսումնասիրելու համար, այդ պատճառով ել այժմ դառնանք ծանոթանալու այս հետազոտության ուսանելի ու հետաքրքիր արդյունքների հետո Բայց նախորոք պետք ելի մի քանի խոսք առել այն մասին, ինչ են մտածում զիտնականները յերկնային մարմինների զարգացման մասին:

Մեր յերկիրը միշտ այսպես չի յեղել. ինչպես զիտենք մենք այժմ Յեղել եւ մի ժամանակ, յերբ նրա վրա դեռ գոյություն չի ունեցել ամուր կեղե, այլ նա յեղել եւ հրահեղուկային հալված մի հսկայական զունդ. Այդ շատ և շատ միլիոնավոր տարիներ առաջ եւ յեղել իսկ դրանից ել վաղ, նույնպես անհամար միլիոնավոր տարիներ առաջ, նա հավանորեն շատ ավելի տաք և յեղել ու սիայն շիկացած գաղերից կազմված Յեվ բազմաթիվ փառաերը ստիպում են բնդունել, վոր վոչ միայն յերկիրը, այլև բոլոր յերկնային լուսատուները միշտ ել միննույն դրության մեջ չեն գտնվում - նրանք առաջանում են, անընդհատ յենթարկվում փոփոխությունների և վօշնշանում. Իսկ այն նյութը, վորից նրանք կազմվել են, գնումենոր լուսատուների կազմվելու վրա:

Ամենից հավանական ե, վոր աստղերը (իսկ աստղերը արեգակներ են, վորոնք բաղկացած են շիկացած գաղերից կամ հրահեղուկ մասսայից) կազմվում են մշուշազանգվածներից, այսինքն նյութի այն մանր մասնիկների կուտակումից, վորոնք անզամ ամենախոշոր հեռազիտակներում թվում են վորպես սպիտակավուն կետեր յերկնքի վրա. Յեվ յերկնքում պատահում են ամենատարեր հասակի աստղեր — վոմանք նրանցից դեռ նոր նոր են սկսում բորբոքվել, մյուսները փայլում են մինչեւ սպիտակելը շի-

հացած, յերբորդներն արդեն հանգչել են սկսում, չորրորդները, վերջապես, համարյա արդեն մարել են և միայն յերբեմն-յերբեմն բանկում են, ինչպես վառարանու մ վերջին մարող ածու խը: Իսկ բացի դրանից, անկասկած, տիեզերային տարածության մեջ նույնապես ոլանում են մեզ անտեսանելի բազմաթիվ արդեն հանգած, ամուր կեղեսով պատաժ յերկնային մարմիններ, վորոնք այդ կապակցությամբ նման են մեր յերկրին:

Վորքան տարրեր ե տիեզերքի այս հոյակապ պատկերն այն միամիտ հերիաթներից, վորոնք զրի յեն առնված շոուրը զրգումն աշխարհի տառեղծագործության և կազմության մասին:

Իսկ ինչ ե առում մեզ սպեկտրային անալիզը յերկնային մարմինների քիմիական կազմության մասին:

Ահա ինչ զլխավորագույն նյութեր են գտնվել նրա ողնությամբ զանազան լուսատուների վրա (փակազճերում կլոր թվերով ցույց ե տրված այս նյութերի ատոմային քաշը),

Շատ տաք աստղերում—ջրածին (1) և հելիում (4):

ավելի պակաս ջերմություն ունեցող աստղերում—ազոտ (14), թթվածին (16), մազնեղիում (24), սիլիկիոն (2δ) և այլն,

ավելի շատ սպած աստղերում—կալցիում (40), տիտան (48), յերկաթ (56) և այլ ավելի ծանր ելեմենտներ:

Այլ խոռոչերով տասձ, այն բոլոր ելեմենտները, վորոնք գույն թյուն ունեն և յերկրի վրա: Այլևս ինչպիսի ավելի համազեցուցիչ ապացույցներ են հարկավոր այն նշանակալից փաստի համար, վոր տիեզերում նյութը մեկ ե (միատեսակ):

Համեմատարար վոչ շատ վաղուց գիտնականների կողմից հաւանարերվել են այնպիսի յերկնային մարմիններ, վորոնք կազմված են զարմանալի խտության նյութից, գորպիսին զգվոր ե անգամ պատկերացնել: Որինակ, մեր յերկնքի ամենափայլուն աստղի—Սիրիուսի ուղեկիցներից մեկի խտությունը քառասուն հազար անգամ ավելի յէ, քան ջրի խտությունը: Իսկ Կասսիոպեյի գեղեցիկ համաստեղության մեջ 1935 թվին ամերիկական աստղագետ Կոյպերի կողմից ուսումնասիրված մի փոքրիկ թույլ աստղի խտությունը հազար անգամ ել ավելի խիտ է, քան Սիրիուսի ուղեկիցինը: Այս այդ նշանակում ե, վոր Կոյպերի աստղի մի մատնոցաշափ նյութը յերկրի վրա կկշռեր 36 առնն, այ. ինքն այնքան, վորքան կշռում են 500 հասակավոր մարդ միասրն:

Սպեկտրային անալիզն ողնեց գուշակելու և նյութի այդպիսի անսովոր խտության հանելուկը:

Ըսթերցողին արգեն հայտնի յե, թե ինչքան ել վոր աննշան յինքն ինքնին ատոմների չափսերը, բայց այնուամենայնիվ նըրանք չափազանց խոշոր են միջուկների և ելեկտրոնների չափսերի համեմատությամբ։ Արագությամբ շարժվող ելեկտրոնները կարծես միջուկի շուրջն ստեղծում են մի անթափանցելի կեղե, ատոմը պատկերանում է ինչ-վոր մի ամբողջություն, չնայած այն բանին, վոր իրականում նրա ծավալի ճնշող մեծամասությունը կազմում է ազատ տարածությունը։ Գործն այդ գրության մեջ ե, որինակ, մեր յերկրային պայմաններում Բայց այն վիթխարի ջերմաստիճաններում, վորոնք գոյություն ունեն աստղերի ընդերքում, քիմիական ելեմենտներից նրանց ելեկտրոնները համարյալ լիսվին կտրված են (այդ կարելի յե հաստատել ըսպեկտրային անալիզի ոգնությամբ)։ Այդ պատճառով ել հենց իրենց ատոմների չափսերն այնտեղ շատ անզամներով պակասում են, և այսպիսի աստղերի ընդերքում տիրապետող հսկայական ճընշումները կարող են մոտեցնել, անհամեմատ ավելի սերտ սղմել այս ատոմները, քան յերկրի վրա պատահող սովորական պայմաններում։ Այստեղից ել առաջ ե դալիս նման աստղերի նյութի զարմանալի խոտությունը։

Այժմ այսպիսի մի հարց զնինք մեր առաջ Արդյոք տիեզերքում ավելի ծանր ելեմենտներն ավելի թեթև ելեմենտներից չեն կազմվում։

Այդ հարցը շատ հիմնավորված է թվում, յեթե վերհիշում մենք սի քանի փաստեր, վորսնց մասին ավելի առաջ արդեն խռովել են Ալոր հելիումն ստացվում է ուրանից, թորիումից, ռադիումից և մի ամբողջ շարք ռազիուակտիվ ելեմենտներից։ Իսկ ջրածին հաջողվեց ստանալ աղոտից, ֆոսֆորից, ալյումինից և շատ այլ ելեմենտներից։ Ուշադրություն դարձրեք նմանապես տիեզերքում ամենատարածված ելեմենտների ատոմային քաշի վրա—այս բաշերի մեծամասնությունը բաժանվում է չորսի վրա, և դա այն միտքն է հղացնում, վոր այսպիսի ելեմենտների միջուկները բաղկացած են հելիումի կայուն միջուկներից, վորի ատոմային քաշը հավասար է չորսի։ Կարծես դուրս է դալիս, վոր ծանր ելեմենտների ատոմների միջուկներն ստացվել են թեթև ելեմենտների միջուկներից։

Շատ փաստեր հարկադրում են դիտականներին յենթադրելու, վոր իրականում գործն հենց այդպես ել եւ։

Միշտ ել բոլոր ելեմենտները գոյություն չունեն այս կամ այն աստղի վրա, նրանք, ինչպես և ամեն բան տիեզերքում, իւ-

բենց պատմությունն ունեն Կարելի յե յենթագրել, վոր յերկորային լուսատուններն իրենց զարդացումն սկսում են անջատված, իրար հետ չկապված ելեկարոնների, պրոտոնների և այլ մասնիկների—ներարոնների, պողիարոնների գոյությունից, Նյութեղենի այսպիսի մասնիկների զուգակցումից սկզբում ծագում են ամենահաճարակ ատոմները—ջրածնի և հելիումի ատոմները, Այնունեան ամեն անդամ, յերբ լուսատուի գոյության փոփոխվող պայմանները բարենպաստում են գրան, նրա վրա կազմվում են ավելի ու ավելի բարդ ատոմային զուգակցումներ, ընդհուպ մինչև ռադիոակտիվ նյութերի ծանր ատոմները, շատ կարելի յե, ել ավելի ծանր, քան նրանք, վորոնք այժմ հայտնի յեն մեզ յերկը վրաւ

Լուսատուի սառչելու հետ միասին շարունակվում է նյութի ձեւերի զարդացումը, նրանք ավելի ու ավելի յեն բարդանումը Սկսում են առաջանալ զանազան ելեմենտների քիմիական միացումներն իրար հետ, Յերկնային մարմնի վրա կարող են առաջանալ, վերջապես, և այնպիսի պայմաններ, վորոնք կարող են բարենպաստել ամենաբարդ և փոփոխական քիմիական միացումների գոյացմանը, այսինքն՝ սպիտակուցային նյութերի, Սակայն սպիտակուցը—դա կյանքի կրողն ե, վորովհետեւ կյանքը սպիտակուցային մարմինների գոյության ձևն եւ լուսատուի վրա հայտնրվում ե կյանքը, վորը կարող ե հասնել զարգացման բարձր ձեւերի:

Սակայն նյութերի զարդացումը միայն աճող գծով չի ընթանում, Վորոշ պայմանների ժամանակ սկսում են տեղի ունենալ և հաջառակ պրոցեսներ: Մենք զիտենք, վոր կյանքը մեր մոլորակի վրա դեռ զարգանում ե կենդանի որդանիզմների ել ավելի ուժեղ բարդացման ուղղությամբ: Բայց միևնույն ժամանակ մենք զիտենք, վոր յերկը զարդացման տվյալ աստիճանն անսպաստ ե շատ ծանր ատոմների գոյության համար և վերջիններն անձնահաճարար քայլայվում են ավելի հասարակ գոյացումների: Այս պրոցեսները մենք ընդունում ենք ուղիուակտիվ յերեսվութների կերպարանքով:

Պարզ չեն արգուք, վոր տիեզերքում անընդհատ տեղի յե ունենում նյութի հոյակապ շրջանառություն: Այս շրջանառության բոլոր աստիճանները գիտության կողմից ամեններն ել բավարար չափով դեռ չեն բացատրվել, բայց ինքը, նրա գոյության փաստն անկառակածելի յե: Տիեզերքն սկիզբ ունենալ չեր կարող, ևս եղծվելը յերբեմիցե նա չեր կարող, և նա վախճան չի ունենա: Տեր-

հերական հերիաթներն ռաշխարհի վախճանից մասին ճիշտ այն-պիսի աղաղակող հակասություններ են զիտության հանդեպ, ինչպես աստվածաշնչի միամիտ հերիաթները աշխարհի ռոտեղ-ձագործության՝ մասին։ Տիեզերքը մշտնջենական ե, նա վոչ ըս-կիզր ունի և վոչ վերջ, Յեվ այս տիեզերքի զանազան կետերում մենք տեսնում ենք նյութի դոյության բաղմազան ձևեր, զանա-զան կետերում մենք պատճեռում ենք նրա դարձացման յերրեմն բարձրացող, յերրեմն ընկնող գծերի Տիեզերքում ամեն ինչ հո-ռում ե, ամեն ինչ փոփոխվում, և վոչ մի ակնթարթում տիեզերքի պատկերը չի հանդիսանում վորպես նախորդ վայրկյանի պատ-կերի ճիշտ պատճեն։

Այժմ մենք պետք ե մի քիչ ավելի մոտենանք այն հարցին, վոր ճիշել ենք նյութի պահպանման մասին յեղած զլոի վեր-ջում։

Եիկացած յերկնային լուսատուները, որինակ, մեր արեգա-կը, ճառագայթում են աներևակայելի հսկա քանակության լույս և ջերմություն։ Դիտնականների հաջվարկութեանը ցույց են տա-լիս, վոր յերեն տյդ ճառագայթումը տեղի ունենար միմիայն ի հաշիվ արեգակի սեղմումի և նրա ցրտացմանը, այն ճամանակ արեգակը շատ վաղուց պետք ե հանգած լիներ։ Սակայն, իրա-կանում նա փայլում է յերկնքում և գեռ կփայլի միլիարդ տա-րիներ։ Իսկ վերտեղ ե գտնվում այս ճառագայթան աղբյուրը։

Մի քանի փաստեր հարկադրում են դիտնականներին ըն-գունել, վոր զա կատարվում ե ի հաշիվ արեգակի զանգվածի կարսին։ Ծնորնիվ այդ բանի արեգակի քաշը (ավելի ճիշտ նրա զանգ-վածը) մշտապես պակասում ե, և պակասում ե, վոչ պա-կաս մեծությամբ—չորս միլիոն տոնն ամեն մի վայրկյանում, Սակայն արեգակի զանգվածն այնքան վիթխարի յե, վոր յեթե նրա պակասութեանը այդպիսի տեմպերով տեղի ունենար և հետա-գայում, այդ դեպքում նաև՝ այնուամենայնիվ դեռ տասնեհինդ մի-լիարդ տարի կրավականանար։

Այսպիսով արեգակի զանգվածը ջերմություն, լույս և ելեկ-արականություն ճառագայթելիս, պակասում ե, ծախսվում։ Այդ նույն յերմույթը, ինչպես կարծում են գիտնականները, տեղի յե ունենում ամեն մի լույսի ու ջերմության ճառագայթման ժա-մանակ, նրանց ճառագայթմանն ուղեկցում ե զանգվածի վորոշ մասի պակասում։ Յերկրալին սովորական պայմանների ժամա-նակ այդ կարսւաներն այնքան չնշին են, վոր մենք՝ մեր արա-

մաղրության տակ յեղած միջոցներից և վոչ մեկի միջոցով նկատել դրանց առայժմ չենք կարող:

Մի քանի բութուականը լիտնականներ, ոգտագործելով հենց նոր պատմած փաստերը, ասում եյին, վոր ժմատերիքան անհայտացագած և վոր գրա հետ միասին խորտակվեց և մատերիալիստական աշխարհայացքը: Այդ ճանապարհով նրանք կամենում եյին տերտերականության և կրոնի համար ճանապարհ մարրել, վորոնք այնքան լավ ողնում են բութուազիային հիմարացնել ու շահագործել աշխատավոր մասսաներին: Սակայն այդպիսի հայաբարությունները դատարկ բաներ են:

Գիտությունն ամրագիտ հաստատել ե, վոր ճառագայթումը ջերմային, լուսային և այլն, նույնպես զանգված ունի: Այսպիսով, յեթե մարմին զանգվածը ճառագայթման ժամանակ ծախովում ե, այդ դեպքում զանգվածի անհետ կորուստ տեղի չի ունենում, այլ զա նյութի շարժման մի ձեից մի այլ ձեի անցումն է միայն: Որինակ, արեգակից ճառագայթված ջերմությունն ու լույսըն ունեն ճիշտ այնքան մասսա, վորքան այդ ժամանակ կորցնում է արեգակը: Ցերը ի հաշիվ այդ ճառագայթման տիեզերքում վարեն մարմին էներգիայի քանակությունն ավելանա, այդ դեպքում զրած զրա հետ միասին համապատասխան ձեռվ կմեծանա և այս մարմին զանգվածը:

Հետեւապես այն փաստը, վոր մարմնի եներգիայի ամեն մի փոխախության ուղեկցված ելնեա մասսայի նամապատասխան փափոխաւթյամբ, վոչ միաւն չի խախտում մատերիալիստական աշխարհայացքը, այլ ընդհակառակը, ամրապնդում ե այն: Մեր բոլոր գիտությունները հաբարերական են, վոչ լրիվ: Ուսումնասիրելով բնությունը, մենք ամեն անզամ ավելի լավ ու ավելի խորն ենք ճանաչում իրականությունը, բայց մենք յերրեք մինչև վերջ չենք սպառում այն: Ցիշտ նույնպես և այստեղ զանգվածի ու եներգիայի փոխհարաբերությունների մասին ձեռք բերած նոր հասկացողությունները մեզ ավելի ճիշտ ու խորը գիտելիքներ են տալիս այն մասին, թե ինչ ե ներկայացնում իրենից նյութը: Տեխնիկայի և գիտության հետազա զարգացումը մեզ հնարավորություն կտա ավելի խորը ճանաչել նրան: Այդ պատճառով ել ելեկարուն ու պրոտոնը, նեյտրոնը, պոզիտրոնը—ամեննեին ել նյութի վերջին բաղկացուցիչ մասերը չեն, այլ միայն այն ունեանք, մինչև զորն առայժմ մենք գիտենք նրան:

Մենք այստեղ չենք կարող ավելի ժանրամասնորեն վերլու-

ձել այս կարևոր, հետաքրքիր, բայց միևնույն ժամանակ շատ դժվար հարցերը:

Այսպիսով, տիեզերքում հավերժորեն տեղի յեւ ունենում նյութի հոյակապ շրջանառությունը, նույն թվում և քիմիական ելեմենտների առաջանալն ու փոխարկումը, այնպես, ինչպես և կյանքի ձևունքն ու վոչնչացումը: Եել այժմ մեզ ավելի պարզ կլինի 122—123 եցերում բերգած Ենդելսի արտահայտությունների ամենախորին իմաստը, վորոնց շարունակությունը մենք այս տեղ տալիս ենք վորպես ներկա զլիսի լավագույն յեզրակացություն:

«... Բայց վորքան ել հաճախակի և վորքան ել անգթորեն կատարվի ժամանակի ու տարածության մեջ այս շրջանառությունը, վորքան ել վոր անթիվ արեգակներ ու յերկրներ առաջանան ու կործանվեն, վորքան ել վոր հարկ լիներ սպասել, մինչև վոր վորմեա արեգակնային սիստեմում, վորմեա մոլորակի վրա որդանական կյանքի համար անհրաժեշտ պայմաններ յերևան դան, վորքան ել անթիվ-անհամար եակներ չկործանվեյին ու շառաջանային, մինչև վոր նրանց միջավայրից զարգանային մտածող ուղեղով կենդանիներ, զանկեղով կարճ ժամանակմիջոցով իրենց կյանքի համար պիտանի պայմաններ, վորպեսզի այնուհետեւ իրենք ել նույնպես վոչնչացվեյին անգթորեն,—մենք այնուամենայնիվ հավատացած ենք, վոր նյութն իր բոլոր փոխարկումներով հավերժականորեն միևնույնն ե մնում, վոր նրա ատրիբուտներից<sup>1)</sup> և վոչ մեկը չի կարող վոչնչանալ և վոր այդ պատճառով ել նույն հենց այդ յերկաթյա անհրաժեշտառությամբ, վորով նա մի ժամանակ կընաջնջի յերկրի վրա իր բարձրագույն ծաղիկը—մտածող հոգին, նա պարտավորված կլինի նրան նորից ծնել վորմեա մի այլ տեղում և մի այլ ժամանակը (Ենդելս—Բնության գիտելութիւն, ոռուս. VII, յերես 99):

## 24. ԼԱՐՈՒՄՏՈՐԻԱՅԻ ՄՐՑՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ժանաչելով բնությունը, մարդկային հասարակությունը հենց դրանով ել նվաճում է նրան և ստիպում լրիվ ու ավելի լավ ծառայել իր նպատակներին: Քիմիան—նյութի ու նրա փոխար-

1) Առրիբուտ (հատկանիշ) առարկայի անհրաժեշտ այն նշանն է, ուստի վորի այդ առարկան մենք չենք կարող պատկերացնել, առանց վորի նաև կարող լինել:

կումների մասին խոսող գիտությունն առաջացել և մարդկային հասարակության արտադրական պրակտիկայից։ Մորթիները վերամշակելով՝ նրանցից կաշխներ ստանալու նպատակով, կրակի և ծխի ողնությամբ մսից պահածո պատրաստելով, գործվածքները ներկելով, կավազործային ամանեղեն, սպիրացյին խմիչքներ, քացախ, թույներ և այլն պատրաստելով, հանգանյութերից մետաղներ ձուլելով, մարդիկ զանազան նյութերի փոխարկումների վեցարերյալ դիտողություններ եյին կատարում և շատ փորձային նյութեր կուտակեցին, վորը թույլ տվեց հետազայում ստեղծել զիտական քիմիան, պարզաբանել նյութերի փոխարկման հիմնական որենքները, թափանցել նյութերի կազմության գաղտնիքների մեջ, իսկ այս զիտելիքներն իրենց հերթին հնարավորություն տվին այն աստիճան տիրապետել նյութերի փոխարկման զանազան յեղանակներին, վոր մենք այժմ կարող ենք ըստ ցանկության վոչ միայն արհեստականորեն պատրաստել բազմաթիվ այնպիսի նյութեր, վորոնք դրանից առաջ կարելի յեր միայն պատրաստ (կամ համարյա պատրաստ) վիճակում ստանալ բնությունից, այլև ստեղծել մեզ պիտօնի այնպիսի առարկաներ, վորոնք բնության մեջ բոլորովին գոյություն չեն ունեցել:

Այս որվանից, յերբ առաջացավ քիմիան, քիմիկոսի լարութառիան բնության հետ անընդհատ մրցության մեջ և գտնըվում զանազան նյութեր ստեղծելու գործում։ Յեզ այժմ քիմիական լարութառիայի աշխատանքն այն աստիճան կատարելազորության և հասել, վոր նա շատ ասպարեզներում գերազանցում և բնության աշխատանքից նոր նյութերի այս անընդհատ ստեղծագործման մեջ։ Ծնորհիվ լարութառիայի աշխատանքի, արդյունաբերությունն այժմ այնպիսի մատչելի նյութերից, ինչպիսին են քարածուխը, փայտը, ողբը, ջուրը, ավազը, հանգանյութը և այլն—արտադրում եներկեր, դեղորայք, արհեստական պարագանյութեր, վառելիքի արհեստական տեսակներ, մետաղներ, շինարարական նյութեղեններ, լուցկիներ, պայթուցիկ նյութեր, կառւչուկ, պլաստիկ զանգվածներ, արհեստական նավթ և այլն և այլն։

